

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓՈՒՍԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

* * * — Թող Սրբալոյս Միւռնը համախմբէ մեր զաւակները՝ մէկ ազգի ու մէկ հայրենիքի շուրջ	403
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ	407

ՄԻՌՈՆՕՐՅԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Հայրապետին ձեռամբ Սրբալոյս Միւռնի օրհնութիւն Անթիլիասի Մայրավանքին մէջ	411
ԳԵՂԱՄ ԱՐՔ. ԽԱԶԵՐԵԱՆ — Սրբալոյս Միւռնը Հայ Եկեղեցւոյ միութեան խորհրդանիշ է	425
ՇԱՅԱՆ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ — Սփիւռքի առաջին Միւռնօրհներին հետքերով	427
ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԵՐՆԷՉԵԱՆ — Ս. Միւռնի «Յարութեան Գերեզմանին» առջեւ	440
ՍՄԲԱՏ ՎՐԴ. ՍԱՊՈՒՆԾԵԱՆ — Ինքնութեանդ Միւռնը	442
ԱԻՏԻՔ ԱԲՂ. ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ — Սրբալոյս Միւռնով կը քրիստոնէանանք, Սրբալոյս Միւռնով կը զօրանանք... ..	444
ՍԱՐԳԻՍ ԱԲՂ. ԱՐԱՅԱՄԵԱՆ — Սրբալոյս Միւռն՝ անցեալի հաւատք, ներկայի պատգամ եւ ապագայի տեսիլք	445
ԱՌԱՔԵԼ ԱԲՂ. ԳԱՏԵՅԾԵԱՆ — Հիմա՛ հայացանք	449
DN. DARON HALAJIAN — Blessing of Holy Muron in Antelias	451
ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ԶԵՅԵԱՆ — Միւռնի խորհուրդը	453

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Մեկնութիւն Յովհաննու Աւետարանի (3.27-36)	463
--	-----

ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՒՐԵՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ — 90-ամեայ հունձքը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին	474
--	-----


ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ԶԵՅԵԱՆ — Կանտի բարոյագիտութեան Նորարարութիւնը	486
--	-----

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՄԵՂՐԻԿ ԵՊՍ. ԲԱՐԻՔԵԱՆ † — Բարսեղ Կանաչեանի երաժշտական արուեստը	505
ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ	517
25-ԱՄԵԱԿ	518
ՏՈՆԱԿԱՆ	529
ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԵԱՆՔ	539
ԴՊՐԵՎԱՆՔ	543
ՍՓԻՐՔԻ ՏԱՐԻ	550
ՍԱՅԱԿ Ծ. ՎՐԴ. ԵՄԻՇԵԱՆ — Պայքարի եւ կամքի սփիւռք	555
ՅԱԿՈԲ ԼԱՏՈՅԵԱՆ — Մենք մեզի	558
ՀԱՄԲԻԿ ՊԻԼԱԼԵԱՆ — Հայ Սփիւռքի ապաւենը հաստատութենական մտածողութիւն է	559
ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ	563
ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ	565
ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ	570





ՊԷՇՏՕՆԿԿԱՆ ԸՄՍԱԳԻՐ
ԿԵԹՈՂՔԿՈՍՈՒԹԵԱՆ ՀՔՅՈՅ
ՄԵԾԻ ՏԵՆ ԿԻՔԿԻՈՅ

ՂԱ. ՏԱՐԻ 2022

ՅՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ

ԹԻԻ 7-8

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

**ԹՈՂ ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՆԸ ՀԱՄԱԽՄԲԷ
ՄԵՐ ԶԱԲԱԿՆԵՐԸ՝ ՄԷԿ ԱԶԳԻ ՈՒ
ՄԷԿ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՇՈՒՐՁ***

Սա խորհրդալից պահուն, Սրբալոյս Միւռնի օրհնութեամբ պայծառակերպուած Անթիլիասի Մայրավանքէն կ'ողջունեմ մեր ժողովուրդի աշխարհացրիւ գաւակները եւ իրենց աղօթքներուն թարգմանը ըլլալով, աղաչանքս կը վերառաքեմ առ Աստուած՝ Ս. Գրիգոր Նարեկացիի աղօթասաց բառերով՝ **«Օրհնէ մեզ, Տէր, այս Ս. Միւռնով, որպէսզի ան դառնայ աղբիւր քաւութեան, բժշկութեան, շնորհներու ու երջանկութեան»** (Բան ՂԵ, ԻԴ):

Արդարեւ, կարելի չէ հասկնալ Զայ Եկեղեցւոյ կեանքն ու առաքելութիւնը, խորհուրդն ու պատգամը, առանց Ս. Միւռնին, հայաբո՛յր Միւռնին: Կարելի չէ հասկնալ պատմութեան ահաւոր փոթորիկներուն մէջ հրաշքը հայ ժողովուրդի գոյութեան, առանց հրաշագործ Միւռնին:

* Սոյն գրութիւնը խտացումն է Սրբալոյս Միւռնի օրհնութեան առթիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի պատգամին, Անթիլիասի Մայրավանքի շրջափակին մէջ, Ուրբաթ, 1 Յուլիս 2022-ին:

Հետեւաբար, սոսկ ծիսական արարողութիւն մը չէ Միւռնի օրհնութիւնը: Ան Աստուծոյ էջքն է երկիր ու մարդուն բարձրացումը՝ երկինք: Աստուծոյ ու մարդու հաղորդութեան խորախորհուրդ պահն է Միւռնի օրհնութիւնը՝ Ս. Հոգւոյ երկնամաք շնորհներու ներգործութեամբ: Մեր ազգին հոգեւոր պայծառակերպումի ու ազգային վերանորոգման պահն է Միւռնի օրհնութիւնը՝ մեր հոգեւոր ու ազգային անկողութիւններու, արժէքներու ու ապրումներու միախառնումով:

Խոր է իմաստը եւ հրաշագան խորհուրդը հայու Սրբալոյս Միւռնին: Աստուծոյ ստեղծագործութեան բարիքները կան Միւռնին մէջ՝ ձեռքի կողքին անելի քան քառասուն ծաղիկներու եւ հունտերու ներդաշնակ միաձուլումով: Իր նիւթեղէն գոյութենէն անդին՝ երկնային սրբութեան ցօղն է Միւռնը մեր մեղապարտ կեանքին վրայ ու երկնային լոյսին ճառագայթը մեր խաւար երկնքին վերեւ:

Աստուածաշնչական ծագում ունեցող Միւռնին հետ մեր ժողովուրդը շաղախած է իր հաւատքն ու յոյսը, իր հայրենիքին հողն ու քարը, իր ինքնութիւնն ու լինելութիւնը: Միւռնին հետ միաձուլուած են հոգեմտաւոր երկունքները մեր հայրապետներուն ու երկինք բարձրացող աղօթքները մեր սուրբերուն: Միւռնին հետ նոյնացած է մեր ողջ ազգը՝ իր ոգեղէն արժէքներով, հոգեկան ճենճերումներով, միտքի խոյանքներով, արեան վկայութեամբ, իր գողգոթայով ու յարութեամբ: Այլ խօսքով, Սրբալոյս Միւռնը խտացումն է մեր դարաւոր պատմութեան՝ իր փառքի ու արեան էջերով, իր հոգիի ու մտքի հսկաներով:

Լոկ ծիսական գործածութեան համար սահմանուած նիւթ չէ Միւռնը: Հայը երկնային շնորհներով զարդարող ու առաքինութիւններով թրծող ոյժ է ան. Ս. Հոգւոյ շօշափելի ներկայութիւնն է Ս. Միւռնը մեր կեանքին մէջ: Այսպէ՛ս հաւատացած է մեր ժողովուրդը՝ հայոց երկրորդ լուսաւորիչ Ս. Գրիգոր Լուսաւորիչէն սկսեալ: Իր կեանքի մաշյլ թէ ուրախ օրերուն, իր պատմութեան արիւնտ թէ ծաղկաւետ ճամբաներուն վրայ, հաւատքի աչքերով մեր ժողովուրդը նայած է Միւռնին. հաւատքի քայլերով մօտեցած է անոր. հաւատքի զօրութեամբ ստացած է Միւռնի դրոշմը՝ անոր մէջ տեսնելով Ս. Հոգւոյ կենսաւորիչ, վերանորոգիչ, բուժիչ ու պայծառակերպիչ ներգործութիւնը:

Իր շնորհաբաշխ զօրութեամբ դարեր շարունակ Սրբալոյս Միւռնը դարձած է Աստուածային օրհնութիւն՝ մեր կեանքի երկինքին վերեւ. երկնային պահապան՝ վտանգներու դիմաց. հզօր վահան՝ չարին ու չարիքին դէմ. անուշաբոյր բալասան՝ մեր վերքերուն ու ցաւերուն:

Միւռնով կը դրոշմուին Քրիստոսի խորհրդական մարմնին՝ եկեղեցւոյ մաս կազմելու կոչուած մեր մանուկները:

Միւռնով կ'օծուին Աստուծոյ եւ իր ժողովուրդին ծառայելու կոչուած մեր հոգեւորականները:

Միւռնով կ'օծուին Աստուծոյ տունը դառնալու կոչուած մեր եկեղեցիները:

Միւռնով կ'օծուին Հայ Եկեղեցւոյ մէջ գործածուելու սահմանուած իրերն ու սպասները:

Սրբալոյս Միւռնի հպումով կը սրբագործուի հայու կեանքը՝ աշխարհի ապականիչ բարքերուն ու մոլութիւններուն դիմաց:

Միւռնը Ս. Հոգւոյ շնորհներուն ու բարիքներուն պարգէն է հայուն: Ան երկնային հրաւեր է դառնալու Աստուծոյ, երկինքը ապրելու երկրի վրայ: Ան Աստուծոյ կենարար ներկայութիւնն է մեր մեղաւոր կեանքին մէջ: Նիւթելէն Միւռնի ճամբով Աստուծոյ Միածին Որդին որպէս երկնային Միւռն կը բուրբ մեր կեանքին մէջ եւ Միւռնաօծ հայը կը հրաւիրէ աշխարհի ժխորին մէջ հետեւելու Իրեն, իբրեւ ճշմարիտ ճամբայ, գերագոյն ճշմարտութիւն եւ յաւիտենական կեանք (Յհ 14.6):

Միւռնը խորհրդանիշ է Հայ Եկեղեցւոյ անքակտելի միութեան: Արդարեւ, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Ս. Միւռնին միախառնումը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Միւռնին, եւ փոխարձաբար՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Միւռնին միախառնումը Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Ս. Միւռնին, ինչպէս նաեւ Հայ Եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռներու մասնակցութիւնը Միւռնօրհնութեան, թե՛ Ս. Էջմիածնի եւ թե՛ Անթիլիասի մէջ, պերճախօս վկայութիւն մըն է Հայ Եկեղեցւոյ նոյն եւ մէկ Միւռնին եւ Հայ Եկեղեցւոյ անխախտելի միութեան:

Մէկ ազգի ու մէկ պատմութեան մեր անբեկանելի պատկանելիութեան ամրակում առանցքն է Ս. Միւռնը:

Մեր ազգի աշխարհացրիւ զաւակները համախմբող, անոնց կեանքին խորք ու իմաստ, ինքնութիւն ու նպատակ տուող երկնային ոյժ է Ս. Միւռնը:

Մեր ազգին իւրայատուկ ինքնութեան ամուր շաղախն ու խորհրդրդանիշն է Ս. Միւռնը՝ կեանքի այլասերիչ հոսանքներուն դիմաց:

Մեր ազգի յաւերժական երթին պահապանը, ամբողջականութեան երաշխիքը, անխախտ միութեան հենքը եւ հաւատքի հզօրութեան կնիքն է Սրբալոյս Միւռնը:

Սրբալոյս Միւռնի օրհնութեամբ մեր եկեղեցին ինքզինք կ'ըլլայ իր հարազատ Էութեամբ ու Աստուածատուր վկայութեամբ: Սրբալոյս Միւռնի օրհնութեամբ հայը մասնակից կը դառնայ իր ազգին ու եկեղեցւոյ դարաւոր պատմութեան: Սրբալոյս Միւռնի օրհնութեամբ մեր պատմութեան հոգիի ու մտքի հսկաները, մեր սուրբերն ու նահատակները կը դառնան շնչող ու շնչաւորող ներկայութիւն հայ կեանքին մէջ:

Արդ, Միւռնաբոյր այս պահը մեր հոգեւոր կեանքի վերանորոգ-

ման, մեր ազգային ինքնութեան վերահաստատման պահ է ու միաժամանակ՝ երկնային հրաւեր ազգին Միւռնադրոշմ գաւակներուն.-

Մնացէ՛ք հաւատարիմ ձեր ճակտին վրայ դրոշմուած Ս. Միւռնին, անոր խորհուրդին ու հրամայականին: Մնացէ՛ք հաւատարիմ Սրբալոյս Միւռնի յաւերժական պատգամին:

Սրբալոյս Միւռնով մենք միակամ ենք ու հզօր:

Սրբալոյս Միւռնով Հայաստանը, Արցախը ու Սփիւռքը անբաժանելի մէկ ամբողջութիւն են:

Սրբալոյս Միւռնով մենք դէպի յաղթական ապագայ ընթացող ազգ ենք:

* * *

Եւ այժմ, սա խորախորհուրդ պահուն, նոր օրհնուած Սրբալոյս Միւռնին առջեւ ծունկի գալով եւ մեր ժողովուրդի աշխարհացրիւ գաւակներու աղօթքներուն թարգմանը ըլլալով, աղօթքս կը վերառաքեմ առ Աստուած՝ ըսելով.-

Ո՛վ Տէր, թող այս Միւռնը երկնային օրհնութեամբ շաղախէ մեր ժողովուրդի գաւակներուն կեանքի օրերը, մեր մտածումներն ու գործերը:

Թող այս Միւռնը սրբութիւն ցօղէ տեսանելի ու անտեսանելի մեղքերով լեցուն մեր կեանքին վրայ:

Թող այս Միւռնի օծումով մեր մանուկներուն կեանքը Ս. Հոգւոյն շնորհներով ծաղկի, մեր հոգեւոր մշակները կոչումի խոր գիտակցութեամբ կատարեն իրենց Քրիստոսատուր առաքելութիւնը, մեր եկեղեցիները պայծառանաս հաւատացեալներու աղօթքով ու մասնակցութեամբ

Թող այս Միւռնի հպումով հիւանդները բուժուին, չարիքները հեռանան ու չարերը պարտուին:

Թող այս Միւռնը լուսաւորէ մեր կեանքի խաւար երկինքը ու մոլոր ճամբաները, սրբէ մեր հոգիները, մաքրէ մեր սրտերը ու օրհնէ մեր կեանքը:

Թող այս Միւռնը, ո՛վ Տէր, համախմբէ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մեր ժողովուրդի գաւակները մէկ ազգի ու հայրենիքի շուրջ, մեր պատմութեան այս վճռադրոշմ հանգրուանին:

Թող այս Սրբալոյս Միւռնը դառնայ յաւերժահոս աղբիւր՝ երկնային բարիքներու, հոգեւոր վերածննդեան, ազգային միասնութեան եւ յաւերժայաղթ հայութեան:

ԿՈՆԴԱԿՆԵՐ



**ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՑԱՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ
ԿՈՆԴԱԿՆԵՐՈՒՆ
ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՔԱԾՈՆ ***

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Տրդատ Քհնյ. Թաշճեանին, Քահանայական լանջախաչ
կրելու արտօնութիւն ստանալու առթիւ)

Ընդառաջելով Բերիոյ թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Շահան Արք. Սարգիսեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ ձեզի կը շնորհենք

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՁԱԽԱԶ

կրելու արտօնութիւն՝ յընթացս տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք որ ձեզի շնորհուած այս պատիւը խթան մը պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու ձեր քահանայական ծառայութիւնը՝ Հայ եկեղեցոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ ձեզ, պարգեւելով ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս այս ի Կաթողիկոսարանիս
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 10-ն Փետրուարի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ ՇՅԼԲ.*

* Յունուար 2010-ի թիւով սկսանք հրատարակել Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Կոնդակներու հաւաքածոն, սկսեալ 1995 թուականէն: Սոյն շարքը շարունակութիւնն է ընդհանուր հաւաքածոյին: *ԽՄԲ.*

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Խոբէն Քինյ. Պերթիզլեանին, Քահանայական Լանջախաչ կրելու արտօնութիւն ստանալուն առթիւ)

Ընդառաջելով Բերիոյ թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Շահան Արք. Սարգիսեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ ձեզի կը շնորհենք

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՁԱԽԱՉ

կրելու արտօնութիւն՝ յընթացս տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք որ ձեզի շնորհուած այս պատիւը իրան մը պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու ձեր քահանայական ծառայութիւնը՝ Հայ եկեղեցւոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ ձեզ, պարգեւելով ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս այս ի Կաթողիկոսարանիս
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 10-ն Փետրուարի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԼԴ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տիար Զաւէն Մսրրլեանին, «Ս. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշան ստանալուն առթիւ)

Հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք ձեզ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Վեհարանի կամարներուն ներքեւ: Այս հոգեւոր կեդրոնը ձեզ կ'ընդունի, որպէս անդամ այն աշխարհական փառանգին, որ գործօն մասնակցութիւն ու կարեւոր նպաստ բերած է, եւ կը շարունակէ բերել, մեր Սուրբ Աթոռի առաքելութեան:

Արդարեւ, Լիբանանի հայութեան կեանքէն ներս երկար տարիներու ձեր կրթական-մշակութային ծառայութեամբ նկատառելի ներդրում ունեցաք հա-

յակերտումի առաքելութեան մէջ: Կրթական ասպարէզէն ներս սերունդներու դաստիարակութեան կողքին, դուք, որպէս բանասէր, ձեր տուած շինիչ դասախօսութիւններու կողքին, նաեւ մեր գրադարանները հարստացուցիք հայ քաղաքական մտածողութեան ու յատկապէս հայոց ցեղասպանութեան առնչուած շահեկան հրատարակութիւններով: Ձեր կատարած ուսումնասիրութիւններն ու աշխատասիրութիւնները որպէս ջրտուր պարարտացուցին՝ հայոց ցեղասպանութեան ճանաչման աշխատանքային դաշտը:

Ի գնահատութիւն ձեր ունեցած ազգային-կրթական բեղուն գործունէութեան, այսու Հայրապետական Կոնդակաւ ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

Ս. ՄԵՍՐՈՂ ՄԱՇՏՈՅ ՇՔԱՆՇԱՆ

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ ձեզի շնորհէ քաջառողջ եւ երկար տարիներ՝ աստուածային բարիքներով լեցուն: Թող Աստուած վարձահատոյց ըլլայ ձեզի մեր ազգին մատուցած ձեր նուիրեալ ծառայութիւններուն համար:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակա ի Կաթողիկոսարանիս
Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 23-ն Փետրուարի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԼԵ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տիար Յակոբ Զիլինկիրեանին, «Ասպետ»ի կարգի շքանշան ստանալուն առթիւ)

Հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք ձեզ, որպէս հարազատ գաւալը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, որուն հանդէպ սեր ու նախանձախնդրութիւն ցուցաբերած էք միշտ:

Արդարեւ, քաջատեղեակ ենք երկար տարիներէ ի վեր լիբանանահայութեան ազգային կեանքէն ներս ձեր ունեցած գործօն մասնակցութեան, թէ՛ որպէս բարերար եւ թէ՛ որպէս ժողովական-անդամ ազգային զանազան մար-

միններու, որոնց շարքին յատկապէս՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հոգատարութիւնը վայելող Թոշնոց Բոյնի ինսամակալութեան: Դուք նաեւ նախանձախնդրութիւն ցուցաբերած էք մեր Սուրբ Աթոռի մշակութային առաքելութեան նկատմամբ, եւ ձեր նիւթական ներդրումը բերած մեր ծրագիրներու իրականացման մէջ, որոնց կարգին՝ Կաթողիկոսարանի *Շնորհալի* երգչախումբի 40-ամեակին առթիւ, եւ Տեղեկատուական գրասենեակի բարեգարդման համար վերջերս ձեր կատարած զոյգ նուիրատուութիւնները:

Արդ, ի գնահատութիւն Լիբանանի հայութեան ազգային-եկեղեցական, կրթական-մշակութային կեանքի բարգաւաճման ի խնդիր ձեր բերած նիւթական թէ բարոյական զօրակցութեան, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

ԱՍՊԵՏԻ ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆ

Այս առիթով Մեր բարձր գնահատանքը կը յայտնենք նաեւ ձեր ազնիւ Տիկնոջ՝ Տիկին Սօսիին, որ եղաւ միշտ ձեր կողքին եւ քաջալեր հանդիսացաւ ձեզի ձեզ ազգանուէր ու մշակութանուէր գործունէութեանց մէջ:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ ձեզի, ձեր Տիկնոջ, զաւակներուն եւ Չիլիկիոյն ընտանիքի բոլոր անդամներուն շնորհէ քաջատողջ եւ երկար կեանք՝ աստուածային անսպառ բարիքներով լեցուն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակա ի Կաթողիկոսարանիս
Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 1-ն Մարտի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԼԶ.*



ՄԻՒՌՆՈՐԶՆԵՔ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ
ՉԵՌԱՄԲ ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՆԻ ՕՐՀՆՈՒԹԻԻՆ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

Հայ Եկեղեցին վերանորոգող ու մարդ անհատի հոգին մաքրող արարողութիւններէն մէկը՝ Սրբալոյս Միւռոնի օրհնութիւնը, աւանդութեան համաձայն, տեղի կ'ունենայ եօթը տարին անգամ մը: Հասած է ժամը Միւռոնօրհնութեան: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութեան Անթիլիասական շրջանի տասնըրրորդ Միւռոնօրհնութիւնն է որ կատարուեցաւ: Աշխարհի չորս անկիւններէն Հայ Եկեղեցւոյ հաւատարիմ զաւակներ եկած են մասնակից դառնալու եւ դիտելու, թէ ինչպէս Կիլիկիոյ Ս. Աթոռի Սրբազնագոյն Արամ Ա. Կաթողիկոսը՝ Գրիգոր Լուսաւորիչէն Միս հասած Սրբալոյս Միւռոնը Անթիլիասի նոր Ս. Միւռոնին մէջ կը հեղու:







Արդարեւ, Ուրբաթ, 1 Յունիսի երեկոյեան ժամը 07:00-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը Եպիսկոպոսապետի հանդերձաւորումով դուրս եկաւ Վեհարանէն՝ գլխաւորելու եւ նախագահելու Սրբալոյս Միւռոնի օրհնութեան Հայրապետական շքերթն ու արարողութիւնը: Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջը պահպանող պատմական արկղը շալկող երկու հոգեւորականներ, Ս. Էջմիածնի Միւռոնը, հին Միւռոնը, բալասանը եւ վարդի իւղը բռնող եպիսկոպոսներ եւ միաբան հայրեր, հանդիսաւոր թափօր կազմած հասան Մայր Տաճարի մուտքին բարձրացած Ս. Խորան:

Հայաստանէն եւ Սփիւռքի զանազան գաղութներէն բազմահազար ուխտաւորներ արդէն օրեր առաջ սկսած էին ժամանել Անթիլիասի Մայրավանք: Ուխտաւորներու ներկայութեամբ առաւել եւս գեղեցկացած էր Անթիլիասի Մայրավանքի շրջափակը: Հոծ թիւով հաւատացեալներու ներկայութիւնը կը հաստատէր մեր ժողովուրդի ամուր կապուածութիւնն ու հաւատարմութիւնը Հայ Եկեղեցոյ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ անոր հաւատքի առաքելութեան նկատմամբ:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմակալ առաջնորդներու շարքին, սրբազան արարողութեան իրենց մասնակցութիւնը բերին Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ներկայացուցիչներ՝ Գերշ. Տ. Մուշեղ Եպս. Պապայեան եւ Գերշ. Տ. Վրթանէս Եպս. Աբրահամեան. իսկ Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքութենէն՝ Գերշ. Տ. Արամ Արք. Աթէշեան:

Սրբազան արարողութեան ներկայ եւ աղօթակից էին զանազան եկեղեցիներու՝ Ասորի եկեղեցոյ պետ Նորին Սրբութիւն Աֆրամ Բ. Պատրիարքը, Ֆրանսիս Պապին անձնական ներկայացուցիչը, ինչպէս նաեւ Ղպտի Ուղղափառ, Մարոնիթ, Յոյն Ուղղափառ, Յոյն Կաթողիկ, Ասորի Կաթողիկ, Հայ Կաթողիկ, Քաղզկացի, Աւետարանական եկեղեցիներու ներկայացուցիչներ: Ներկայ էին նաեւ պետական բարձրաստիճան անձնաւորութիւններ, Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպանը, Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամներ, մարմիններու եւ միութիւններու ներկայացուցիչներ եւ մեծ թիւով հաւատացեալ ուխտաւորներ: Զանազան եկեղեցիներու պետերը, որոնք չկրցան անձամբ եւ կամ ներկայացուցիչներու միջոցաւ ներկայ գտնուիլ արարողութեան, շնորհաւորական նամակներ յղեցին Վեհափառ Հայրապետին:

Միւռոնօրհնութեան կնքահայրութիւնը ստանձնած էր Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Ազգային Վարչութեան փոխ ատենապետ՝ Մհեր Տէր Յովհաննէսեան: Հայրապետական Ամպ Հովանին բռնելու պատիւը տրուեցաւ՝ Ստեփան Տէր Պետրոսեանի, Կարօ Էշկիեանի, Յովսէփ Աւետեանի, Զաւէն Կէօնճեանի, Գրիգոր Մահսէրէճեանի, Վարդան Նարինեանի, Վարդգէս Մահստեանի եւ Հրաչ Յակոբեանի: Վեհափառ Հայրապետին առընթերակայ եպիսկոպոսներն էին՝ Արաբական Միացեալ Էմիրութիւններու եւ Քաթարի ու Շրջակայից Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Մարգիսեան եւ Միացեալ Նահանգներու Արեւմտեան Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեան:





Միւռոնօրհնէքի արարողութեան երգեցողութիւնը կատարեց Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Հոգչ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի:

Արարողութիւնը ընթացաւ Աստուածաշնչական եւ աղօթքներու ընթերցումներով՝ Վեհափառ Հայրապետին ու մասնակից եպիսկոպոսներու կողմէ, աղերսելով Աստուծային օրհնութիւնը ու Ս. Հոգիին ներգործութիւնը: Սրբալոյս Միւռոնի պատմական կաթսային կափարիչը բացուեցաւ եւ արարողապետ Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեանի հրաւերով եպիսկոպոսներ հերթաբար Վեհափառ Հայրապետին յանձնեցին անուշաբոյր վարդի իւղն ու բալասանը, որ յատուկ աղօթքներու ընթերցումով նորին Ս. Օծութիւնը խառնեց նոր Միւռոնին: Ապա, ան նոր Միւռոնին խառնեց Ս. Էջմիածնի Միւռոնը, ի նշան Հայ Եկեղեցւոյ անքակտելի միութեան: Եւ, վերջա-



պէս, Վեհափառ Հայրապետը հեղուց եռամեծար հայրապետներուն ձեռքով պատրաստուած հին Միւռոնը: Աւարտին, Վեհափառ Հայրապետը Հայ Եկեղեցւոյ հաւատքի հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի Աջով օրհնեց Միւռոնն ու ներկայ հազարաւոր ժողովուրդը:

Գերշ. Տ. Մուշեղ Եպս. Պապայեան փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին ողջոյնի խօսքը, ուր ան Արամ Ա. Վեհափառ Հայրապետին կը փոխանցէր իր եղբայրական ողջոյնները, իսկ ներկայ հոգեւորականաց ղասուն եւ հաւատացեալ ժողովուրդին՝ Հայրապետական օրհնութիւններն ու սէրը:





Հոգեպարար արարողութեան աւարտին, Սրբազնագոյն Հայրապետը բազմաձազար ներկայ հաւատացեալներուն փոխանցեց իր Հայրապետական հոգեշունչ պատգամը:

Խօսելով Ս. Միւռոնի մասին, Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Սոսկ ծիսական արարողութիւն մը չէ Միւռոնի օրհնութիւնը: Ան Աստուծոյ էջֆն է երկիր ու մարդուն բարձրացումը երկինք: Աստուծոյ ու մարդու հաղորդութեան խորախորհուրդ պահն է Միւռոնի օրհնութիւնը՝ Ս. Հոգւոյ երկնառաք շնորհներու ներգործութեամբ: Մեր ազգին հոգեւոր պայծառակերպումի ու ազգային վերանորոգման պահն է Միւռոնի օրհնութիւնը՝ մեր հոգեւոր ու ազգային աւանդութիւններու, արժէքներու ու սպրումներու միախառնումով: Խոր է իմաստը եւ հրաշագան խորհուրդը հայու Սրբալոյս Միւռոնին: Աստու-



ծոյ ստեղծագործութեան բարիքները կան Միւռոնին մէջ՝ ձեռքի կողքին աւելի քան քառասուն ծաղիկներու եւ հունտերու ներդաշնակ միաձուլումով: Իր նիւթեղէն գոյութենէն անդին՝ երկնային սրբութեան ցօղն է Միւռոնը մեր մեղապարտ կեանքին վրայ ու երկնային լոյսին քառագայթը մեր խաւար երկնքին վերեւ»:

Շարունակելով իր պատգամը, Նորին Սրբութիւնը յայտնեց, թէ «Միւռոնաբոյր այս պահը մեր հոգեւոր կեանքի վերանորոգման, մեր ազգային ինքնութեան վերահաստատման պահ է ու միաժամանակ՝ երկնային հրաւեր ազգին միւռոնադրոշմ գաւակներուն.-





Մնացե՛ք հաւատարիմ՝ ձեր քակտին վրայ դրոշմուած Ս. Միւռոնին, անոր խորհուրդին ու հրամայականին: Մնացե՛ք հաւատարիմ՝ Սրբալոյս Միւռոնի յաւերժական պատգամին:

Սրբալոյս Միւռոնով մենք միակամ ենք ու հօօր:

Սրբալոյս Միւռոնով Հայաստանը, Արցախը ու Սփիւռքը անբաժանելի մէկ ամբողջութիւն են:

Սրբալոյս Միւռոնով մենք դէպի յաղթական ապագայ ընթացող ազգ ենք»:

Իր պատգամի աւարտին, Նորին Ս. Օծութիւնը աղօթք վերառաքեց ամենակալ Աստուծոյ՝ խնդրելով Ս. Հոգւոյ շնորհները. - «Ո՛վ Տէր, թող այս Միւռոնը երկնային օրհնութեամբ շաղախէ մեր ժողովուրդի գաւակներուն կեանքի օրերը, մեր մտածումներն ու գործերը:

Թող այս Միւռոնը սրբութիւն ցօղէ տեսանելի ու անտեսանելի մեղքերով լեցուն մեր կեանքին վրայ:

Թող այս Միւռոնի օծումով՝ մեր մանուկներուն կեանքը Ս. Հոգւոյն շնորհներով ծաղկի, մեր հոգեւոր մշակները կոչումի խոր գիտակցութեամբ կատարեն իրենց քրիստոսատուր առաքելութիւնը, մեր եկեղեցիները պաշտօնան հաւատացեալներու աղօթքով ու մասնակցութեամբ:

Թող այս Միւռոնի հպումով հիւանդները բուժուին, չարիքները հեռանան ու չարերը պարտուին:

Թող այս Միւռոնը լուսաւորէ մեր կեանքի խաւար երկինքը ու մուրք քամբաները, սրբէ մեր հոգիները, մաքրէ մեր սրտերը ու օրհնէ մեր կեանքը:

Թող այս Միւռոնը, ո՛վ Տէր, համախմբէ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մեր ժողովուրդի գաւակները մէկ ազգի ու հայրենիքի շուրջ՝ մեր



պատմութեան այս վեոսդրոշմ հանգրուանին:

Թող այս Սրբալոյս Միւռոնը դառնայ յաւերժահոս աղբիւր՝ երկնային բարիքներու, հոգեւոր վերածննդեան, ազգային միասնութեան եւ յաւերժա-
յաղք հայութեան»:

Ապա, իր ողջոյնի խօսքին մէջ, Ասորի եկեղեցւոյ պետ Նորին Սրբութիւն Աֆրամ Բ. Պատրիարքը յայտնեց, թէ հակառակ աշխարհին դիմագրաւած մարտահրաւէրներուն, քրիստոնեայ եկեղեցիները միասնաբար կը փորձեն դիմակայել բոլոր տեսակի դժուարութիւնները: Ան վերջիչեց հայ եւ ասորի ժողովուրդներուն եւ եկեղեցիներուն ունեցած դարաւոր յարաբերութիւնը՝ շեշտելով, որ Սրբալոյս Միւռոնի օրհնութեան այս արարողութիւնը առիթ կ'ընծայէ վերանորոգելու երկու եկեղեցիներու եւ ժողովուրդներու միջեւ գոյութիւն ունեցող եղբայրական ոգին:

*Պատրիարքի խօսքէն ետք, Ֆրանսիս Պապին ողջոյնի խօսքը փոխանցեց պապական ներկայացուցիչը: Պապը իր ողջոյնի խօսքին մէջ անդրադարձաւ Վատիկանի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջեւ գոյութիւն ունեցող սերտ յարաբերութեան եւ իր աղօթքը միացուց Անթիլիասի Մայ-
րավանքին մէջ հաւաքուած ուխտաւոր ժողովուրդին:*

Սրբալոյս Միւռոնի օրհնութեան արարողութիւնը իր աւարտին հասաւ Վեհափառ Հայրապետին «Պահպանիչ» աղօթքով, «Կիլիկիա» քայլերգով եւ «Ի վեհ բարձանց» ու «Կիլիկեան ուխտի» Հայրապետական մաղթերգերով:

Վեհարանի մուտքին, Վեհափառ Հայրապետը Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին Աջով օրհնեց հաւատացեալ ներկայ ժողովուրդը:



ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՆԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՒՅՑ ՄԻՌՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՑ Է

Կամօքն Աստուծոյ, 1 Յուլիս 2022-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Սրբազնագոյն Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը՝ կանոնական աղօթքով եւ մեր հաւատոյ հայր Ս. Գրիգոր Լուսաւորչի Ս. Աջով Կաթողիկոսարանի մայրավանքին մէջ պիտի կատարէ Սրբալոյս Միւռոնի օրհնութիւնը:

Միւռոնը ձիթաիւղի եւ դափնիի իւղի հետ միախառնուած անուշաբոյր բոյսերով պատրաստուած իւղ է, որ կը գործածուի սրբագործելու եւ նուիրագործելու ամէն անձ կամ սպաս, որ Աստուծոյ ծառայութեան նուիրուած է:

Ս. իւղի գործածութիւնը աստուածաշնչական ժամանակագրութեան մէջ ետ կ'երթայ մինչեւ Մովսէս մարգարէ: Հին Կտակարանի Ելից գիրքին մէջ կը կարդանք, թէ Աստուած Մովսէսին պատուիրեց, որ Ս. օծութեան իւղ պատրաստէ, թուելով անոր բաղադրութիւնը, եւ թելադրեց անոր որ Ս. իւղով օծէ Աստուծոյ պաշտամունքին հետ կապուած բոլոր վայրերն ու առարկաները: Ինչպէս նաեւ թելադրեց օծել Մովսէսի եղբայրը՝ Ահարոնը եւ անոր որդիները՝ քահանայութեան համար: Ս. իւղով կ'օծուէին նաեւ մարգարէներ եւ թագաւորներ, ինչպէս Դաւիթ թագաւոր (Ելք 30.22-30):

Քրիստոնէական առաջին շրջանէն իսկ, առաքելական շրջանէն, իւղով օծելու սովորութիւնը պահուած է: Ս. իւղի օծումը կը խորհրդանշէ աստուածային շնորհքներուն ստացման տեսանկիւ արտայայտութիւնը: Ս. Հոգիին ներգործութեամբ կենդանացած մկրտութեան ջուրէն հոգեւորապէս ծնած քրիստոնեան կը դրոշմուի, կը կնքուի Ս. Միւռոնով՝ ի նշան Ս. Հոգւոյն շնորհքներու ստացման: Կը դրոշմուին մկրտողին մարմնի անդամները՝ ճակատը, աչքերը, ականջները, քիթը, շրթունքները, սիրտը, ձեռքերը, կռնակը եւ ոտքերը: Իւրաքանչիւր անդամ կը դրոշմուի իրեն յատուկ աղօթքով:

Հայ Եկեղեցւոյ պատմութեան համաձայն, առաջին Միւռոնը օրհնած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ: Այնուհետեւ, ամէն անգամ օրհնուող նոր Միւռոնին մէջ միշտ միախառնուած է հին միւռոնէն բաժին մը, այսպէսով սերունդէ սերունդ փոխանցուած է լուսաւորչական Միւռոնի հնաւանդ սրբալոյս շնորհը:

Հայ Եկեղեցւոյ կանոնին համաձայն, միւռոնօրհնէք կը կատարուի եօթը տարին անգամ մը: Միւռոնի պատրաստութիւնը կը կատարուի քառասունէ ակելի ծաղիկներ եւ այլ անուշաբոյր նիւթեր ձիթաիւղի եւ դափնիի իւղի մէջ խառնելով: Երկու օր շարունակ հանդարտ կրակի վրայ եփելէ ետք, կը տեղադրուի Միւռոնի կաթսային մէջ եւ ապա կը զետեղուի Կաթողիկոսարանի Մայր Տաճարի խորանին վրայ, ուր կը մնայ քառասուն օրեր: Այդ միջոցին, ամէն օր եկեղեցական ժամերգութեանց ընթացքին կը կարգացուին յատուկ աղօթքներ եւ սաղմոսներ:

Հայ Եկեղեցւոյ մէջ, միւռոնօրհնէք կատարելը Կաթողիկոսի առանձնաշնորհումներէն մէկն է: Պատրաստութեան քառասուն օրեր ետք, Կաթողիկոսը, յընթացս Ս. Պատարագին, շրջապատուած հանդիսաւորապէս զգեստաւորուած 12 եպիսկոպոսներով կը կատարէ Ս. Միւռոնի օրհնութիւնը՝ հին Միւռոնէն նորին մէջ խառնելով եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի Ս. Աջին մասունքով օրհնելով:

Սրբալոյս Միւռոնը Հայ Եկեղեցւոյ միութեան վեհագոյն խորհրդանիշն է: Ամենայն Հայոց կաթողիկոսութեան Ս. Էջմիածնի մէջ միւռոնօրհնէքին ներկայ կ'ըլլան ու կը մասնակցին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատուիրակ եպիսկոպոսներ. փոխադարձաբար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Կաթողիկոսարանին մէջ կատարուած միւռոնօրհնէքին կը մասնակցին Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եպիսկոպոս պատուիրակներ, որոնք իրենց հետ կը բերեն Միւռոն եւ արարողութեան ընթացքին կը խառնեն նոր օրհնուող Միւռոնին մէջ: Այդ հոգեթով պահուն ներկայ ուխտաւոր հաւատացեալները իրենց անգսպելի բերկրանքն ու գոհունակութիւնը կը յայտնեն ծափահարութիւններով: Եթէ նոր Միւռոնին մէջ հին միւռոնէն խառնելը կը խորհրդանշէ դարերու լուսաւորչական օրհնութեան շարունակականութիւնը, ապա նաեւ երկու կաթողիկոսութիւններու Միւռոններու միախառնուիլը կը խորհրդանշէ Հայ Եկեղեցւոյ միութեան եւ մէջ սրբալոյս միւռոն ունենալուն իրականութիւնը: Այլ կարծիքներու եւ համոզումներու տեղի տուող տարակարծութիւններու պատճառները հետեւանք են, հայ ժողովուրդի ապրած ու դիմագրաւած պատմաքաղաքական եւ աշխարհագրական տարապայման հարկեցուցիչ պարագաներու, որոնք դարերէ ի վեր առ այսօր ալ կը յամենան: Անկասկած սակայն, ի լրումն ժամանակի, այդ բոլոր պարագաները՝ հայ ժողովուրդի ողջախոս եւ իրապաշտ տնօրինումով պիտի չքանան եւ Հայ Եկեղեցւոյ միութիւնը շատ աւելի պայծառ եւ գեղեցիկ կերպով պիտի դրսեւորուի մեր ժողովուրդի կեանքին մէջ:

Սրբալոյս Միւռոնը տեսանելի խորհրդանիշն է Ս. Հոգւոյ շնորհներուն աղբերացման մեր կեանքէն ներս: Իւրաքանչիւր միւռոնօրհնէք, Ս. Հոգւոյ շնորհներու գեղման շարունակականութեան ապացոյցն է: Միւռոնօրհնէքը, մեր ժողովուրդի զաւակներուն կեանքին մէջ հոգեւոր ապրումներու արծարծման եւ ջերմեռանդ հաւատքի հաստատման օրհնալի առիթներէն մէկն է:

Հայ Եկեղեցւոյ աւագանէն նորոգ մկրտեալի ճակտին դրոշմուած միւռոնը Ս. Հոգւոյն շնորհներուն ստացման կողքին, հայութեան կնիքն է: Սրբալոյս Միւռոնը հայուն հաւատքն ու ազգութիւնը զօղող յօդակապն է: Ս. Գրիգոր Նարեկացիի Նարեկ աղօթամատեանի Սրբալոյս Միւռոնին նուիրուած աղօթքին մէջ կը հանդիպինք հետեւեալ բառերուն՝ «...երբ Սուրբ Երրորդութեան ներգործութիւնը կը խառնուի անոր (միւռոնին) մէջ, անիկա կ'ըլլայ շնորհաց ճառագայթ, որ կը շքաւորէ մեր դէմքը, կը գեղեցկացնէ երեսը»: Հայկական ժողովրդային հարազատ մէկ արտայայտութիւնն է շնորհալի անձին համար ըսել, որ ճակտին Միւռոն կայ, եւ հակառակը, անշնորհ մարդուն համար ըսել՝ ճակտին Միւռոն չկայ: Ուստի, միւռոնօրհնէքի առիթն ու արարողութիւնը հաւատացեալները առինքնող համագգային ուխտագնացութիւնն է: Անգամ մը եւս, մեր ժողովուրդի զաւակները հրաւիրուած են Սրբալոյս Միւռոնին հետ հաղորդուելու եւ հոգեպէս զուարթանալու ու պայծառանալու եւ հայկական ինքնութեամբ ամրապնդուելու:

ԳԵՂԱՄ ԱՐՔ. ԽԱԶԵՐԵԱՆ
Առաջնորդ Յուկաստանի Հայոց

ՍՓԻՒՌԷԻ ԱՌԱՋԻՆ ՍԻՒՌՈՆՆՕՐՀՆԵՔԻՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Սրբալոյս Միլոնին նշանակութիւնը մեր ժողովուրդի կեանքին մէջ մեծ է:

Սփիւռքի տարուան Յուլիս 1-ին Միլոնի օրհնութեան ընդառաջ սոյն յօդուածը կ'արձանագրեմ թէ՛ գործնապէս մասնակցելու ընդհանուր զօրաշարժին, թէ՛ փոքր վրիպում մը սրբագրելու բարի դիտաւորութեամբ:

«Սրբալոյս Միլոն»-ը մեր եկեղեցւոյ աւանդութեամբ եօթ տարին անգամ մը կատարուող հոգեւոր ու ազգային կարեւոր տօնախմբութիւն եւ իրադարձութիւն մըն է:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր պատմական հողերէն՝ Կիլիկիայէն նախքան տարագրուելը, վերջին անգամ, հայրենի հողին վրայ՝ 20 Ապրիլ 1914-ին, Աշխարհամատրան Կիրակիին, Միլոննօրհնէք տեսաւ վըշտակիր Սահակ Բ. Խապայեան Հայրապետի ձեռքով¹: Աքսորի սկզբնաւորութեան (13 Սեպտեմբեր 1914), որպէս «չարագուշակ նշան» փոխադրուող Միլոնը արկածահար ըլլալով թափեցաւ. խօսքը տանք վկայագրողին (Խաղճապա. Աջապահեան) եւ պատմագրողին (Բիւզանդ. Եղիայեան). «հազիւ թէ հասած քաղաքին ծայրը՝ արկածով մը Միլոնին ամանը կը կոտրի եւ Սոյն նուիրական հողը՝ վերջինը ըլլալով, անգամ մը եւս կ'օծուի մօտ երեք լիտր Սրբալոյս Միլոնով: Մեկնումի օրն իսկ պատահած սոյն դէպքը տարագրութեան արիւննոտ ճամբուն վրայ՝ առաջին շարագուշակ նշանը կ'ըլլայ մեզ համար. այն օրէն յուսահատութիւնը կը պատէ մեզ եւ մօտալուտ մահուան հեռապատկերը սոսկում կ'ազդէ մեր վրայ, սակայն եւ այնպէս ապաւինելով Տիրոջ օգնականութեան՝ Կիլիկեան դաշտին վրայ լճացած Ս. Միլոնը բացուած փոսին մէջ թաղելէ յետոյ կը շարունակենք մեր ճամբան»²:

Երջանկայիշատակ ու բազմաչարչար Սահակ Բ. Խապայեան կաթողիկոս, Միջին Արեւելքի մէջ թափառումներու ընթացքին՝ 1922-ին, մտածեց նոր Միլոնն օրհնել, սակայն Կիլիկիոյ պարպումի հետեւանքներն ու գաղթակա-

¹ Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս Արք. Սարաճեանի, խմբագրեց՝ Վարուժան Արք. (Հերկելեան), «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Արխիւներ, թիւ 4», Նիկոսիա-Կիպրոս, 2010, էջ 390-391, ուր կը գտնենք 5 Մարտ 1914-ին, Ատանա, Սիւրնօրհնէքի «Շրջաբերական»ը:

² Բիւզանդ. Եղիայեան, Ժամանակակից Պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 1914-1972, Անթիլիաս, 1975, էջ 167:

նաց ահաւոր վիճակը անկարելի դարձուցին ծրագրի իրականացումը³: Յաջորդ տարին, սակայն, հայրապետական տնօրինումով, Հայէպի պատմական Մրբոց Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ մէջ, Վեհափառ նախաձեռնեց հայկական նոր սփիւռքի առաջին Միւռնորհնէքը⁴, որ տեղի ունեցաւ ներկայ թուականէս 99 տարի առաջ՝ 27 Մայիս 1923-ին:

Այսօր, երբ կը պատրաստուինք նոր Միւռնորհնէք, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի ձեռքով (իր քառորդ դարու հայրապետութեան հինգերորդը եւ սփիւռքացեալ Ս. Աթոռին 13րդը), մեր միաբանակից եղբայրներէն՝ Գերշ. Տ. Մակար Եպս. Ազգարեան այս առնչութեամբ աշխատանքի մը ընթացքին, Կիլիկիա Մատենադարանէն ներս, ուշադրութեանս յանձնեց թուականներու այլազանութիւն մը: Սահակ Բ. Հայրապետի Հայէպի մէջ կատարած Ս. Միւռնորհնէքի թուականը գարմանալի կերպով տարբեր գրութեանց մէջ տարբեր թուականներ կը կրէ: Ուստի, վերադարձայ մեր Ս. Աթոռի պատմութեան եւ հաստատելով Մրբազան Հօր ըսածը, հետեւեալները արձանագրեցի, որպէսզի «սրբագրուի» վրիպում մը:

Այստեղ, Կիլիկիա Մատենադարանէն եւ Արխիւներէն դուրս բերելով, ժամանակագրական ձեւով, կը ներկայացնեմ ցարդ գրուածներուն աղբիւրները, զանց ընելով հայ մամուլին մէջ՝ տարբեր առիթներով երեւցող ակնարկները, վերջնական ու ճշգրիտ վերոնշեալ թուականը կ'արձանագրեմ:

1) Բարգէն Ա. Աթոռակից Կաթողիկոս Կիլիկիայի, Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս, 1939:

Այս կարեւոր հատորին մէջ, Ս. Միւռնորհնէքի վերաբերող հետեւեալ տուեալները կը գտնենք: Սիւնակ 565-566 «Միւռնորհնէքի Կաթոսայ» սեւ/ճերմակ նկարը (թէեւ Պատկերներու Ցանկին մէջ՝ էջ ԺԳ, սիւնակ էջաթիւ՝ 465 դրուած է Շ.): Լուսանկարը Տէրունեանի գործն է եւ հրատարակուած է «ի Յիշատակ Միւռնորհնէքի, 27 Մայիս 1923» (որ ի դէպ ճշգրիտ թուականն է Շ.). իսկ սիւնակ 567 Միւռնորհնէքի Կաթոսային արձանագրութիւնը արտագրուած է, որ պատրաստուած է Կիրակոս Ա. Աջապահեան Մեծի օրերուն՝ 1817 թ.: Յիշենք, որ Սահակ Բ. Խապայեան Հայրապետ 1903 Ապրիլ 20-ին (Կանաչ Կիրակի) օծուեցաւ Կաթողիկոս, իսկ յաջորդ Կիրակիին՝ Ապրիլ 27-ին (Կարմիր Կիրակի) կատարեց առաջին մեծահանդէս Միւռնորհնէքը (սիւնակ 812-816): Իսկ, «1923 Մայիս 29-ին (վրիպում մըն է Շ.) ի Հայէպ Քառասուն Մանկանց մէջ Միւռնորհնէք կը կատարէ» (սիւնակ 977): Այդ օրերուն Հայէպի Թեմի յաջորդական Կաթողիկոսական Փոխանորդներ նշանակուած էին՝ Խաղ. Մ. Վրդ. Աջապահեանը 1923, Ապրիլ 10-ին, որուն կը յաջորդէ նոյն պաշտօնով Փառէն Մ. Վրդ. Մելքոնեան, իսկ 1924 Յուլիս 13-ին Եփրեմ Մ. Վրդ. Տոհմունի (սիւնակ 978):

³ Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս Արք. Սարաճեանի, էջ 84:

⁴ Սահակ եւ Բարգէն Կաթողիկոսներ կը գործածէին նաեւ «մեռն», «մեռնօրհնէք» եւ «Սրբալոյս Մեռնի Օրհնութիւն» ձեւերը:

2) Արտաւագր Արք. Սիրմէեան, Պատմութիւն Հալէպի Հայոց, Գ. հատոր, Փարիզ 1950:

Այս աշխատասիրութեան մէջ կան Տէրունեանի լուսանկարներէն՝ «Ս. Միւռոնի հանդիսաւոր օրհնութիւն Հալէպի մէջ, 1923-ին» (էջ 261), «Ս. Քառասուն Մանուկ եկեղեցւոյ աւագ խորանը՝ որուն աջ կողմը կը տեսնուի Ս. Միւռոնի գեղակերտ Կաթսան» (էջ 264): Այստեղ կ'արձանագրեմ նաեւ Ոսկերիչեանի հատորիկին⁵ մէջ տպագրուած Տէրունեանի



լուսանկարներէն՝ «Սրբալոյս Միւռոնի Կաթսան» (էջ 21), վկայութիւն մը՝ «Կիլիկիոյ աթոռը Միւրիա հաստատելէ վերջ, Վեհափառ Հայրապետը, եկեղեցական կարգ մը ուրիշ գործերու հետ, 1923 Մայիս 27-ին, ծովածաւալ հաւատացեալներու ներկայութեան Հալէպի մէջ Միւռոնօրհնէք կատարեց» (էջ 38) եւ օրուան աղերսուած խմբանկար մը՝ «Միւռոնօրհնէքի Քահանայից Դասը» (էջ 51), թէեւ անունները պակասաւոր եւ տեղերը հաւանաբար՝ սխալ (էջ 51), որոնց մասին շնորհակալութեան խօսքին մէջ կը յիշէ «արուեստագէտ-լուսանկարիչ տիար Կիւլպէնկ»ը, «որ գլըքիս մէջ գտնուած պատկերներուն մեծ մասը առանց հատուցումի պատրաստեց» (էջ 54):

⁵ Ոսկերիչեան, Ե. Ա., Կիլիկեան Յուշեր (պատկերագարդ), Հալէպ, 1930:

3) Բիւզանդ Եղիայեան, Ժամանակակից Պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 1914-1972, Անթիլիաս, 1975:

Այս ծաւալուն հատորին մէջ կը կարդանք. «1923 Մայիս 23-ին (դարձեալ վրիպում մը Շ.), Հալէպ, Կիլիկեան հին կաթողիկոսանիստ քաղաքին մէջ, Հոգեգալուստի տօնին, Ս. Միւռոն կ'օրհնէ, գաղթային շրջանին մէջ առաջին անգամն ըլլալով: Այս մասին Հալէպէն իր Յունիս 6-ի նամակով կը գրէ Բաբգէն Եպիսկոպոսին՝ Երուսաղէմ. «Ս. Միւռոնի պակասութիւնը եւ անհրաժեշտ պէտքը պարտաւորեցին զմեզ Մայիս 23-ին Հալէպ մեկնիլ, եւ Հող(գ)եգալստեան օրը ծովածաւալ գաղթականաց ի միւրթարութիւն օրհնութիւն կատարել, եւ մենք ալ յոգնութեան ու տկարութեան օրհնութեամբ վարձատրուիլ...» (Թղթօր. 100/2, էջ 896)» (էջ 233-234): Այս հատուածի տողատակին՝ թիւ 2 ծանօթագրութեան մէջ, Եղիայեան կը գրէ. «Պետրոս Արքեպիսկ. Սարաճեան (յետոյ կաթողիկոս), որ լրացնելու համար Բաբգէն Ա. Կաթողիկոսի գործը, «Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ», գրի առաւ ասոր վերջին մասը եղող «Սահակ Բ. Խապայեան» գլուխը, Ս. Միւռոնի օրհնութեան թուական կը յիշէ 1923 Մայիս 9 (Եղիայեանի նշումը ճիշդ չէ, քանի իր նշած էջին (սիւնակ 977) վրայ ստուգեցինք՝ 29 է եւ ոչ 9 Շ.): Կը թուի այս թուականը առած է Սահակ Կաթողիկոսի եւ Փառէն Ծ. Վարդապետի փոխանակած նամակներէն, Մայիս 8 թուակիր, ուր կ'ըսէ. «Վաղը՝ Ժեներալ Վէյկանի⁶ հետ տեսակցութենէ ետք, Հալէպ պիտի մեկնիմ, եւ եթէ անդորրութիւնը չիանգարուի՝ Հոգեգալուստին Ս. Միւռոնի օրհնութիւն պիտի կատարուի»: Մայիս 9-ը, ուրեմն, Կաթողիկոսի Հալէպ մեկնումի օրն է, ոչ թէ միւռոնօրհնէքի (Անդ, թւհմր. 873)»⁷:

4) Փառէն Եպս. Մելիքեան, Յօդուածներ եւ Ուսումնասիրութիւններ, իմր. Գրիգոր Ծ. Վրդ. Զիֆթեան, Անթիլիաս, 2005:

Այս գիրքը թէեւ 21րդ դարուն տպագրուած է, սակայն հեղինակը ապրած եւ վախճանած է 20րդ դարու կիսուն (+ 1957 թ.): «Կիլիկիոյ թեմերուն 45 պատգամաւորներուն 62 ձայնով եւ համաձայնութեամբ, Կաթողիկոս կ'ընտրուի (1902 Հոկտեմբեր 12) մեր Հոգեւոյս Հայրապետը (Սահակ Բ.), որ 1903 Ապրիլ 20-ին կ'օծուի շքեղ եւ փառաւոր հանդիսաւորութեամբ. եւ յաջորդ Կիրակին ալ անդրանիկ Միւռոնօրհնէքը կը կատարէ, նոյն շուքով եւ հանդիսութեամբ» (էջ 610): Նոյն գիրքի ծանօթագրութեան բաժինին մէջ (թիւ 8) կը կարդանք. «1923-ին, Հալէպի Միւռոնօրհնէքին, նոյնիսկ երկու առընթերակից Եպիսկոպոսի չգոյութեան պատճառաւ, Հոգեւոյս Հայրապետը ստիպուած էր երկու վարդապետներուն (Խաչատուր եւ Փառէն) արտօնել Եպիսկո-

⁶ Հրամանատար Մաքսիմ Վեյկան (General Maxime Weygand) Սուրիոյ ֆրանսական հովանաւորութեան Բարձր Յանձնակատարը՝ 19 Ապրիլ 1923 մինչեւ 28 Նոյեմբեր 1924:

⁷ Եղիայեան, Ժամանակակից, էջ 234:

պոսական զգեստ եւ խոյր առնել իր երկու կողմը՝ կրելու համար երկու Հայ-րապետներու Աջերը: Որովհետեւ Կիլիկեան վեց Եպիսկոպոսներէն երկուքը (Ներսէս եւ Խորէն նահատակուած էին վերջին պատերազմին, երկուքը (Մուշեղ եւ Գիւտ) կարգաթող եղած, եւ երկուքը (Պետրոս եւ Եղիշէ) չէին կրցած գալ Հալէպ եւ, իբրեւ իրական Եպիսկոպոսներ, առընթերակից լինել Սրբազան Հայրապետին» (էջ 615):

5) Տէմիրնեան, Վարդան Եպս., Գաւազանագիրք Լիբանանի եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեանց, Ա. Հատոր, Անթիլիաս, 1980:

Այս հատորին մէջ կը կարդանք. «1923 Մայիս 23-ին (կրկին վրիպում Շ.), Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ Սահակ Կաթողիկոս կը կատարէ Միւռնոնօրհնէք, ամէն կողմէ Ս. Միւռնոնի խնդրանքներուն գոհացում տալու համար» (էջ 304–304) եւ տողատակի թիւ 1 ծանօթագրութեան տեղիք կը նշէ՝ «Պատմութիւն Հալէպի Հայոց, Գ., էջ 977», որ սակայն որեւէ ձեւով կարելի չեղաւ գտնել Արտաւազդ Արք. Միւրմէեանի վերոյիշեալ գիրքին համապատասխան էջը:

6) Կոմիտաս Ծ. Վրդ. Օհանեան, Ս. Միւռնոնի Խորհուրդը եւ Միւռնոնօրհնութեան Իմաստը, Անթիլիաս, 1988:

Գարեգին Բ. Կաթողիկոսի կատարած երկրորդ Միւռնոնօրհնէքին (առաջինը՝ Աթոռակցութեան ժամանակ եւ Խորէն Ա. Վեհափառին հետ՝ 25 Մայիս 1980) աւիթով պատրաստուած գրքոյկ մըն է, ուր կը յիշուի՝ «Միւռնոն օրհնուեցաւ Հալէպի պատմական եւ երբեմնի Կաթողիկոսանիստ Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ 1926-ին (տարեթիւի սխալ Շ.), աստանդական եւ վշտակիր Կաթողիկոսին՝ Սահակ Բ. Խապայեանի ձեռամբ» (էջ 9): Նոյն գիրքի կողքի՝ ներքին կողմը, «Բացատրողական Լուսանկարներու» տակ զարմանալի՝ ճիշդ թուականը կը նշուի. «Միւռնոնօրհնէք Հալէպի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ՝ ձեռամբ Սահակ Բ. Կաթողիկոս Խապայեանի, 27 Մայիս 1923» (էջ 16):

7) Վարուժան Ծ. Վրդ. Հերկելեան, Միւռնոնօրհնէք 26 Մայիս 1996, Անթիլիաս, 1996:

«Առաջինը՝ զգայացունց ե ուժեղ ալիք, 1926 (տարեթիւի սխալ Շ.), Հալէպի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ, ձեռամբ Սահակ վշտակիր հայրապետին» (էջ 7):

8) Փառէն Ծ. Վրդ. Վարդանեան, Հայ Ուղղափառ Եկեղեցւոյ Սուրբ Միւռնոնը, (արաբերէն), Անթիլիաս, 1999:

Ներածականին մէջ (գիրքը ունի ծիսակարգը՝ գրաբար, աշխարհաբար, նաեւ համապատասխան արաբերէնի իր թարգմանութիւնը) յիշելով Հալէպի

մէջ կատարուած Միւռնորհնէքը, կ'արձանագրէ՝ Սահակ Ա. (Բ. պէտք է ըլլայ) Խապայեան Կաթողիկոս, իսկ թուականը՝ 27 Մայիս 1926 (կրկին տարեթիւի սխալ) (անդ, էջ 27):

9) Մեղրիկ Եպս. Բարիբեան (վախճանած) իր դիմատետրին (Facebook) վրայ որպէս Միւռնորհնէքի թուական արձանագրած է 1926 (տարեթիւի սխալ):

10) Հայ եկեղեցւոյ Սրբալոյս Միւռնոնը (հայերէն, անգլերէն, արաբերէն), Անթիլիաս, 2015:

Այստեղ եւս տարեթիւի սխալ կայ, «պատմական Միւռնորհնէքը Հայկապի Սրբոց Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ մէջ, 1926 թուականին», նոյնը կրկնուած է արաբերէն բաժնին մէջ, իսկ անգլերէնը՝ ամբողջովին մոռցուած:

11) Սեպուհ Արք. Սարգիսեան, Միւռնոն-Միւռնոնօրհնութիւն, Ուխտ-Ուխտագնացութիւն, Թեհրան, 2015:

Այս գրքոյկին մէջ, Միւռնոնօրհնութեան ժամանակագրական ցանկին մէջ թուականը ճիշդ արձանագրուած է՝ «27 մայիս 1923 Հայկապ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Սահակ Կաթողիկոս» (անդ, էջ 26):

12) Վերջին անգամ Հայկապի Միւռնօրհնէքին անդրադարձ եւ թուականի վրիպում մը կը կարդանք ՀԱՍԿ, 2019, ԶԼ տարի, Ապրիլ, թիւ 4, էջ 216-ին մէջ: Երբ, Արամ Ա.Վեհափառ Հայրապետը՝ 30 Մարտ 2019-ին, Հայկապի մէջ, կը վերածօծէ եւ կը վերաբանայ Սրբոց Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցին, իր արտասանած խօսքին մէջ կը յիշէ. «Հոս Կաթողիկոսներ օծուած ու թաղուած են, ինչպէս նաեւ՝ Սրբալոյս Միւռնօրհնութեան: Վերջին Միւռնօրհնութեան պարտադիր կերպով դուրս դրուած երջանկայիշատակ Սահակ Խապայեան Կաթողիկոսին կողմէ օրհնուած է՝ 29 Մայիս 1923-ին, եւ նոյն այդ Միւռնօրհնով այսօր այս Տաճարը վերօծուեցաւ», եւ այս պարբերութիւնը կրկնուած կը գտնենք հայ մամուլին մէջ:

Սրբալոյս Միւռնօրհնութեան առիթով վերաքաղ մը կատարեցի, վրիպում մը ուղղելու բարի ձգտումով, եւ ստուգումներս համեմատեցի Արխիլատան տուեալներուն հետ: Կիլիկիոյ պարպումով Սուրբոյ Հայ գաղթականութիւնը միխթարելու, բայց մանաւանդ բարդ վիճակներն ու կացութիւնները դասաւորելու՝ վերակազմակերպելու առաջադրութեամբ տեղի կ'ունենայ Սահակ Բ. Վեհափառին այցելութիւնը Հայկապ եւ սփիւռքեան առաջին Միւռնօրհնէքը կը կատարէ: Յայտարարուած մը մանրամասնութիւններ անծանօթ կը մնան. Միւռնօրհնի աղերսուած տնօրինումն ու նկարագրութիւնը մեծ մասով կը պակսին: Այդ բացը լեցնելու համար անհրաժեշտ է ժամանակա-

կիցներու նամակները եւ հաւանաբար հայ մամուլին մէջ եղած արձագանգները հաւաքագրել⁸: Միւռոնի օրհնութեան վերաբերող որոշ տեղեկութիւններ կամ ակնարկներ կը քաղենք յատկապէս Սահակ Բ. Կաթողիկոսի ընդարձակ, սակայն դժուար ընթեռնելի նամականիին պատճէններէն (copies):



ա) Կաթողիկոսարանի Արխիւէն կը ներկայացնեմ նախ՝ գլխաւոր անձէն եւ աղբիւրէն՝ երջանկայիշատակ Սահակ Բ. Խապայեան բազմաչարչար Հայրապետի անտիպ ծոցատետրէն (1923 թ.).– «27 (Մայիս). Ս. Միւռոնի օրհնութիւնը կատարուեցաւ, հակառակ զիրար կոխկրտող բազմութեան, հակառակ տեղւոյն անձկութեան եւ հակառակ տիրող ջերմութեան, որեւէ անախորժ դէպք չը պատահեցաւ: Մեր անձնապէս քաջածները մի քանի ժամուայ հանգստեամբ մոռցուեցաւ» (էջ 250-251): Հետաքրքրութեան համար նշեմ 31 Մայիսի իր արձանագրութիւնը. «Միւռոնի կնքահայրութեան էվէրէկցի Թորոս Թորոսեան երեսուն օսմ. հնչիւն ոսկի» (էջ 251), իսկ 4 Յունիսին (նոր).-տ[ումար].) «Ս. Միւռոնի ուխտէն 39 մէճ.» (էջ 252):

⁸ Հայ մամուլի արձագանգներէն կը յիշեմ՝ «Ապագայ» (Փարիզ), Շաբաթ 25 Յունիս 1923, թիւ 30 եւ էջ 3, «Արեւ» (Ադեքսանդրիա), Հինգշաբթի 14 Յունիս 1923, թիւ 154 եւ էջ 2, «Սուրիահայ Տարեցոյց», 1924, Ա. տարի, էջ 199, 252-254:





Կաթողիկոսարանի Արխիևատան նամակներէն (Հ1, Յ1, Թ2, որ հին ցուցակագրութեամբ 100/2 է) կը քաղեմ.–

բ) Սահակ Բ. Կաթողիկոսին ուղղուած Խաղ Ծ. Վրդ. Աջապահեանի նամակէն (12 Ապրիլ 1923), «հարկ եղած պատրաստութիւնները տեսնելով վերադառնանք Հալէպ, միւռոնի օրհնութիւն կատարելու եւ Ազգային Գործերուն լաւ ուղղութիւն մը տալու համար» (Արխիւ Հ3, Յ1, Թ5, Թղ.4բ):

գ) Սահակ Բ. Կաթողիկոսին Պետրոս Եպս. Սարաճեանին (Կիպրոս) յղած նամակէն՝ 25 Ապրիլ 1923, համար 542/431(էջ 851), «Եթէ Տէր կամեսցի եւ քաղաքական նոր տակնուվրայութիւններ չըլլան, Ս. Միւռոնի օրհնութիւն կատարելու մտադրութիւն ունիմք»⁹: Պետրոս սրբազանին պատասխանը կը հասնի 16 Մայիս 1923, Թիւ 340, ուր կը յիշէ «Միւռոն օրհնութեան մասին կը գրէք: Անշուշտ զուգադիպութիւններ են, կը յիշեմ 1914-ի միւռոնօրհնութիւնը եւ անոր յաջորդած տարագրութիւնը, նոյնպէս կը յիշեմ 1922-ի միւռոնօրհնութեան պատրաստութիւնը եւ կիլիկեան պարպումը եւ հիմա որ միւռոնօրհնութեան խօսքը կ'ընէք, ակամայ կը տարուիմ մտածել թէ մի գուցէ Սուրիոյ քաղաքական արշալոյսը միթագնի»¹⁰:

⁹ Այս նամակին մասին տե՛ս Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս Արք. Սարաճեանի, էջ 83:

¹⁰ Անդ, էջ 84:

դ) Սահակ Բ. Կաթողիկոսին Խաղ Ծ. Վրդ. Աջապահեանին (Հալխյ) յղած նամակին՝ 25 Ապրիլ 1923, համար 543/432 (էջ 853բ), «Թերեւս մէկ երկու շաբաթէն գալ պարտաւորուիմ: Չը գրեցիք, միւռոն կա՞յ թէ ո՛չ. եթէ կայ հինէ(°)ն պահելու էք նորը օրհնելու համար»:

ե) Խաղ Ծ. Վրդ. Աջապահեանի Վեհափառին յղած յաջորդ նամակէն (27 Ապրիլ 1923) կը տեղեկանանք. «Ս. Միւռոնի մասին իմացայ որ տակաւին բաւական ունին որով նորի օրհնութեան խմորը(?) պատրաստ է» (Արխիւ ՀՅ, Յ1, Թ5, Թղ.9բ):

զ) Սահակ Բ. Կաթողիկոսին Յարութիւն Թորոսեանին (Երուսաղէմ) յղած նամակէն՝ 3 Մայիս 1923, համար 558/447 (էջ 872ա), «Մտադիր եմք ամսոյս 9-ին սպասուած Ժեներալի ժողովէ(°)ն յետոյ Հալխյ երթալ, եթէ քաղաքական նոր մերում տեղի չունենան: Հոգեգալուստին Ս. Միւռոնի օրհնութիւն կատարել, որուն շնորհքը եւ սփոփանքը ամենուղ համար կը մաղթեմ»:

է) Սահակ Բ. Կաթողիկոսին Փառէն Ծ. Վրդ. Մելքոնեանին (Իսկէնտէրուն) յղած նամակէն՝ 8 Մայիս 1923, համար 559/448 (էջ 873բ), «Վաղը կը սպասուի Ժեներալ Վէյկանը եթէ յաջողիմ տեսակցութիւն մը ունենալ՝ Հալխյ պիտի մեկնիմ եթէ անդորրութիւնը չը խանգարուի, Հոգեգալստեան Ս. Միւռոնի օրհնութիւն պիտի կատարուի»:

ը) Սահակ Բ. Կաթողիկոսին Փառէն Ծ. Վրդ. Մելքոնեանին (Իսկէնտէրուն) յղած նամակէն՝ 10 Մայիս 1923, համար 568/457 (էջ 886ա), «Մի քանի օրէն Հալխյ պիտի մեկնինք (հէգ պիւտճէով) ու եթէ Տէր կամեսցի Հոգեգալստեան տօնին Ս. Միւռոնի օրհնութիւն պիտի կատարուի, փափաքող բարեպաշտք կարող են ներկայ գտնուիլ: Դուք ո՞ր կարգէն էք. փափաքո՞ղ թէ ո՛չ փափաքող: Մամբրէ Ծ. Վրդ.ը ինձմէ առաջ պիտի ղրկեմ»:

թ) Խաղ Ծ. Վրդ. Աջապահեանի Վեհափառին յղած յաջորդ նամակէն (17 Մայիս 1923) կ'իմանանք. «Մամբրէ վարդապետը ողջամբ հասաւ, եկեղեցական գոյքերն ու սնտուկները եկեղեցւոյ մէջ ապահով տեղաւորեցինք» (Արխիւ ՀՅ, Յ1, Թ5, Թղ.13ա):

ժ) Սահակ Բ. Կաթողիկոսին Խաղ Ծ. Վրդ. Աջապահեանին (Հալխյ) յղած նամակէն՝ 18 Մայիս 1923, համար 570/459 (էջ 888ա), «Հարկաւ ցարդ տեղափոխուած կ'ըլլաք յԱռաջնորդարան: Հ. Մամբրէն ղրկեցի որպէսզի մեր գալուստը ամէն բան պատրաստէք: Իր հետ կը բերէ Աջը(°) ... ի տօնի կը հանէ... եկեղեցւոյ գանձատան մէջ ամենայն զգուշաւորութեամբ տեղաւորել կու տաք: Երկու թիթեղ ամենամաքուր ձիթաիւղ առնել տուէք ի հաշիւ Առաջնորդարանի: Անշուշտ Մամբրէ վրդ.ի հանգստեան համար պէտք եղածը կը հոգացուի»:

ժա) Սահակ Բ. Կաթողիկոսին Բարգէն Ս. Եպս. Կիւլխսէրեանին (Երուսաղէմ) յղած նամակէն՝ 6 Յունիս 1923, համար 575/465¹¹ (էջ 896ա), «Ս. Միւ-

¹¹ Այս նամակին մասին տե՛ս Թղթակցութիւն Մահակ Բ. եւ Բարգէն Ս. Կաթողիկոսներու, խմբագրեց՝ Գ. Շահինեան, «Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Արխիւներ, թիւ 1», Անթիլիաս,

ռոնի պակասութիւնը եւ անհրաժեշտ պէտքը պարտաւորեցին զմեզ մայիս 23-ին Հալէպ մեկնել, եւ Հոգեգալստեան օրը ծովածաւալ գաղթականաց ի միխթարութիւն օրհնութիւնը կատարել եւ մենք ալ յոգնութեան ու տկարութեան օրհնութեամբ վարձատրուիլ»¹²:

Ժբ) Պետրոս Եպս. Սարաճեանի նամակը Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսին, 29 Յունիս 1923, թիւ 359, «լրագիրներէ եւ ապա նամակներէ տեղեկացանք որ միւռոնօրհնէք կատարեր էք, արդեօք կը հաճէի՞ք հրամայել առ որ անկ է որ մաս մը միւռոն մեզ ալ ղրկուէր, քանզի գաղթականութեան բազմութեան հետեւանօք եղածը գրեթէ սպառած է»¹³:

Ամենակարեւոր վաւերական առարկաները անկասկած լուսանկարներն են: Անոնք խօսուեն եւ զարմանալի մանրամասնութիւններ տեղեկագրող են, արխիւային իւրայատուկ տուեալներով հարուստ, զորս յատուկ թոյլտուութեամբ կը հրապարակենք: Կաթողիկոսարանի Արխիւատան նկարներուն մէջ կը գտնուի փոքր ալպոմ մը, կնքուած «Հոգաբարձութիւն Հայ Ազգային Վարժարանաց, Հալէպ, 1922», «Սրբալոյս Միւռոնի օրհնութեան առթիւ, Յիշատակներ, Կիլիկիոյ Մայրավանքէն» եւ ցուցակագրուած 11 լուսանկար, որոնցմէ 8-ը միայն մեզի հասած են՝ Սահակ Վեհափառ, Միւռոնի կաթսան, Կաթսան տեղադրուած Մայր եկեղեցւոյ խորանին աջակողմը, Ս. Աստուածածին եկեղեցիէն թափօրը Ս. Քառասնից Մանկանց Մայր եկեղեցի կ' ուղղուի, Մայր եկեղեցիէն դուրս կու գան (2 նկար), խմբանկար եկեղեցւոյ շրջափակին մէջ, խմբանկար Օթէլ Պարոնի սրահին մէջ, նոյն խմբանկարին մեծ չափը եւ ետին գըրուած ներկաներուն անունները: Յանկի աւարտին կը կարդանք «Լուսանկարիչ Տէրունեան եղբայրք, Հալէպ–(Սիւրեայ)»:

Այստեղ կը վերարտադրեմ խմբանկարին անուանացանկը, որ խնամքով ու պատմութեան գիտակցութեամբ արձանագրուած է, թէեւ ունի որոշ մասեր քերթուած եւ կարգ մը ազգանուններ՝ տարբեր, սակայն իւրաքանչիւր անձի դիրքն ու ինքնութիւնը նշուած է, իսկ լուսանկարին վարի ճերմակ փոքր բաժինին մէջ նոյն գրիչը գրած է «27 Մայիս (1)923 Հալէպ.– Ս. Միւռոնի օրհնութեան մասնակցող եկեղեցական հարք».–

Նախ երեք տող բացատրողական մը գրուած է. «Գաղթականաց սա օրերուն, Սրբալոյս Միւռոնի օրհնութեան առթիւ, որ Հալէպ համախմբուած մօտ 50 հազար տարագիր հայերուն մեծ միխթարանք մ'եղաւ, հանդէսին մասնակցող եկեղեցական հարց՝ Ն. Ս. Օծութիւն Կիլիկիոյ ծերունագարդ հայ-

1999, էջ 31, ուր անընթեռնելի ըլլալուն պատճառով միայն բովանդակութեան հպանցիկ ծանօթութիւն մը գրուած է: Համարակալումն ալ թէ՛ Նամականիին մէջ եւ թէ՛ հրատարակողին քով (համար 571/256, նաեւ էջաթիւերը՝ 886/887) սխալ է. ըստ երեւոյթին Կաթողիկոսը ետառաջութիւն մը ունեցեր է (տե՛ս անդ էջ 892):

¹² Տե՛ս նաեւ Եղիայեան, Ժամանակակից, էջ 233 եւ աստ (ա) ծոցատետրը:

¹³ Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս Արք. Սարաճեանի, էջ 85:

րապետին նախագահութեամբ Պարոն Օթէլի դահլիճին մէջ լուսանկարուած»:

Իսկ անունները դասաւորուած են երեք սիւնաշարքով, լուսանկարին մէջ անձերու դիրքերուն համապատասխան.-



«Առաջին կարգին վրայ աջէն-ձախ նստողները.-

- 1) Տ. Ներսէս Քինյ. Թավուզճեան (Այնթապ)
- 2) Տ. Խաղ Ծ. Վրդ. Աջապահեան (Միաբան Ստյ եւ Կաթողիկոսական Փոխանորդ Հալէպի)
- 3) Տ. Խաչատուր Ծ. Վրդ. Տ. Ղազարեան (Միաբան Ստյ եւ Կաթողիկոսական Փոխանորդ Մարաշի)
- 4) Տ. Տ. Սահակ Սրբազնագոյն Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ
- 5) Տ. Փառէն Ծ. Վրդ. Մելքոնեան (Միաբան Դպրեվանուց Արմաշու եւ Առաջնորդական Փոխանորդ Տորթ-Յօլի)
- 6) Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեան (Միաբան Ս. Երուսաղէմի եւ Հոգևոր Տեսուչ Պէրութի Հայոց)
- 7) Տ. Յարութիւն Ա. Քինյ. Եսայեան (Հալէպ եւ նախկին Առաջնորդական Փոխանորդ Բերիոյ)»:

«Երկրորդ կարգին վրայ աջեն-ձախ կեցողները.–

- 1) Տ. Սարգիս Քհնյ. Գըլպուլուդեան¹⁴ (Արապխանեան[՞]) (Զեյթուն)
- 2) Տ. Վարդան Քհնյ. Վարդերեսեան (Սուէտիա)
- 3) Տ. Բաբգէն Քհնյ. Յակոբեան (Հալէպ)
- 4) Տ. Մամբրէ Ծ. Վրդ. Սիրունեան (Միաբան Դպրեվանուց Արմաշու եւ Կաթողիկոսական հետետորդ)
- 5) Տ. Մկրտիչ Քհնյ. Մուրատեան (Հալէպ)
- 6) Տ. Գրիգոր Քհնյ. Խաչատուրեան (Էսկիշէհիր)
- 7) Պ. Յովհաննէս Չեօփճեան (Բարապան Հալէպի Առաջնորդարանին)»

«Երրորդ կարգին վրայ աջեն-ձախ կեցողներ.–

- 1) Տ. Մկրտիչ Քհնյ. Մարտոյեան (Քիլիս)
- 2) Տ. Ներսէս Քհնյ. Պապայեան (Այնթապ)
- 3) Տ. Յովհաննէս Քհնյ. Էթմէքճեան (Հալէպ)
- 4) Տ. Մովսէս Քհնյ. Տ. Յովհաննէսեան (Մարաշ)
- 5) Տ. Նշան Քհնյ. Մարգարեան (Խարբերդ)

27 Մայիս (1)923

Հալէպ»

Եզրակացնելով սփիւռքի առաջին միւլուօնօրհնէքը կատարուեցաւ Սահակ Բ. Խապայեան Հայրապետի ձեռամբ, Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցոյ մէջ, Հոգեգալուստի Կիրակին, 27 Մայիս 1923-ին, Հալէպ:

Թող Սփիւռքի Տարուան նոր Միւլուօնի օրհնութիւնը իրականանայ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի ձեռամբ, որպէս խորհրդանիշ մեր հաւատքի նորոգութեան եւ ապագայի հանդէպ մեր լաւատեսութեան:

ՇԱՀԱՆ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ
Մատենադարանապետ



¹⁴ Այսպէ՛ս բնագրին մէջ: Մեր ձեռքին տակ գտնուող աղբիւրներէն կարելի չեղաւ վերջնական ստուգում մը կատարել:

Ս. ՄԻՒՌՆԻ «ՅԱՐՈՒԹԵԱՆ ԳԵՐԵՉՄԱՆԻՆ» ԱՌՁԵՒ

Միայն քանի մը օրեր կը բաժնեն մեզ այն պատմական պահէն, որուն համար սպասած ենք եօթը տարիներ: Նոյնիսկ Ս. Միւռնի կաթսան, հարսի մը պէս քողարկուած, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի խորանին վրայ կը սպասէ այդ երանելի պահուն, երբ ի տես բազմահարիւր ժողովուրդի՝ պիտի բանայ իր կափարիչը, պիտի «չողարձակէ» իր բուրումնաւէտ զօրութիւնը եւ լեցնէ մեր էութիւնը նոր շունչով մը:

Հայ Եկեղեցւոյ գեղեցիկ ականդութեան համաձայն եւ աստուածաշնչական տուեալներու վրայ հիմնուած, Ս. Միւռնը քառասուն օրեր կը մնայ Ս. Խորանին վրայ՝ առ ի պատրաստութիւն այն մեծ օրուան, երբ Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետի ձեռամբ եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի մասունք-աջով պիտի օրհնուի: Թէեւ Ս. Միւռնը խորանին վրայ լուռ կերպով հանգչած կը լսէ մեր աղօթքները, սակայն այդ լուռութեան մէջ Ս. Միւռնի աւելի քան չորս տասնեակ բոյսերով, արմատներով եւ ծաղիկներով պատրաստուած իւրը հոգեւոր եւ անտեսանելի կրակով մը կ'եփուի: Կարծես Ս. Միւռնի կաթսային արգանդանման ամանին մէջ նոր աշխարհ մը եւ կամ նոր կեանք մը կը գոյանայ մեր տեսողութենէն վեր՝ խորհրդաւոր կերպով: Այս մէկը կարելի է տեսնել միայն հաւատքի աչքերով եւ զայն զգալ աղօթական սրտով: Սակայն անիկա մեզի ալ՝ միաբաններուս եւ հաւատացեալներուս, կը յիշեցնէ, որ մենք ալ պատրաստուինք աղօթքով եւ երկիւղածութեամբ՝ ընդունելու համար Ս. Հոգիին լիառատ շնորհքները:

Որքան օրերն ու ժամերը տակաւ առ տակաւ կը մօտենան Յուլիս մէկին, այնքան աւելի կ'արագանան սրտիս զարկերը: Ս. Միւռնի կաթսային առջեւ աղօթքի կեցած պահուն կը պատկերացնեմ այդ վայրկեանը, երբ հարսի մը պէս, կաթսան, մեզ ու Եկեղեցին խորհրդանշելով, պիտի բանայ իր քողը, պիտի ընդունի Ս. Հոգիին խորհրդաւոր օրհնութիւնը եւ պիտի դառնայ բոլորովին նոր ու կենարար նիւթ: Այդ առիթը այնպիսի պահ մը պիտի ըլլայ բոլորիս համար, որ մեր մարմնին վրայ արդէն իսկ կնքուած Ս. Միւռնին նշանը «պիտի շարժի», ու մենք պիտի վերանորոգուինք: Պիտի յիշենք անգամ մը եւս, որ Ս. Եկեղեցւոյ աւագանի արգանդէն ծնած ըլլալու առընթեր, ծնած ենք նաեւ Ս. Միւռնի կաթսային ամանէն, ուրկէ դուրս «կը բղխի» Ս. Հոգիի նշանը՝ Միւռնը: Միւռնով վերածնած հոգեւորականներս առաւել եւս «պիտի ցնցուինք», որովհետեւ նոյն այս նշանն է, որ մեզ դարձուց նոր մարդ եւ սպասաւորներ Հայ Եկեղեցւոյ: Հոգեւոր կապով պիտի վերաշնչենք մեր պատկանելիութիւնն ու հաւատարմութիւնը՝ ամբօրէն ազուցելով զայն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Աթոռին հետ: Ահաւասիկ, մեր Ս. Աթոռը, Ս. Գրիգոր Լուսաւորիչէն մինչեւ այսօր, Մովսէս Մարգարէին

պէս այս հոգեւոր ժայռին կը զարնէ իր ծառայութեան ասան, որպէսզի աստուածային շնորհքը հեղու իր անգին ժողովուրդին վրայ:

Կը դիտեմ աւելի երկար Ս. Միւռոնի կաթսան եւ պահ մը կը պատկերացնեմ, որ կարծես անիկա Ս. Յարութեան գերեզմանը ըլլայ՝ հսկայ ժայռով մը փակուած: Երեք օրուան փոխարէն՝ քառասուն օրերէ ի վեր Քրիստոսի մարմինը կը հանգչի անոր մէջ, որպէսզի յարութեան կեանքը բանայ մեր առջեւ: Ս. Հաղորդութեան խորհուրդին հետ Ս. Միւռոնն ալ կը պատարագուի իր նիւթեղէն իւղով կաթսային խորհուրդաւոր խորութեան մէջ, որպէսզի երբ Յուլիս մէկին կափարիչը բացուի, Ս. Յարութեան գերեզմանին պէս, հոնկէ ժայթքէ նոր յարութեան եւ կեանքի «լուսէ բոյրը»: Նոր էջ, նոր օր եւ նոր սկիզբ մը պիտի մեկնարկէ Ս. Միւռոնի կաթսային կափարիչին վերացումով: Եւ մենք, ինչպէս յարութեան օրուան իւղաբեր կիները եւ կամ Քրիստոսի Ս. Ծննդեան խոնարհ մոգերը, հին Միւռոնը, էջմիածնայ Ս. Միւռոնը, բալասանն ու վարդի իւղի շիշերը մեր ձեռքերուն, պիտի մօտենանք «Ս. Յարութեան գերեզմանին», որպէսզի մեր ընծաներն ու մեր բաժինը նուիրենք Քրիստոսի: Այլ խօսքով, մեր հինն ու ամբողջ էութիւնը պիտի խառնենք նոր կեանք բուրոյ Ս. Միւռոնին մէջ, որպէսզի նոր կեանքի եւ յարութեան շողարձակումը մեր սրտին մէջ առած՝ զայն կրենք նոր եօթը տարիներ եւս:

Հայոց Հայրապետը՝ արժանընտիր գահակալ Նորին Սրբութիւնը, հայ ժողովուրդին ձայնն ու աղաղակը մարմնաւորելով՝ պիտի ձայնէ Ս. Խորանէն կենդանանար Ս. Հոգիին, որպէսզի իջնէ Անթիլիասի կաթողիկոսանիստ Մայրավանք եւ «չարժէ» քառասուն տեսակէ աւելի բոյսերու եւ ծաղիկներու նիւթը պարունակող իւղը ու դարձնէ զայն Ս. Միւռոնի, որով պիտի ծնին նոր մանուկներ ու սերունդներ, նոր զինուորագրեալ եկեղեցականներ, պիտի բարձրանան նորակառոյց եկեղեցիներ ու սպասներ: Ապա, հայոց մեծ սուրբին՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին բարեխօսութեան պիտի դիմենք, որպէսզի իր հրաշագործ աջը Ս. Միւռոնին խորը թափանցելով, Աստուծոյ ամենակալ զօրութեան ընդառաջ, երկնքի բարձունքներուն մէջ, իր հայրապետական ձեռքերը բանայ եւ Արարիչին ողորմութիւնն ու շնորհքը խնդրէ իր զաւակներուն համար: Հայոց Սուրբը պիտի խնդրէ, որ Քրիստոս՝ Բարի Մամարացին, հասնի վիրաւորուած, սակայն հաւատքը չկորսնցուցած հայ ժողովուրդին, որպէսզի նոր Միւռոնով լուսայ մեր վէրքերը ու մեզ իր ուսին առնելով՝ հասցնէ իր բարձունքներուն՝ մեր ազատօրէն ու անկախ ապրելու իրաւունքը վերադարձնելով մեզի...:

Շունչս կը բռնեմ եւ աղօթքով կը նայիմ կաթսային: Որքա՛ն կ'ուզեմ, որ այն յոյսերը, որոնք աղօթքի ծրարին մէջ դրուած եւ խնամքով պահուած են այս կաթսային խորերը, Ս. Գերեզմանին դուռին հետ բացուին եւ Ս. Միւռոնի օրհնութիւնը ստանան: Որքա՛ն կ'ուզեմ, այս նոր բոյրը Ծննդեան կամ Յարութեան աւետիսի պէս ամէն հայ օձախի դուռը զարնէ, մտնէ ու բնակի հոն՝ իր սրբութիւնն ու օրհնութիւնը ճրագի պէս վառելով ու լուսաւորելով:

Որքա՛ն կ'ուզեմ, որ Ս. Միւռոնի այս հզօր բոյրը, թափանցէ իւրաքանչիւր հայ անհատի էութեան ու թոքերուն մէջ, ու հաւաքէ մեզ Հայ Եկեղեցւոյ սուրբ ամպհովանիին տակ, որպէսզի ոչ ոք զրկուի հաւատքի լոյսէն եւ ազգային պատկանելիութենէն: Որքա՛ն կ'ուզեմ տեսնել այն պահը, որ այնպէս ինչպէս Քրիստոսի յարութեան լոյսը մահուան խաւարը պատռեց եւ մահը խորտակեց՝ նոր կեանքի բոյրը լեցնելով մեր աշխարհը, նոյնպէս չքացնէ հայրենիքը շրջապատող սեւ ամպերը...:

Ահա կը լսուի Ս. Միւռոնի եռացող իւղին ձայնը՝ հաւատացեալներու աղօթքի կրակին վրայ: Ս. Միւռոնի կաթսային կափարիչին հետ մեր սիրտն ալ բաց՝ կը սպասէ Յուլիս մէկի պատմական ու խորհրդաւոր օրուան: Այո՛ պատրաստ ենք անգամ մը եւս վկաներն ու նուիրեալները դառնալու Սրբալոյս Միւռոնի յարութեան շնորհքին... «Բա՛ց մեզ, Տէ՛ր, զդուռն ողորմութեան, որ ողբալով կարդամք առ քեզ»:

ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԵՐՆԵՋԵԱՆ



ԻՆՔՆՈՒԹԵԱՆԴ ՄԻՌՈՆԸ

Ինքնութիւ՛ն...

Վեհ անուն, արժէք եւ մարդուն դիմաց դրուած գիտակից պարտականութիւն:

Ինքնութիւ՛ն...

Մարտահրաւէր, ճշմարտութիւն, յաւերժութեան հրամայական եւ երաշխիք:

Ինքնութիւ՛ն...

Հայուն վայել, հայուն պատմութիւնը կերտող բառ եւ առակել կեանք ապահովող հիմք:

Յուլիս մէկին, կրկին անգամ Անթիլիասի Մայրավանքին մէջ պատմութիւն պիտի կերտուի՝ հակառակ բոլոր դժուարութիւններուն, հակառակ Լիբանան երկրի մտահոգ կացութեան, Լոյսը՝ Ս. Հոգին, կրկին անգամ իր ճառագայթները պիտի արձակէ: Յոյսը՝ Ս. Հոգին, կրկին անգամ իր ջերմութեամբ պիտի սփոփէ բազմահազար սրտեր: Զօրութիւնը՝ Ս. Հոգին, կրկին անգամ իր էջքով իր հետ պիտի բերէ Աստուածային օրհնութիւններն ու բարեբեր աւետիսը, թէ՛ ահա Հոգին Սուրբ կը հանգչի տառապեալ կաթսային մէջ՝ բուժելու, խրախուսելու եւ ի վերջոյ հայուն իսկական ինքնութիւնը կրկին անգամ դէպի անմահութիւն առաջնորդելու:

Յուզիս մէկին, Ս. Միւռոնի մէկութեամբ պիտի միաւորուինք մենք բոլորս, պիտի նոյնանանք նոյն արժէքին հետ, նոյն արժէքին համար, հին պատմութեան հետ նոր պատմութիւն կերտելու համար: Կիլիկիոյ Ս. Աթոռէն լսող աղօթքը, պաղատանքն ու աղաչանքը, վստահաբար, պիտի լսուին եւ անոր ընդառաջ պիտի վերահաստատուի Հայուն ուխտը, հանդէպ Մեծ Վարդապետին՝ Քրիստոսի: Կիլիկիոյ տառապեալ սակայն աննահանջ Կաթողիկոսութիւնը կրկին անգամ պիտի դրոշմէ Օրհնեալ եւ բուրումնաւէտ անուշաբոյր իւզին սեփականութիւնը, շարունակականութիւնը եւ պատկանելիութիւնը Լուսաւորիչ Հայրապետին թողած ժառանգին:

Յուզիս մէկին, կրկին անգամ պիտի վերջիչենք այն ցաւոտ օրերը, ուր մեր նախահայրերը տեղահանուելով հասան Հալէպ եւ Լիբանան: Այդ պատմութեան մէջ կան ցաւն ու արցունքը, կայ Միւռոնի թաղման դէպքը, որ այսօր իւրաքանչիւրիս կը դնէ մեծ պարտաւորութեան դիմաց, որպէս քաղցր լուծ պահելու աւանդը Կիլիկեան, եւ առաջնորդուելու մեր Սրբազան Հայրապետներու օրինակին:

Յուզիս մէկին, Կիլիկիոյ բռնագրաւեալ պատերն անգամ պիտի վկայեն, թէ ահաւասիկ պայքարը կը շարունակուի, թէ ահա այն Հաւատքի Հայրապետը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը հինգերորդ անգամ ըլլալով կու գայ հին Միւռոնը նորին խառնելու, անոր Օրհնեալ ձեռքերով օրհնելու հայ ազգը եւ վերանորոգելու հաւատարմութեան ուխտը հանդէպ մեր պահանջատիրութեան:

Ինչքան շարժարանք տեսաւ հայ ազգը, մանաւանդ վերջին տարիներու ընթացքին, ինչքան յուսալքութիւն, դժուարութիւն ապրեցաւ հայ ազգը, ինչքան զոհեր տուաւ՝ ի գին Հայրենիքի փրկութեան: Դժբախտութիւններու ցանկը կրնայ երկար թուիլ, սակայն մենք չենք գիտեր ընկրկիլ, չենք գիտեր յուսահատիլ, չենք գիտեր տկարանալ: Յուզիս մէկին, վերանորոգ հաւատքով, մեր այժմու պատմութեան վէրքերը կը կապենք, բուժելու նպատակով ոտքի կը կանգնինք, Անթիլիաս Մայրավանքին մէջ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին առջեւ, Լուսաւորչի Ս. Աջով Սրբալոյս Միւռոնի Օրհնութեամբ կ'ուխտենք շարունակել մեր Հաւատքի առաքելութիւնը հանդէպ մեր հողին եւ մեր իրաւունքներուն:

Երկար սպասուած Յուզիս մէկը ահաւասիկ կը մօտենայ:

Միւռոն... Ինքնութիւն... Հաւատքի գէ'նք:

Սիրելի հաւատացեալ,

Յուզիս մէկին, դո՛ւն ականատեսը պիտի դառնաս այդ էջքին, դո՛ւն պիտի ապրիս այն զգացումը, ու պիտի վերածես համոզումի, համոզում մը որ քեզ պիտի առաջնորդէ կառչած մնալով՝

ԻՆՔՆՈՒԹԵԱՆԴ ՄԻՒՌՈՆԻՆ:

ՄՄԲԱՏ ՎՐԴ. ՍԱՊՈՒՆՃԵԱՆ

ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՆՈՎ ԿԸ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԱՆՔ, ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՆՈՎ ԿԸ ՉՕՐԱՆԱՆՔ...

Միւռոնն բառը կու գայ յունարէնէ (μύρον), որ կը նշանակէ անուշաբոյր իւղ: Ս. Միւռոնի գործածութիւնը հարիւրամեակներու պատմութիւնն է՝ եւ ո՛չ ալ եկեղեցւոյ կողմէ աւելցուած իրականութիւն, ինչ որ շատեր սխալ կը կարծեն ու դժբախտաբար կը պնդեն:

Եթէ Աստուածաշունչը լաւապէս ընթերցենք, այնտեղ պիտի տեսնենք, որ Սրբալոյս Միւռոնի գործածութիւնը կու գայ Տիրոջ գիրքէն եւ Անոր պատուէրներէն. «Սուրբ օծման իւղ պիտի ընես գայն՝ իւղագործի արհեստով բաղադրուած: Անիկա սուրբ օծման իւղ պիտի ըլլայ: Անով պիտի օծես վկայութեան խորանը ու վկայութեան տապանակը եւ սեղանը ու անոր բոլոր անօթները եւ աշտանակը ու անոր գործիքները եւ խունկին սեղանը» (ԵԼՔ 30.25-27): Օրինակ մըն ալ Նոր կտակարանէն. «Աշակերտները գացին եւ սկսան ժողովուրդին փարոզել, որ ապաշխարեն: Բազմաթիւ չար ոգիներ կը հանէին, շատ մը հիւանդներ իԻՂՈՎ ԿՕԾԷԻՆ եւ զանոնք կը բժշկէին» (Մր 6.12-13): Ահաւասիկ Ս. Գիրքին մէջ արձանագրուած օրինակներ: Տակաւին կան շատ ու շատ օրինակներ, որոնք կարելի է յիշել, սակայն այստեղ կ'ուզենք անդրադառնալ Սրբալոյս Միւռոնի կարեւորութեան ու ազդեցութեան մասին:

Սրբալոյս Միւռոնով կը քրիստոնէանանք, բոլորս մեր մանուկ հասակին կու գանք Տիրոջ տունը՝ կրելու իր անունը, այլ խօսքով՝ ստանալու քրիստոնէական անձնագիրը: Քրիստոսի անունը կրելու պատիւէն աւելի մեծ պատիւ ոչինչ կայ: Անոր անունով մկրտուելի, օծուել եւ քրիստոնէանա՛լ:

Սրբալոյս Միւռոնով Տիրոջ դեսպանները կը դառնանք, ծնրադիր Տիրոջ առջեւ երթալով ու անոր կամքին դիմաց խոնարհելով՝ իրեն եւ իր ժողովուրդին կը նուիրուինք, սակայն յիշեալ օրինակին ամէնէն յիշատակելի, ազդող եւ յուզող պահը Ս. Միւռոնով մեր ճակատները օծուելու եւ նոր անուն կրելու պահն է:

Սրբալոյս Միւռոնը մեզ նոր մարդ կը դարձնէ՝ մեր ետին ձգելով հինը, աշխարհիկը: Ս. Միւռոնը կը յիշեցնէ մեզ, որ այլեւս աշխարհին չե՛նք պատկանիր, այլ միայն ու միայն՝ Տիրո՛ջ ու Անոր կամքին եւ օրէնքներուն:

Սրբալոյս Միւռոնը կը զօրացնէ մեզ, կը զօրացնէ այնքան, որ չարին ու անոր որոգայթներուն դիմաց մեզ աննկուն եւ անսայթաք կը պահէ:

1 Յուլիս 2022-ի երեկոյեան Արամ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսի օծեալ ձեռքով եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ՝ հաւատքի հօր աջով պիտի օրհնուի Հայ Եկեղեցւոյ Միւռոնը նոր: Անով դարձեալ պիտի քրիստոնէանան մանուկներ, հրաւիրուին եւ օծուին Տիրոջ նոր դեսպան՝ մշակներ, Տիրոջ տուններ՝ եկեղեցիներ եւ սպասներ: Անով դարձեալ պիտի զօրանան մեր ճակատները, սիրտերը, ձեռքերը, ոտքերն ու կունակները:

Անթիլիաս՝ հայութեան կեդրոն պիտի ժամանեն բազմահարիւր հաւատակից քրիստոնէաններ, որոնք իրենց աչքերը անթարթ նայուածքով հայրապետին ձեռքերուն պիտի ուղղեն տեսնելու համար օրհնութիւնը Սրբալոյս Միւռոնի: Սրտայոյց եւ հոգեթով պահ, որ բոլորս անհամբեր կը սպասենք:

Այդ օրը ուխտաւորներուս սիրտերը կը տրոփեն համահաւասար՝ սրընթաց, քանզի Հոգին Սուրբը կը հանգչի բոլորիս վրայ, ինչպէս աշխարհի ստեղծագործութեան ընթացքին «ջուրերուն վրայ կը շարժէր» (Ծն 1.2):

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Աթոռէն ուխտեալ միաբաններս, գլխաւորութեամբ Արամ Ա. Հայրապետին, աղօթող ենք ու մաղթող, որ Սրբալոյս Միւռոնի օրհնութեամբ համայն մարդկութեան միջեւ տիրէ խաղաղութի՛ւն, եւ մանաւանդ հայրենիքին՝ փայլատեսիլ ապագայ, Արցախին՝ վերանկախութիւն, Լիբանանի քաղաքացիներուն՝ համբերութիւն եւ հոգեւորականաց դասուն՝ անշեղ հաստատակամութիւն: Ամէն:

Ա.Ի.ԵՏԻՔ Ա.ԲՂ. ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ



**ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՆ՝ ԱՆՑԵԱԼԻ ՀԱՒԱՏՔ,
ՆԵՐԿԱՅԻ ՊԱՏԳԱՍ ԵՒ ԱՊԱԳԱՅԻ ՏԵՍԻԼՔ**

Մասնակի ակնարկութիւններով ու ընդարձակ բացատրութիւններով օծման անուշաբոյր իւղին՝ երկնաբոյր Միւռոնին, նախագործածութեան ձեւն ու պատրաստութեան մանրամասնութիւնները կը տեսնենք Հին Կտակարանի էջերուն մէջ: Սակայն, քայլ մը աւելի խորանալով, գայն կը գտնենք Հօր Աստուծոյ ստեղծագործ Խօսքին մէջ, երբ Ան կ'արարչագործէ լոյսը, որ ընդմիշտ բարի եւ սուրբ է: Ահաւասիկ Սրբալոյս Միւռոնին նախապատկերը ստեղծագործութեան պատմութեան մէջ: Հոն, տեսանելի ու շօշափելի իւղէ մը անդին, կը պատկերուի Աստուածային զօրութիւնը, որմէ կոյրեր լոյս աշխարհի կը ծանօթանան, կաղեր կը քալեն, համբեր կը խօսին ու ախտեր կը

փարատին: Այո՛, յաւիտենական փայլատակումէն մեզի հասած զգալի ճառագայթ մըն է Միւռնոնը:

Որքա՛ն անիմանալի ու անըմբռնելի մեծութիւն է Աստուած, որ իր իսկ արարչագործութեան ընդմէջէն կը մօտենայ իր ստեղծագործութեան: Կենսատուն՝ կենսունակ բերքով կ'այցելէ մարդկութեան, կ'օծէ ու կը սրբէ զայն: Տէրը, գետնէն բուսած ծաղիկներով, անոնց հիւթերով, կնդրուկի տեսակներով, ստորերկրեայ արմատներով ճոխացուած ձիթաիւղով երկինքը կը միացնէ երկրին՝ տաճարներ ու քահանաներ օծելով: Արդարեւ, Աստուծոյ պարգեւատու աջին առատաձեռնութեան պերճախօս արտայայտութիւնն է Միւռնոնը: Անհասկնալի, բայց իրաւ...:

Այս յօդուածով, մարդկային կարողութեան սահմաններուն մէջ, Սրբալոյս Միւռնոնէն բխող լոյս ճշմարտութիւնները փոխանցելու ճիգն է որ պիտի կատարուի: Ուստի, կեդրոնանանք Միւռնոնի խորհուրդը յայտնող երեք իրականութիւններու վրայ.-

Ա) Միւռնոնը հաւատք է: Սովորական անուշաբոյր իւղ ըլլալէ վեր, քրիստոնէական վսեմ հաւատքին արտայայտութեան ամենահարազատ ու տիեզերականացած արտացոլացումը հանդիսացած է Միւռնոնը: Չկայ քրիստոնեայ առանց միւռնոնաօծութեան: Աւանդական կոչուած եկեղեցիներու ընտանիքին մօտ, Միւռնոնը սրբութիւն սրբոց կը սեպուի: Այսպէս.- ինչպէս գինին ու նշխարը Աստուածային խորին խորհուրդով ճշմարտապէս կը փոխարկուի մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի արեան ու մարմնոյն, նոյնպէս՝ բազմատեսակ իւղերու, հիւթերու, արմատներու ու ծաղիկներու միացումով գոյացած Միւռնոնը, աղօթքներով ու շարականներով կը փոխարկուի Աստուածային շտեմարանի, ուրկէ կը բաշխուի Ս. Հոգւոյն շնորհքները (Կիւրեղ Երոստատէս-մացի): Ուրեմն, Քրիստոսի արեան ու մարմնոյն չափ անհրաժեշտ է Միւռնոնի օծութիւնը: Միւռնոնի միջոցաւ Ս. Հոգին կը հանգչի մեր վրայ, իսկ դրոշմի խորհուրդով Ամենասուրբը կը մաքրէ մարդուն մարմնի անդամները եւ կը վերածէ նորած տաճարի (Կղէմէս Աղեքսանդրացի): Հետեւաբար, այս իւղով օծուածները միայն կարելի է Քրիստոնեայ կոչել, որովհետեւ Միւռնոնով մարդկային ամբողջ էութիւնը կ'օծուի ու կը սրբուի: Միւռնոնով մարդը կը դառնայ Աստուծոյ օծեալը, այսինքն՝ Քրիստոսի ուղիէն ընթացողը (Ս. Կիւրիանոս): Այս բոլորը գիտնալով, կարելի չէ Միւռնոնը դիտել յատուկ նեկտարներու ու արմատներու միախառնումով պատրաստուած լոկ անուշաբոյր իւղ, այլ հարկ է հայիլ անոր իբրեւ շարժում ու կեանք ունեցող իրականութիւն: Զիթաիւղը կամ բալասանը չէ որ զայն կը վերածէ Աստուածային զօրութեան: Միթէ կլիմայական պայմաններու բերումով աճող բոյսը Տիրոջ օրհնաբեր ներկայութեան երաշխի՞քն է: Քաւ լիցի: Հայ աշխարհի ցուրտ օդին պատճառով նաեւ շուշմայի ձէթով պատրաստուած է Միւռնոնը, եւ սատառէն անդին ոգիին նկատմամբ մեր ունեցած կառչածութեան ապացոյցն է: Մեր հաւատքին համաձայն, Հայրապետին աղօթքն ու օրհնութիւնն է որ աստուածային շնորհքը կը միացնէ ձէթին հետ: Հետեւաբար, առաւել կամ

նուազ բան չկայ եթէ ձէթը ծառի պտուղէն կամ բոյսէն հանուած ըլլայ (Ս. Ներսէս Շնորհալի):

Այսպէս բնորոշուած է Միւռոնը Ս. Հայրապետներուն կողմէ: Այսպէս հաւատացած են մեր նախնիները: Այս աւանդուած է մեզի, եւ մենք ա՛յս հաւատքով ու հաւատարմութեամբ կը պահենք աւանդութիւնը ու ա՛յս գիտակցութեամբ կը մօտենանք Սրբալոյս Միւռոնին:

Բ) Միւռոնը պատգամ է: Իր մէջ գաղափար ունեցող իւրաքանչիւր բառ, իւրաքանչիւր նախադասութիւն եւ իւրաքանչիւր արտայայտութիւն նշանաբան մը կամ կարգախօս մը կը բովանդակէ: Իսկ իր մէջ կեանք ունեցող իւրաքանչիւր նիւթ երկնային պատգամ մը կը փոխանցէ: Աշխարհ մոլորակը, իր ունեցած կենսատու նիւթերով, զԱստուած քարոզող ու Արքայութիւն նկարագրող հոգեւոր վկան է: Իսկ, այս նիւթերուն միացումով գոյացած Միւռոնը առաքինի գաղափարներու ու Քրիստոսաւանդ ուսուցումներու ամբողջութիւնն է:

Գարեբէ եկող, սակայն չհինցող. պատմութենէն եկող, սակայն պատմութեան մէջ չթաղուող Միւռոնի պատգամներէն է շուրջ 90 տարի առաջ Երջանկայիշատակ Բաբգէն Աթոռակից Կաթողիկոսի Անթիլիասի Մայրավանքին մէջ արտասանած մէկ խօսքը, որ եղբայրական սերտ զգացումներով զարդարուած համերաշխութեան կոչ մըն էր ժողովուրդին: Թերեւս ան, պահ մը մտովի կը միանար 1915-ի նահատակներուն, կը յիշէր արիւնածօծ բազմութիւնը հայորդիներուն, եւ առ Տէր կ'աղաչէր, որպէսզի օրհնուած Միւռոնով հաստատուին խաղաղութիւնն ու սէրը հայ հասարակութեան մէջ:

Միւռոնի յաւիտենական պատգամներէն է իրարահասակացողութիւնը: 1949-ի առաւօտուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան խորհրդանիշ եւ սիրտ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարէն հնչող Երջանկայիշատակ Գարեգին Ա. Կաթողիկոսի ձայնը հայութիւնը կը հրաւիրէր իրարահասակացողութեան: Կը յիշեցնէր Երջանկայիշատակ Հայրապետը, թէ Միւռոնը հայուն համար ինքնութեան օժոմ է եւ պատմական գիտակցութեան դրոշմ:

Միութեան կը կանչէր Միւռոնը, Երջանկայիշատակ Զարեհ Ա. Կաթողիկոսին բերնով: Աղերս ունէր Հայրապետը, որ Ս. Հոգին իջնէ հայ ազգին վրայ եւ այդպիսով անիկա դառնայ մէկ հօտ, մէկ հովիւ եւ մէկ եկեղեցի՝ Միւռոնով օժոնած եւ անքակտելի կերպով իրար միացած:

Պարտաճանաչութեան ոգին էր որ կը փոխանցուէր Ս. Խորանէն 1965-ի Մայիսին, Երջանկայիշատակ Խորէն Ա. Կաթողիկոսի պատգամով: Ան Միւռոնին մէջ կը տեսնէր պարտաճանաչութեան պատգամը, որ երկնածիր է ու ցանկալի: Նման միւս Հայրապետներուն, ան եւս կ'աղօթէր առ Ամենակալին Աստուծոյ, որ անփորձանք ու անխռով պահէ հայ Միւռոնով օժոնած փառապանծ ազգը հայկազնեան:

Հայութիւն կը պատգամէր Միւռոնը Երջանկայիշատակ Գարեգին Բ. Կաթողիկոսին համար: Հայ էր ան՝ որ կը մկրտուէր հայ աւագանէն ու կը դրոշմուէր բուրումնաւէտ հայ Միւռոնէն:

Ահալասիկ Սրբալոյս Միւռոնը տասնամեակներ ու դարեր շարունակ աշխարհը յուզող տազնապներուն ու դժուարութիւններուն ուղեցոյց պատգամներ փոխանցեց՝ մեր հայրապետներուն լուսաբաշխ ու հոգեշահ խօսքերուն ընդմէջէն:

Իսկ վաղուան համար լո՞ւռ է Միւռոնը: Բնաւ երբեք...:

Գ) Միւռոնը տեսիլք է: Միւռոնը Միւռոնուածին համար մտքի լոյս եւ խոհականութեան հուր է: Իբրեւ քրիստոնեաներ ապագան կը դիտենք յուսով ու տեսիլքով: Այս տարի տեսիլքի ու յոյսի իւղն է որ կ'որհնուի ու կը պատրաստուի երախաները Աստուծոյ որդիներ եւ մարդը ապագայատեսիլ երկնախօս արարած դարձնելու: Այս գաղափարներուն ներշնչումը կը գտնենք Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի պատգամներուն մէջ: Միւռոնը անցեալէն՝ ներկայ, ու ներկայէն՝ ապագայ երկարող իբրեւ ոսկէօղակ կամուրջ կը ներկայացնէ Վեհափառ Հայրապետը, եւ հրաւէր կ'ուղղէ հայ ազգին այդ ճամբէն քալելու: Նորին Սրբութիւնը հայութեան հորիզոնին վրայ ինքնավստահութեան ոգին ամրապնդելու տեսիլքը պարզելով կ'ըսէ. «Մենք անցեալ չենք, մենք պատմութիւն չենք, այլ անցեալէն եկող ու ներկայի մէջ ապագան տեսիլքով ապրող ու պայքարող ազգ ենք...: Միւռոնը մեզ ապագային նայելու ամուր ինքնավստահութեամբ ու պայծառ տեսիլքով կը ջրդեղէ՝ մեր կեանքը աստուածային շնորհներով հարստացնելու, մեր հաւատքը զօրացնելով, մեր վճռակամութիւնը կոանելով, մեր կեանքի ցամաքը լուսաւորելով»:

Երիտասարդը միայն ներկան խանդավառողը, ոգեւորողն ու ներշնչողը չէ, այլ՝ ազգի մը գոյատեւման երաշխիքը: Եթէ կ'ուզենք սերունդներու գանձ մը ժառանգել, արժէք մը փոխանցել կամ սրբութիւն մը պահել երիտասարդութիւնը պէտք է կոանել: Վեհափառ Հայրապետը 2008-ին ապագայասլաց պատգամով Միւռոնօրհնութեան պահուն երիտասարդութիւնը զգաստութեան կը հրաւիրէր՝ ըսելով. «Արթուն կաց հայ երիտասարդ. Ամէն տեղ ու ամէն վայրկեան քու շուրջը փչող հոգիներն ու հոսանքները քո չինքնացնեն քեզ քու արմատներէդ...: Դու քու նախնիքդ ու նախնիքդ հայ Միւռոնին: Ամուր պահէ հաւատքդ, անբիծ՝ հայ Միւռոնը, ու ներկայ աշխարհի փոքրիկներուն մէջ կեանքդ վերածէ հոգեւոր ու ազգային արժէքներով օժուց Միւռոնաբոյր կեանքի»:

Ազգի մը համար նահատակներ յիշելը հաւաքական գիտակցութեան նշանն է: Իսկ փոքր ազգի մը համար նահատակները ոգեկոչելը սրբութիւն է: Այս սրբութիւնը կարելի է պահել ու ապագայի գիտակցութեան վերածել միայն պահանջատիրական ոգիով: Վերջապէս, 2015-ի Միւռոնօրհնէքին Վեհափառ Հայրապետին կողմէ ճշդուեցաւ մեր յառաջիկայ 100-ամեակը ապահովող երրաբառ նշանաբանը՝ «Յիշել, յիշեցնել ու պահանջել», այլ խօսքով՝ անցեալը չմոռնալ, ներկային յիշեցումներ կատարել եւ ապագային համար պահանջել: Հայրապետը, իր պատգամին մէջ կ'ուխտէր պահանջատիրական երթը վերանորոգ հաւատքով շարունակել, եւ Միւռոնի երկնային զօրութիւնը կը միախառնէր հայ ազգի գոյապայքարի կամքին՝ ըսելով. «Սրբալոյս

Միւռոնին օրհնութիւնը կոչ մըն է մեր ժողովուրդի գաւակներուն՝ մեր պահանջատիրական պայքարը Միւռոնի հոգեւոր գորութեամբ թրծելու»:

Այս բոլոր ճշմարտութիւններուն լոյսին տակ արժան է, որ հիմա, յօժար ծնրադրութեամբ եւ կատարեալ երկիրդով՝ Ս. Հոգւոյն տեսանելի ու շօշափելի ներկայութեան դիմաց դողդղալով առ Աստուած երգել. «Սուրբ, սրբէ անդրանիկդ՝ հայ ազգը ողջ, մեղքերէ ու յանցանքներէ. Սուրբ, բժշկէ վկաներդ, ախտերէ ու անհարակ հիւանդութիւններէ. Սուրբ, փրկէ ժողովուրդդ, երեւելի ու աներեւոյթ թշնամիներէ. Ամէն»:

ՍԱՐԳԻՍ ԱԲՂ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ



ՀԻՍԱ՝ ՀԱՅԱՑԱՆՔ

Միւռոնօրհնէքի օրը արտասովոր եռուզեռ մը կը տիրէ Անթիլիասի մէջ: Անիկա հայութեան համար յուսապատճառ, սրտամօտ, ուրախառիթ եւ հոգեհարազատ օր մըն է: Այդ օրը Անթիլիասի Մայրավանքը հայութիւն կը քաղցրաբուրէ: Ա՛յնքան տիրական կ'ըլլայ հայութեան բոյրը, որ նոյնիսկ երջանկայիշատակ մեր հսկայ կաթողիկոսներուն շիրիմները կը պայծառափայլին, կը պայծառաշողան ու կը պայծառակերպուին: Յարութեան նախօրինակը կ'ապրին կարծէք: Հայութեան բոյրին հետ հետզհետէ կը շողախուր Սրբալոյս Միւռոնին բոյրը եւ դէպի երկինք կը բարձրանայ իբրեւ Բարձրեալին նուիրուած անուշահոտ ու անուշաբոյր պատարագ: Ապա, կը վերածուի բարբառ պատարագի եւ երկնքին մէջ կը լսուի. «Եւ զքոյս՝ ի քոյոց՝ քեզ մատուցանեմք, ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն» (խորհրդատետր Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, էջ 78):

Սրբալոյս Միւռոնը Աստուածորդւոյն կողմէ հայութեան տրուած ամենամեծ նուէրն ու կտակն է: Ըստ հայկական աւանդութեան, Երկնառաքը՝ Քրիստոս Իր տէրունի ձեռքերով օրհնած է ազգիս հայոց Սրբալոյս Միւռոնը (իւղը) եւ յանձնած է հայոց աշխարհի առաջին Լուսաւորիչներուն, որպէսզի անոնք աւետարանի լոյսին հետ Միւռոնի լոյսն ալ տարածեն հայութեան կեանքին ու երկնքին մէջ (Հայոց Եկեղեցին, Մաղաքիա Արք. Օրմանեան, էջ 268 եւ Քրիստոնեայ Հայաստան հանրագիտարան, էջ 751):

Սրբալոյս Միւռոնի օրհնութիւնը սակայն, լոկ ու սոսկ Եկեղեցական արարողութիւն մը չէ, այլ ազգային արարողութիւն մը՝ հայութեան արարողութիւնը: Չմոռնանք, որ մարդացեալ Բանը՝ Քրիստոս զայն Հայ Եկեղեցւոյ

չղրկեց, այլ՝ հայութեան: Այս մէկը կու գայ հաստատելու, թէ Միւռոնը Քրիստոնէական կրօնն ու հայութիւնը անբաժանելի ու ամուր կերպով իրարու միացնող կապն է: Առաւել, Միւռոնը հայ բառին հոմանիշն է: Գարեգին Բ. Սարգիսեան կաթողիկոսը ըսած է. «Միւռոնը... ազգային բնոյթ ունի: Հայց. Եկեղեցւոյ Միւռոնը հայութեան կնիքն է դարձած՝ ըլլալէ ետք կնիքը Ս. Հոգւոյն» (Հող, մարդ եւ գիր, էջ 287):

Միւռոնի օրհնութեան ժամանակ, հին Միւռոնը կը խառնուի նորին հետ, որպէսզի մեզ ամբօրէն ու անբաժանելիօրէն զօղէ մեր նախահայրերուն հետ: Այդ պահուն, մենք ժամանակին մէջ կը ճամբորդենք երթալով դէպի հայութեան արմատը, ակունքը, հիմքը. կը միանանք անոր հետ՝ դառնալով ճշմարիտ հայ, զո՛ւտ հայ, իրա՛ւ հայ: Սուրբ Աթոռոյս արժանընտիր Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը կ'ըսէ. «Միւռոնով մենք կը դառնանք Հայ: Միւռոնով մենք մաս կը կազմենք Հայոց պատմութեան: Միւռոնով կը դառնանք անբաժան ու անբաժանելի անդամը Հայ ժողովուրդին»:

Սրբալոյս Միւռոնը կը կերտէ հայ մարդուն առանձնայատուկ, ինքնուրոյն ու ճշմարիտ նկարագիրը: Այս դժուարին ու տագնապալից օրերուն, երբ ամէն երեւոյթ եւ դէպք մեզ մէկ քայլ աւելի կը հեռացնէ հայութենէն, Սրբալոյս Միւռոնի օրհնութիւնը կու գայ «ցրուած ոչխարները» ի մի խմբելու, զանոնք զօրացնելու, խրատելու ամրապնդելու եւ կարեւորագոյնը՝ մէ՛կ ազգ, մէ՛կ ժողովուրդ եւ մէ՛կ հայութիւն դարձնելու:

Հայ Եկեղեցւոյ Ոսկեբերան վարդապետը՝ Ս. Գրիգոր նարեկացի կ'ըսէ. «Այս լուսապարար եւ փրկաւէտ իւղը (Միւռոնը) նախ մեր մասին արտաքին խորանը մարմին կ'օծէ եւ յետոյ իր աներեւոյթ զօրութիւնը ծածկաբար ներքին մարդուն մէջ ներգործելով՝ ի նորոյ կը կենդանացնէ զայն»: (Նարեկ Բան ՂԵ, մաս Գ): Ես այս խօսքը հայ հաւաքականութեան կ'ուզեմ վերագրել, հաւատալով, որ այս տարուան միւռոնօրհնութիւնը պիտի «օծէ» հայութեան «արտաքին խորանը»ները՝ Հայաստանն ու Արցախը, ապա, իր «աներեւոյթ զօրութեամբ»ը պիտի մտնէ իւրաքանչիւր հայորդիի սրտին ու հոգիին մէջ, որպէսզի զայն «ի նորոյ կենդանացնէ» եւ դարձնէ հայ բառին ամբողջական ու հարազատագոյն հոմանիշն ու պատկերը:

Մեր մամիկներն ու պապիկները հայ ըլլալու պայմանը կը նկատեն Միւռոնը: Անոնք մանուկին Միւռոնով դրոշմուելէն ետք միայն զայն «հայորդի» կը կոչեն: Միւռոնուած ճակատին կ'ըսեն «հայու ճակատ»: Երբ քահանայի մը վերջին օժումը կատարուի կ'ըսեն «հայ մեռալ»: Եկեղեցւոյ մը միւռոնուելէն ետք կ'ըսեն «ահ հիմա՛ հայ եկեղեցի դարձալ»: Մանուկի մը մկրտուելէն ետք կ'ըսեն «հիմա՛ հայացալ»: Արդարեւ, Միւռոնօրհնէքի այս շրջանին լիարժէքօրէն կրնանք հաստատել, թէ մենք՝ հայերս «հիմա՛ հայացանք»:

ԱՌԱՔԵԼ ԱԲՂ. ԳԱՏԵՀՃԵԱՆ

BLESSING OF HOLY MURON IN ANTELIAS

Since the fourth century the Armenian Apostolic Church has celebrated the blessing of the Holy Muron, which embodies the material presence of the Holy Spirit within our Church. This holy oil is consecrated once every seven years and serves various sacramental functions. During the liturgical service, Muron from the previous consecration is mixed with the new, forming an unbreakable generational linkage that dates back to the time of St. Gregory the Illuminator.

Following this tradition, a rich liturgical proceeding commenced before the St. Gregory Illuminator Cathedral in Antelias, Lebanon on Friday July, 1, 2022. Faithful Armenians from all over the world made the pilgrimage to be present for the special occasion. The Catholicos of the Armenian Church, Holy See of Cilicia, His Holiness Aram I presided over the enchanting ceremony and was accompanied by Syriac Patriarch Ignatius Aphrem II, as well as several bishops from the Cilician Brotherhood. Also in attendance were Bishops Mushegh Babayan and Vrtanes Aprahamyan from the Holy See of Etchmiadzin, and Archbishop Aram Ateshian from the Patriarchate of Constantinople, demonstrating the unity between the patriarchal sees of the Armenian Apostolic Church. Clergy from the Coptic Orthodox, Maronite, Greek Orthodox, Greek Catholic, Syriac Catholic and Armenian Catholic Churches were in attendance alongside statesmen and representatives of various organizations.

In the Bible, oil and the olive branch symbolically represent peace and blessing (cf. Genesis 8:11) as well as in the ordination of priests and coronation of kings (Leviticus 21:10). Christ too was consecrated with oil (cf. Luke 7:38). Holy Muron comprises over 40 different herbs and flowers that have distinct aromatic and healing attributes. Over the duration of a week, clergymen pray and chant psalms as the elements of this Holy Chrism are blended together, upon which the oil is placed in a cauldron upon the altar for a period of 40 days prior to its consecration. Once the Holy Muron is consecrated, it is then distributed to all of the prelaties of the Holy See of Cilicia that are located around the world, and thereby their respective parishes.

Holy Muron is used during the baptismal service within the Armenian Apostolic Church. It is poured from the dove-shaped reliquary into the baptismal waters symbolizing the dove that descended at Christ's baptism (cf. Matthew 3:16; Mark 1:10; Luke 3:22; John 1:32), and also during the *ղրշմ*/*troshm* or confirmation portion of the liturgical service, where the officiating clergyman seals the newly baptized child's forehead, eyes, ears, nostrils, mouth, hands, heart, back and feet, by dipping his thumb into his palm where he has poured a portion of the chrism. Each part of the body is accompanied by its own unique

prayer containing a protective invocation upon the newly made member of the Church.

The Holy Muron is used in the ordination of priests and bishops, in the consecration of a catholicos, as well as for consecrating newly built cathedrals, altars and icons. At the blessing of the water on Christmas, the water is blessed through the pouring of Muron, alongside the Gospel and the Cross. Formerly it was used to anoint the sick as well. This sacrament is known as *Վերջին Օծում* or *Հիանդաց Կարգ*, meaning Extreme Unction or Anointing of the Sick. Today, this tradition is primarily administered to clergymen who have passed away during the funeral service.

This Blessing of the Holy Muron was sponsored by the vice-chairman of the Western Prelacy's National Committee, Mr. Mher Der Hovhannesian. The master of ceremonies, His Eminence Bishop Magar Ashekian invited bishops to present the sweet-smelling rose oil and balm, which was mixed into the new Muron over supplications. Furthermore, the Muron brought from Etchmiadzin was mixed with the new Muron as a symbol of the Armenian Apostolic Church's oneness.

At the conclusion of the ceremony, His Holiness Aram I gave an inspiring sermon. In His address His Holiness said,

“The blessing of the Muron is not just simply a liturgical service. It is God’s descendance to earth and man’s ascent to heaven. The blessing of the Muron is a mysterious communication between God, with the inner working of divine-sent graces of the Holy Spirit. The blessing of the Holy Muron is the spiritual transfiguration and renewal of our people, along with our spiritual and national traditions, values and customs. The meaning of the Holy Chrism is deep and miraculous. God’s good works of creation are found in it, with the fusion of oil and 40 different flowers and seeds. Beyond its material substance, it is the ray of divine holiness in our sinful lives and source of heavenly light above our darkened skies”.

His Holiness also called upon the Muron-anointed sons and daughters of the Armenian Church to remain faithful to the Muron that has been confirmed upon their foreheads; to its message and call, for it is through it that we are united in will and strength. At the end of His address, His Holiness asked for the graces of the Holy Spirit to descend upon the faithful and beseeched that this Holy Chrism serve as an eternal source of heavenly goodness, spiritual renewal and national unity.

At the end of the service, His Holiness Aram I blessed all those present with the relic of the right hand of St. Gregory the Illuminator concluding the 13th consecration of Holy Muron in Antelias.

DN. DARON HALAJIAN

Antelias, Lebanon
July 5, 2022

ՄԻՒՌՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ուրբաթ, 1 Յուլիսը յիշատակելի օր մը պիտի մնայ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար, երբ Արամ Ա. Կաթողիկոս, շրջապատուած առընթերակայ եւ այլ եպիսկոպոսներով կատարեց սրբալոյս միւլուսի օրհնութիւնը, որ տեղի կ'ունենայ ամէն 7 տարին անգամ մը:

Այս ուրախ առիթով զանազան խորհրդածութիւններ ունեցայ եւ որոշեցի անդրադառնալ «Միւլուսի խորհուրդին», հարց տալով, թէ ի՞նչ է միւլուսը, ի՞նչ է խորհուրդը եւ ի՞նչ է միւլուսի խորհուրդը ընդհանրապէս եւ Հայ Եկեղեցւոյ համար, մասնաւորաբար:

ՄԻՒՌՆ բառը յունական ծագում ունի (μύρον = myron) եւ կը նշանակէ «անուշաբոյր իւղ»: Հայերէնի մէջ, անցեալին օգտագործուած են նաեւ «մեւուս» եւ «միւլուս» եզրերը:

Եւրոպական լեզուներու մէջ, օրինակ լատիներէն crisma եզրը, յառաջացած է հին յունարէն χρισμα (khrisma = խրիզմա) եզրէն, որ կը նշանակէ «օծման իւղ»: Նոյնպէս՝ անգլերէնի (Chrism), գերմաներէնի (Chrisam) եւ այլ լեզուներու մէջ:

Միւլուսի բաղադրութեան գլխաւոր նիւթը ձիթապտուղի իւղն է, ձէթը, որուն կը խառնուին բազմաթիւ (մօտ. 60) համեմունքներ: Այդ համեմունքներուն մաս կը կազմեն՝ կարգ մը ծառերէ հոսող բուրումնաւէտ խէժի տեսակները՝ խոնկ (Incense), կնդրուկ (Olibanum), զմուռս (Myrrh) ու բալասան (Balsam), նաեւ կարգ մը բոյսերու ծաղիկներէն ու տերեւներէն պատրաստուած եթերային իւղերը (Ethereal oil) եւ ջուրերը (վարդաջուր, ծաղկաջուր), սեւ խաղողի գինի, եւ այլ համեմունքներ...:

Միւլուսը կը գործածուի գլխաւորաբար հետեւեալ պարագաներուն՝

- Եկեղեցական խորհուրդներու (լատ.՝ sacramentum) ատեն, ինչպէս օրինակ մկրտութեան խորհուրդի ժամանակ, երբ մկրտուողը կը դրոշմուի սուրբ միւլուսով կամ ձեռնադրութեան ատեն, երբ ընծայեալը (քահանայ, եպիսկոպոս, կաթողիկոս) միւլուսով կ'օծուի:

- Կարգ մը ծիսակատարութիւններու (լատ.՝ ritus) ատեն, ինչպէս օրինակ ջրօրհնէքի պարագային: Միւլուսով կ'օծուին նորակերտ եկեղեցւոյ մը խորանը (խորանները), մկրտարանը, ականդատունը, սիւներն ու սրբանկարները:

ԽՈՐՀՈՒՐԴ հասկացութիւնը ունի բազմաթիւ իմաստներ:

Եւրոպական լեզուներու, օրինակ յունարէնի մէջ կը համապատասխանէ μυστήριον (mystêrion = միւստէ՛րիոն) եզրին, որմէ կը յառաջանան լատիներէնը եւ գերմաներէնը՝ mysterium, անգլերէնը՝ Mystery եւ կարգ մը այլ լեզուներու մէջ՝ misterija:

Հատիներէնի մէջ, որպէս հոմանիշ ունինք նաեւ sacramentum եզրը, որմէ յառաջացած են.– անգլերէն ու ֆրանսերէն՝ Sacrament, գերմաներէն՝ Sakrament, եւայլն... որ եւս ծիսակատարութիւն է, որու կատարման ընթացքին, «տեսանելի արարողութեամբ» կը խորհրդանշուի «անտեսանելի Աստուծոյ» իրականութիւնն ու ներկայութիւնը եւ բարեպաշտ հաւատացեալներ կրնան իրենց մասնակցութիւնը բերել այդ արարողութեան:

Հայերէնի մէջ, «խորհուրդ» հասկացութեան բազմաթիւ իմաստներէն նշենք կարեւորները՝

- «Գաղափար» (յուն.՝ idéa, անգլ.՝ Idea, գերմ.՝ Idee), եւ որպէս մերձանիշ եզրեր՝ «միտք», «խոհ», «մտայղացում», «մտածում»

- «Գաղտնիք» (յուն.՝ mysterio, անգլ.՝ Secret, գերմ.՝ Geheimnis) կամ «թաքուն գիտելիք»,

- «Մարդոց ժողով» (լատ.՝ consilium, անգլ.՝ council, գերմ.՝ Rat), ինչպէս պետական, եկեղեցական (թեմական, ծիսական), պատգամաւորական, դպրոցական, գիտական եւ այլ բնոյթի «խորհուրդներ»:

- «Կրօնական կամ եկեղեցական ծէսեր կամ ծիսակատարութիւններ ու արարողութիւններ», ինչպէս՝ ջուրով մկրտութեան, միւռոնով դրոշմի, պատարագի հաղորդութեան, ապաշխարութեան, ամուսնութեան, վերջին օծման եւ ձեռնադրութեան «7 խորհուրդները»:

Միջնադարեան հայ աստուածաբան-փիլիսոփայ Սբ. Գրիգոր Տաթեւացի¹ (1346 – 1410 թ.), իր «Գիրք Հարցմանց» երկին մէջ (էջ 587) կը բացատրէ, որ 7 խորհուրդները բարեպաշտ հաւատացեալները կը պատրաստեն իւրա-

¹ Գրիգոր Տաթեւացի (1346 – 1410 թ.)-

Միջնադարեան հայ աստուածաբան-փիլիսոփայ, ուսանած է Տաթեւի համալսարանին մէջ, ուր աշակերտած է համալսարանի հիմնադիր, եռամեծար ուսուցչապետ աստուածաբան-փիլիսոփայ **Յովհան Ռոստնեցի** (1315 – 1386 թ.), որու վախճանումէն ետք Տաթեւացին կը ստանձնէ Տաթեւի համալսարանի ուսուցչապետութիւնը: Տաթեւացի մեծապէս ազդուած է եւրոպական Դպրական փիլիսոփայութենէն (Scholastics), յատկապէս իտալացի նշանաւոր դոմինիկեան միաբան **Թոմաս Աքուինացիէն** (Thomas Aquinas, 1224 – 1274 թ.): Տաթեւացի հեղինակ է բազմաթիւ աստուածաբանական-փիլիսոփայական երկերու, որոնցմէ գլխաւորներն են՝ «Գիրք Հարցմանց» եւ «Ոսկեփորիկ»: **Յովհան Ռոստնեցի** եւ **Գրիգոր Տաթեւացի** սրբադասուած են Հայ եկեղեցոյ կողմէ:

Տաթեւի համալսարանին մէջ յատուկ ուշադրութեամբ ներգրաւուած են փիլիսոփայական նիւթերը, թարգմանուած եւ ուսումնասիրութեան առարկայ են դարձած թէ՛ հնադարեան եւ թէ՛ միջնադարեան բազմաթիւ փիլիսոփաներու երկերը: Կրօնադասանաբանական պայքարի ծիրէն ներս, Կաթողիկէ եկեղեցին կը ձգտէր Հայ եկեղեցին իրեն հպատակեցնել, օգտագործելով Դպրական փիլիսոփայութիւնը (Scholasticism): Տաթեւի համալսարանը եւ իր ուսուցչապետերը պայքարելու համար *միաբարական* (ունիթորական) այս շարժումին դէմ, որդեգրեցին դպրականութեան նոյն ոճը: Այս պատճառով թարգմանուեցան եւ ուսումնասիրուեցան արեւմտեան դպրական փիլիսոփայութեան եւ մասնաւորաբար **Թոմաս Աքուինացիի** կարեւորագոյն երկերը:

ցնելու 7 առաքինութիւնները.– Մկրտութիւնը օրինակ խորհուրդն է հաւատքին, միւսողով դրոշմը՝ յոյսին, պատարագի հաղորդութիւնը՝ սիրոյ, ապաշխարութիւնը՝ արդարութեան, միւսողով օծումը՝ արդարութեան լրումին, միւսողով ձեռնադրութիւնը՝ խոհեմութեան եւ ամուսնութիւնը՝ ողջախոհութեան:

Միշտ մնալով աստուածաբանութեան ծիրէն ներս, կարելի է հաստատել, որ սկզբնական շրջանին ընդունուած էին միայն մկրտութեան եւ հաղորդութեան խորհուրդները. ժամանակի ընթացքին անոնք աւելցան եւ հասան եօթի, զորս վերեւ յիշեցինք, որոնցմէ քանի մը հատին անդրադառնալու է, որպէսզի բացայայտուի ու ըմբռնելի դառնայ խորհուրդին կրօնական իմաստը, որ անտեսանելի բաներու յայտնութիւնն է՝ արարողութեան կամ ծիսակատարութեան ընթացքին:

Աստուածաբանական «խորհուրդ» հասկացութիւնը, կարելի է ըմբռնել միայն կրօնական ջերմ հաւատքով եւ բարեպաշտութեամբ:

Հայ եկեղեցւոյ հետեւեալ խորհուրդներու ծիսակատարութեան ընթացքին անհրաժեշտ է միւսողով գործածութիւնը:

1. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՐՈՇՄԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Մկրտութեան² (Baptism) պարագային, մկրտողին Քրիստոնեայ դառնալը եւ եկեղեցւոյ անդամ դառնալը, ինքնին խորհուրդ մըն է... որպէս՝ անտեսանելիին յայտնութիւնը:

Ջուրով մկրտութիւնը, եթէ մէկ կողմէն՝ լուացում ու մաքրութիւն կը նշանակէ, կրօնական իմաստով սակայն, ան մաքրութիւնն է մարդուն, իր սկզբնական մեղքէն³ (Original Sin) եւ մկրտող մարդու վերստին ծնունդը, որպէս քրիստոնեայ:

Դրոշմը⁴ (Confirmation) սուրբ միւսողով օծման խորհուրդն է, որպէս նշան՝ քրիստոնէական հաւատքի հաստատման: Ասոր կողքին, Դրոշմ կը նշանակէ նաեւ «կնիք», որմէ յառաջացած է մկրտութեան «կնունք» անուանումը: Իսկ դրոշմել բայը, կը նշանակէ՝ հաստատել, կնքել:

² Մկրտութիւն (յուն. եւ լատ.՝ baptisma, անգլ.՝ Baptism, գերմ.՝ Taufe).-

Մկրտութեան խորհուրդը յատուկ արարողութեամբ կը կատարուի, ջուրով:

³ Սկզբնական մեղք (լատ.՝ peccatum originale, անգլ.՝ Original Sin, գերմ.՝ Erbsünde).-

որ կը բնութագրուի որպէս մարդու աղիտալի (չար) իրավիճակը եւ անոր ի ծնէ մեղաւոր ըլլալը, մեղքը ժառանգած ըլլալով Ադամէն ու Եւայէն, որոնք դրախտին մէջ, անհնազանդ եղան եւ մեղանշեցին: Սկզբնական մեղքը, Ադամէն ու Եւայէն ժառանգաբար անցած է համայն մարդկութեան: Այլ խօսքով, ընդհանրապէս ամէն մարդ մասնակից կը դառնայ սկզբնական մեղքին:

⁴ Դրոշմ (լատ.՝ confirmatio, անգլ.՝ Confirmation, գերմ.՝ Firmung).-

Դրոշմի խորհուրդը յատուկ արարողութեամբ կը կատարուի, սուրբ միւսողով: Միւսողով կօծուին մկրտողի մարմնի 9 մասերը:

Միևուսով դրոշմի խորհուրդը կը կատարուի յատուկ արարողութեամբ եւ անբաժան մէկ մասն է մկրտութեան խորհուրդին: Դրոշմը կը խորհրդանշէ սուրբ Հոգիին շնորհքը, որ «կ'իջնէ» մկրտուողին վրայ:

Մկրտութեան խորհուրդէն ետք, դրոշմի խորհուրդը կը կատարուի մարմնի 9 տարբեր մասերու միևուսով օծմամբ: 5 զգայարաններէն ետք, տակաւին միևուսով կ'օծուին մկրտուողին սիրտը, կունակը, ձեռքերն ու ոտքերը:

Յիսուս, երբ Յովհաննէս Մկրտիչի ձեռամբ մկրտուեցաւ Յորդանան գետին մէջ, աղաւնակերպ սուրբ Հոգին իջաւ անոր վրայ: Յիսուս, առաքեալները զրկեց, որ քարոզեն եւ բոլոր ազգերը մկրտեն՝ սուրբ երրորդութեան⁵ անուանով:

2. ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ձեռնադրութեան խորհուրդը եւս կը կատարուի յատուկ արարողութեամբ եւ միևուսով կ'օծուին ձեռնադրուողին ճակատն ու ձեռքերը:

Ձեռնադրութեան խորհուրդով, աշխարհական անձեր (ընծայեալներ) կը ստանան եկեղեցական կարգ ու պաշտօն եւ հաւատքի հասկացողութեամբ կը հաղորդուին աստուածային շնորհով ու բիւր պարգեւներով: Հայ եկեղեցւոյ մէջ, փոքր աստիճաններէն (ինչպէս՝ դպիր, սարկաւազ...) զատ կան նաեւ չորս գլխաւոր աստիճաններ՝ քահանայութիւնը, վարդապետութիւնը, եպիսկոպոսութիւնը եւ կաթողիկոսութիւնը:

3. ՎԵՐՋԻՆ ՕԾՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Վերջին օծման խորհուրդը եւս կը կատարուի միևուսով, յատուկ արարողութեան մը ընթացքին:

Նախաքրիստոնէական սովորութիւն մըն է, որ թէ՛ մահամերձ հիւանդները եւ թէ՛ ննջեցեալները միևուսով կ'օծուէին: Այս աւանդութիւնը, ժամանակի ընթացքին կորսնցուցած է իր կարեւորութիւնը: Այժմ, Հայ եկեղեցւոյ մէջ միայն ննջեցեալ կղերականներու վերջին օծում կը կատարուի: Այս եւս կորսնցուցած է իր «խորհուրդ» մը ըլլալու հանգամանքը:

Գրիգոր Տաթեւացի, իր «Գիրք Հարցմանց» երկին մէջ (հոն՝ էջ 604) կը բացատրէ, որ Հայ եկեղեցւոյ մէջ, մկրտութեան խորհուրդի ատեն թէ՛ առաջին օծումը (դրոշմը) եւ թէ՛ վերջին օծումը միասնաբար կը կատարուին: Արդարեւ հետաքրքրական գաղափար մը, Հայ եկեղեցւոյ եռամեծար վարդապետի մը կողմէ:

⁵ Երրորդութիւն (լատ.՝ trinitas, անգլ.՝ Trinity, գերմ.՝ Dreieinigheit).-

Միաստուածեան քրիստոնէութեան մէջ, երրորդութիւն կը կազմեն մէկ Աստուծոյ երեք անձերը՝ Հայրը, Որդին եւ սուրբ Հոգին: Այս իմաստով, «Երրորդութիւն» եզրը կազմուած է 4-րդ դարուն:

«Միւռոն» եւ «խորհուրդ» եզրերը առանձնաբար ներկայացնելէ ետք, այժմ տեսնենք թէ աստուածաբանութեան մէջ ի՞նչ կը նշանակէ «միւռոնի խորհուրդ» բառակապակցութիւնը, ուր դարձեալ կը շեշտաւորուի «խորհուրդ» հասկացութիւնը, այս անգամ առնչուած միւռոնի նիւթին, որուն անդրադարձանք արդէն:

ՄԻԻՌՈՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ինչպէս նշեցինք, «խորհուրդ» եզրը, լատիներէնի մէջ ունի երկու հոմանիշներ՝ *mysterium* ու *sacramentum*: Երկրորդ դարուն, սակայն, լատիներէն այդ երկու եզրերը միաձուլուած կը նկատուին եւ բոլորովին նոյն իմաստը կը պարզեն:

Հնադարեան ժամանակաշրջանի լատին աստուածաբան-փիլիսոփայ Օգոստինոս Երանելին⁶ (Augustinus), նոյնինքն Յիսուս Քրիստոսի մարդացման մէջ կը գտնէ մեծագոյն խորհուրդը: Օգոստինոս առաջինն էր, որ կը կազմէ խորհուրդներու հիմնական լայն համակարգ (System) մը, որու հիմքը, միաժամանակ թէ՛ աստուածաբանական եւ թէ՛ փիլիսոփայական էր:

Օգոստինոս կը զանազանէր «բան»ին (լատ.՝ *rem*) եւ «նշան»ին (լատ.՝ *signum*) միջեւ:

«Բանը» այն իրն է, որ իրականութեան մէջ ինքնին կայացած գոյութիւն ունի, ինչպէս միւռոնը, ջուրը, հացն ու գինին: Իսկ «նշանը», Օգոստինոսի համաձայն, միշտ կը վերաբերի այլ բանի մը: Օրինակ «բնական նշան» մըն է ծուխի գոյութիւնը, որ կը վկայէ կրակի մասին: Իսկ «տրուած նշան» ("given sign") կը նկատուի օրինակ ձեռնադրութիւնը, երբ եպիսկոպոսը ձեռքերը թեկնածուի գլխուն դնելով, այլ բանի մը կը միտի: Օգոստինոսի համաձայն, նաեւ արտասանուած բառերն ու խօսքերը (օրինակ միւռոնով մկրտութեան դրոշմի, ձեռնադրութեան կամ ջրօրհնէքի ատեն) «տրուած նշան» կը նկատուի, այլ խօսքով տեսանելի բաներու միջոցով բարեպաշտ հաւատացեալը կ'առաջնորդուի դէպի անտեսանելի իրողութիւններ:⁷

Օգոստինոս աստուածային շնորհը անմիջականօրէն կը կապէ կամքի ազատութեան (Free Will) եւ սկզբնական մեղքի (Original Sin) հարցերու հետ:

⁶ Օգոստինոս Երանելին (Augustinus, 354 – 430 թ.)-

Լատին աստուածաբան-փիլիսոփայ: Ներկայացուցիչ Միջնադարու Հայրաբանութիւն (Patristics) շրջանի: Սրբադասուած՝ Կաթոլիկ Եկեղեցւոյ կողմէ, իսկ Ուղղափառ Եկեղեցւոյ կողմէ դասուած՝ երանելիներու շարքին: Հեղինակ է բազմաթիւ երկերու եւ ինքնակենսագրութիւն նկատուող «Խոստովանութիւններ» (լատ.՝ "Confessiones") երկին, որ իր գլուխ գործոցը կը նկատուի: 33 տարեկանին, Քրիստոնէայ մկրտուելէ առաջ հետեւած է յունական դասական փիլիսոփայութեան եւ Մանիքեան (Manicheism):

⁷ Օգոստինոսի յիշեալ գաղափարը (խորհուրդը, որպէս սուրբ նշան մը) քաղուած է իր «Աստուծոյ քաղաքի մասին» (426 թ., լատ. բնագիր՝ "de civitate dei", անգլ.՝ "City of God") նշանաւոր երկէն:

Օգոստինոսի համաձայն, սկզբնական մեղքի պատճառով մարդ չի կրնար յաղթահարել իր մեղքի հակումը, որ սահմանափակ կամքի ազատութիւն կը նշանակէ, հետեւաբար մարդ կախեալ կը մնայ աստուածային շնորհէն (որով մասին՝ քիչ ետք):

Միջնադարեան դպրական փիլիսոփայութիւնը⁸ (Scholastics), ընդհանրապէս եւ իր նշանակող ներկայացուցիչը, Իտալացի աստուածաբան-փիլիսոփայ՝ Թոմաս Աքուինացին⁹ (Thomas Aquinas, 1224 – 1274 թ.), մասնաւորաբար, որպէս հիմք ընդունեցին բարեփոխուած յոյն աշխարհահռչակ փիլիսոփայ Արիստոտէլի¹⁰ (յուն.՝ Aristotélês, 384 – 322 մ.թ.ա.) փիլիսոփայութիւնը: Այս իմաստով կարգախօս կը դառնայ հետեւեալ գաղափարը. – խորհուրդներու ներգործութիւնը իրենց տրուած նշանակութեան մէջ կը կայանայ, որ սերտորէն առնչուած է, «շնորհ» (լատ.՝ gratia, անգլ.՝ Grace, գերմ.՝ Gnade) հասկացութեան հետ: Թոմասի համաձայն, այդ «շնորհը» կը բխի Աստուծմէ, որպէս «առաջին պատճառ» եւ սրբազան խորհուրդներէն, զորս Աստուած Յիսուս Քրիստոսի միջոցով վստահած է իր եկեղեցիին, որպէս «երկրորդ պատճառ»: Այսպիսով, յիշեալ 7 խորհուրդները կը բացատրուին, որպէս ստեղծող-արարիչ ու ամենափրկիչ Աստուծոյ ներգործութիւնը մարդկային գոյութեան վրայ: Այլ խօսքով, Աստուած, սրբազան խորհուրդներու միջոցով, որոնք փրկութեան միջնորդութեան ուղիներն են, իր «շնորհը» կը հաղորդէ մարդոց:

Արիստոտէլի համաձայն, բոլոր խորհուրդները բաղկացած են «նիւթէն» (յուն.՝ hylê = հիւլէ) եւ «ձեւէն» (յուն.՝ morphê = մորփէ): «Նիւթը», որ կը համապատասխանէ Օգոստինոսի «բանը» հասկացութեան, այն իրն է, որ իրականութեան մէջ ինքնին գոյութիւն ունի, ինչպէս միւլոնը (դրոշմի ու

⁸ Դպրական փիլիսոփայութիւն (Scholastics).-

Դպրական փիլիսոփայութեան շրջանը կը սկսի 9-րդ դարուն. ան կը յատկանշուի դպրոցներու ու համալսարաններու հաստատումով եւ ուսման իրայատուկ եղանակով: Կը յատկանշուի նաեւ փիլիսոփայ – աստուածաբաններու կողմէ մատուցուած՝ Աստուծոյ գոյութեան զանազան ապացոյցներով եւ անոնց հանդէպ թեր ու դէմ քննարկութիւններով:

⁹ Թոմաս Աքուինացի (Thomas Aquinas, 1224 – 1274 թ.).-

Իտալացի աստուածաբան-փիլիսոփայ եւ բարոյախօս: Միջին դպրական փիլիսոփայութեան (Scholastics) մեծագոյն ներկայացուցիչ. իր անունով կոչուած է ուղղութիւն մը՝ Թոմականութիւնը (Tomism): Մուրբերու կարգ դասուած՝ դոմինիկեան միաբան: Գլխաւոր երկու երկերն են՝ "Summa theologiae" («Համամատեան աստուածաբանութեան») եւ "Summa contra gentiles" («Համամատեան ընդդէմ հեթանոսներուն»):

¹⁰ Արիստոտէլ (յուն.՝ Aristotélês, 384 – 322 մ.թ.ա.).-

Յոյն դասական բարոյագէտ-փիլիսոփայ, աշակերտ՝ Պլատոնի: Համապարփակ գիտնական, հիմնադիր կարգ մը գիտական ճիւղերու, ինչպէս տրամաբանութիւն եւ բարոյագիտութիւն: Փիլիսոփայութեան ընդհանուր պատմութեան մեծագոյն դէմքերէն: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկերն են՝ "êthiká eudaimonía" («Երջանկութեան Բարոյագիտութիւն») եւ "êthiká Nikomácheia" («Նիկոմաքոսի Բարոյագիտութիւն»):

ձեռնադրույթեան պարագային), ջուրը (մկրտութեան պարագային), հացն ու գինին (պատարագի հաղորդութեան պարագային): Իսկ «ձեւը», որ կը համապատասխանէ Օգոստինոսի «նշանը» հասկացութեան, կը ներկայանայ որպէս բառեր ու խօսքեր, որոնք կ'արտասանուին սրբազան խորհուրդի արարողութեան պարզաբանման ընթացքին:

Հետեւելով Արիստոտէլի ցիւրքաձեւապաշտութեան (Hylemorphism) թոմաս Աքուինացի կը բացատրէ, որ միւլտիպլիցիտէտը, որպէս «նիւթ» արդէն իր մէջ կը պարունակէ «ձեւը», որ նոյնինքն կարողութիւնն է գոյանալուն եւ փոխուելուն: Գրեթէ միաժամանակ յառաջացած «կայացում» (Subsistence) եւ «գոյացութիւն» (Substance) հասկացութիւնները գերման փիլիսոփայ Իմանուէլ Կանտ¹¹ (Immanuel Kant) որպէս «անհրաժեշտութիւն» (Necessity) կը նկատէ: Կանտի համաձայն, իրերու գոյութիւնը հիմնուած է գոյացութեան մը վրայ, որ ինքնին չի կրնար այլ բանի մը նախադրեալը ըլլալ:¹²

Այսպիսով, միւլտիպլիցիտէտը հիմնականօրէն կ'իմաստաւորուի եւ անոր ներգործութեան վեհ եղանակը կը բացատրուի:



ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՇՆՈՐՀԸ

Արդէն նշեցինք, որ Աստուած, սրբազան խորհուրդներու ու ծիսակատարութիւններու միջոցով, որոնք փրկութեան միջնորդութեան ուղիներն են, իր «շնորհը» կը հաղորդէ մարդոց: Նաեւ նշեցինք միւլտիպլիցիտէտի մասին եւ անոր ունեցած դերը կարգ մը ծիսակատարութիւններու ընթացքին, օրինակ՝ միւլտիպլիցիտէտի աստուածային շնորհը կ'իջնէ մկրտող երեխային եւ ձեռնադրուող ընծայեալ անձին վրայ:

¹¹ Իմանուէլ Կանտի (Immanuel Kant, 1724 – 1804 թ.)-

Գերման աշխարհահռչակ գիտնական բարոյագէտ-փիլիսոփայ, նախահայր Գերմանական Գաղափարապաշտութիւն (German Idealism) փիլիսոփայական ուղղութեան, հիմնադիր՝ Պարտագիտական Բարոյագիտութիւն (Deontological Ethics) տեսութեան: Փիլիսոփայութեան ընդհանուր պատմութեան մեծագոյն դէմքերէն: Իր գլուխ-գործոցն է՝ «Քննադատութիւն զուտ բանականութեան» (գերմ.՝ "Kritik der reinen Vernunft", կրճատ.՝ KrV, 1781/1787 թ., անգլ.՝ "Critique of Pure Reason"): Բարոյագիտութեան մասին ունի գլխաւոր երեք երկեր: Իսկ կրօնի փիլիսոփայութեան մասին գրած է՝ «Կրօնը, լոկ բանականութեան սահմաններուն մէջ» (գերմ.՝ "Die Religion innerhalb der Grenzen der bloßen Vernunft", 1793 թ., անգլ.՝ "Religion Within the Bounds of Bare Reason") երկը:

¹² Կանտի այս տեսակէտը քաղուած է իր «Պրոլեգոմէններ – ապագայ ամէն մետաֆիզիկայի, որ կը կարողանայ ինքզինք ներկայացնել, որպէս գիտութիւն» 1783 (գերմ. բնագիր՝ "Prolegomena zu einer jeden künftigen Metaphysik, die als Wissenschaft wird aufreten können", անգլ.՝ "Prolegomena to any future metaphysics":

(Prolegomena կը նշանակէ՝ նախնական դիտողութիւններ:)

«Շնորհ»¹³ հասկացութիւնը, աստուածային շնորհէն զատ, ունի նաեւ այլ իմաստներ, ինչպէս՝

- «Պարգեւ», «նուէր», որմէ՝ շնորհել = պարգեւել, նուիրել ...
- «Երկնային ձիրք», որով օժտուած է տուեալ անձը ...
- «Առանձնաշնորհում», որպէս յատուկ արտօնութիւն կամ բարեհաճութիւն, եւ

• «Երեք շնորհները» (3 Graces), որոնք յունական դիցաբանութեան մէջ՝ Եւփրոսիֆէ (Euphrosyne = ուրախը), Թալիա (Thalia = ծաղկունը) եւ Ագլայա (Aglaia = փայլունը) երեք աստուածուհիներ էին՝ Զեւս աստուածաճօր երեք դուստրերը:

Այստեղ նկատի պիտի ունենանք միայն աստուածային շնորհը, որ Աստուծոյ պարգեւած կամ տուած կարողութիւնը, ձիրքն ու ընդունակութիւնն են բարեպաշտ հաւատացեալներուն, որպէսզի անոնք կատարեն Իր կամքը: Այս գաղափարին մէջ քրիստոնէական վարդապետութիւնը կը շեշտէ «ոբպէսզի անոնք կատարեն Իր կամքը» բաժինը: Այլ խօսքով, մարդուն ունեցած աստուածատուր կարողութիւնները, ձիրքերն ու ընդունակութիւնները պէտք է գործեն Աստուծոյ կամքին ծառայելու համար:

Քրիստոնէութեան մէջ, ընդհանրապէս եւ Հայ Եկեղեցւոյ համաձայն, «շնորհ» ու «ողորմութիւնը» Աստուծոյ հիմնական յատկանիշներէն կը նրկատուին, անոնք կը նկարագրեն նաեւ Աստուծոյ եւ մարդոց յարաբերութիւնը: Հետեւաբար, բոլոր խորհուրդներն ու արարողութիւնները, որոնց նպատակը բարեպաշտ հաւատացեալներուն Աստուծոյ մերձեցումն է, արդիւնքն են աստուածատուր «շնորհին»:

Աստուածաշունչին մէջ կան բազմաթիւ օրինակներ, ուր աղօթքի մը սկիզբը կը յիշուին՝ «շնորհք ըրէ՛» եւ «ողորմէ՛ ինձի» աղաչանքները: Բազմաթիւ օրինակներ կարելի է գտնել Հին Կտակարանի Գիրք Սաղմոսացի մէջ (4/1, 6/2, 9/13, 26/11, 30/10, 56/1, 86/3 ... եւ այլուր):

Նոր Կտակարանին մէջ եւս կը գտնենք «շնորհն» ու «ողորմութիւնը» նշող բազմաթիւ օրինակներ, ինչպէս Յովհաննու Աւետարանի, Պօղոս առաքեալի ու Յակոբոս Տեառնեղբօր նամակներուն մէջ եւ այլուր՝

→ **Յովհաննու Աւետարան** (Joh., 1/14 - 17).-«Եւ Բանը մարդ եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ, եւ մեզ տեսանք Անոր փառքը, փառքը Միածինին, որ Հօրմէն եկաւ՝ շնորհով ու նշմարտութեամբ լեցուն... Անոր լիառատ շնորհէն է, որ մեզ բոլորս շնորհ ստացանք, որովհետեւ Օրէնքը Մովսէսի միջոցով տրուեցաւ, իսկ շնորհն ու նշմարտութիւնը՝ Յիսուս Քրիստոսի միջոցով»:

→ **Ա. Կորնթացիներուն** (1. Kor, 15/10).-«Բայց հիմա ինչ որ եմ՝ Աստուծոյ շնորհին կը պարտիմ, եւ կրնամ ըսել՝ թէ Աստուծոյ ինձի տուած շնորհը ապարդիւն չեղաւ»:

¹³ Շնորհ – յուն.՝ χάρις, լատ.՝ gratia, անգլ.՝ Grace, գերմ.՝ Gnade ...

- **Գաղատացիներուն** (Gal, 1/15).-«Բայց Աստուած, որ ծնելէս առաջ զիս ընտրած եւ Իր շնորհովը զիս այս պաշտօնին կոչած էր...»:
- **Հռոմայեցիներուն** (Romans, 6/14).-«Մեղքը ձեր վրայ պէտք է իշխէ, քանի որքան որքան ձեր սրտիկն ենթակայ չէք, այլ՝ շնորհին»:
- **Հռոմայեցիներուն** (Romans, 15/15).- «Աստուած ինձի Իր շնորհը տուաւ, որպէսզի Քրիստոսի սպասաւորը ըլլամ՝ հեթանոսներուն համար»:
- **Յակոբոսի նամակէն** (James, 1/17).-«...միայն բարի ցանկութիւններն ու կատարեալ պարգեւներն (շնորհներն) են, որ կու գան երկիւմէն, չոր Աստուծմէ, որ լոյսի արարիչն է»:

Շնորհի ուսմունքը կամ շնորհի աստուածաբանութիւնը ընդհանրապէս տարածուած է թէ՛ արեւմտեան կաթոլիկ եւ թէ՛ արեւելեան ուղղափառ եկեղեցիներուն մէջ:

Արդէն նշեցինք, Հին Դարաշրջանի աստուածաբան-փիլիսոփայ Օգոստինոս Երանելիի տեսակէտը, որ աստուածային շնորհը կ'առնչէր կամքի ազատութեան (Free Will) եւ սկզբնական մեղքի (Original Sin) հարցերուն հետ:

Միջնադարուն, անգլիացի աստուածաբան-փիլիսոփայ Անսելմ Գանտրբերցի¹⁴ (Anselm of Canterbury) կը պնդէր, որ միայն Քրիստոսի խաչին վրայ կատարած կամաւոր զոհաբերութենէն ետք, նոր պայմաններ ստեղծուեցան, որպէսզի Աստուած կարենայ «շնորհ» ու «ողորմութիւն» պարգեւել մարդոց:

Իտալացի աստուածաբան-փիլիսոփայ Թոմաս Աքուինացի (Thomas Aquinas) կը գանազանէր չստեղծուած շնորհին (լատ.՝ gratia increata) եւ ստեղծուած շնորհին (լատ.՝ gratia creata) միջեւ: Մինչ առաջինը (չստեղծուածը) առկայ է նոյնինքն անստեղծ ու անսկիզբ Աստուծոյ մէջ, երկրորդը (ստեղծուածը), Աստուծոյ կողմէ մարդոց տրուած գերբնական պարգեւն է:

Բողոքականութեան հիմնադիր գերման աստուածաբան Մարտին Լութեր¹⁵ (Martin Luther), «շնորհը» կը հասկնար, որպէս Աստուծոյ բարեհաճութիւնը (լատ.՝ favor Dei):

¹⁴ **Անսելմ Գանտրբերցի** (Anselm of Canterbury, 1033 – 1109 թ.).-

Անգլիացի նշանաւոր աստուածաբան-փիլիսոփայ: Հիմնադիր՝ դպրական փիլիսոփայութեան (Scholasticism): Հեղինակ՝ Աստուծոյ գոյութեան էաբանական-գոյաբանական (ontological) սպացոյցին: Իր գլխաւոր աստուածաբանական-փիլիսոփայական երկերն են՝ "Proslogion" եւ "Monologion":

¹⁵ **Մարտին Լութեր** (Martin Luther, 1483 – 1546 թ.).-

Գերման աստուածաբան, Մր. Օգոստինոսի միաբանութեան վանական, եկեղեցա-կրօնական բարենորոգումներու (Reformation) նշանաւոր ռահվիրայ. հիմնադիր՝ Բողոքականութեան (Protestantism): Ան, առաջին անգամ ըլլալով Աստուածաշունչ մատեանը թարգմանած է գերմաներէնի: Յայտնի են սկզբնական շրջանի իր բարեկարգչական 95 դրոյթները (Thesis):

Տրենդոյի ժողովը¹⁶ (Council of Trient) *ընդհանրապես, հաստատեց շնորհի ուսմունքը կամ շնորհի աստուածաբանութիւնը, որ մշակուած էր Թոմաս Աքուինացիի կողմէ: Տրենդոյի ժողովին նաեւ հաստատուեցաւ, որ աստուածային շնորհը, թէ՛ նախապայմանն եւ թէ՛ հետեւանքն է բարի գործերուն:*



ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մայրավանք, Անթիլիասի մէջ կատարուած միւլտիմեդիալ առիթով, իմ խորհրդածուծութիւնները կ'ամփոփեմ «Միւռոնի Խորհուրդ» ընդհանուր վերնագրի տակ եւ փրկասփայլական ակնարկով:

Նախեւառաջ, հակիրճ լեզուական ու բացատրական տեղեկութիւններ «Միւռոն» եւ «Խորհուրդ» հասկացութիւններու մասին ներկայացնելու ընթացքին, չեչտած եմ խորհուրդ հասկացութիւնը, որոչ չափով մանրամասնելով անոր աստուածաբանական ու կրօնական իմաստը ու նշելով ա՛յն խորհուրդները, որոնց ընթացքին միւլտիմեդիալ օգտագործումը իր յոյժ կարեւոր դերը ու նշանակութիւնը ունի եւ վերջաւորութեան անդրադարձած եմ նաեւ աստուածային շնորհին, որ միւլտիմեդիալ խորհրդակատարութեան միջոցով կը հաղորդուի մարդոց:

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ՔԷՉԵԱԵԱՆ
Գերմանիա

¹⁶ **Տրենդոյի ժողովը** (Council of Trient).-

Հռոմէական Կաթողիկէ եկեղեցւոյ համար 19-րդ տիեզերական ժողովը, որ տեղի ունեցաւ հիւսիսային Իտալիոյ Տրենդո (իտալ.՝ Trento, լատ.՝ Tridentium) քաղաքին մէջ, 18 տարիներ տեւողութեամբ (1545 – 1563 թ.) եւ ընդհանուր նիստերու 3 ժամանակահատուածներու ընթացքին (նիստերէն մաս մը տեղի ունեցաւ նաեւ իտալական Բոլոնիա – Bologna – քաղաքին մէջ), հրաւերովը այդ շրջանի երեք պապերու, եւ աւելի քան 200 մասնակիցներով: Ժողովի գլխաւոր նպատակը եղած է Կաթողիկէ եկեղեցւոյ բարեկարգութիւնները, որպէս պատասխան Բողոքականութեան:

Մ Ե Կ Ն Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Յ Ո Վ Հ Ա Ն Ն Ո Ւ Ա Բ Ե Տ Ա Ր Ա Ն Ի *
(3.27-36)

«Յովհաննէս պատասխանեց. "Մարդ ինքնիրմէ ոչինչ կրնայ ընել, եթէ իրեն վերէն՝ Աստուծմէ տրուած չէ"» (Յհ 3.27):

1) *Յովհաննէս Մկրտիչ չյանդիմանեց իր աշակերտները Յիսուսի վերաբերեալ իրենց ըսած խօսքին կամ Հրեայ մարդուն հետ իրենց ունեցած վէճին համար, ընդհակառակը, պատահածը առիթ դարձուց վկայելու Յիսուսի մասին: Մենք եւս, երբ մարդոց կոչտուածեան հանդիպինք՝ ատիկա առիթ դարձնենք մեր վերաբերմունքով Յիսուսի քաղցրութեան վկայութիւնը տալու:*

2) «Որուն մասին վկայութիւն տուիր» ըսին Յովհաննէսի աշակերտները վերեւ, իսկ այստեղ Յովհաննէս անոնց կը բացայայտէ, թէ Յիսուսի մասին իր տուած վկայութենէն շատ աւելի մեծ վկայութիւն մը կայ, այն՝ որ Աստուծոյ ինքն յոյ գործն ու առաքելութիւնը յանձնած է Յիսուսին. «Մարդ ինքնիրմէ ոչինչ կրնայ ընել, եթէ իրեն վերէն՝ Աստուծմէ տրուած չէ»:

3) «Յովհաննէս իր այս խօսքով ուզեց վախ արթնցնել իր աշակերտներուն մէջ, ցոյց տալով անոնց, թէ իրենք Յիսուսի դէմ պայքարելով՝ Աստուծոյ դէմ է որ պայքարած կ'ըլլան, միշտ ինչպէս հետագային Գամաղիէլ պիտի ըսէր իր ժողովակիցներուն. "Եթէ Աստուծմէ է՝ չէք կրնար խափանել, եւ թերեւս այդ անուով Աստուծոյ դէմ պայքարած կ'ըլլաք" (Գրծ 5.39): Յովհաննէս պարզեց իր աշակերտներուն, թէ իրենք անկարելի են է որ կը փորձեն կատարել, երբ կը փորձեն Յիսուսի գործին դէմ դնելով՝ Աստուծոյ կամքին դէմ պայքարիլ» (Յովհան Ոսկեբերան):

4) *Համաձայն Օգոստինոսի, Յովհաննէս Մկրտիչ այստեղ ինքնիր մասին է որ կը խօսի: Երբ կ'ըսէ՝ «մարդ ինքնիրմէ ոչինչ կրնայ ընել, եթէ իրեն վերէն՝ Աստուծմէ տրուած չէ», ըսել կ'ուզէ՝ թէ ինք ըրաւ ինչ որ Աստուծմէ իրեն*

* Նկատի առնելով որ Յովհաննէս Աւետարանին մեկնութեան գործը արդէն լոյս տեսաւ, եւ նկատի առնելով որ զայն արդէն գետեղեցիք մեր կայքէջին (www.hayrvaghinag.com) վրայ, այսու կը յայտնենք, թէ Յովհաննէս Աւետարանին մեկնութեան կապուած վերջին թիւն է ասիկա որ կու տանք Հասկին:

տրուած էր, աւելին՝ չի կրնար ընել, եւ աշակերտները աւելին պէտք չէ սպասեն իրմէ:

«Իու՛ք ներկայ էիք, երբ ձեզի ըսի՝ թէ ես Քրիստոսը չեմ, այլ իրմէ առաջ դրկուած մէկը» (ՅՎ 3.28):

1) Յովհաննէս կը յիշեցնէ իր աշակերտներուն այն խօսքը որ ըսաւ քահանաներուն ու Ղեւտացիներուն ներկայութեան, թէ՛ ինք չէ Քրիստոսը (ՅՎ 1.20), այլ՝ անկէ առաջ եւ անոր առջեւէն դրկուած մէկը (ՅՎ 1.23, 26-27): Յովհաննէս իր նախկին վկայութիւնը յիշելով, ուզեց պարզել իր աշակերտներուն, թէ ինք տակաւին կը շարունակէ նոյն վկայութիւնը տալ: Ինչ որ անցեալին վկայեց՝ այժմ կը հաստատէ: Իր խօսքին ու առաքելութեան մէջ ոչինչ կայ փոխուած: Ան ուզեց այս իրողութիւնը յստակ դարձնել իր աշակերտներուն: Շատ հովիւներ մեծ խանդավառութեամբ կը սկսին իրենց առաքելութեան, բայց ժամանակի ընթացքին աստիճանաբար իրենց խանդավառութիւնը կը նուազի, կը նօսրանայ, եւ երբեմն ալ՝ բոլորովին կը շիջի: Այդպիսին չէր Յովհաննէս: Անոր հաւատքի խանդավառութիւնը մնաց մինչեւ վերջ: Եւ արդէն, Յունարէնի մէջ «իր առջեւէն դրկուած» բառերուն համար գործածուած բացատրութիւնը, կը նշանակէ՝ «գործի ու պտղաբերութեան շարունակութիւն», այսինքն, Յովհաննէս իր առաքելութեան մինչեւ վերջին օրը Յիսուսի առջեւէն գնաց ու անոր ճամբայ բացաւ, եւ մարդիկ որսաց Յիսուսի հետեւորդութեան համար:

2) «Իրմէ առաջ դրկուած»: Բառացի՝ «իր առջեւէն դրկուած»: Ամէն քրիստոնեայ, Յովհաննէս Մկրտիչի նման պէտք է ինքզինք Քրիստոսի առջեւէն դրկուած մը նկատէ, եւ պէտք է ջանայ մարդոց քայլերը դէպի Քրիստոս ուղղել:

3) Տուեալ խօսքով, Յովհաննէս իր աշակերտներուն կ'ըսէր. «Եթէ կը հաւատաք տուած վկայութիւններու՝ տուած վկայութիւններէս բան չէ պակասած, ընդհակառակը, անոնք աւելի՛ հաստատուած են: Վկայութիւնս բովէս չէ, այլ՝ Աստուծոյ բովէն: ... Ես ծառայ մըն եմ. զիս Ղրկողին բառերով կը խօսիմ միայն, ոչ թէ Քրիստոսը փայփայելու յանուն մարդկային շահի, այլ որպէս ծառայութիւն իր Հօրը որ զիս դրկեց: Ես վկայութիւնը չեմ ներկայացրներ իմ կողմէս նուէր իբրեւ, այլ կը խօսիմ միայն այն խօսքերը գորս խօսելու համար դրկուած եմ: Եւ ուստի, մի՛ խորհիք թէ ես եմ մեծը, ո՛չ, Յիսուսն է մեծը. ի՛նքն է Տէրը ամէն բանի» (Յովհանն Ոսկեբերան):

«Ով որ հարսը ունի՝ ա՛ն է փեսան. իսկ փեսային բարեկամը, որ մօտը կանգնած է, փեսային ձայնը լսելով մեծապէս կ'ուրախանայ: Ես նոյն այդ ուրախութիւնն է որ ունիմ, եւ իմ ուրախութիւնս կատարեալ է» (ՅՎ 3.29):

1) Համաձայն Գրիգոր Նիւսացիի, Ոսկեբերան Հայրապետի, Օգոստինոսի, Գրիգոր Տաթեւացիի, եւ ընդհանրապէս բոլոր մեկնիչներուն, հարսը՝ եկեղեցի-

կակից աւանդութեանց, սովորութեանց եւ կարգ ու կանոններուն մասին գիտնալը կ'օգնէ մեզի աւելի ճիշդ եւ աւելի խորունկ կերպով հասկնալու աւետարանական որոշ հատուածներ կամ համարներ: Եկէք դիտենք Յովհաննէսի խօսքը Քրիստոսի ժամանակակից հրէական պատմութեան լոյսին տակ: Ես ձեզի կ'առաջարկեմ, որ ստորեւ յիշուած պատմական ակնարկը ամբողջութեամբ անգամ մը կարդաք, եւ ապա ետդարձ մը կատարէք ու զայն վերստին կարդաք, բայց այս անգամ նշուած ծանօթագրութեանց (footnote) հետ միասին:—

«Հրեաներու սովորութեան համաձայն, փեսացուն կ'ունենար իր բարեկամը¹, զորս Հրեաներ կը կոչէին՝ Ծոշապին, իսկ յոյները՝ բարանիմֆոս: Սովորաբար բարեկամ մը ճշդուած կ'ըլլար փեսացուն համար, եւ բարեկամ մը՝ հարսնացուն համար²: Ընդհանրապէս, փեսացուն եղբայրը ի'նք կ'ըլլար բարեկամը իր փեսացու եղբոր³: Հասարակ ժողովուրդի պարագային, կրնար պատահիլ որ յատուկ անձ մը ճշդուած չըլլար իբրեւ բարեկամ փեսացուն կամ հարսնացուն, բայց թագաւորներու, իշխաններու եւ բարձր պաշտօն ունեցող մարդոց պարագային, պէտք էր անպայման բարեկամ մը ճշդուած ըլլար փեսացուն համար⁴:

Փեսացուն բարեկամին դերը կարեւոր եւ անփոխարինելի էր, եւ անոր համար ալ, զերծ կը կացուցուէր որոշ կրօնական պարտաւորութիւններէ՝ որպէսզի կարենար նուիրուիլ նորապսակներու օգնութեան⁵, յատկապէս անոնց ամուսնութեան առաջին եօթը օրերուն⁶: Ինչ կը վերաբերի անոր աշխատանքին, անոր պարտականութիւնն էր հոգ տանիլ հարսնացուն, անոր պահպանութիւնը կատարել⁷, եւ փեսացուն վկայութիւն տալ անոր մասին⁸: Միա-

¹ Երկնաւոր Փեսային բարեկամը Յովհաննէս Մկրտիչ ինքն էր:

² Յովհաննէս Մկրտիչ ինքն էր Փեսացուն ու հարսնացուն բարեկամը, այլ խօսքով՝ Յիսուսի ու ժողովուրդին: Երկուքին ալ բարեկամն էր, որովհետեւ ինքն էր որ երկուքը քով-քովի բերաւ:

³ Լոբլէայն կերպով Յովհաննէս ինքզինք կը կոչէ ոչ միայն Փեսայ-Յիսուսին բարեկամը, այլեւ՝ անոր եղբայրը, որովհետեւ փեսային բարեկամը՝ իր իսկ եղբայրը կ'ըլլար:

⁴ Եթէ նկատի առնենք որ հասարակ փեսացու մը կամ հարսնացու մը կրնար բարեկամ չունենալ, բայց թագաւորներ ու իշխաններ անպայման կ'ունենային, յստակ կը դառնայ, թէ Յովհաննէս Յիսուսը կոչելով Փեսայ ու ինքզինք՝ բարեկամ, ցոյց կու տայ թէ Յիսուս հասարակ մէկը չէր, այլ՝ իշխաններու Իշխանը, թագաւորներու Թագաւորը, մեծերու Մեծը, իսկ ինք՝ անոր բարեկամը:

⁵ Յովհաննէս Մկրտիչ ինքզինք զերծ կացուցեց, բայց ո՛չ թէ կրօնական, այլ ընտանեկան ամէն տեսակի պարտականութիւններէ, որպէսզի կարենար նուիրուիլ երկնաւոր Փեսային ու անոր հարսնացուներուն (հաւատացեալներուն) օգնութեան:

⁶ Յովհաննէս Մկրտիչ ընելիք ունէր յատկապէս Տիրոջ առաքելութեան առաջին օրերուն՝ մարդոց հաւատքը ամրապնդել Յիսուսի հանդէպ:

⁷ Յովհաննէս պարտականութիւնը ունէր հոգ տանիլ իրեն դիմող ժողովուրդին՝ անոնց քայլերը ուղղելով երկնաւոր Փեսային մօտ:

⁸ Յովհաննէս աղօթքի ճամբով իր վկայութիւնը կու տար հարսնացունին (ժողովուրդի) մասին, որ շուտով հարսը պիտի դառնար Փեսային:

ժամանակ անոր պարտականութիւնն էր կապ ստեղծել փեսացուին եւ հարսնացուին միջեւ, եւ ատիկա կը կատարէր՝ նամակ տանելով փեսացուէն հարսնացուին, եւ հարսնացուէն՝ փեսացուին⁹: Այս միջոցին, արգիլուած էր հարսնացուին որ տունէն դուրս գար¹⁰:

Ամուսնութենէն յետոյ, անոր պարտականութիւնն էր ամրացնել հարսին անհատականութիւնը¹¹: Կը քնանար նորապըսակներուն նստավայրին մօտիկ սենեակի մը մէջ¹², որպէսզի արգիլէր որ ոեւէ վնաս հասնէր հարսին, եւ թոյլ չտար որ փեսան խաբէր հարսը, կամ հարսը՝ փեսան¹³: Բարեկամին պարտականութիւնն էր նաեւ ստուգել հարսին մաքրութիւնը¹⁴, եւ երբ ստոյգ կերպով գիտնար որ հարսը կատարելապէս մաքուր էր՝ ան մեծապէս կ'ուրախանար¹⁵: Անոր պարտականութիւնն էր նաեւ որ փեսային ու հարսին եկած նուէրները՝ անոնց տար¹⁶:

Ի վերջոյ, ան պէտք էր լայնօրէն իր նպաստը բերէր, որ ամուսնութենէն ետք եօթը օր շարունակաբար ուրախութիւն ըլլար¹⁷: Եօթը օրերու վրայ տարածուած տօնակատարութենէն ետք, փեսայի ընկերը կը դառնար հարսին պաշտպանը¹⁸, եւ եթէ ամուսնական խնդիրներ ծագէին անոնց միջեւ՝ ինք կը լուծէր զանոնք, ու զանոնք վերստին կը հաշտեցնէր¹⁹:

⁹ Յովհաննէս ինքն էր որ կապ ստեղծեց հարսնացու ժողովուրդին ու Փեսային միջեւ: Ինք եղաւ զանոնք իրար զօդող ոսկեայ օղակը:

¹⁰ Արգիլուած էր որ ժողովուրդը Յովհաննէս Մկրտիչի կամ ուրիշին հետեւէր: Բոլորն ալ պէտք էր Յիսուսի հետեւէին:

¹¹ Երբ ժողովուրդը սկսաւ հետեւիլ Փեսային՝ Յիսուսի, Յովհաննէս Մկրտիչ տակաւին պարտականութիւնը ուներ քաջալերելու ժողովուրդը որ շարունակէ անսայթաք կերպով հետեւիլ Յիսուսի:

¹² «Կը քնանար նորապսակներուն նստավայրին մօտիկ սենեակի մը մէջ»: Հետաքրքրական կ'ըլլայ այս սովորութեան լոյսին տակ դիտել Յովհաննէսի խօսքը՝ «Փեսային բարեկամը, որ մօտը կանգնած է»:

¹³ Յովհաննէսի պարտականութիւնն էր թոյլ չտալ որ ժողովուրդը յուսախաբ ըլլար Յիսուսէն, կամ Յիսուսը՝ ժողովուրդէն:

¹⁴ Յովհաննէսի պարտականութիւնն էր օգնել ժողովուրդին որ մեղքերու խոստովանութեամբ մաքրուէին, եւ այդպէս մօտենային Փեսային:

¹⁵ Յովհաննէս Մկրտիչ մեծապէս կ'ուրախանար երբ տեսնէր որ ժողովուրդը կը մաքրուէր մեղքերու խոստովանութեամբ:

¹⁶ Յովհաննէս անձնապէս ստանալիք նուէր չունէր: Ամէն նուէր Քրիստոսի եւ անոր հարսին էր: Այլ խօսքով, իր նպատակը՝ մարդիկը Քրիստոսի նուիրելն էր, եւ Քրիստոսը՝ մարդոց նուիրելը:

¹⁷ Յովհաննէս պէտք էր հսկէր որ այդ ուրախութիւնը մնար Յիսուսի եւ իր հետեւորդներուն միջեւ:

¹⁸ Յովհաննէս պաշտպանեց ժողովուրդը իր քարոզութեամբ ու աղօթքներով, եւ զանոնք Քրիստոսի առաջնորդելով:

¹⁹ Յովհաննէսի պարտականութիւնն էր լուծել այն խնդիրները որ կրնային ծագիլ ժողովուրդին եւ երկնաւոր Փեսային միջեւ: Օրինակ, խնդիր ծագեցաւ իր աշակերտներուն եւ

Փեսային բարեկամը իր քով կը պահէր անոնց ամուսնութեան պայմանագիրը²⁰, որպէսզի եթէ դաւաճանութիւն կամ անհաւատարմութիւն գտնէր հարսին մօտ՝ պատուէր այդ պայմանագիրը, եւ ամուսնութիւնը համարուէր լուծուած²¹: Իսկ եթէ փեսան ձգէր զայն ու բաժնուէր անկէ²², այդ պարագային, բարեկամը ինք (որ փեսային եղբայրն է), զայն կ'առնէր, համաձայն Օրէնքին²³:

«Ասկէ ետք իր հեղինակութիւնը պէտք է գորանայ, իսկ ես հրապարակէ պէտք է քաջուիմ» (ՅՎ 3.30):

1) **Բառացի՝** «Անիկա պէտք է որ մեծնայ, իսկ ես՝ պզտիկնամ»: Այս բառերով, Յովհաննէս Մկրտիչ Քրիստոսի մեծութեան դիմաց՝ իր փոքրութիւնն է որ կը յայտարարէ, իր ոչնչութիւնն է որ կը խոստովանի: Քրիստոսի այգիին մէջ աշխատող ամէն անձ, Յովհաննէսի նման պէտք է անդրադառնայ ու խոստովանի թէ ինք փոքրութիւն է, ոչնչութիւն է, եւ թէ՛ մեծն ու մեծութիւնը միայն Քրիստոս է:

2) **Յովհաննէս կատարեալ ձեւով կատարել է տք Աստուծոյ կողմէ իրեն յանձնուած առաքելութիւնը՝ քաշուեցաւ հրապարակէն, որպէսզի ամէն հայեացք ուղղուէր Յիսուսի, ամէն սիրտ կապուէր Յիսուսի, եւ ամէն փառք ու պատիւ միայն անոր ընծայուէր: Մենք եւս, Աստուծոյ կողմէ մեզի յանձնուած պարտականութիւնը կատարել է տք՝ պէտք է քաշուինք հրապարակէն, եւ թոյլ տանք որ միայն Քրիստոս մեծնայ ու մեծարուի, միայն ինք փնտռուի ու փառաւորուի: Մենք Քրիստոսի այգիին մշակներն ենք. այգիին տէրը Քրիստոս ինքն է. փառաւորուողը այգիին Տէրը պէտք է ըլլայ եւ ո՛չ թէ այգիին մշակները:**

3) **Քրիստոս չի փառաւորուիր կեանքիդ հրապարակին վրայ, եթէ դուն պատրաստ չես քաշուելու կեանքիդ հրապարակէն: Դիւրին չէ քաշուիլ հրա-**

Յիսուսի միջեւ, ինչպէս տեսանք 3.26-ի բացատրութեան մէջ, եւ Յովհաննէս լուծեց այդ հարցը: Ժողովուրդին կողմէ Փեսային եւ անոր խոստացուած Մեսիան ըլլալու հարցին հանդէպ ցուցաբերուած ոեւէ անտարբերութիւն կամ թերահաւատութիւն խնդիրներ էին, զորս Յովհաննէս կը փորձէր լուծել:

²⁰ Ձեւով մը Յովհաննէս Մկրտիչ ինքն էր ժողովուրդին եւ Յիսուսի հոգեւոր ամուսնութեան պայմանագիրը:

²¹ Եթէ ժողովուրդը անհաւատարիմ գտնուէր Յիսուսի հանդէպ, լուծուած կը համարուէր անոնց հոգեւոր ամուսնութիւնը, եւ ժողովուրդը չէր կրնար դառնալ հարսը Գառնուկին:

²² Յովհաննէս լռելեայն կերպով կը պարզէր Հրեաներուն, թէ երկնաւոր Փեսան կրնայ հեռանալ իրենցմէ՝ իրենց անհաւատութեան համար, ինչ որ տեղի ունեցաւ արդէն, որպէսզի իր փրկութիւնը դառնար սեփականութիւնը ամբողջ մարդկութեան, եւ ոչ թէ միայն Հրեաներունը:

²³ Քրիստոսով փակուեցաւ Օրէնքին ժամանակաշրջանը: Ուստի անկէ հետացողը՝ չի կրնար ուրիշին կողմէ առնուիլ, պաշտպանուիլ, պահպանուիլ:

պարակէն երբ շրջապատուած ենք մեզ սիրող ու գովող, մեզմով հպարտացող եւ ուրախացող, մեզի վստահող ու ապաւինող մարդոցմով: Յովհաննէս ինք եւս սիրուած ու պատուըրուած էր, ինք եւս փնտուուած ու յարգուած էր մարդոց կողմէ, բայց երբ ժամանակը հասաւ որ քաշուէր հրապարակէն՝ խիզախօրէն եւ ուրախութեամբ քաշուեցաւ: Եթէ փառք սիրող ենք՝ Քրիստոս չի փառաւորուիր մեր կեանքին մէջ: Եթէ մեծարուելի սիրող ենք՝ Քրիստոս չի մեծարուիր մեր կեանքին մէջ:

4) Յովհաննէս Մկրտիչ խոնարհ մարդ էր: Խոնարհ մա՛րդը միայն կրնայ սիրով յանձն առնել հրապարակէն քաշուել: Խոնարհ մա՛րդը միայն կրնայ պզտիկնալ յանձն առնել: Եթէ չենք քաշուիր հրապարակէն՝ կը նշանակէ թէ հպա՛րտ ենք: Պէտք է խոնարհութիւնը ունենանք քաշուելու հրապարակէն: Հրապարակը մերը չէ, այլ Տի՛րոջն է: Քաշուի՛նք Տիրոջ հրապարակէն, եւ թոյլ տանք որ Տէ՛րը երեւի ու մեծնայ, Տէ՛րը երգաբանուի ու երկրպագուի, Տէ՛րը բարեբանուի ու փառաբանուի: Խոնարհ մարդը ուրիշին մեծնալով կ'ուրախանայ, ինչպէս Յովհաննէս ուրախացաւ Յիսուսին մեծնալովը:

5) Մեծ թիւով մարդիկ կը հետեւէին Յովհաննէսի: Շատ մարդիկ սկսած էին զինք կարծել խոստացուած Մեսիան: Ուրիշներ պատրաստ էին զինք ընդունելու իբրեւ Մեսիա ու առաջնորդ: Յովհաննէս ամէն կարելիութիւն ունէր ժողովուրդին գլուխը անցնելու, եւ ինքզինք՝ անոնց Մեսիան ու առաջնորդը հռչակելու: Ան սակայն չի նկատ փորձութեան մէջ: Չիսաբուեցաւ մարդոց փառաբանութիւններէն: Այսօր եւս, ամէն հովիւ ու հովուապետ, ամէն կղեր ու առաջնորդ, երբ մարդոց կողմէ ծափահարուի ու փառաբանուի, ինքզինք ժողովուրդին մեսիան ու առաջնորդը կարծելու փորձութեան մէջ չի նայ: Ժողովուրդին «միակ առաջնորդը Քրիստոսն է» (Մտ 23.10):

«Ան որ Աստուծմէ կու գայ՝ բոլորէն գերիվեր է: Ան որ այս աշխարհէն է՝ այս աշխարհիկ կը պատկանի եւ երկրաւոր բաներու մասին կը խօսի. ան որ երկիմբէն կու գայ՝ բոլորէն գերիվեր է. անիկա կը վկայէ իր տեսածներուն եւ լսածներուն մասին, սակայն իր վկայութիւնը ոչ ոք կ'ընդունի» (ՅՀ 3.31–32):

1) «Ան որ Աստուծմէ կու գայ»: «Աստուծմէ», բառացի՝ «վերէն»: Հոս «վերէն» ըսելով կ'ակնարկուի Աստուծոյ, եւ ոչ թէ երկինքին: «Վերէն կու գայ», այսինքն՝ Աստուծմէ կու գայ: Յովհաննէս Մկրտիչ կը վկայէ, թէ Յիսուս ոչ միայն Աստուծոյ քովէն կու գայ, այլեւ՝ Աստուծմէ՛ կու գայ, այսինքն՝ Աստուծոյ ծոցէն (ՅՀ 1.18), Աստուծոյ բնութեան (Կղ 1.19: Փլպ 2.6): Աստուծմէ կու գայ եւ իբրեւ Աստուած կու գայ: Ինչպէս մարդէն՝ մա՛րդ կու գայ, այնպէս ալ, Աստուծմէ՛ Աստուա՛ծ կու գայ: Այս առումով, «Աստուծմէ կու գայ» բառերով, Յովհաննէս Յիսուսի աստուածային ծագումն է որ կը բացայայտէ:

2) «Ան որ երկիմբէն կու գայ»: Յովհաննէս վկայելէ ետք թէ Յիսուս Աստուծմէ կու գայ, հոս կը վկայէ թէ ան «երկիմբէն կու գայ»: Հրեաներու

մտածողութեան մէջ, Աստուած երկինքի մէջ բնակող Աստուածն է: Երբ Յովհաննէս մէկ կողմէ կը վկայէ թէ Յիսուս «Աստուծմէ կու գայ», իսկ միւս կողմէ՝ թէ ան «երկինքէն կու գայ», անով կ'ուզէ ցոյց տալ, թէ ան երկնաբնակ այն Աստուածն է՝ որ ահա երկիր իջած է:

3) Յովհաննէս վկայելէ առաջ թէ Յիսուս երկինքէն եկաւ, նախ կը վկայէ թէ ան Աստուծմէ եկաւ, որպէսզի Հրեաներ յանկարծ չխորհէին թէ Յիսուս երկնառաք մարգարէ մըն է պարզապէս: Յովհաննէս ուզեց բացայայտել, թէ Յիսուս երկնառաք մարգարէ մը չէ պարզապէս, այլ՝ երկնառաք Աստուած է, Աստուծմէ զրկուած՝ Աստուծոյ Որդին է:

4) «Բոլորէն գերիվեր է»: Որդին ոչ միայն բոլորէն գերիվեր է, այլեւ բոլորովին գերիվեր է: Այս բառերով Յովհաննէս կը յայտնէ Յիսուսի բացարձակ իշխանութիւնը երկինքի մէջ ու երկրի վրայ (Մտ 28.18): Թէպէտ երկրի վրայ ծնաւ՝ բայց երկինքէն է: Թէպէտ իբր մարմին մարդէ եկաւ, բայց իբր էութիւն՝ Աստուծմէ է: Թէպէտ Յովսէփի ու Մարիամի որդին է, բայց միաժամանակ Տէրն ու Իշխանն է երկինքին ու երկինքը լեցնող Հրեղէն բոլոր դասակարգութեանց:

5) «Ան որ այս աշխարհէն է՝ այս աշխարհից կը պատկանի»: Յովհաննէս Մկրտիչ հոս մարդուն մասին երկու ճշմարտութիւններ կը յայտնէ. –

ա) Այն՝ թէ մարդը երկրին ծնունդն է, իր ծագումն ու արմատը երկրէն է: Հո'ղ է՝ հողէն առնուած: Երբ Յովհաննէս կը վկայէ թէ Յիսուս «Աստուծմէ կու գայ» ու «երկինքէն կու գայ», եւ միաժամանակ կը հաստատէ թէ մարդը «այս աշխարհէն է», խորքին մէջ համեմատութիւն մըն է որ կը կատարէ Յիսուսի եւ մարդուն միջեւ, Յիսուսի սկիզբին ու մարդուն սկիզբին միջեւ, Յիսուսի ծագման ու մարդուն ծագման միջեւ: Յովհաննէս կը յայտնէ, թէ Յիսուսի սկիզբը Աստուծմէ է, եւ ուստի՝ Աստուած է ու աստուածային, իսկ մարդուն սկիզբը մարդէն է, եւ ուստի՝ մարդ է ու մարդկային. Յիսուսի ծագման աղբիւրը երկինքն է, եւ ուստի՝ երկնային է, իսկ մարդուն ծագման աղբիւրը երկիրն է, եւ ուստի՝ երկրային է:

բ) Աշխարհէն է ու աշխարհից կը պատկանի խօսքը, ակնարկութիւն է նաեւ մարդուն մեղսալից վիճակին: Մարդը երբ ստեղծուեցաւ՝ Աստուծոյ կը պատկանէր, բայց իր մեղանշումէն ետք՝ դարձաւ աշխարհիկ, եւ ուստի՝ սեփականութիւնը աշխարհին:

6) Յովհաննէս կը յայտնէ, թէ այս աշխարհէն եղողն ու այս աշխարհին պատկանողը՝ «երկրաւոր բաներու մասին կը խօսի», այլ խօսքով, այս աշխարհէն եղողը՝ այս աշխարհին յատուկ երեւոյթներու մասին միայն կրնայ խօսիլ: Այս աշխարհէն եղողը՝ չի տեսներ վերին աշխարհը, եւ ուստի՝ չի կրնար անոր մասին խօսիլ: Այս աշխարհէն եղողը՝ միայն իր տեսածին մասին է որ կրնայ խօսիլ, իսկ իր տեսածը՝ լոկ այս աշխարհն է:

7) Յովհաննէս կ'ըսէ թէ Յիսուս «կը վկայէ իր տեսածներուն եւ լսածնե-

րուն մասին»։ *Խօսքը անշուշտ երկինքի՝ մէջ Յիսուսի տեսածներուն ու լսածներուն մասին է։ Յովհաննէսի խօսքը՝ ներկայ եղանակ ունի. ան կ'ուզէ ցոյց տալ մեզի, թէ Յիսուս երկրի վրայ եղած ատեն՝ կը տեսնէր երկինքն ու հոն պատահածը, եւ մարդոց հետ խօսած ատեն՝ կը լսէր Հօրը ձայնն ու խօսքը, եւ «կը վկայէ իր տեսածներուն եւ լսածներուն մասին»։ Անպատմելի՝ է երկինքը, եւ ուստի՝ Յիսուս անպատմելին կը պատմէր։ Աներեւելի՝ են երկնային ճշմարտութիւնները, որոնց վերաբերեալ Տէրը վկայութիւն կու տար, սակայն իր վկայութիւնը մարդիկ չէին ընդունէր, որովհետեւ չէին տեսներ զանոնք։ Դրժբախտաբար, մարդուն բնութեան յատուկ բան է՝ հաւատալ միայն այն բաներուն զորս իրենց աչքերով կը տեսնեն։ Յիսուս սակայն երանի կու տայ անոնց՝ որոնք կը հաւատան իրեն ու իր խօսքերուն, առանց զինք տեսնելու (ՅՎ 20.29)։*

8) «Սակայն իր վկայութիւնը ոչ ոք կ'ընդունի»։ «Ոչ ոք» ըսելով կ'ակնարկուի այս աշխարհին կապուած մարդոց։ *Այս աշխարհին կապուած մարդը չի կրնար ըմբռնել գալիք աշխարհին իրականութիւնները, եւ որովհետեւ չի կրնար՝ չ'ընդունի զանոնք։ Որդին երկինքէն իջաւ ու յայտարարեց թէ ինքն է երկինք առաջնորդող ճամբան, այլ խօսքով՝ ինքն է մարդիկը արդարացնողն ու զանոնք արդարներու աշխարհը տանողը, Հրեաներ սակայն, «արդարանալու իրենց հասկցած ձեւին կառչեցան եւ ուստի չընդունեցին Աստուծոյ արդարութեան ուղի» (Հռ 10.3)։*

«Ով որ անոր վկայութիւնը կ'ընդունի, հաստատած կ'ըլլայ թէ Աստուծոյ ճշմարիտ է» (ՅՎ 3.33)։

1) *Յիսուսի վկայութիւնը ընդունողը, հաստատած կ'ըլլայ թէ Աստուծոյ ճշմարիտ է, որովհետեւ Յիսուս Աստուծոյ կողմէ ու Աստուծոյ անունով աշխարհ եկաւ։ Յիսուսի խօսքերը ընդունողը, հաստատած կ'ըլլայ թէ Աստուծոյ ճշմարիտ է, որովհետեւ Յիսուս Աստուծոյ Խօսքն է։ Յիսուսի ճշմարտութիւնը ճանչցողը՝ Աստուծոյ ճշմարտութիւնն է որ ճանչցած ու հաստատած կ'ըլլայ, որովհետեւ Յիսուս ինքն է Աստուծոյ ճշմարտութիւնը ու ճշմարիտ Աստուծոյ։ Որդին ու Որդիին խօսքերը ընդունողը, ընդունած կ'ըլլայ զինք զրկող Հայրն ու Հօրը խօսքերը։*

2) *Ով որ կ'ընդունի Յիսուսն ու անոր վկայութիւնները, հաստատած կ'ըլլայ թէ ճշմարիտ է Աստուծոյ ու ճշմարիտ է անոր սէրը մարդոց հանդէպ, ճշմարիտ է անոր գուրգուրանքը՝ գուրգուրանքի կարօտ մարդոց հանդէպ, ճշմարիտ է անոր փրկութիւնը որ կը շնորհէ փրկութեան կարօտ հոգիներուն։*

3) *Բայց կարեւոր է հոս նշել, թէ Քրիստոսի խօսքերուն հանդէպ մեր հաւատքը չէ որ անոր խօսքերը ճշմարիտ կը դարձնեն։ Որդիին հանդէպ մեր հաւատքը չէ որ Հօրը ճշմարիտ ըլլալը կը հաստատէ։ Ո՛չ։ Հայրն ու Որդին ճշմարիտ են, մենք անոնց հաւատանք թէ ոչ։ Անոնց խօսքերը ճշմարիտ են, մենք զանոնք ընդունինք թէ ոչ։ Եթէ ընդունինք Յիսուսի խօսքերը ու հաւատանք անոնց, մե՛նք է որ կ'օգտուինք ու կ'օրհնուինք, եւ ոչ թէ Աստուծոյ։*

Աստուած կրնայ փառաւորուիլ եթէ հաւատանք իր Որդիին, բայց օգտուողը մե'նք ենք եւ ոչ թէ ինք: Նոյնիսկ մեր հաւատքին ալ պէտք չունի որպէսզի փառաւորուի. ան արդէն փառքի Աստուածն է. բայց կ'ուզէ՝ որ հաւատանք իրեն, ոչ միայն որովհետեւ կը փառաւորուի, այլ ատիկա առիթ մը կը դառնայ իրեն իր փառքը մեզի հետ բաժնելու (Եբր 2.10: Կղ 3.4: Ա.ՅՎ 3.2: Հռ 8.21, 9.23: Բ.Կր 3.18: Բ.Թս 2.14: Բ.Տմ 2.10, եւ այլն):

«Ան որ Աստուծոյ կողմէ դրկուած է՝ Աստուծոյ խօսքերը կը փարոզէ, որովհետեւ Աստուած իր Հոգիին ամբողջապէս անոր տուած է» (ՅՎ 3.34):

1) *Յովհաննէս Մկրտիչ կը հաստատէ, թէ Աստուծոյ կողմէ դրկուած անձը՝ Աստուծոյ խօսքերը կը քարոզէ: Այդպիսին էր Յիսուս: Իր խօսքերը մարդկային միտքի ծնունդ չէին, այլ՝ աստուածային միտքի ծնունդ: Պօղոս առաքեալ կը վկայէ, թէ իր քարոզած Աւետարանը մարդկային միտքի ծնունդ չէ, զայն ունէ մարդէ չէ առած ու ունէ մէկէ չէ սորված, այլ Քրիստոս ինք յայտնեց իրեն այդ Աւետարանը (Գղ 1.11-12):*

2) «Աստուած իր Հոգիին ամբողջապէս անոր տուած է»: *Աստուած իր Հոգին մասամբ չէր տուած Յիսուսին, ինչպէս անցեալին կու տար իր մարգարէներուն, այլ՝ ամբողջապէս, լիապէս: Սուրբ Հոգին իր ամբողջ լեցունութեամբ ու կատարելութեամբ ներկայ էր Որդիին մէջ: Մարդիկ սահմանաւոր էակներ են. Սուրբ Հոգին սահմանաւոր չափով անոնց կը տրուի, մինչդեռ Որդին անսահման ըլլալով՝ Սուրբ Հոգիին ներկայութիւնը իր մէջ սահման չունի:*

3) *Սուրբ Հոգին կրնայ տրուիլ մարդու մը յատուկ գործ մը կատարելու համար, բայց Յիսուս զայն չառաւ իր գործը ընելու համար, այլ սկիզբէն զայն ունէր, եւ ունէր ամբողջապէս: Չայն ունէր իր մէջ՝ որովհետեւ մէկ էր անոր հետ բնութեամբ եւ իսկութեամբ: Որդին Հօրը գործը կը գործէր ու Սուրբ Հոգիին միջոցաւ կը գործէր, որովհետեւ Սուրբ Երրորդութեան անձերուն գործը մէկ է. անոնց գործը մէկ է, որովհետեւ անոնց նպատակը մէկ է:*

«Հայրը կը սիրէ Որդին եւ ամէն ինչ անոր յանձնած է» (ՅՎ 3.35):

1) «Հայրը կը սիրէ Որդին»: «Հայրը կը սիրէ իր Որդին, բայց զայն կը սիրէ իբրեւ Հայր եւ ոչ թէ ինչպէս տէր մը իր ծառան պիտի սիրէր: Ան կը սիրէ իր Որդին ոչ թէ իբր որդեգրուած մը, (որովհետեւ որդեգրուած չէր), այլ իբրեւ իր միածինը՝ որ իր էակիցն է: ... Երբ կ'ըսենք թէ Հայրը իր Որդին դրկեց, երբեք չմտածենք թէ դրկուած Որդին աւելի նուազ է քան Հայրը: Հայրը իր Որդին դրկելով՝ ինքզինք է որ դրկած եղաւ, (որովհետեւ Որդին եւ ինք մէկ են ու հաւասար)» (Օգոստինոս):

2) «Ամէն ինչ անոր յանձնած է»: *Այս բառերով Յովհաննէս Մկրտիչ կ'ուզէր ցոյց տալ Յիսուսի տարբերութիւնը Հին Կտակարանի մարգարէներէն ու մարդերէն: Հին Կտակարանին մէջ, Աստուած ամէն մէկ մարգարէի յատուկ*

չնորհք մը, պարգեւ մը կամ կարողութիւն մը տուած էր, մէկուն հրաշքներ գործելու պարգեւը, ուրիշի մը՝ ուսուցանելու կարողութիւնը, երրորդի մը երազներ տեսնելու ու մեկնաբանելու շնորհքը, եւ այլն: Մինչդեռ Յիսուսին ամէն ինչ տուած էր, որովհետեւ Յիսուս ինքն էր ամէնը՝ ամէն բանի մէջ, ինքն էր «Սկիզբն ու Վախճանը, ... ան՝ որ է, որ էր, եւ որ պիտի գայ, ինք՝ Ամենակալը» (Յյտ 1.8): «Ամէն ինչ», այսինքն՝ ոչինչ կայ Որդիին իշխանութենէն դուրս: Ամէն ինչ եւ ամէն մարդ իրեն ենթակայ է, իր իշխանութեան ու դատաստանին (ՅՎ 5.22): Հայրը իշխանութիւն տուաւ իրեն երկինքի մէջ եւ երկրի վրայ (Մտ 28.18), եւ անոր համար, «երբ ժամանակները իրենց լրումին հասնին՝ Քրիստոս իրմով պիտի բովանդակէ ամէն ինչ որ կայ երկինքի մէջ եւ երկրի վրայ» (Եփ 1.10):

«Ով որ կը հաւատայ Որդիին՝ յաւիտեական կեանքը կ'ունենայ, իսկ ան որ չի հնազանդիր Որդիին՝ կեանք պիտի չունենայ, այլ՝ Աստուծոյ պատիժը պիտի գայ անոր վրայ» (ՅՎ 3.36):

1) Յովհաննէս Մկրտիչ երբեք չըսաւ որ եթէ մէկը իրեն հաւատայ՝ յաւիտեական կեանք պիտի ունենայ, բայց վկայեց թէ «ով որ կը հաւատայ Որդիին՝ յաւիտեական կեանքը կ'ունենայ»: Որդին կեանքն է (ՅՎ 11.25, 14.6), յաւիտեակա՛ն կեանքը (Ա.ՅՎ 1.2, 5.20), ուստի «ով որ չունի Որդիին՝ յաւիտեական կեանք ալ չունի» (Ա.ՅՎ 5.12): Որդին յաւիտեական է. յաւիտեական Որդիին հաւատացողը՝ յաւիտեակա՛ն կեանք կ'ունենայ: Ճշմարիտ կեանքը յաւիտեական կ'ըլլայ. ուստի երկրաւոր այս կեանքը չէ՛ ճշմարիտ կեանքը, այլ այն կեանքը՝ որ Քրիստոս վերապահած է իրեն հաւատացողներուն: Վերապահած է, այո՛, բայց ներկայ ժամանակին մէջ եւս ան կը շնորհէ այդ յաւիտեական կեանքը: Յովհաննէս չ'ըսեք թէ Որդիին հաւատացողը՝ յաւիտեական կեանք «պիտի ունենայ», այլ՝ «կ'ունենայ»: Այդ կեանքը հոս կը ստանանք՝ մեր սիրտերուն մէջ, բայց գայն վերջնականապէս պիտի ժառանգենք՝ Տիրոջ երկրորդ գալուստէն ետք:

2) «Ան որ չի հնազանդիր Որդիին՝ կեանք պիտի չունենայ»: «Զի հնազանդիր» բառին համար գործածուած Յունարէն բառը, կը նշանակէ նաեւ՝ «չի վստահիր»: Ահաւոր բան է չվստահիլ Միակ Վստահելիին, Հինազանդիլ խօսքին Անոր՝ որուն խօսքն է միայն ճշմարիտ, եւ քանի ահաւոր բան է, «Աստուծոյ պատիժը պիտի գայ անոր վրայ», որ չի վստահիր Որդիին: Կեանքին Հինազանդողը՝ Կեանքին իսկ կողմէ մահուամբ պիտի պատժուի: Քրիստոս ինք պիտի պատժէ, այո՛, բայց այդ պատիժը Հօրը կամքով պիտի ըլլայ, որովհետեւ Հայրը խիստ կը բարկանայ երբ կ'անարգենք իր Որդին ու չենք հնազանդիր անոր:

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

**90-ԱՄԵԱՅ ՀՈՒՆՁՔԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ**

Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԲԵՇԻՇԵԱՆ

Ծնած է 1947-ին, Պէյրուզ (Լիբանան): Աւագանի անունն է Պետրոս: Իր նախնական կրթութիւնը ստացած է Ազգ. Մեսրոպեան Վարժարանին մէջ: Հոկտեմբեր 1961-ին ընդունուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը, Անթիլիաս: Դպրեվանքի ժառանգաւորաց բաժնի քառամեայ շրջանը աւարտելէ ետք, Մայիս 1965-ին Սարկաւազ ձեռնադրուած է, ձեռամբ Գարեգին Եպս. Սարգիսեանի: Իսկ դպրեվանքի Ընծայարանի եռամեայ շրջանի աւարտին, Մայիս 1968-ին Կոստակրոն Եկեղեցական ձեռնադրուած է, ձեռամբ Լիբանանի Առաջնորդ Տաճատ Արք. Ուրֆալեանի, եւ վերակոչուած՝ Տ. ԱՐԱՄ ԱԲԵՂԱՅ:

Վարդապետական Գաւազանի իշխանութիւն ստացած է 14 Փետր. 1970-ին, ձեռամբ Խորէն Ա. Կաթողիկոսի, աւարտաճառ ներկայացնելով «Մամբրէ վերծանող – Ե. Դարու Աստուածաբան»:

Հոկտեմբեր 1978-ին, տակաւին ուսանող Միացեալ Նահանգներու մէջ, Արամ Վարդապետ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդական Տեղապահ ընտրուած է: Եւ որպէս տեղապահ տարի մը ծառայելէ ետք, Ազգ. Գաւառական Ժողովին կողմէ միաձայնութեամբ Առաջնորդ ընտրուած՝ Լիբանանի Հայոց Թեմին:

Ծայրագոյն Վարդապետութեան աստիճան ստացած է Մայիս 1980-ին եւ յաջորդ օրն իսկ Եպիսկոպոս ձեռնադրուած եւ օծուած է, ձեռամբ Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոսի: Իսկ 21 Դեկտ. 1987-ին ստացած է Արքութեան պատիւ եւ տիտղոս:

Լիբանանի պատմութեան ու լիբանանահայ կեանքի ամէնէն փոթորկոտ շրջանին, Արամ Վեհափառ ամենայն ձեռնհասութեամբ վարած է Լիբանանի Հայոց Առաջնորդի պատասխանատու պաշտօնը: Իր 17 տարիներու առաջնորդական բազմազան ու բազմերես գործունէութիւնը ու իր կատարած իրազործումները իրենց դրոշմը դրած են ծաղկող Լիբանանի Հայոց Թեմին վրայ:

Գարեգին Բ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուելէն ետք, Ս. Աթոռոյս Ազգային Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը Կաթողիկոս ընտրած է Տ. Արամ Արք. Քէչիչեանը եւ 28 Յունիս 1995-ին տեղի ունեցած՝ ընտրեալին օծումը:

Արամ Ա. Կաթողիկոս դպրեմանքի ուսման շրջանը յաջողապէս աւարտելէ ետք, 1968-1978 անընդմիջաբար իր բարձրագոյն ուսումը շարունակած է Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական Ճեմարանի (Near East School of Theology), Ամերիկեան Համալսարանի (American University of Beirut), Զուրիցերիոյ Պոսէ էքիւմէնիք Հիմնարկին (Ecumenical Institute of Bossey), Օքսֆորտի Համալսարանի (Oxford University) արեւելագիտութեան բաժնի եւ Նիւ Եորքի Ֆորտհամ Համալսարանին (Fordham University) մէջ եւ ստացած՝ ակադեմական հետեւեալ վկայականները. Պսակաւոր Արուեստից (B.A.), Մագիստրոս Աստուածաբանութեան (M. Div.), Մագիստրոս Մերձաւոր Արեւելքի Եկեղեցական Պատմութեան (ST.M.) եւ Դոկտոր Փիլիսոփայութեան (Ph.D.):

1968-1975, մինչեւ Միացեալ Նահանգներ իր ուսման մեկնելը, Արամ Վեհափառ վանքէն ներս վարած է հետեւեալ պաշտօնները. փոխ տեսուչ Մարտիկեան Վարժարանի, դպրեմանքի տեսուչի օգնական ու ապա փոխ տեսուչ, Աստուածաբանական նիւթերու դասախօս դպրեմանքէն ներս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միջ-եկեղեցական յարաբերութեանց ընդհանուր քարտուղար: 1972-1975 նաեւ դասաւանդած՝ Հայկազեան Գոլեճէն ներս եւ յաճախակի առիթներով յատուկ դասախօսութիւններ տուած՝ Պէյ-րութի Համալսարանին (BUC) եւ Ամերիկեան Համալսարանին (AUB) մէջ:

Արամ Ա. Կաթողիկոս Քէչիչեանի եկեղեցական կեանքին մէջ կարեւոր տեղ զբաղած է Միջ-եկեղեցական (Ecumenical Movement) շարժումը: Իր արեւելայական ձեռնադրութենէն անմիջապէս ետք, հանգրուանային զարգացումով ան իր հետեւողական ու գործօն մասնակցութիւնը բերած է միջազգային եկեղեցական այս մեծ շարժումին թէ՛ տեղական, թէ՛ Միջին Արեւելեան եւ թէ՛ միջազգային համագումարներու՝ աշխարհին չորս կողմերը ներկայացնելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը՝ երբեմն նաեւ հրաւիրուելով որպէս դասախօս: 1974-ին իր կարեւոր դերը ունեցած է Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի (Middle East Council of Churches) կառուցին վերակազմակերպման աշխատանքներուն մէջ, եւ այդ թուականէն սկսեալ դարձած՝ նոյն խորհուրդի Գործադիր Վարչութեան անդամ: 1977-ին նշանակուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչ Վիէննայի Pro Orient Կաթոլիկ էքիւմէնիք կազմակերպութեան մօտ եւ ապա ընտրուած՝ նոյն կազմակերպութեան պատուոյ անդամ: Իր գործօն մասնակցութիւնը բերած է Արեւելեան Ուղղափառ ոչ Քաղկեդոնական եւ Քաղկեդոնական եկեղեցիներու (Joint Commission of Theological Dialogue Between the Orthodox Church and the Oriental Othodox Churches), Ուղղափառ-Աւետարան-

չական (Othodox-Evangelical) եւ (Oriental Othodox-Reformed) եկեղեցական ընտանիքներու աստուածաբանական տիալոկին, միջազգային մակարդակի վրայ, որպէս հիմնադիր ու մնայուն անդամ վերոյիշեալ յանձնախումբերուն: Արամ Վեհափառ նաեւ դարձած է անդամ շրջանային ու միջազգային շարք մը աստուածաբանական ու էքիւմէնիք յանձնախումբերու ու կազմակերպութիւններու: 1995-ին պատուոյ նախագահ ընտրուած է Ե. Հ. Խորհուրդին (World Council of Churches):

1970-էն սկսեալ ան իր մասնակցութիւնը բերած է յիշեալ խորհուրդի զանազան բաժանմունքներու աշխատանքներուն: Դարձած է մնայուն անդամ Ե. Հ. Խորհուրդի երիտասարդական բաժանմունքին (Yourth Departement) եւ ապա «Հաւատք ու Կարգ» (Faith and Order) յանձնաժողովին ու անոր Գործադիր Վարչութեան: 1993-ին ընտրուած է Ե. Հ. Խորհուրդի Կեդրոնական Վարչութեան (Central Committee) անդամ՝ որպէս ներկայացուցիչ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Իսկ 1991-ին, Ե. Հ. Խորհուրդի Քամպէրայի (Աւստրալիա) Համաժողովին ընտրուած է Կեդրոնական ու Գործադիր Վարչութեան (Central Committee and Executive Committee) ատենապետ՝ եօթը տարուան ժամանակաշրջանի մը համար: Արամ Կաթողիկոս առաջին ուղղափառն էր եւ ամէնէն երիտասարդը Ե. Հ. Խորհուրդի պատմութեան մէջ, որ կը կոչուէր միջազգային այս մեծ կազմակերպութեան բարձրագոյն այս պաշտօնին:

Միջ-եկեղեցական յարաբերութեանց շրջագծէն ներս, ինչպէս նաեւ Ե. Հ. Խորհուրդի ատենապետի իր հանգամանքով, Արամ Վեհափառ դասախօսած է աշխարհի զանազան համալսարանական ու Միջ-եկեղեցական շրջանակներէն ներս. պաշտօնական այցելութիւններ տուած՝ օտար եկեղեցիներու ու հանդիպումներ ունեցած է անոնց պետերուն հետ: Միջ եկեղեցական բնոյթ ունեցող այս կարեւոր շփումներուն ընթացքին, հրապարակային արտայայտութիւններուն մէջ թէ պաշտօնական խօսակցութեանց ընթացքին, Արամ Վեհափառ միշտ արծարծած է հայ ժողովուրդի արդար պահանջատիրութեան ու Արցախի հարցերը:

Արամ Կաթողիկոսի 25 տարիներու գահակալութեան շրջանին ծաղկած է նաեւ Մայրավանքը, թէ՛ Անթիլիասի եւ թէ՛ Պիքֆայայի մէջ: Աւարտին հասած է Կիլիկիա թանգարանի շինութիւնը, վերանորոգուած են վեհարանն ու Նահատակաց Մատուռը, դպրեվանքի առաջին շէնքը մէկ յարկ յաւելումով վերածուած է վանաբնակ միաբան հայրերու առանձնասենեակներու, բարեգարդուած է ճաշարանի շէնքը գեղեցիկ ճաշասրահով մը, որուն վրայ բարձրացած են երկու յարկեր վանաբնակ եպիսկոպոսներու որպէս առանձնասենեակներ: Ճաշարանի շէնքին կից՝ արեւելեան կողմը գնուած է նոր հողաշերտ մը, Մայր Տաճարի հարակային կողմը՝ Հայաստանի Առաջին Հանրապետութեան հարիւրամեակի առիթով կանգնած է գեղակերտ կոթող մը՝ ի յիշատակ բոլոր անձնուրաց այն հերոսներուն, որոնք «Մահ իմացեալ ան-

մահուլթիւն է» տեսլականով, 28 Մայիս 1918-ին կերտած են Ազատ Անկախ Հայաստանի Հանրապետութիւնը: Նախկին վարդապետանոցի շէնքին առաջին յարկը վերածուած է տեսչութեանց գրասենեակներու, քարապատուած է ողջ մայրավանքին շրջապատը: Իսկ Պիքֆայայի մէջ, նախկին դպրեվանքի շէնքը վերածուած է վեհարանի, այգիին մէջ կառուցուած են երկու նոր շէնքեր, մին որպէս եպիսկոպոսներու առանձնասենեակներ, իսկ երկրորդը որպէս արեղայ եւ վարդապետ հայրերու առանձնասենեակներ: Բարեզարդուած եւ ընդարձակուած է Պիքֆայայի բակը, եւ վեհարանի դիմաց կառուցուած՝ մարմարեայ Ս. Պատարագի Սեղան մը՝ Ս. Աստուածածնայ տօնին Ս. Պատարագը բացօթեայ կատարելու համար:

Արամ Ա. Կաթողիկոսի 25 տարիներու գահակալութեան շրջանին արձանագրուած ծրագրումներուն եւ իրագործումներուն մէջ այստեղ կ'ուզենք լուսարձակի տակ առնել Մեծ Եղեռնի հարիւրամեակին առիթով երկու շատ կարեւոր իրագործումներ.

Ա.- 23 Ապրիլ 2015 թուականին Ս. Էջմիածնի մէջ գումարուած Եպիսկոպոսական Ժողովը՝ մասնակցութեամբ Էջմիածնի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռի եպիսկոպոսներուն, որուն ընթացքին քննարկուած եւ որոշուած են երկու հիմնական օրակարգեր*.

Ա.- Մէկուկէս միլիոն նահատակներու սրբադասումը եւ Ս. Մկրտութեան Խորհուրդի ծիսական բարեկարգումը:

Բ.- Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռը որպէս իրաւատէր եւ պահանջատէր Սոյց Կաթողիկոսարանի կալուածներուն, դատական հայցի ներկայացումը Եւրոպայի Մարդկային Իրաւանց Դատարան եւ ապա Սիս (Քոզան) քաղաքի նախադատ ատեանին մօտ: Սոյն հայցը հարազատութեամբ ներկայացնելու համար, այստեղ կը մէջբերենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Տեղեկատուական Գրասենեակին կողմէ հրապարակուած տեղեկատուութիւնը.

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ
ԴԱՐՁԵԱԼ ԿԸ ԴԻՄԷ ԹՐՔԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ՝
ՊԱՀԱՆՁԵԼՈՎ ՍԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

24 Օգոստոս 2019

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը 30 Յուլիս 2019-ին դա՛րձեալ դիմեց թրքական դատարան, օրինական հայցեր ներկայացնելով Սիսի նախադատ ատեանին մօտ՝ պահանջելով Սիսի պատմական Կաթողիկոսարանի վերադարձը:

Արդարեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովանաւորութեամբ Կաթողիկոսարանի հետ աշխատակցող միջազգային եւ թուրք իրաւաբաններու զոյգ յանձնախումբերու ունեցած աշխատանքային եւ խորհրդակցական հանդիպումներու լոյսին տակ, որոշուեցաւ Սիսի Կաթողիկոսարանի վերադարձի պահանջը ներկայացնել թուրքիոյ Սիս (Քոզան) քաղաքի նախադատատեանին մօտ:

Շուրջ հազար էջերէ բաղկացած թղթածրարը պատրաստուած է իրաւական զոյգ յանձնախումբերու միացեալ աշխատանքով՝ հիմնուելով թրքական օրէնքի տրամադրութիւններուն, միջազգային օրէնքներու սկզբունքներու, ինչպէս նաեւ Եւրոպայի Մարդկային Իրաւանց Դատարանի պաշտպանած իրաւունքներուն վրայ, բաց ու ապահով պահելով Եւրոպական Դատարանի վերադառնալու ուղին:

Յիշեցնենք, որ սոյն դատական հայցը կ'իյնայ Ապրիլ 2015-ին Կաթողիկոսարանի սկսած դատական գործընթացի ծիրէն ներս, որպէս շարունակութիւն անոր:

Արամ Վեհափառի ստանձնած զանազան պատասխանատուութիւններուն առընթեր, գրական վաստակը եւս եղած է ճոխ: Անոր անգլերէնով եւ ֆրանսերէնով հրատարակած հատորները օտարերկրացիներուն ծանօթացուցած են Հայոց Եկեղեցւոյ դերն ու առաքելութիւնը, եւ հաւատամարտ մղած՝ Գողգոթան ճաշակած իր ժողովուրդին ճանապարհը եւ անոր աստուածաբանական հայեացքները ժամանակակից հարցերու:

Ստորեւ կը ներկայացնենք Վեհափառի տպագրած ճոխ եւ արժէքաւոր գիրքերուն ցանկը.

- 1.- Ներսէս Շնորհալի - Աստուածաբան եւ էքիւմէնիստ, 1974 Պէյրութ:
- 2.- The Witness of the Armenian Church in a Diaspora Situation, 1978, Նիւ Եորք (երկու հրատարակութիւն):
- 3.- Հայաստանեայց Եկեղեցւոյ Ճշմարիտ Դիմագիծը, 1979, Անթիլիաս:
- 4.- Վերականգնումի Կամքով, 1983, Պէյրութ:
- 5.- Ժողովուրդին հետ, 1989, Պէյրութ:
- 6.- Conciliar Fellowship: A Common Goal, 1991, Ժընեւ (երկու հրատարակութիւն):
- 7.- Orthodox Perspectives on Mission, 1992, Օքսֆորտ (երկու հրատարակութիւն):
- 8.- Դէպի 1700-ամեակ Սուրբ Թադէի Ճամբով, 1996, Անթիլիաս:
- 9.- The Challenge to be a Church in a Changing World, 1997, Նիւ Եորք (երկու հրատարակութիւն):
- 10.- Որդի Աստուծոյ, Որդի Մարդոյ, 1999, Անթիլիաս, (երկու հրատարակութիւն):

- 11.– Ազգ, Եկեղեցի, Հայրենիք, 1999, Անթիլիաս (Երկու հրատարակու-
թիւն):
- 12.– In Search of Ecumenical Vision, 2000, Անթիլիաս (Երկու հրատարա-
կութիւն):
- 13.– L'Église Face aux Grands Défis, 2000, Անթիլիաս (Երկու հրատարա-
կութիւն):
- 14.– The Armenian Church Beyond the 1700th Anniversary, 2002, Անթիլիաս
(Երեք հրատարակութիւն):
- 15.– Հաւատքի Առաքելութիւն, 2002, Անթիլիաս (Երկու հրատարակու-
թիւն):
- 16.– Justice, Paix, Réconciliation, 2003, Անթիլիաս (Երկու հրատարակու-
թիւն):
- 17.– The Christian Witness at the Crossroads in the Middle East, 2004,
Անթիլիաս (Երեք հրատարակութիւն):
- 18.– Տէր Զօր: Համազգային Ուխտատեղի, 2005, Անթիլիաս:
- 19.– Ծառայութեան Մեծութիւնը, 2005, Անթիլիաս:
- 20.– For a Church Beyond its Walls, 2006, Անթիլիաս (Երկու հրատար-
ակութիւն):
- 21.– Pour un Monde Transformé, Անթիլիաս (Երկու հրատարակութիւն):
- 22.– Կեանքը արժէքներով Իմաստաւորել, 2009, Անթիլիաս:
- 23.– Dialogue with the Youth 2009, Մոնթրէալ (անգլերէն եւ Ֆրանսերէն):
- 24.– St. Nerses the Gracious and Church Unity, 2010, Անթիլիաս:
- 25.– A Journey of Faith. Hope and Vision, 2010, Անթիլիաս:
- 26.– Taking the Church to the People, 2011, Անթիլիաս եւ Լոս Անճելոս
(Երկու հրատարակութիւն):
- 27.– Issues and Perspectives, 2013, Անթիլիաս:
- 28.– The Armenian Church, 2016, Անթիլիաս (Երկու հրատարակութիւն):
- 29.– L'Église Arménienne, 2018, Անթիլիաս:
- 30.– التأسيسة الارمنية, 2019, Անթիլիաս:
- 31.– Армянская Церковь, 2019, Անթիլիաս:
- 32.– تأسيس اى ارمنى, 2019, Թեհրան:
- 33.– Turning to God, 2020, Անթիլիաս:
- 34.– Die Armenische Kirche, 2021, Գերմանիա:

Վերոյիշեալ գիրքերէն անկախ Արամ Վեհափառ ունի բազմաթիւ յօդ-
ուածներ, որոնք տպուած են հայ թէ օտար պարբերաթերթերու մէջ եւ
անոնցմէ շատեր թարգմանուած են զանազան լեզուներու:

Անցնող 25 տարիներուն ընթացքին Արամ Ա. Կաթողիկոս հետեւեալ
հոլովապետական այցելութիւնները շնորհած է Կիլիկեան Թեմերուն:

- 13 *Դեկտ. – 18 Դեկտ. 1965-ին, Կիպրոսի Հայոց Թեմին:*
- 10 *Փետր. – 12 Փետր. 1966-ին, Յունահայոց Թեմին:*
- 12 *Ապրիլ – 20 Ապրիլ 1966-ին, Բերիոյ Հայոց Թեմին:*
- 20 *Յունիս – 5 Յուլիս 1966-ին, Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմին (Գալիֆորնիա):*
 - 1 *Հոկտ. – 29 Հոկտ. 1997-ին, Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմին:*
 - 29 *Հոկտ. – 7 Նոյեմ. 1997-ին, Գանատայի Հայուլթեան:*
 - 10 *Նոյեմ. – 14 Նոյմ. 1997-ին, Արաբական Միացեալ Էմիրուլթիւններու Հայոց Թեմին:*
 - 21 *Ապրիլ – 23 Ապրիլ 2000-ին, Բերիոյ Թեմ (յատուկ այցելութիւն Տէր Զօրի Նահատակաց Յուշահամալիրին):*
 - 12 *Յուլիսէն – 27 Յուլիս 2000-ին, Պարսկաստանի երեք Թեմերուն (Թեհրանի, Իսֆահանի եւ Ատրպատականի):*
 - 4 *Հոկտ. – 17 Հոկտ. 2000-ին, Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմին եւ Գանատայի Հայոց Թեմին՝ Մոնթրէալ:*
 - 18 *Հոկտ. – 23 Հոկտ. 2000-ին, Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմին:*
 - 28 *Հոկտ. 2000-ին, Վենեզուէլլայի (Գարագաս) Հայուլթեան:*
 - 23 *Ապրիլ 2001-ին Բերիոյ Թեմ, (Հայց. Եկեղեցւոյ 1700-ամեակի առիթով, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. եւ Արամ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, 24 Ապրիլին միասնաբար այցելեցին Տէր Զօրի Ս. Նահատակաց Յուշահամալիրը եւ Մարկատէի Նահատակաց աճիւններուն վրայ կառուցուած Ս. Յարութիւն Մատուռ, Ս. Պատարագով եւ Հոգեհանգստեան արարողութեամբ, իրենց յարգանքը ընծայաբերելու մէկուկէս միլիոն Հայ նահատակներուն:*
 - 11 *Մայիս – 22 Մայիս 2005-ին, Պարսկաստանի երեք Թեմերուն (Թեհրան, Իսֆահան եւ Ատրպատական):*
 - 23 *Սեպտ. – 4 Հոկտ. 2005-ին, Գանատայի Հայոց Թեմին:*
 - 5 *Հոկտ. – 30 Հոկտ. 2005-ին, Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմին:*
 - 18 *Մայիս – 23 Մայիս 2007, Բերիոյ Հայոց Թեմին:*
 - 21 *Յուլիս – 22 Յուլիս 2008, Կիպրոսի Հայոց Թեմին:*
 - 29 *Յունուար – 30 Յունուար 2009, Արաբական Միացեալ Էմիրուլթեանց Թեմին:*
 - 17 *Յունիս – 24 Յունիս 2010-ին, Գանատայի Հայոց Թեմին:*
 - 5 *Հոկտ. – 21 Հոկտ. 2011-ին, 2012-ին, Արաբական Միացեալ Էմիրուլթեանց Թեմին:*

– 7 Մայիս-21 Մայիս 2012-ին, Պարսկաստանի երեք թեմերուն)Թեհրան, Իսֆահան եւ Ատրպատական):

– 1 Մայիս-4 Մայիս 2012-ին, Արաբական Միացեալ Էմիրութեանց թեմին:

– 22 Սեպտ.-26 Սեպտ. 2014-ին, Յունաստանի Հայոց թեմին:

– 15 Հոկտ.-18 Հոկտ. 2014-ին, Պասկաստանի երեք թեմերուն:

– 4 Դեկտ.-8 Դեկտ. 2014-ին, Արաբական Միացեալ Էմիրութեանց թեմին:

– 6 Մայիս-30 Մայիս 2015-ին, Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգներուն Արեւելեան թեմին:

– 5 Մայիս-8 Մայիս 2016-ին, Արաբական Միացեալ Էմիրութեանց թեմին:

– 28 Յուլիս-29 Յուլիս 2016-ին, Բերիոյ թեմին (այցելութիւն Լաթաքիոյ, Քեսապի եւ Թարթուսի հայութեան):

– 28 Սեպտ.-9 Հոկտ. 2016-ին, Հիւս. Ամերիկայի Արեւելեան եւ Արեւմտեան, ինչպէս նաեւ Գանատայի Հայոց թեմերուն:

– 13 Դեկտ.-23 Դեկտ. 2016-ին Թեհրանի եւ Արաբական Միացեալ Էմիրութեանց թեմերուն:

– 15 Մայիս 2017-ին, Քուէյթի թեմին:

– 29 Մարտ-1 Ապրիլ 2018-ին, Բերիոյ Հայոց թեմին:

Արամ Վեհափառ զանազան այցելութիւններով եւ փոխադարձ ընդունելութիւններով սերտ շփում եւ յարաբերական կեանք ստեղծած է Քրիստոնէական եւ այլ կրօններու հոգեւոր պետերու հետ: Ան այցելած է եւ փոխադարձաբար ընդունած զանոնք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կեդրոնէն ներս, Անթիլիաս:

Ստորեւ կը ներկայացնենք այն հոգեւոր պետերու ցանկը, որոնք այցելած են Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, եւ փոխադարձաբար ընդունած Վեհի այցելութիւնը:

– Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս:

– Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարք Ն.Ա. Մեսրոպ Բ. Մուրթաթեան:

– Հռոմէական Կաթողիկ Եկեղեցւոյ հոգեւոր պետեր՝ Ն.Ս. Յովհաննէս Պօղոս Բ. Պապ, Ն. Ս. Պենետիքիթ ԺԶ. Պապ եւ Ն. Ս. Ֆրանսիս Պապ:

– Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ հոգեւոր պետեր՝ Ն.Ա. Յովհաննէս Պետրոս ԺԸ. Գասպարեան Պատրիարք, Ն.Ա. Ներսէս Պետրոս ԺԹ. Թարմունի Պատրիարք եւ Ն.Ա. Գրիգոր Պետրոս Ի. Պատրիարք:

– Ն.Ա. Պարթուլումէոս Տիեզերական Պատրիարք:

– Երուսաղէմի Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ հոգեւոր պետ՝ Ն.Ա. Թէոփիլոս Գ. Պատրիարք:

- Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ հոգեւոր պետ՝ Ն.Ա. Ալեքսիս Բ. Պատրիարք:
- Աղեքսանդրիոյ Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ հոգեւոր պետեր՝ Ն.Ա. Բեթրոս Է. Պատրիարք, Ն.Ա. Բարթեմիոս Պատրիարք, Ն.Ա. Թէոտորոս Պատրիարք եւ Ն.Ա. Թէոստորոս Բ. Պատրիարք:
- Անտիոքի Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ հոգեւոր պետեր՝ Ն.Ա. Հազիմ Դ. Պատրիարք եւ Ն.Ա. Եուհաննա Ժ. Եազճի Պատրիարք:
- Ղպտի Ուղղափառ Եկեղեցւոյ հոգեւոր պետեր՝ Շնուտա Գ. Պատրիարք եւ Ն.Ա. Թուատորոս Բ. Պատրիարք:
- Մարոնիթ Եկեղեցւոյ հոգեւոր պետեր՝ Ն.Ա. Նասրալլա Սֆէր Պատրիարք եւ Ն.Ա. Պշարա Ալ Բասի Պատրիարք:
- Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ հոգեւոր պետեր՝ Ն.Ա. Զազգա Ե. Իուլաս Պատրիարք եւ Ն.Ա. Իգնատիոս Աֆրամ Բ. Քարիմ Պատրիարք:
- Յունաստանի Ուղղափառ Եկեղեցւոյ հոգեւոր պետեր՝ Ն.Ա. Սերաֆիմ Արքեպիսկոպոս, Ն.Ա. Քրիստոստոլլոս Արքեպիսկոպոս եւ Ն.Ա. Հերոնիմոս Բ. Արքեպիսկոպոս:
- Կիպրոսի Յոյն Եկեղեցւոյ հոգեւոր պետ՝ Ն.Ա. Խրիստոմոս Բ. Արքեպիսկոպոս:
- Անկլիքան Եկեղեցւոյ հոգեւոր պետեր՝ տոքթ. Ճորճ Քէրի եւ Բօուր Ուլիմըզ Քէնդըրպըրիի Արքեպիսկոպոսներ:
- Վենետիկի Պատրիարք Ն.Ա. Մարքօ Սէյ:
- Միացեալ Նահանգներու Անկլիքան Եկեղեցւոյ հոգեւոր պետ՝ Վեր. Էսմոնտ Պրաուներնկ:
- Լիբանանի եւ Սուրիոյ Աւետարանական Եկեղեցիներու Գերագոյն Խորհուրդի նախագահ՝ Վերպ. Սալիմ Մահիունի:
- Արեւմտեան Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ հոգեւոր պետ՝ Ն.Ա. Մար Տինխա Դ. Պատրիարք:
- Ասորի Կաթոլիկ Եկեղեցւոյ հոգեւոր պետեր՝ Ն.Ա. Իգնատիոս Ա. Մուսա Տաուտ Պատրիարք, Ն.Ա. Իգնատիոս Եուսէֆ Գ. Եունան Պատրիարք եւ Ն.Ա. Իգնատիոս Ը. Ապտ ալ Ահատ Պատրիարք:
- Էրիթրիոյ Եկեղեցւոյ հոգեւոր պետ՝ Ն.Ա. Ֆիլիպոս Պատրիարք:
- Ալպանիոյ Ուղղափառ Եկեղեցւոյ հոգեւոր պետ՝ Ն.Ա. Անաստասիոս Եանուլաթոս Արքեպիսկոպոս:
- Անտիոքի Յոյն Կաթոլիկ Եկեղեցւոյ հոգեւոր պետեր՝ Ն.Ա. Կրէկորիոս Լահհամ Գ. Պատրիարք եւ Ն.Ա. Եուսէֆ Ալ Ապսի Պատրիարք:
- Եթովպիոյ Ուղղափառ Եկեղեցւոյ հոգեւոր պետեր՝ Ն.Ա. Փաուլոս Պատրիարք եւ Ն.Ա. Մաթէաս Ա. Պատրիարք:
- Գերմանիոյ Բողոքական Եկեղեցւոյ հոգեւոր պետ՝ Քօք Եպիսկոպոս:

– Գերմանիոյ Աւետարանական Եկեղեցւոյ հոգեւոր պետ՝ Ուֆկանկ Հիւպըր Եպիսկոպոս:

– Երոսաղէմի Լատինաց Պատրիարք Ն.Ա. Սապպահ:

– Շուէտական Եկեղեցւոյ հոգեւոր պետ՝ Ն.Ա. Հէմըր Արքեպիսկոպոս:

– Դանիոյ Եկեղեցւոյ հոգեւոր պետ՝ Էրիք Նորման Ավէնտան Եպիսկոպոս:

– Երոսաղէմի Անկլիքան Եկեղեցւոյ հոգեւոր պետ՝ Սուհէլ Տաուամ Եպիսկոպոս:

– Միջին Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ նախագահ՝ Վեր. Մկրտիչ Գարակէօզեան:

– Լիբանանի Արաբ Աւետարանական Համայնքի հոգեւոր պետ՝ Վերպ. Ուիլի Հապիպ Պատրի:

– Երոսաղէմի Լուտերական Եկեղեցւոյ հոգեւոր պետ՝ Մուսիպ Եունան Եպիսկոպոս:

– Ֆրանսայէն դուրս գտնուող Բողոքական Եկեղեցիներու Միութեան նախագահ՝ Վերպ. Իվ Կունէլ:

– Հնդկաստանի Ուղղափառ Եկեղեցւոյ հոգեւոր պետեր՝ Ն.Ա. Պասիլիոս Մար Թոմա Տիտիմոս Ա. Կաթողիկոս եւ Ն.Ա. Պասիլիոս Մարթոմա Բաուլոս Բ. Կաթողիկոս:

– Ֆրանսայի Բողոքական Եկեղեցիներու նախագահ՝ Վերպ. Քլոտ Պաթի:

– Միխիթարեան Միաբանութեան Աբբասայր Գերպ. Հ. Եղիա Մ. Վրդ. Քիլաղպեան:

– Քուէյթի Աւետարանական Եկեղեցւոյ հոգեւոր պետ՝ Վերպ. Մանուէլ Ղարիպ:

– Զուիցերիոյ Բողոքական Եկեղեցիներու նախագահ՝ Վերպ. Տոքթ. Կոտֆրիտ Լոխըր:

– Քաղղէացւոց Եկեղեցւոյ հոգեւոր պետ՝ Ն.Ա. Լուիս Սազօ Պատրիարք:

– Աւստրալիոյ Եկեղեցիներու նախագահ՝ Վերպ. Սդոլարդ Մազմիլլանի:

– Հոլանտայի Հին Կաթոլիկ Եկեղեցւոյ հոգեւոր պետ՝ Ճորիս Վերքամեն Արքեպիսկոպոս:

– Իրանի Իսլամական Հանրապետութեան գերագոյն ղեկավար՝ Այաթոլլա Խամէնէի:

– Լիբանանի Հանրապետութեան միլիթիներ՝ Շէյխ Մուհամմէտ Ռաշիտ Քապպանի եւ Շէյխ Ապտըլ Լաթիֆ Տերեանի:

– Լիբանանի Շիիթ համայնքի հոգեւոր պետեր՝ Շէյխ Մուհամմէտ Մըհաթի Շէմսէտտին եւ Շէյխ Ապտ էլ Էմիր Գապալանի:

– Լիբանանի Տիւրքի համայնքի հոգեւոր պետ՝ Շէյխ Նայիմ Հասան:

– Սուրիոյ Հանրապետութեան միլիթիի Շէյխ Ահմատ Պատր Ալ Տին Հասսուն:

– Գոմպոտիոյ Պուտտայական համայնքի հոգեւոր պետ՝ Սամտէխ Սանկարիչ:

Արամ Ա. Կաթողիկոս իր հովուապետական այցելութեանց ընթացքին, ինչպէս նաեւ որպէս նախագահ Ե. Հ. Խորհուրդի Կեդրոնական ու Գործադիր Վարչութեանց (Central Committee and Executive Committee) հանդիպած է նաեւ նախագահներու եւ պետական բարձրաստիճան անձնաւորութիւններու: Ստորեւ կը ներկայացնենք միայն նախագահներու եւ վարչապետերու հանդիպումները.

- Հայաստանի Հանրապետութեան նախագահներ՝ Ն.Վ. Լեւոն Տ. Պետրոսեան, Ն.Վ. Ռոպէրթ Քոչարեան, Ն.Վ. Սերժ Սարգիսեան, Ն.Վ. Արմէն Սարգիսեան: Վարչապետեր՝ պրն. Յովիկ Աբրահամեան, պրն. Կարէն Կարապետեան եւ Ն.Վ. Նիկոլ Բաշինեան:

- Արցախի Հանրապետութեան նախագահ՝ Ն.Վ. Բակօ Սահակեան: Վարչապետեր՝ պրն. Լէոնարտ Պետրոսեան, պրն. Անուշաւան Դանիէլեան, պրն. Արա Յարութիւնեան:

- Լիբանանի Հանրապետութեան նախագահներ՝ Ն.Վ. Իլիաս Հարաուի, Ն.Վ. Զօր. Էմիլ Լահուտ, Ն.Վ. Միշէլ Սլէման: Վարչապետեր՝ պրն. Ռաֆիք Հարիրի, պրն. Սելիմ Հըս, պրն. Նէժիպ Միքաթի, պրն. Սաստ Ալ Հարիրի, պրն. Թամամ Սալամի:

- Կիպրոսի Հանրապետութեան նախագահներ՝ Ն.Վ. Խլաֆկոս Քլերիտիս, Ն.Վ. Փափատոբուլոս, Ն.Վ. Տիմիթրիս Քրիսթոֆիաս, Ն.Վ. Նիքոս Անասթասիատես: Խորհրդարանի նախագահ պրն. Եաննաքիս Օմէրունի:

- Սուրիոյ Հանրապետութեան նախագահներ՝ Վ. Ն. Հաֆէզ էլ Ասատ, Ն.Վ. Պաշչար էլ Ասատ, փոխ նախագահ Ապտ էլ Հալիմ Խատտամ: Վարչապետեր՝ Ն.Վ. Մահմուտ Զողպի, Մոհամմէտ Մուսթաֆա Միրօ:

- Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահներ՝ Ն.Վ. Հաշիմի Ռաֆսանձանի, Ն.Վ. Մոհամմէտ Խաթեմի, Ն.Վ. Մահմուտ Ահմատ Նեժատ, փոխ նախագահ՝ Սէյէտ Մոհամմէտ Ալի Աբթահ: Խորհրդարանի նախագահ՝ պրն. Ալի Լարիջանի:

- Յունաստանի Հանրապետութեան նախագահ՝ Ն.Վ. Գոնաստանդինոս Ստեֆանաբուլոս, Ն.Վ. Գարոլոս Փափուլիաս, Ն.Վ. Փրոքոփիս Փաւլոբուլոս: Վարչապետ՝ պրն. Անտոնիս Սամարասին:

- Ռուսաստանի Խորհրդարանի (Տումա) նախագահ՝ Սելեզնեւի:
- Միացեալ Նահանգներու նախագահներ՝ Ն.Վ. Պիլ Քլինթըն, Ն.Վ. Պարաք Օպամա:

- Իտալիոյ Հանրապետութեան նախագահներ՝ Ն.Վ. Օսքար Լուիճի Սքալֆարոյի, Ն.Վ. Նափոլիթանօ:
- Հոլանտայի վարչապետ՝ Ն.Վ. Ֆրիմ Քոք:

- Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Ընդհանուր Քարտուղար՝ պրն. Անանի, Մարդկային Իրաւանց Յանձնաժողովի նախագահ՝ դոկտ. Լիանարտօ Տեսփուր:

- Գանատայի վարչապետ՝ Ն.Վ. Ժան Քրեթիան, Ն.Վ. Փօլ Մարթըն, Ն.Վ. Ստիվըն Հարբըր: Ծերակոյտի նախագահ՝ պրն. Լէօ Յոլսագոս:

- Ռուսմանիոյ նախագահ՝ Ն.Վ. Էմիրլ Քոնսթանթինեսքօ:
- Միացեալ Արաբական Էմիրրութեան իշխան՝ Շէյխ Սուլթան Պըն Զայէտ Ալ Նահեանի, Շէյխ Սուհամմէտ Պըն. Զայէտ:
- Շարժայի իշխան՝ Շէյխ Սուլթան Պըն Մահամմէտ Ալ Քասիմի:
- Գերմանիոյ նախագահ՝ Ն.Վ. Ռաու:
- Յորդանանի իշխան՝ Հասան Պըն Թալալ:
- Հարաւային Քորիայի Հանրապետութեան նախագահ՝ Ն.Վ. Րոհ Մոլ Հեան:

- Եթովպիոյ նախագահ՝ Վ. Ն. Կիրմա Ուուտըրկիորկիս:
- Գաթարի Էմիր՝ Շէյխ Համատ Պըն Խալիֆա Բ.:
- Քուէյթի Էմիր՝ Շէյխ Սապահ Ճապր Ալ Ահմատ Ալ Սապահ: վարչապետ՝ Շէյխ Նասր Ալ Սապահ:

- Պահրէյնի թագաւոր՝ Ն.Վ. Համատ Պըն Իսա Ալ Խալիֆա:
- Ղասսանի արքայական տան իշխան՝ Ն.Վ. Ղարիոս Էլ Չէմր Է:

Վերեւ յիշատակուած եկեղեցական թէ դիւանագիտական անձերու հետ շփումը ինքնին գեղեցկագոյն յայտարար նշանն է, որ հարազատօրէն կը ներկայացնէ Արամ Ա. Կաթողիկոսի յարաբերական կեանքին եւ գործունէութեան պատկերը, ուր կը տեսնենք Քրիստոնէական մեծ ընտանիքին մէջ Հայոց Եկեղեցւոյ լիիրաւ արժէքն ու առաքելութիւնը, իսկ դիւանագիտական շրջանակներէն ներս, Մեծ Եղեռն ճաշակած յարուցեալ ժողովուրդի մը ծաղկող կեանքը, որ միջազգային ոլորտներու մէջ կը յուշէ հանուր աշխարհին, թէ հայը հայրենիքէն ներս թէ ի սփիւռս աշխարհի՝ կ'ապրի, կը գոյատեւէ իր արդար իրաւունքներու տիրացման երազանքով, կամքով ու հաւատքով:

Արամ Ա. Կաթողիկոս իր ներհուն աշխատանքով արժանացած է միջազգային պատուոյ տիտղոսներու՝ պետութեանց, միջազգային կազմակերպութեանց, եկեղեցիներու ու համալսարաններու կողմէ: Բազմաթիւ հանդիպումներ ունեցած է միջազգային պետական, քաղաքական ու կրօնական դէմքերուն հետ: Իր կենսագրութիւնը կ'երեւի միջազգային զանազան հրատարակութեանց ու հանրագիտարաններու մէջ, որպէս աստուածաբան եւ Միջեկեղեցական համաշխարհային ղեկավար դէմք:

Լիբանանի, Հայաստանի եւ Արցախի նախագահներու կողմէ ան պարգեւատրուած է Բարձրագոյն Կարգի շքանշաններով: Բազմաթիւ եկեղեցիներու հոգեւոր պետերէ՝ Պատուոյ շքանշաններով եւ զանազան համալսարաններէ՝ Պատուոյ աստիճաններով:

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

(Շար. 10)

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԿԱՆՏԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ*

ԿԱՆՏԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԻՈՐՈՒՄԸ¹

Ի՞նչ կը նշանակէ՝ բարոյագիտութիւնը հիմնաւորել: Արդեօք պէ՞տք է կամ հա՞րկ է բարոյագիտութիւնը հիմնաւորել: Եթէ «այո», ի՞նչ են բարոյագիտութեան հիմնաւորման առաւելութիւններն ու թերութիւնները: Եւ վերջապէս ինչպէ՞ս կարելի է բարոյագիտութիւնը հիմնաւորել:

Բարոյագիտութիւնը, աւելի քան 2500 տարուան կեանք ունեցող արեւմտեան փիլիսոփայութեան մէկ ճիւղն է: Փիլիսոփայութեան սկզբնական շրջանէն ի վեր, մարդիկ կը փիլիսոփայեն՝ ճանաչումի ու գիտութեան, վարմունքի ու վարուելակերպի մասին: Ժամանակի ընթացքին, բարոյագիտութեան պատմութեան մէջ յառաջացած են բարոյագիտական զանազան տեսութիւններ, որոնք ընդհանրապէս ծագում առած են մարդոց առօրեայ կեանքէն եւ փորձառութիւններէն: Այդ զանազան տեսութիւնները, իրարու հետ մրցակցական յարաբերութեան մէջ եղած են. ուրեմն երբեք զարմանալի չէ, որ փիլիսոփաներ կը ջանային իրենց բարոյագիտական տեսութեան ընդունելի հիմնաւորում մը տալ, զայն աւելի համոզիչ դարձնելու եւ տարածելու համար:

Փիլիսոփայութեան մէջ, հիմնաւորումը (գերմ.՝ Begründung, անգլ.՝ Grounding) կը զանազանուի պատճառաբանութենէն (գերմ. եւ անգլ.՝ Argu-

* Նիւթը, մեծ մասամբ քաղուած է յօդուածի վերածուած է հեղինակին նոր լոյս տեսած «ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ – փիլիսոփայական ակնարկ» գիրքէն (632 էջ), Անթիլիաս, 2021:

¹ Հիմնաւորում – (գերմ.՝ Begründung, անգլ.՝ Grounding).- հասկացութիւնը փիլիսոփայութեան մէջ կը նշանակէ նիւթի մը կամ դրոշմի մը պատճառներու, փաստարկներու կամ ապացոյցներու բացատրութիւնը տալ, որ արդարացում մը կը թելադրէ: Հիմնաւորման (ու արդարացման) փորձերը կը ձգտին հասնիլ «վերջնական հիմնաւորման» (գերմ.՝ Letztbegründung, անգլ.՝ Ultimate Grounding) մը, որ կը յատկանշուի իր՝ ապահով, բացարձակ, ճշմարիտ, ստոյգ, անհերքելի ու վերջնական ըլլալու հանգամանքներով:

ment, իսկ պատճառը՝ գերմ.՝ Ursache եւ անգլ.՝ Cause), թէեւ անոնք մերձիմաստ եզրույթներ են: Օրինակ բարոյագիտութեան մէջ վարմունքի մը պատճառը, որ միշտ փորձառական է, բոլորովին կը տարբերի վարմունքի մը հիմնաւորումէն, որ այդ վարմունքին բանական հիմք կամ փաստարկում ու արդարացում (գերմ.՝ Rechtfertigung, անգլ.՝ Justification) տալ կը նպատակադրէ:

Բարոյական վարմունքի պարագային, երբ երկընտրանքի առջեւ գտնուելինք, կրնանք որոշել առաջին կամ երկրորդ տարբերակը: Սակայն այս որոշումը կամ վարմունքի ընտրութիւնը ինքնին բաւարար չէ, այլեւ պէտք է հիմնաւորել՝ թէ ինչո՞ւ ընտրեցինք վարմունքի ա՛յս տարբերակը, որ մեզի համար բարի, լաւ կամ ցիշդ է:

Բարոյագիտութեան հիմնաւորման գլխաւոր հարցերէն մէկը բարի կամ լաւ (չար կամ վատ) հասկացութիւններն են, որոնք կրնան որպէս յարաբերական արժէք ներկայանալ: Այլ խօսքով, շատեր կրնան օրինակ բարին ու լաւը տարբեր ձեւով հասկնալ կամ տարբեր արժեւորումներ տալ անոնց, ինչպէս՝ լաւ – աւելի լաւ – լաւագոյն, նոյնպէս՝ չար – աւելի չար – չարագոյն: Բարոյագիտութեան հիմնաւորման համար, սակայն, բաղձալի պիտի ըլլար, որ բարի ու լաւ (չար ու վատ) հասկացութիւնները շատ յստակ իմաստ ու բնորոշում ունենային եւ բոլորին կողմէ հաւասարապէս եւ նոյն ձեւով ընդունուած ըլլային:

Բարոյագիտութեան հիմնաւորումը կարելի է գլխաւորաբար երկու միջոցներով. –

• **Առաջին՝ աւանդական բարոյական սկզբունքներով,**

որոնց հիմքը ընդհանրապէս կրօնական վարդապետութիւններն են, ինչպէս է պարագան օրինակ՝ քրիստոնէական բարոյագիտութեան մէջ, ուր Աստուածաշունչ մատեանը իր իւրայատուկ տեղը ու կարեւորութիւնը ունի. նոյնն է նաեւ միաստուածեան այլ կրօններու եւ արեւելեան կրօնափիլիսոփայութիւններու պարագային:

• **Երկրորդ՝ բնական (ոչ-աւանդական) բարոյական սկզբունքներով,**

որոնց հիմքը նոյնինքն մարդկային բնութիւնն է, իր բանականութեամբ եւ ինքնավարութեամբ: Այս սկզբունքով, պատմութեան ընթացքին, բարոյագէտ-փիլիսոփաներու կողմէ մշակուած են զանազան հիմնաւորման ծրագիրներ, ինչպէս է պարագան՝ սկոտլանդացի նշանաւոր փիլիսոփայ **Հյումի**²

² Հյում (David Hume, 1711 – 1776 թ.)- սկոտլանդացի բարոյագէտ-փիլիսոփայ, տնտեսագէտ եւ պատմաբան: Լուսաւորութեան շրջանի, «Փորձապաշտութիւն» ("Empiricism") փիլիսոփայական շարժումի ներկայացուցիչ: Հյումի գլխաւոր երկը կը կոչուի "Treatise of Human Nature" (1740 թ., «Բանագրութիւն մարդկային բնութեան մասին») (անգլ. բնա-

(David Hume) *եւ գերման փիլիսոփաներ Կանտի* (Immanuel Kant) *կամ Շոպենհաուերի*³ (Arthur Schopenhauer) *մօտ: Այդ ծրագիրներու մասին՝ աւելի ուշ:*

Բարոյագիտութեան հիմնաւորման ծրագիրը սակայն, իր գործընթացի ատեն, կը հանդիպի որոշ հարցերու, որոնք դժուարութիւններ կը յարուցանեն, ինչպէս օրինակ՝ կասկածապաշտութիւնը (սկեպտիկոլթիւն, Scepticism), յարաբերապաշտութիւնը (Relativism), ոչնչապաշտութիւնը (Nihilism) եւ սխալականութիւնը (Fallibilism), զորս պէտք է առանձնապէս քննարկել ու մանրամասնել:

➤ ԿԱՍԿԱԾԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ (Սկեպտիկոլթիւն)

Բարոյագիտական հիմնաւորում մը քննարկումի եւ քննադատութեան ատեն մեծ հաւանականութեամբ կրնայ հանդիպիլ կասկածապաշտութեան, որ կասկածելի ու տարակուսելի կը գտնէ որեւէ տրամաբանական հիմնաւորում եւ նոյնիսկ իմացութեան որեւէ կարելիութիւն: Կասկածապաշտութեան համաձայն, իրականութեան եւ ճշմարտութեան ճանաչողութիւնը՝ հարցական է, յարաբերական է կամ ընդհանրապէս՝ անկարելի է:

Կասկածապաշտութեան համաձայն, ենթադրութիւն մը կամ բարոյագիտութեան հիմնաւորում մը փաստելու համար հարկաւոր են *նախադրութիւններ* (Postulate), որոնք իրենց կարգին պէտք է փաստուին՝ այլ նախադրութիւններու հիման վրայ... եւ այսպէս շարունակաբար: Ասոր կողքին կասկածապաշտութիւնը կը փորձէ որեւէ ենթադրութեան (կամ հիմնաւորման) դիմաց, համազօր ու համոզիչ հակա-ենթադրութիւն մը (կամ հակա-հիմնաւորում մը) յառաջացնել: Այս իմաստով կասկածապաշտութիւնը մեծ վտանգ կը սպառնայ բարոյագիտութեան հիմնաւորման որեւէ ծրագրի: Այսուհանդերձ կարելի չէ

գիր՝) իսկ բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկն է՝ "An Enquiry Concerning the Principles of Morals" (1751 թ., «Հարցաքննութիւն՝ բարոյականութեան սկզբունքներուն»): Հիմն կը նկատուի գլխաւոր ներկայացուցիչը՝ զգացումի բարոյագիտութիւն տեսութեան (Moral Sense Theory): Հիմն, որոշ չափով ազդած է նաեւ Կանտի քննադատական երկերուն վրայ:

³ **Շոպենհաուեր** (Arthur Schopenhauer, 1788 – 1860 թ.)- գերման բարոյագէտ-փիլիսոփայ: «Գերմանական գաղափարապաշտութիւն» ("German Idealism") փիլիսոփայական ուղղութեան ներկայացուցիչ: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկերն են՝ "Die Welt als Wille und Vorstellung" (1819 թ., «Աշխարհը, որպէս կամք եւ պատկերացում», անգլ.՝ "The world as will and representation") եւ "Die beiden Grundprobleme der Ethik: Ueber die Freiheit des menschlichen Willens, Ueber das Fundament der Moral" (1841 թ., «Բարոյագիտութեան երկու հիմնական խնդիրները.- մարդու կամքի ազատութեան եւ բարոյականութեան հիմքի մասին», անգլ.՝ "The two basic problems of ethics: On the freedom of the will and on the basis of morality"): Շոպենհաուեր եւս կը նկատուի «զգացումի բարոյագիտութիւն» տեսութեան (Moral Sense Theory) ներկայացուցիչ, ուր հիմնականօրէն կը շեշտուի կարեկցութեան զգացումը (գերմ.՝ Mitleid, անգլ.՝ Compassion):

հրաժարիլ բարոյագիտութեան հիմնաւորման ծրագիրներէն եւ հարկ է նաեւ պահել՝ անոնց հանդէպ քննադատութեան կարելիութիւնը, որ ողջունելի է:

➤ ՅԱՐԱԲԵՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Յարաբերապաշտութեան համաձայն, ընդհանուր եւ բացարձակ իմացութիւն չկայ եւ ամէն ինչ յարաբերական է: Այլ խօսքով ենթադրութեան մը ճշմարտութիւնը կախեալ է որոշ պայմաններէ, որոնք իրենց կարգին կախեալ են այլ պայմաններէ... եւ այսպէս շարունակաբար: Պայմանաւորութեան այս շղթան վերջ կը գտնէ տեղ մը, որպէս՝ կամայական սկզբունք կամ ենթակայական համոզում:

Սկիզբէն ի վեր եւ մինչեւ այսօր, բարոյագիտական յարաբերապաշտութիւնը, միշտ ընկերակցած է փիլիսոփայական բարոյագիտութեան եւ միշտ ալ՝ մերժուած է, որովհետեւ այս ուղղութեան համաձայն, չկան նաեւ ընդհանուր եւ բացարձակ բարոյական արժէքներ, այլ ամէն ինչ յարաբերական է:

➤ ՈՉՆՉԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Ոչինչ (լատ.՝ nihil) արմատէն յառաջացած այս բառը ունի հակաճառական իմաստ եւ կը մատնանշէ գոյութիւնը, իմացութիւնը եւ բարոյական ու դրական արժէքները ընդհանրապէս ժխտող փիլիսոփայական ուղի մը:

Վերոյիշեալ բնորոշումով **ոչնչապաշտութիւնը**, ընդհանրապէս, կը հակաճառէ մարդկային կեանքի եւ աշխարհի գոյութեան իմաստին, կը հակաճառէ ճանաչելի իրողութիւններու իմացութեան, ինչպէս նաեւ՝ ընկերային հասարակութեան մէջ ընդունուած բարոյական կանոններուն ու դրական արժէքներուն: Այլ խօսքով՝ դրական բոլոր արժէքները, այստեղ, արժեզրկուած են:

➤ ՍԽԱԼԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Բարոյախօսներու համար մտահոգութեան առարկայ է ա՛յն պատկերացումը, որ բարոյագիտութեան հիմնաւորումը, կրնայ սխալ սկզբունքներ ունենալ: Եւ իրականութեան մէջ բարոյագիտութեան հիմնաւորման ծրագրերու պարագային կարելի է հաստատել բարոյական **սխալական** եւ բարոյական **անսխալական** մտապատկերներ: Արդարեւ, բարոյագիտութեան հիմնաւորման ծրագրերու թե՛ տրամաբանական հետեւութեան (Deduction, ընդհանուրէն՝ դէպի մասնակի) եւ թե՛ տրամաբանական մակաձութեան (Induction, մասնակիէն՝ դէպի ընդհանուր) գոյգ պարագաներուն՝ **սխալականութիւնը** (այսինքն՝ սխալ սկզբունքներու գոյութիւնը) կրնայ դիւրութեամբ ապացուցելի ըլլալ:

Վերոյիշեալ սխալականութիւնը շատ աւելի մտահոգիչ կը դառնայ, ո՛չ թէ անոր համար որ բարոյագիտութեան հիմնաւորում մը կրնայ բարոյական

սխալակա՛ն սկզբունքներ ունենալ, այլ անո՛ր համար, որ կարելի չէ փաստել, որ այդ հիմնաւորումը բարոյական անսխալակա՛ն սկզբունքներ ունի:

Մեթոդաբանական տեսակէտէն, բարոյագիտութեան հիմնաւորումը կարելի է բաժնել չորս եղանակներու, զորս պիտի նշեմ առանց մանրամասնութիւններու.–

1. Վերլուծական (Analytic) եղանակ
2. Մեկնագիտական (Hermeneutics) եղանակ
3. Անդրանցական (Transcendental) եղանակ
4. Քննախօսական (Discursive) եղանակ


Որպէս եզրակացութիւն կարելի է շեշտել, որ բարոյագիտութեան հիմնաւորման ծրագիրը, պէտք է ընդհանուր առմամբ ունենայ տոկոսն, ապահով ու անսխալակա՛ն հիմք, ինչպէս նաեւ զինուած ըլլայ կասկածապաշտութեան եւ յարաբերապաշտութեան դէմ մերժման կարելիութեամբ կամ այդ դժուարութիւնները յաղթահարելու կարելիութիւններով:

Հետեւելով բարոյական անսխալականութեան (Infallibilism) ուղիին, նախ կը տեսնենք, որ անսխալականութիւնը շատ կը յարմարի՝ հիմնականապաշտութեան (Fundamentalism), որովհետեւ այս երկու պարագաներուն ալ այն համոզումը կը տիրէ, որ սկզբունք մը բոլորովին անսխալական է կամ հիմք մը միակ ճշմարտութիւնը կը ներկայացնէ: Ուրեմն ընդհանուր առմամբ եւ մասնաւորաբար կանտի բարոյագիտութեան համար հիմնականապաշտութիւնը, դէպի անսխալականութիւն տանող գլխաւոր ուղին է:

Հիմնականապաշտութիւնը, իր կարգին, որպէս բարոյագիտութեան հիմնաւորման ծրագիր կարելի է բաժնել երկու մասերու.–

- **Բարոյագիտական ակներեւութիւն** (գերմ.՝ Evidenz, անգլ.՝ Evidence), որ կը յատկանշուի իր ակներեւ (ակնյայտնի) բացայայտութեամբ: Այս իւրայատուկ ու որակաւոր հանգամանքը կը պարտինք մարդկային մասնաւոր ճանաչողական – իմացական մէկ կարողութեան:
- **Բարոյագիտական վերջնական հիմնաւորում** (գերմ.՝ Letztbegründung, անգլ.՝ Ultimate Grounding), որ կը յատկանշուի իր ապահով, բացարձակ, ճշմարիտ, ստոյգ ու վերջնական ըլլալու հանգամանքներով: Հիմնաւորման այս երկրորդ ձեւին կը պատկանի կանտի Պարտագիտական բարոյագիտութեան (Deontological Ethics) տեսութիւնը:

Ստորեւ, բարոյագիտութեան հիմնաւորման ծրագրի, որոշ չափով պարզաբանուած աղիւսակ մը, ուր ամփոփ ձեւով կը ներկայացուի վերոյիշեալ տրամաբանական ուղին:



Ինչպէս Կանտի տեսական փիլիսոփայութեան նոր հիմնաւորումը, նոյնպէս եւ իր գործնական փիլիսոփայութեան կամ բարոյագիտութեան նոր հիմնաւորումը կը բխի Կանտի անձնաւորութեան հիմնական սկզբունքներէն, որոնք են.– խորաթափանց յստակութեան եւ ճշմարտացիութեան պահանջքը, զօրաւոր ինքնորոշնութիւնը, անողոք հետեւողականութիւնը եւ բանականութեան գերակշռութիւնը ... այս անգամ կիրարկուած կամքի եւ վարմունքի ոլորտներուն մէջ: Ոլորտներ, որոնք վստահաբար պէտք է ունենան հիմք մը, որ հաստատուն, ապահով ու անդրդուելի ըլլայ:

Կանտի մօտ, վերոյիշեալ հիմնական սկզբունքներուն ծիլերը կանուխէն դրուած էին, իր խիստ ու պահպանողական ծնողներու դաստիարակութեամբ: Հետագային, հնադարեան Ստոյիկեան բարոյագիտութիւնն ալ իր որոշ ազդեցութիւնը ունեցած էր, մանաւանդ հռոմէացի քաղաքական գործիչ եւ փիլիսոփայ **Կիկերոնի**⁴ (Cicero) երկերուն միջոցով:

⁴ **Կիկերոն** (Marcus Tullius Cicero, 106 – 43 մ.թ.ա.)- հռոմէացի քաղաքական գործիչ, նշանաւոր հռետոր եւ բարոյախօս փիլիսոփայ: Հետեւորդ Ստոյիկութիւն (Stoicism) փիլիսո-

Կանտ լատիներէնով քաջ գիտէր նաեւ հռոմէական ստոյիկեան շրջանէն գանազան ստոյիներ, ինչպէս Վերգիլիոսէն⁵ (Vergilius)՝ «*Խոյս մի տար չարէն, այլեւ համարձակօրէն դիմադրէ անոր*» (լատ.՝ "Tu ne cede malis, sed contra audentior ito!") կամ Յուվենալիսէն⁶ (Juvenalis)՝ «*Մեծագոյն մեղքն է, երբ պարզ կեանք մը ունենալու համար, բախտի քմահաճոյքին կը թողուս կեանքիդ ճշմարիտ նպատակը*» (լատ.՝ "Summum crede nefas animam praeferre pudori et propter vitam vivendi perdere causas"⁷) կամ Պերսիոսէն⁸ (Persius) «*Անոր, որուն կը ձգտիս, քու մէջն է, մի՛ փնտռեր դուրսը*» (լատ.՝ "Quod petis, in te est, ne tu quaesiveis extra"):

Ասոնց վրայ կու գար աւելնալ Ֆրանսացի փիլիսոփայ Ռուսոյի⁹ (Rousseau) ազդեցողութիւնը, մանաւանդ անոր մարդկային նախնական բնութեան, արժանապատուութեան եւ դաստիարակութեան հարցերը:

Կանտ, պարզ զգացումներուն փոխարէն, ներքին մղումով մը, աւելի կը ձգտէր՝ հաստատուն հիմք մը ունենալ: Ան չէր հանգստանար, մինչեւ որ իր բարոյական հայեցողութիւններուն յարմարագոյն հիմունք մը չգտնէր, որ իրեն հաստատուն կանոն մը եւ անոր հետեւողականութեամբ՝ անառարկելի վարմունք մը ապահովէր:

Կեանքի հարուստ փորձառութեամբ, Կանտ, 61 տարեկանին (1785 թ.) կը հրապարակէր իր "Grundlegung zur Metaphysik der Sitten" («*Հիմունք՝ բարոյականութեան բնագանցողութեան*») երկը, որ իր տեսակին մէջ իւրայատուկ եւ Նոր Դարաշրջանի առաջին զուտ փիլիսոփայական բարոյագիտութեան երկն էր, մանաւանդ բարի կամքին շեշտաւորումով եւ հեռու կրօնական երանգաւորումներէն:

փայլական ուղղութեան: Այստեղ անոր երկերէն նկատի ունիմ «Պարտաւորութեան մասին» (լատ.՝ de officiis) գործը, ուր նաեւ առաքինութիւնները կարեւոր տեղ կը գրաւեն:

⁵ Վերգիլիոս (Publius Vergilius Maro, 70 – 19 մ.թ.ա.)- հռոմէացի դասական գրող-բանաստեղծ: Երեք երկերէն լուսագոյնը կը նկատուի հռոմէացիներու ծագման մասին «Էնեական» (լատ.՝ aeneis) պոեմը:

⁶ Յուվենալիս (Decimus Junius Juvenalis, մօտ. 60 – 130 թ.)- հռոմէացի դասական երգիծաբան-բանաստեղծ: Ան գրած է 16 «շեգնանք»ներ (լատ.՝ saturae), որոնք ծաղրախառն երգիծական քննադատութիւններ են, օրուան ընկերային բարքերուն դէմ:

⁷ Կանտ, բանաստեղծ Յուվենալիսի մասին յիշած է իր «Քննադատութիւն գործնական բանականութեան» (KpV) երկին մէջ, ուրկէ է նաեւ վերոյիշեալ մէջբերումը (էջ A 283):

⁸ Պերսիոս (Aulus Persius Flaccus, 34 – 62 թ.)- հռոմէացի դասական երգիծաբան-բանաստեղծ: Գրած է վեց «շեգնանք»ներ (լատ.՝ saturae), ուր ստոյիկեան իմաստասիրութեան կողքին կը ձողկուին օրուան ընկերա-հասարակական ու քաղաքական իրավիճակները:

⁹ Ռուսօ (Jean Jacques Rousseau, 1712 – 1778 թ.)- ֆրանսացի գրող ու մանկավարժ-փիլիսոփայ: Լուսաւորութեան Դարաշրջանի ներկայացուցիչ: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկն է՝ "Émile ou De l'éducation" (1762 թ., «Էմիլ կամ դաստիարակութեան մասին»):

Կանտի համաձայն, «աշխարհի վրայ եւ անկէ դուրս» միայն բարի կամքը կարելի է, առանց որեւէ սահմանափակումի, բարի համարել: Անշուշտ յոյն փիլիսոփայ Պլատոն եւս յիշատակած է բարիի վեհ գաղափարը, անշուշտ ստոյրիկեան իմաստասէրներ նաեւ բարոյախօսած են ինքնաբաւարարութեան (Autarky) եւ «ինքնիրեն-հաւատարիմ-մնալու» պարագաներուն մասին, սակայն Կանտէն առաջ ոչ մէկ փիլիսոփայ արտայայտած է նմանօրինակ յստակ եւ հատու գաղափար մը:

Այստեղ հարկ է փակագիծ մը բանալ եւ մանրամասնել կամք¹⁰, կամեցողութիւն եւ բարի կամք հասկացութիւնները, ըստ Կանտի:

➤ ԿԱՄՔ, ԿԱՄԵՑՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐԻ ԿԱՄՔ

Կամքը (լատ.՝ voluntas, գերմ.՝ Wille, անգլ.՝ Will), որպէս փիլիսոփայական հասկացութիւն, բարոյագիտութեան հիմնական յենարաններէն մէկն է: Կամքը մարդու այն կարողութիւնն է, որով ան կրնայ ընտրել եւ որոշել՝ զանազան կարելի վարմունքներու միջեւ, մասնաւորաբար՝ եթէ այդ վարմունքը նպատակային է կամ բարոյական հիմնաւորում ունի:

Մարդկային կամքը յառաջ կու գայ թէ՛ **զուտ բանականութենէն** (գերմ.՝ Vernunft, անգլ.՝ Reason, Rationality) եւ թէ՛ **զգացական հակումներէն** (գերմ.՝ Neigung, անգլ.՝ Tendency), ինչպէս օրինակ հաճոյքի կամ գնահատանքի ձրգտումը:

Կանտ, բարոյագիտութեան իր երկասիրութիւններուն մէջ, մեծ կարեւորութիւն կու տայ **կամքին** եւ **ինքնավարութեան** (Autonomy), ինչպէս նաեւ կը զանազանէ՝ **կամքը** (Will) **կամեցողութենէն** (Volition) ու կը շեշտէ **բարի կամքին** (Good Will), բացառապէս *բարի* ըլլալու հանգամանքը: Այս իմաստով, Կանտի բարոյագիտութիւնը կը կոչուի նաեւ՝ «**ինքնավարութեան բարոյագիտութիւն**» (Autonomy-Ethics):

Կամեցողութիւնը (գերմ.՝ Willkür, անգլ.՝ Volition), նպատակային եւ յարատեւ վարմունքն է՝ իրագործելու համար կամքը: Ասոր համար անհրաժեշտ է ունենալ կամքի զօրութիւն, կամ կամքի ուժ (յուն.՝ enkrateia, գերմ.՝ Willenskraft, անգլ.՝ Willpower), որպէսզի առանց վիատելու ու հետեւողական կամեցողութեամբ նպատակադրում մը յաջողի: Իսկ կամքի զօրութեան կը հակադրէ կամքի տկարութիւնը (յուն.՝ akrasia, գերմ.՝ Willenschwäche, անգլ.՝ Acrasia), երբ անհատ մը վարմունք մը կը կատարէ, զիտնալով հանդերձ որ շատ աւելի լաւ տարբերակներ կան իր կատարածը փոխարինող: Այս գործընթացի որպէս պատճառ կարելի է յիշել՝ ներքին եւ արտաքին խանգարիչ ազդակները:

¹⁰ **Կանտ**, կամքի մասին նշուած գաղափարները քաղուած են իր "Grundlegung zur Metaphysik der Sitten" (GMS, «Հիմունք՝ բարոյականութեան բնագանցութեան» երկէն, էջ B 1 եւ B 87, ինչպէս նաեւ «Քննադատութիւն գործնական բանականութեան» (KpV) երկէն, էջ A 37:

Կամքը, Կանտի համաձայն, գործնական բանականությունն իսկ է եւ կը բնութագրուի որպէս նպատակադրումի կարողությունը ու տեսակ մը՝ ուղեւածելը, որ **անպայմանական հրամայականին** (Categorical Imperative) կը համապատասխանէ, իր բարոյական իմաստով: Իսկ **կամեցողությունը**, դարձեալ Կանտի համաձայն, մարդկային այն գործնական կարողությունն է, որով կարելի է զանազան տարբերակներու միջեւ, ազատօրէն ընտրություն կատարել: Այս իմաստով, եթէ **կամեցողությունը** ազատ է, **կամքը** կը մնայ ինքնավար, որովհետեւ ինքն է՝ օրէնսդիրը, ինքնիրեն համար օրէնքներ դնողը:

Մինչ **կամքը** յառաջ կու գայ, ինչպէս տեսանք, մարդու բանականութենէն եւ զանազան հակումներէն, **բարի կամքը** (գերմ.՝ der gute Wille, անգլ.՝ the Good Will) յառաջ կու գայ միայն բանականութենէն: Կանտ, **բարի կամքը** կը կոչէ նաեւ **«գործնական բանականություն»**:

Բարի կամքը միայն *ազատօրէն ուղեւոր* (ազատ կամեցողութեան) միջոցով է, որ բարի կը դառնայ: Վարմունքի մը արդիւնքը կամ հետեւանքը չէ որ բարոյական արժեւորման պէտք է ենթարկուի, այլ միայն այն իրողությունը, որ այդ վարմունքը *ազատօրէն ուղեւոր* (ազատ կամեցողութեամբ) կատարուած է: Օրինակով մը կարելի է յստակացնել այս գաղափարը. – եթէ լճին մէջ խեղդուող տղեկ մը կարելի չըլլայ փրկել, այս փրկելու ձախող փորձը չէ որ բարոյական արժեւորման պէտք է ենթարկուի, այլ այստեղ անհատին (փրկել ուզողին) բարի կամքը կայ, որ պէտք է նկատի առնուի ու բարոյապէս արժեւորուի, նոյնիսկ այն պարագային, երբ փրկութեան փորձը ձախող դուրս եկած ըլլայ:

Կանտի համաձայն, կան *թերեւս* կատարեալ (անթերի), բայց անպայմանօրէն ու *ընդհանրապէս*՝ անկատար (թերի) բանաւոր էակներ: Մարդը, անկասկած, կը նկատուի անկատար բանաւոր էակ: Կատարեալներուն մօտ **բարի կամքը** յառաջ պիտի գար միայն բանականութենէն եւ իրենց վարմունքները բարոյապէս միշտ **բարի** պիտի ըլլային: Այլ խօսքով, մարդու կամքը **բարի** ըլլալու համար, պէտք չէ յառաջացած ըլլայ բացասական հակումներէն, այլ միայն ու միայն՝ պարտաւորութեան գիտակցութենէն, որ զուտ բանականութեան արդիւնքն է:

Նոյնինքն Կանտ, վճռական գիտակցութեամբ մը, իր բարոյագիտութիւնը կը ներկայացնէ, որպէս «բոլորովին նոր», համեմատելով նախկիններուն հետ:

Կանտի համաձայն, կարելի չէ բարոյագիտութիւնը հիմնաւորել երջանկութեան (գերմ.՝ Glück, անգլ.՝ Happiness) զգացումով, ինչ որ իրմէ առաջ կատարած էին յոյն դասական փիլիսոփաները՝ Պլատոն եւ Արիստոտէլ, որովհետեւ երջանկութեան զգացումը զուտ ենթակայական է եւ յստակ չափանիշ մը չի կրնար ըլլալ: Կանտի համաձայն, կարելի չէ նաեւ բարոյագիտութիւնը հիմնաւորել համակրանքի (գերմ.՝ Mitgefühl, անգլ.՝ Sympathy) եւ կարեկցութեան (գերմ.՝ Mitleid, անգլ.՝ Compassion) զգացումներով, ինչ որ իրմէ առաջ կատարած էր սկոտլանդացի փորձագէտ-փիլիսոփայ՝ Հյում (Hume), վերոյիշեալ նոյն պատճառով:

Ասոնց կողքին, Կանտ, իր բարոյագիտութիւնը գիտակցաբար հեռու կը պահէ նաեւ բարոյական աւանդական սկզբունքներէն եւ կրօնական երանգալորումներէն, ոչ թէ աւանդութիւններուն եւ կրօնքի հանդէպ հակակրանք մը ունենալուն, այլ ապահովելու համար իր բարոյագիտութեան զտութիւնը եւ իւրայատկութիւնը:

Կանտի համաձայն, իր բարոյագիտութիւնը ներդաշնակ է մարդկային ընդհանուր բանականութեան հետ: Ինչպէս մարդկային ընդհանուր բանականութեան համար յստակ է աջին ու ձախին տարբերութիւնը, նոյնպէս մարդոց համար, ընդհանրապէս, յստակ պէտք է ըլլան բարոյագիտութեան կանոնները:

Հակառակ անոր, որ Կանտ գիտակից է իր բարոյագիտութեան նորարարութեան, սակայն իր համեստութիւնը թոյլ չի տար որ անպատկառօրէն քարոզէ զայն: Եթէ ինք շեշտը կը դնէ պարտաւորութեան վրայ, ան քաջ գիտէ նաեւ որ իրմէ առաջ մարդոց մօտ անիկա արդէն ծանօթ հասկացութիւն մը եղած է: Կանտի համար կարեւորը սակայն նոր բանաձեւ (գերմ.՝ Formel, անգլ.՝ Formula) մը գտնելն է, որպէսզի նաեւ բարոյագիտութիւնը քաջ գիտութեան վստահ ուղիներով:

Այստեղ հարկ է փակագրիծ մը բանալ եւ մանրամասնել պարտաւորութիւն¹¹ հասկացութիւնը, ըստ Կանտի:

➤ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ

Պարտաւորութիւն (յուն.՝ Kathêkon, լատ.՝ officium, գերմ.՝ Pflicht, անգլ.՝ Duty) հասկացութիւնը, կը նշանակէ ներքին բարոյական օրէնքէն (Moral Law) յառաջացած ինքնակոչ եւ անձնուրաց վարմունքը, որ հարկադրաբար կը կատարուի, ինչպէս նաեւ կրնայ անհատէ մը սպասուիլ կամ պահանջուիլ:

Կանտի պարտագիտական բարոյագիտութիւնը հիմնուած է միայն պարտաւորութենէն բխող վարմունքներու վրայ: Այլ խօսքով, պարտագիտական բարոյագիտութիւնը կը խուսափի որեւէ ենթակայականութենէ (Subjectivity). այսինքն՝ մարդիկ, առանց բացառութեան պիտի վարուին նոյն բարոյական պարտաւորութեամբ: Պարտաւորութիւն մը, որ Կանտի համաձայն, կը բխի բարոյական օրէնքէն (գերմ.՝ Sittengesetz, Moralgesetz, անգլ.՝ Moral Law – Moral Absolutism). իսկ այս օրէնքը ի գործու է, հաւասարապէս բոլոր բանաւոր էակներուն համար, նպատակ ունենալով՝ բարոյական վարմունքները:

Բարոյական այս օրէնքին հանդէպ յարգանքը (գերմ.՝ Achtung, անգլ.՝ Respect) բարձրագոյն պահանջք մըն է: Բանաւոր էակներ այս օրէնքին գիտակ-

¹¹ Կանտի պարտաւորութեան մասին նշուած գաղափարները քաղուած են իր "Grundlegung zur Metaphysik der Sitten" (GMS, «Հիմունք՝ բարոյականութեան բնագանցութեան») երկէն, էջ B 14 եւ "Die Metaphysik der Sitten" (MdS, «Բարոյականութեան բնագանցութիւնը») երկէն, էջ A 28:

ցաբար եւ հարկադրաբար չէ որ կ'անսան, այլ եւ իրենց կամքն է, որ անպայմանօրէն եւ ուզելով կը հնազանդի այս *օրէնքին*: Մարդոց կամքը, սակայն, յառաջ կու գայ բանականութենէն եւ զանազան հակումներէն. հակումներ, որոնք կրնան դրական ազդեցութեամբ՝ բարոյական լաւ ու բարի վարմունքներու պատճառ դառնալ կամ բացասական ազդեցութիւն գործել եւ վատ ու չար վարմունքներու տեղի տալ:

Կանտ, աւելի յառաջ երթալով տակաւին կը զանազանէ բարոյական **օրէնքին համաձայն** վարմունքին եւ բարոյական **օրէնքէն բխած** վարմունքին միջեւ: Պատճառը շատ պարզ է, որովհետեւ օրէնքին հետ համաձայնութիւն մը կրնայ պատահական կամ կասկածելի ըլլալ: Այս գաղափարը յստակացնելու համար վերստին յիշենք, որ մարդկային հակումները կրնան դրական կամ բացասական ազդեցութիւն ունենալ եւ ըստայնմ բարի կամ չար վարմունքներ յառաջանալ: Ուրեմն հակումներէ մղուած վարմունքները, որոնք բարոյական օրէնքին համաձայն են, նաեւ կը կոչուին՝ **պարտաւորութեան համաձայն** վարմունքներ. իսկ ուղղակի բարի կամքէն յառաջացած վարմունքները, նաեւ կը կոչուին՝ **պարտաւորութենէն բխած** վարմունքներ: Այս վերջինները բարոյականօրէն շատ աւելի արժէքաւոր են, որովհետեւ անոնցմէ միշտ բարոյական ճիշդ վարմունքներ կը յառաջանան:

Նոյնինքն Կանտի բարեգործութեան օրինակը դարձեալ յիշելով, կարելի է յստակացնել այս գաղափարը:

Բարեգործութիւնը ընկերութեան մէջ ձգտելի ու գնահատելի արարք կամ պարտաւորութիւն մըն է: Շատեր բարեգործութիւն կ'ընեն՝ **պարտաւորութեան համաձայն**. ասիկա թէեւ սիրալիր, գովելի ու քաջալերելի արարք մըն է, սակայն ճշմարիտ բարոյական արժէք մը չի ներկայացնէր, եթէ մղուած է զանազան հակումներէ, ինչպէս յարգանքի ու պատիւի մարմաջէ: Իսկ շատեր բարերար են ու բարեգործութիւն կ'ընեն՝ **պարտաւորութենէն բխած**, առանց մեծամտութեան ու շահախնդրութեան. անոնք, շատ հաւանաբար, ներքին բարարութիւն մը միայն կը գտնեն եւ կ'ուրախանան, երբ իրենց շուրջ ուրախութիւն սփռեն եւ ուրիշներ գոհացնեն: Եզրակացնելով հաստատենք, որ բարեգործութիւն մը, որ կատարուած է՝ **պարտաւորութեան համաձայն** եւ անձնական երջանկութեան համար, կարելի է գովել ու քաջալերել, սակայն երբեք բարձր գնահատել, ինչ որ յատուկ է **պարտաւորութենէն բխած** բարերարութեան, որ կատարուած է առանց անձնական շարժառիթի:

Այստեղ վերստին պիտի անդրադառնամ վերոյիշեալ **բարոյական օրէնքին** եւ անոր հանդէպ պահանջուած **յարգանքին**, նկատի ունենալով անոնց կարեւորութիւնը: Նախ շեշտելու է, որ այս *օրէնքը* քաղաքացիական կամ քրեական որեւէ օրէնք մը չէ, այլ **բարոյական օրէնք** մը, որ Կանտի համաձայն կը տիրէ զգացականէն անդին գտնուող, մտացածին աշխարհին մէջ: (Կանտ կը զանազանէ զուտ մտացածին աշխարհը՝ Noumenal World, երեւութական աշխարհէն՝ Phenomenal World): Իսկ այդ **բարոյական օրէնքին** հանդէպ պահանջուած յարգանքը կարելի է ընկալել որպէս զգացում կամ հակում, որ չի

համապատասխաներ Կանտի **բարոյական օրենքի** բանականության հետ ունեցած կապին:

Կանտ, տողատակի ծանօթագրության մը մեջ, կը մերժէ յարգանքին (այս պարագային) որպէս զգացում կամ հակում ընկալումը եւ զայն կը բնորոշէ, որպէս մարդկային ա՛յն գիտակցութիւնը, որ կը նշէ կամքի անմիջական ենթարկումը՝ *օրենքին*: Ուրեմն **յարգանքը** Կանտի համար, ա՛յս պարագային, զգացում մը չէ, այլ նոյնիսկ վերը նշուած գիտակցութիւնը:

Որպէս եզրակացութիւն կարելի է տակաւին աւելցնել, որ այնքան ալ հեշտ չէ զանազանելը՝ վարմունքի մը **պարտաւորութեան համաձայն** կամ այդ վարմունքին **պարտաւորութենէն բխած** ըլլալը:

Նոր բանաձեւէն առաջ սակայն, հարկ է պատրաստել այն հաստատուն գետինը, որու վրայ պիտի կառուցուի Կանտի բարոյագիտութիւնը: Կանտի համաձայն, մարդկային փորձառական բարքերը, որոնք առնչուած են մարդկային բնութեան եւ հոգեբանութեան, չեն կրնար այդ հաստատուն գետինը ներկայացնել: Կանտ, առանց իրավիճակին դժուարութիւնը թագցնելու, լուծում մը կը գտնէ, որ ազատութիւնն¹² է:

Կանտի համաձայն, եթէ առանց բացառութեան բոլոր գոյերը պատճառականութեան¹³ (գերմ.՝ Kausalität, անգլ.՝ Causality) օրէնքին ենթարկուած են, սակայն այլ տեսակէտ մը մտածելի ու հնարաւոր է: Տեսակէտ մը, որ փոխանակ բնական իրադարձութիւնները բացատրէ, կարելի ըլլայ զանոնք գնահատել եւ արժեւորել: Ահա այս տեսակէտը պիտի դառնայ Կանտի նոր բարոյագիտութեան կարգաւորողը: Կանտի օրինակով, պէտք է մարդոց կատարելիք վարմունքը այնպիսի ստուգութեամբ հաշուարկել, ինչպէս կարելի է հաշուարկել լուսնի եւ արեւու խաւարումները, այսուհանդերձ նաեւ պնդել, որ մարդը ազատ է: Նման տեսակէտ մը կարելի չէ բացատրել, ինչպէս յիշուցաւ, այլ՝ միայն պաշտպանել ու որպէս նախադրեալ (Postulate) կամ նախապայման ընդունել:

Այստեղ հարկ է փակագիծ մը բանալ եւ որոշ մանրամասնութեամբ ներկայացնել ազատութիւն հասկացութիւնը, ըստ Կանտի:

¹² Կանտի ազատութեան մասին նշուած յիշեալ գաղափարները քաղուած են իր "Grundlegung zur Metaphysik der Sitten" (GMS, «Հիմունք՝ բարոյականութեան բնագանցութեան») երկէն, էջ B 80:

¹³ Պատճառականութիւն (գերմ.՝ Kausalität, անգլ.՝ Causality).- ընդհանուր առմամբ, պատճառի մը ու անոր հետեւանքին յարաբերութիւնն է: Պատճառականութիւնը կը վերաբերի նաեւ իրադարձութիւններու եւ վիճակներու յաջորդականութեան, որոնք իրարու հետ կապուած են: Պատճառականութեան հիմքը «պատճառն» է (գերմ.՝ Ursache, անգլ.՝ Cause): «Պատճառը» պէտք է զանազանել **1. «Պայմանէն»** (գերմ.՝ Bedingung, անգլ.՝ Condition), որ պատճառի իւրայատուկ տեսակ մըն է, առանց անոր արարք մը կամ գործողութիւն մը չի սկսիր, **2. Շարժառիթէն** (գերմ.՝ Anlass, անգլ.՝ Occasion), որ պատահականօրէն ու աննշան ձեւով արարք մը կամ գործողութիւն մը կը յառաջացնէ, եւ **3. Հիմունքէն** (գերմ.՝ Grund, անգլ.՝ Reason), որ աւելի բանական հիմնաւորումներու տարր մըն է:

➤ ԱԶԱՏՈՒԹՒԻՆ

Ազատություն (յուն.՝ *elevthería*, լատ.՝ *libertas*, գերմ.՝ *Freiheit*, անգլ.՝ *Liberty*, *Freedom*) հասկացությունը, փիլիսոփայության ոլորտին ներս, կարելի է նախ բաժնել երկու տեսակներու.– **անհատական** եւ **հասարակական ազատություն**: Այս առեւականօրէն կարելի է բաժնել՝ **ժխտական** եւ **դրական ազատություն** մասերուն, իսկ կիրառականօրէն՝ **արտաքին** եւ **ներքին ազատություն** մասերուն: Միշտ նկատի ունենալով **ազատութեան** եւ **որոշականութեան** (*Determinism*) առնչությունը, որ շատերու համար մրցակցական բնոյթ կը կրէ: Արդ, նկատի ունենալով վերոյիշեալ բաժանումները, կարելի է եզրակացնել ազատութեան չորս դասակարգեր.– 1. ժխտական արտաքին, 2. դրական արտաքին, 3. ժխտական ներքին եւ 4. դրական ներքին:

1.- Ժխտական արտաքին ազատություն

Ժխտական արտաքին ազատություն կը կայանայ, երբ անհատի մօտ կը բացակային արտաքին արգելքները, սահմանափակումներն ու հարկադրանքը, այսինքն՝ անհատը կախեալ չըլլար որեւէ արտաքին ազդակներէ, որոնք պիտի խանգարէին իր *վարուիլ-կարենալու ազատությունը*:

Ժխտական արտաքին ազատութեան պարագային, նախ առկայ է անհատի մարմնական-ֆիզիկական ազատությունը, որովհետեւ կը բացակային արտաքին բնական արգելքները: Արտաքին բնական արգելքներէն անկախ ըլլալու անհատի ձգտումը, եթէ մէկ կողմէն՝ զինք կ'առաջնորդէ դէպի գիտական նոր նուաճումներ, որոնց միջոցով անհատը կրնայ բնական երեւոյթները նախագուշակել եւ բնական արգելքները կարելի չափով յաղթահարել. միւս կողմէ սակայն կը յայտնաբերէ բնագիտական որոշականություն մը, որ կը հերքէ որեւէ ազատություն:

Իսկ ընկերային ու քաղաքական շրջագծի մէջ, **ժխտական արտաքին ազատությունը** կը յայտնաբերուի ընկերային արգելքներու բացակայութեամբ եւ մենաստիքութենէ ազատագրութեամբ: **Ժխտական արտաքին ազատությունը**, Նոր Դարաշրջանի մարդկայնութեան (*Humanity*) ու անհատական ազատագրութեան (*Emancipation*) ծրագիրն է, արդի ժամանակներու՝ մարդու իրաւունքներու (*Human Rights*) երաշխաւորությունը եւ ժողովրդավարությունը (*Democracy*):

2.- Դրական արտաքին ազատություն

Դրական արտաքին ազատություն կը կայանայ, երբ անհատը կարողանայ ընել, ինչ որ կարելի է, նկատի ունենալով անհատի նպատակներու ու փափաքներու իրականացումը, ինչպէս նաեւ պահանջներու ու հետաքրքրություններու գոհացումը: Կանտի համաձայն, դրական արտաքին ազատությունը բնագանցական (*Metaphysics*) բնոյթ ունի:

Դրական արտաքին ազատութեան պարագային, անհատի կեանքին մէջ

առկայ են վարմունքի կամ *վարուիլ-կարենայու ազատությունը*, ինչպես նաև արտաքին ինքնաբաւությունն (այսինքն՝ անկախությունն) ու արտաքին ինքնավարությունը (այսինքն՝ ինքնուրոյնությունը): Դրական արտաքին ազատութեան պարագային, անհատի մօտ կը նկատուի գիտական ու տեխնիկական յառաջդիմութեան վերելք, որով անհատը կ'ապահովէ իր ինքնաբաւությունն ու ինքնավարությունը: Ասոր կողքին սակայն, անհատը ինք կը սահմանափակէ իր վարմունքի ազատությունը, նկատի ունենալով գիտութեան յառաջդիմութեան կողմնակի անսխորժ ազդեցությունները եւ իր բարոյական պատասխանատւությունը:

Իսկ ընկերային ու քաղաքական շրջագծի մէջ, **դրական արտաքին ազատությունը** կը յայտնաբերուի քաղաքացիական ազատութեամբ, ուր անհատը կրնայ ունենալ իր անկախ կարծիքը եւ հասարակական աւելի աշխոյժ մասնակցությունը:

3.- Ժխտական ներքին ազատութիւն

Ժխտական ներքին ազատութիւն կը կայանայ, երբ անհատի մօտ կը բացակային ներքին (հոգեկան եւ բնախօսական) արգելքները, սահմանափակումներն ու հարկադրանքը, ինչպէս նաև անհատը կախեալ չըլլար մարմնական բնական պահանջներէն, մղումներէն ու հակումներէն եւ այն բոլոր հոգեկան պատճառներէն, որոնք արգելք կը հանդիսանան, որ անհատը *ուզել-կարենայ* եւ *վարուիլ-կարենայ*:

Կանտ նկատի ունենալով կամքը, **ժխտական ներքին ազատությունը** կը կոչէ «գործնական իմացաբանութեան ազատություն», որ Կանտի համաձայն, զգայական մղումներէն՝ կամեցողութեան անկախությունն է:

Ժխտական ներքին ազատությունը կը հերքուի **որոշականութեան**¹⁴ (Determinism) հետեւեալ երեք տարբերակներուն կողմէ. –

ա) Հոգեբանական որոշականություն, որուն համաձայն՝ անհատի գրեթէ բոլոր վարմունքները կանխորոշուած են հոգեկան գիտակից կամ անգիտակից հանգամանքներու պատճառով.

բ) Բնախօսական որոշականություն, որուն համաձայն՝ անհատի գրեթէ բոլոր վարմունքները կանխորոշուած են մարմնական – բնախօսական հանգամանքներու պատճառով. եւ

գ) Բարոյագիտական որոշականություն, որուն համաձայն՝ անհատի գրեթէ բոլոր վարմունքները կանխորոշուած են, իր իսկ բարոյական սկզբունքներուն

¹⁴ **Որոշականություն** (գերմ.՝ Determinismus, անգլ.՝ Determinism) հասկացությունը կը նշանակէ, որ բոլոր, յատկապէս ապագայի իրադարձություններն ու պատահարները յստակօրէն սահմանուած ու արդէն որոշուած են նախապայմաններով: Լարուած յարաբերություն մը առկայ է որոշականութեան եւ (կամքի) ազատութեան միջեւ: Որպէս հականիշ կը ներկայանայ «**Անորոշականությունը**» (գերմ.՝ Indeterminismus, անգլ.՝ Indeterminism):

պատճառով: Այլ խօսքով, անհատը զանազանելով *բարին* ու *չարը*, կը վարուի բարոյական ի՛ր կանոններով (մաքսիմ), երբեմն նոյնիսկ գիտնալով կամ նախատեսելով այդ վարմունքի ժխտական կամ բացասական հետեւանքները:

4.- Դրական ներքին ազատութիւն

Դրական ներքին ազատութիւնը, կամքի եւ որոշումի ազատութիւնն է, որ բարոյագիտութեան ոլորտէն ներս նկատի կ'առնուի եւ մեծ կարեւորութեամբ կը շեշտուի նաեւ Կանտի կողմէ:

Դրական ներքին ազատութեան մասին, Կանտի տարբերակը կը ներկայանայ, որպէս ինքնապատճառականութեան կամ ինքնաորոշականութեան տեսութիւն: Կանտի համաձայն, ազատ է այն անհատը, որու մօտ *կամենայն* ու *վարուիլը* ի՛ր անձէն կը բխին, ի՛նքն է անոնց հիմնական պատճառը եւ ի՛նք կը ստանձնէ անոնց ամբողջական **պատասխանատուութիւնը** (գերմ.՝ Verantwortung, անգլ.՝ Responsibility):

Այս գաղափարի նախնական ձեւերը թէեւ կը գտնենք հնադարեան **Արիստոտէլի** եւ միջնադարեան **Թոմաս Աքուինացիի** մօտ, սակայն **Կանտի** մօտ ան կը հասնի իր կատարելութեան:

Ինքնապատճառականութիւնը, որպէս հասկացութիւն, մարդկային ա՛յն կարողութիւնն է, որով մարդ իր վարմունքը կամ արարքը կը սկսի առանց որեւէ այլ պատճառականութեան (գերմ.՝ Kausalität, անգլ.՝ Causality), որովհետեւ անհատը *«ինքն»* է սկզբնական կամ առաջին պատճառը (լատ.՝ prima causa): Այս իմաստով, բնական պատճառականութիւնը կը վերածուի կամ կը ներկայանայ, որպէս՝ ազատութեան պատճառականութիւն:

Այստեղ օգտագործուած **«ինքն»** (գերմ.՝ Selbst, անգլ.՝ Self) արդիական եզրը կամ հասկացութիւնը, որ նոյնինքն անհատի գիտակցութիւնն է, յունական փիլիսոփայական աւանդութեան մէջ կը կոչուի «հոգի», իսկ Կանտ զայն կը կոչէ «զուտ գործնական բանականութիւն», որ գործնական բանականութեան ինքնաորոշականութիւնն է:

Կանտ, եթէ մէկ կողմէն՝ կ'արդարացնէր բնութեան հանդէպ ունեցած իր անսահման պատճառականութեան սկզբունքը, սակայն միւս կողմէն՝ կը ջատագովէր կամքի ազատութիւնը: Կանտի համաձայն, կարելի է անառարկելիօրէն կողք կողքի տեսնել բնութեան պատճառականութիւնը եւ ազատութեան պատճառականութիւնը: Այս կարելիութիւնը կ'ընձեռէ Կանտի **անդրանցական գաղափարապաշտութիւնը** (Transcendental Idealism), որ ազատութիւնը կը հասկնար, որպէս բանական կարողութիւն եւ անկէ կը հեռացնէր բնութեան պատճառականութեան արդիւնք՝ որեւէ որոշականութիւն: Այս իմաստով, Կանտ կ'ապահովէ պատճառականութեան մը անպատճառ սկիզբի գաղափարը, վիճակի մը ինքնակամ սկսելու կարողութիւնը, զոր կը կոչէ **անդրանցական ազատութիւն** (Transcendental Freedom):

Կանտի համաձայն, մարդ էակը երեւոյթներու **զգայական աշխարհի** (լատ.՝ mundus sensibilis) կողքին կը պատկանի նաեւ իր մտածումներու **բանական աշխարհին** (լատ.՝ mundus intelligibilis), ուր զգայական աշխարհի օրէնքները

կիրառելի չեն: Այս կրկնակի պատկանելիությունը կ'արտայայտուի նաև կամքի պարագային, ուր կարելի է տեսնել թե՛ զգայական հակումներու ու մղումներու ներգործությունը եւ թե՛ բանականության ներգործությունը: Կանտ, ներքին ազատության ժխտական ձեւը կը յատկացնէ, անկախանալու համար՝ զգայական աշխարհի ներգործութենէն. իսկ ներքին ազատության դրական ձեւը կը յատկացնէ՝ բանական աշխարհին, որ Կանտի համար «զուտ գործնական բանականության» ինքնավարությունը կամ ինքնօրինականն է (գերմ. Autonomie, անգլ. Autonomy), որու հիմնական օրէնսդիր կարողութեամբ, կը հաստատուին՝ **բարոյական օրէնքը**, վերոյիշեալ **ազատութեան պատճառակաւությունը** եւ կամքի **անդրանցական ազատությունը**:

Կանտի համաձայն, բարոյական ինքնավարութեան նմանօրինակ մտայնացում մը, պէտք է մեր մօտ ի յառաջագունէ (a priori) ակնյայտ ու ըմբռնելի ըլլայ, որովհետեւ ան նախապայմանն է **բարոյական օրէնքին**: Այս իմաստով, գործնական բանականութեան ոլորտին մէջ, ազատութիւն եւ որոշականութիւն ոչ միայն հակադրութիւն չեն կազմեր, այլ առաւել, ազատութիւնը կ'որոշուի **բարոյական օրէնքին** միջոցով: Այս **բարոյական օրէնքը**, կախեալ չէ որեւէ պատճառէ մը, որու միջոցով կամ որու շնորհիւ կը հեռացուի կանխորոշութեան որեւէ վտանգ:

Այժմ կարելի է անցնիլ նոր բանաձեւի կազմաւորման: Ինքնին հասկնալի է, որ «պէտք է» օրինաչափութեան որպէս հիմք կարելի չէ նկատի առնել ա՛յն անձնական կանոնները (մաքսիմ), որոնք բարոյական վարմունքի զուտ անհատական սկզբունքներն են, այլեւ նկատի կ'առնուին միայն այն «գործնական կանոնները», որոնք իւրաքանչիւր բանական անհատի կամքէն կը բխին, որպէս օրինական սկզբունքներ:

Այստեղ եւս հարկ է փակագիծ մը բանալ եւ մանրամասնել մաքսիմ հասկացութիւնը, ըստ Կանտի:

➤ ՄԱՔՍԻՄ

Մաքսիմը¹⁵ (Maxim) բարոյական վարմունքի անձնական (անհատական) կանոն կամ սկզբունք է, մեր կողմէ սահմանուած եւ մեզի համար: Կանտի հակիրճ բնորոշումով, մաքսիմը վարմունքի առնչութեամբ՝ «**կամենալու ենթակայական** (Subjective) **սկզբունքն է**». այս պատճառով ալ մաքսիմը երբեք չի կրնար առարկայական (Objective) վաւերականութիւն ունենալ:

Իւրաքանչիւր անհատ, իր բանականութենէն ելլելով, կը կազմէ մաքսիմներու ի՛ր անձնական կառոյցը: Մաքսիմներու կառոյցը սակայն, անհատէ անհատ կը տարբերի, որովհետեւ (ինչպէս տեսանք) մարդ զուտ բանական էակ

¹⁵ **Կանտի**, մաքսիմի (Maxim = անձնական կանոններու) մասին նշուած գաղափարները, քաղուած են իր "Grundlegung zur Metaphysik der Sitten" (GMS, «Հիմունք՝ բարոյականութեան բնագանցութեան») երկէն, էջ B 15 եւ B 52:

չէ, այլեւ ան ունի զանազան հակումներ, որոնք անպայմանօրէն կ'ազդեն անոր բանականութեան վրայ՝ դրական կամ բացասական ձեւով: Այսուհանդերձ կարելի է մաքսիմին առարկայական (Objective) վաւերականութիւն մը տալ, երբ կարելի ըլլայ մաքսիմը ընդհանրականացնել եւ ան համընկնի **բարոյական օրէնքին** հետ: Այս գաղափարը, հետագային պիտի մանրամասնուի, նոյնինքն Կանտի օրինակներով:

Կանտի համաձայն, բարոյական արժեւորման համար, **մաքսիմը**, կեդրոնական դեր կը խաղայ, որովհետեւ *պարտաւորութենէն բխած* վարմունքի մը բարոյական արժեքը ոչ թէ իր մտադրութեան մէջ կը կայանայ, այլ՝ **մաքսիմին** մէջ: Իսկ *բարի կամքէն* յառաջացած որեւէ **մաքսիմի** պիտանիութիւնը եւ ձգտումը կը կայանան իր ընդհանրականացման եւ ընդհանուր **բարոյական օրէնք** դառնալուն մէջ: Մաքսիմներու անձնական կառոյցը առնչութիւն ունի նաեւ անհատի ինքնութեան (Identity) եւ նկարագրին (Character) հետ: Այլ խօսքով, անհատը իր անձնական կանոններու (մաքսիմ) հիման վրայ կ'ապրի ու ըստայնմ վարուելակերպ կը ցուցաբերէ, օրինակ իր խոստումը միշտ կը յարգէ, ուրիշներու կ'օգնէ կամ ընդհանրապէս չի ստեր, եւայլն... այս իմաստով կարելի է ըսել, որ անհատը խոստմնապահ, օգնելու միշտ պատրաստ կամ ճշմարտախօս է, եւայլն...:

Ուրեմն նոր բանաձեւի կազմաւորման համար նկատի կ'առնուին ազատ ու բարի կամքէն յառաջացած անձնական կանոնները (մաքսիմները), որոնք ատակ են ընդհանրականացման եւ այսպիսով կը դառնան՝ բարոյական օրէնք (գերմ.՝ Sittengesetz, Moralgesetz, անգլ.՝ Moral Law, Moral Absolutism):

Այժմ ժամանակն է յիշել այդ բանաձեւը. –

«Վարուէ՛ միայն այնպիսի անձնական կանոնով (մաքսիմ), որով միաժամանակ կարենաս ցանկալ, որ այդ՝ ընդհանուր օրէնք դառնայ»: ¹⁶

Կանտ, բարոյագիտական իր տեսութիւնը կը հիմնէ անպայմանական հրամայականին (գերմ.՝ Kategorischer Imperativ, անգլ.՝ Categorical Imperative) վրայ: Այլ խօսքով, մարդուն պարտաւորութիւնը կը ներկայանայ, գործնական բացարձակ հրամայականով, առանց որեւէ նախապայմանի: Օրինակ, եթէ ճշմարտախօսութիւնը, որ ինձի համար անձնական կանոն (մաքսիմ) մըն է եւ իմ ցանկութեամբ պէտք է ընդհանուր բարոյական օրէնք դառնայ, ուրեմն Կանտի համաձայն, որեւէ ստախօսութիւն (առանց բացառութեան) արգիլուած պիտի ըլլայ:

Այստեղ եւս հարկ է փակագիծ մը բանալ եւ մանրամասնել հրամայական ¹⁷ հասկացութիւնը, ըստ Կանտի:

¹⁶ Կանտի, յիշեալ առաջին բանաձեւը քաղուած է իր "Grundlegung zur Metaphysik der Sitten" (GMS, «Հիմունք՝ բարոյականութեան բնագանցութեան») երկէն, էջ B 52:

¹⁷ Կանտի, հրամայականի մասին նշուած գաղափարները քաղուած են իր «Հիմունք՝ բարոյականութեան բնագանցութեան» (GMS) երկէն, էջ B 40:

➤ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Կանտ, լեզուական-քերականական «հրամայական» հասկացությունը կը կիրարկե իր բարոյական տեսութեան մէջ: Կանտի համաձայն հրամայականները բանաձեւեր են, որոնք կը ստիպեն, որ կամքը միայն բանականութեան հետեւի եւ ձերբազատուի զանազան հակումներու վատ, ժխտական կամ բացասական ազդեցութիւններէն:

Հրամայականները հարկադրական կամ պարտադրական են եւ ցոյց կու տան բանականութեան առարկայական (Objective) օրէնքներու յարաբերութիւնը կամքին հետ, որ իր իւրայատուկ ենթակայական (Subjective) յատկութիւնը ունի եւ այս պատճառով ալ անհրաժեշտաբար չի հետեւիր հրամայականներուն: Եթէ մարդու վարմունքները միայն բանականութենէ յառաջացած ըլլային, ան պէտք պիտի չունենար հրամայականներուն, որովհետեւ անոնց պահանջքը արդէն առկայ է զուտ բանաւոր էակի *կամենալուն* (կամեցողութեան) մէջ:

Կանտի համաձայն, մարդոց մօտ հրամայականները հիմնուած են գործնական անհրաժեշտութիւններու վրայ, որոնցմէ կը յառաջանան մարդկային **պարտաւորութիւնները**: Կանտ կը զանազանէ երկու տեսակ գործնական անհրաժեշտութիւններ՝ *պայմանականը* եւ *անպայմանականը*, որոնցմէ կը յառաջանան երկու տեսակ **պարտաւորութիւններ**՝ *պայմանականը* եւ *անպայմանականը*: Այս զանազանութենէն կարելի է հետեւցնել, որ կան նաեւ երկու տեսակ **հրամայականներ**՝ *պայմանական* (կամ ենթադրական) եւ *անպայմանական* (կամ կատեգորիկ):

1.- Ենթադրական հրամայականներ (Hypothetical Imperatives).-

Ենթադրական կամ պայմանական հրամայականները կրնան սկսիլ՝ «պէտք է», «հարկ է» կամ «տրամաբանական է» արտայայտութեան ձեւերով եւ կը միտին՝ նպակադրումի անհրաժեշտութեան մը, խնդրոյ առարկայ անհատին առնչուած, ինչպէս գնացքի օրինակը.- գնացքիդ հասնելու համար, «հարկ է», որ հիմա ճամբայ ելլես...:

Այս ենթախումբին պատկանող հրամայականները՝ յարաբերական բնոյթ կը կրեն. այլ խօսքով, եթէ հիմա ճամբայ չելլես, գնացքիդ չես հասնիր եւ անոնք ատակ չեն ընդհանրականացման, որովհետեւ առնչուած են միայն խնդրոյ առարկայ անհատին, մեր օրինակին մէջ անոր, որ գնացքին հասնիլ կ'ուզէ:

Նաեւ **հաստատական հրամայականները** (Assertorical Imperatives), յարաբերական բնոյթ կը կրեն եւ կը նկատուին ենթադրական հրամայականներ: Անոնք եւս կրնան սկսիլ՝ «պէտք է», կամ «լաւ է» արտայայտութեան ձեւերով կամ անոնց բացասական ձեւերով (օրինակ՝ «լաւ չէ»): Անոնք իրականութիւն մը կը հաստատեն եւ ընդհանրապէս կը միտին, օրինակ, անհատի քաջառողջութեան, ինչպէս օրինակ.- «քեզի համար լաւ է, որ չծխես», այլ խօսքով, եթէ ծխես, կը վնասես քու առողջութեան: (Կանտ, իրականութիւն մը հաստատող ասոյթը կը զանազանէր՝ կարելիութենէն եւ անհրաժեշտութենէն:)

2.-Անպայմանական հրամայականներ (Categorical Imperatives).-

Անպայմանական կամ կատեգորիկ հրամայականները Կանտի համար կը ներկայանան որպէս բարոյական կանոններ կամ իր խօսքով՝ «բարոյական օրէնք»ներ (Moral law):

Այս ենթախումբին պատկանող հրամայականները յարաբերական բնույթ չեն կրեր. այլ խօսքով, անոնք չեն միտիր՝ անհատին առնչուած նպակադրումի անհրաժեշտութեան մը: Կանտի համաձայն, բարոյական կանոնները՝ բարոյական բացարձակ արժէքներ են եւ կարելի է նախկինին նման կազմել հրամայական մը, որ կրնայ սկսիլ օրինակ՝ «հարկ է» արտայայտութեամբ: **Անպայմանական հրամայականը** նաեւ կը տարբերի իր նախորդէն, իր կամքին վրայ գործող ստիպողութեամբ կամ հարկադրանքով, առանց որեւէ պայմանի:

Ազատութեան եւ անպայմանական հրամայականի յարաբերութեան առնչութեամբ Կանտի հետեւութիւնը՝ շրջանաբնոյթ (գերմ.՝ zirkulär, անգլ.՝ circular) է եւ սա ինք լաւ գիտէր: Կանտ հարկադրուած էր ազատութիւնը որպէս նախադրեալ կամ նախապայման ընդունիլ, որպէսզի կարենայ պնդել, որ անպայմանական հրամայականը բարոյականութեան առնչուած է: Ան նաեւ հարկադրուած էր նախադրել, որ անպայմանական հրամայականը նոյնինքն բարոյականութիւնը կը ներկայացնէ, որպէսզի բարոյականութիւնն հասկացութիւնը, վերջաւորութեան, ազատութիւնն գաղափարին վերագրել կարենայ:

Կանտ կը հաւատար, որ խնդիրը լուծած կամ գոնէ մեղմացուցած կ'ըլլայ, երբ մենք զմեզ հետեւեալ հարցը տալինք.՝ «Եթէ պահ մը մտածենք, որ ազատութիւնը ի յառաջագունէ (a priori) ներգործող պատճառ մըն է, արդեօք մենք ա՞յլ տեսակէտ մը կ'որդեգրէինք, քան երբ մենք մեր աչքերով տեսնէինք մեր ներգործութիւնը եւ ըստայնմ պատկերացնէինք»: Պարզ է, որ առաջին պարագային մենք կը պատկանինք մտացածին աշխարհի մը (Nominal World), մինչ երկրորդ պարագային՝ երեւութական աշխարհի մը (Phenomenal World):

Ուրեմն Կանտի համաձայն, ազատութիւնը, որպէս ինքնավարութիւն կամ ինքնօրինութիւն (Autonomy), կը կազմէ բարոյականութեան գերագոյն սկզբունքը, որուն անքակտելիօրէն առնչուած է ճշգրտօրէն ձեւակերպուած անպայմանական հրամայականը կամ բարոյական օրէնքը:

Եթէ ասիկա (ազատութեան-ինքնօրինութեան կապը անպայմանական հրամայականին կամ բարոյական օրէնքին հետ) կը նկատուի փիլիսոփայութեան պատմութեան մեծագոյն նուաճումներէն, սակայն այս ձեւով Կանտ փիլիսոփայութիւնը կը դնէր ճակատագրական եւ որոշ չափով վտանգաւոր տեսակէտի մը առջեւ, տեսակէտ մը որով Կանտ կը պնդէր, որ ան՝ «ո՛չ երկնքի մէջ եւ ո՛չ երկրի վրայ բանէ մը կախեալ է կամ բանի մը վրայ յենած է»¹⁸:

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ՔԷՀԵԱՆԵԱՆ

Գերմանիա

(Շար. 4)

¹⁸ Կանտի, յիշեալ տեսակէտը քաղուած է իր "Die Religion innerhalb der Grenzen der bloßen Vernunft" (1793, «Կրօնքը՝ լոկ բանականութեան սահմաններուն մէջ») եւ "Grundlegung zur Metaphysik der Sitten" (GMS, 1785, «Հիմունք՝ բարոյականութեան բնագանցութեան») երկերէն:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

**ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆԻ
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ***

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՒՆԸ

Բարսեղ Կանաչեանէն առ այժմ մեզի հասած են.–

- 7 Մեներգներ (Դաշնակի ընկերակցութեամբ):*
- 11 Երգ-Խմբերգներ (Հայ Գոուսան Երգարանէն):*
- 19 Մանկա-պատանեկան երգեր (Դաշնակի ընկերակցութեամբ):*
- 23 Խմբերգներ (Երկսեռ երգչախումբի համար):*
- 5 Դաշնամուրային գործեր:*
- 1 Քայլերգ Նշան Փալանճեան Ճեմարանի:*
- Ընդամէնը 66 ստեղծագործութիւն:*

Խօսելու համար Բարսեղ Կանաչեանի երաժշտական ժառանգութեան մասին, յիշեցնեմ որ Կանաչեան, որուն անունը կապուած է Կոմիտաս Վարդապետին, երաժիշտ էր ի սկզբանէ եւ ստեղծագործող-գործիքաւորող, մանաւանդ՝ փողերախումբերուն համար, նախքան Կոմիտաս Վարդապետին հանդիպելը: Տակաւին, հազիւ հինգ տարեկան, Թրակիոյ ծովեզերեայ Ռոտոսթոյ քաղաքէն Պուլկարիա գաղթելով, մայրաքաղաք Վառնայի մէջ կը հետեւի ջութակի դասերու, աշակերտելով Գրիգոր Մեծիկեանին եւ պարսկահայ ջութակահար Նաթան Բէկ Ամիրխանեանին: 1905-ին, ընտանիքով կը գաղթեն Ռումանիոյ մայրաքաղաքը՝ Պուքրէշ, ուր կը շարունակէ երաժշտական ուսումը ռումանացի ջութակահար Ժորժ Պոլյուքի մօտ: Ջութակի կողքին կը սկսի դաշնակի դասընթացներու հետեւիլ: Կ'երգէ եկեղեցիներու մէջ եւ ջութակ կը նուագէ նուագախումբերու հետ, մաս կազմելով նաեւ տեղւոյն սիմֆոնիք նուագախումբին: Քաղաքական պատճառներով դարձեալ կը վերադառնայ Պուլկարիա՝ Վառնա, ուր կը հրաւիրուի Պենլեանի օփերային թատերախումբ-

* Այս յօդուածը, փոքր ու աննշան հպումներով լոյս կ'ընծայուի, յետմահու, ինկելի յիշատակին ողբացեալ Մեղրիկ սրբազանին, որ հաւանաբար հրապարակային իր վերջին ելոյթն էր:

բի նուազախոսումբը ղեկավարելու: Օսմանեան Սահմանադրութեան հռչակումէն ետք, 1908-ին կու գայ Կ. Պոլիս եւ հոն կը կազմէ ու կը վարէ հայկական առաջին նուազախոսումբը՝ «Քնար»ը, ապա «Մասիս»ը: Կը դասաւանդէ ազգային վարժարաններէն ներս: 1910-ին ոգեւորուած Կոմիտասի առաջին համերգէն, կ'անդամակցի անոր երգչախումբին, ապա կը դառնայ մեծ երաժիշտին լաւագոյն աշակերտներէն մէկը՝ 1913-1915, մաս կազմելով Հայկ Սեմերճեան, Միհրան Թումաճեան, Վարդան Սարգիսեան, Արտաշէս Ապաճեան, Վաղարշակ Սրուանձտեան եւ Գուրգէն Գասպարեան վեցեակին:

*

* *

ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ

Բարսեղ Կանաչեանի երաժշտական ժառանգութեան վերլուծումը կատարել կը նշանակէ գիտական քննարկում կատարել անոր երաժշտութեան արժէքին մասին: Արժեւորում ո՛չ թէ գործը գնահատելու համար, այլ արժէքին քննարկումը կատարելու: Կանաչեանի երաժշտութեան ժառանգութեան վերլուծումը ինքնին աշխարհ մըն է, որովհետեւ վերլուծելու համար անոր երաժշտութիւնը անհրաժեշտ է վերլուծել նաեւ անոր դաշնաւորումը:

Այս առիթով, քանի մը մատնանշումներ պէտք է կատարել.–

1) Կանաչեան, որպէս երաժշտութեան գիտութեան հմուտ մարդ, երաժշտութեան ստեղծագործութիւնն ու դաշնաւորումը կատարած է միասնաբար, որովհետեւ անոնք երկուքն ալ զուգորդուած են, իրարու կապուած եւ երաժշտական դաշնաւորումը, ներդաշնակութիւնն ու ձայնանիշերու համաձայնութիւնը, զիրար կ'ամբողջացնեն:

2) Կանաչեան ո՛չ միայն երաժիշտ է, այլ ստեղծագործ երաժիշտ: Իր դաշնաւորումներուն բոլոր երաժշտութիւնները իրեն կը պատկանին: Բնականաբար ազդուած է հայկական դաշնաւորման կերպերէն, բայց առանց ազդեցութեան տակը ըլլալու ոեւէ հեղինակի: Երբ Կանաչեան լսես, գիտես որ Կանաչեանն է: Օրինակ՝ Կանաչեանը Կոմիտաս չէ, եւ ոչ ալ Կոմիտասը Կանաչեան: Դաշնաւորման, ներդաշնակութեան եւ ձայնանիշերու համաձայնութեան համարումը Կանաչեանի մօտ տարբեր է, Կոմիտասի մօտ՝ տարբեր եւ ուրիշներու մօտ՝ տարբեր: Իւրայատուկ է Կանաչեանը, Դպրոց է, որուն արժէքը չկրցան հասկնալ ո՛չ սովետական Հայաստանի երաժիշտները, եւ դժբախտաբար, ո՛չ ալ տակաւին անկախ Հայաստանի երաժիշտները:

3) Կանաչեան, հակառակ անոր, որ ո՛չ հայկական միջավայրի մէջ երաժշտագիտութեան հմտութեան տիրացած է, սակայն հայ երաժշտութեան (աշ-

խարհիկ թէ էկեղեցական) տիրացած է՝ մասնագէտ եւ արհեստավարժ մակարդակով:

4) Կանաչեանի երաժշտութիւնը պաշտօն մը ունի, գործ մը, պատարագ-չութիւն, ծիսակատարութիւն, հանդիսակատարութիւն եւ կախարդութիւն: Անոր համար ալ անոր դաշնաւորումները ունին.-

- Ինքնակերպ գործառնութիւն (automorphic function):
- Շարունակական գործառնութիւն (continuous function):
- Բացայայտ գործառնութիւն (explicit function):
- Ներիմաստ գործառնութիւն (implicit function):
- Համաչափ գործառնութիւն (rational function):
- Համադրական գործառնութիւն (symmetric function):

5) Կանաչեանի դաշնաւորումները գիտական են, ֆիզիքական են, այլ խօսքով՝ վերացական չեն: Յուզական եւ զգացական են: Կեանքի համար են, որովհետեւ կապ ունին կեանքին հետ:

6) Կանաչեանի երաժշտութիւնը կ'արժեւորուի, որովհետեւ հոն՝ երաժշտութեան շարժումներուն մէջ ընկերային հարցեր կ'արծարծուին: Ընդունելութեան, կոչունքի, մարդկային կեանքի ուրախ եւ տխուր յարաբերութեան պատկերներ կը բնութագրուին: Միութարութեան, բուժական, դիւթական սրսկումներ կը փոխանցուին: Գործառնութեան եւ ինքնահաստատման կամք կը լսես: Եւ այս բոլորը կը կատարուին երաժշտութեան եւ դաշնաւորման համատեղ շարժումներով, որոնց զուգահեռ բառերը այնքան ալ անհրաժեշտ չեն: Արդարեւ, առանց բառերուն ալ երաժշտութիւնը իր դաշնաւորումով ինքզինք կը բացայայտէ:

7) Կանաչեանի երաժշտութեան եւ այդ երաժշտութեան դաշնաւորումին մէջ.-

ա.- Բացայայտ է պատմական ենթահողը: Կանաչեանի բոլոր երգերն ալ պատմական ենթահող ունին: Բանի մը կը պատկանին, աչքերուն, երազներուն, ուռիին, հայրենիքին, սիրածին, մեղուին, ծիծեռնակին, եւ այլն: Երաժշտութեան հիւսուածքը պատմական շարահիւսութիւն մըն է, առաջին իսկ պահուն արդէն կը ճանչնաս երգին բնոյթը եւ առանց գիտնալու կը սկսիս անոր հետ երգել:

բ.- Ենթահողը կը զարգանայ: Երաժշտութեան սկսած պահուն գիտես արդէն թէ ինչպէս պիտի վերջանայ: Ինք չէ որ երաժշտութեան ընթացքը ուզած ձեւով կ'առաջնորդէ: Ինք գիտէ՝ ուզածը, անոր համար ալ կը սկսի այնպէս մը որ աւարտը իր ուզածին պէս ըլլայ:

գ.- Զարգացումը կ'իտէալանայ ներքին մղումով մը, որ երազային է, միշտ վերը՝ գեղեցիկին, կատարեալին եւ վսեմին ձգտումով: Դաշնաւորման իր արհեստագիտութիւնն ալ ցոյց կու տայ, որ սովորական ըլլալով հանդերձ

մղում մը ունի, որ քեզ կը տանի վերերը: Օրինակ՝ «Ծնկըլը Մնկըլը», թռչնիկին դէպի վեր սլացման ուժականութիւնն է եւ այդ ուժականութիւնը ո՛չ թէ բառերուն մէջ կը կայանայ, այլ Կանաչեանի երաժշտութեան եւ երաժշտութեան գեղարուեստ պարգեւող դաշնաւորումին մէջ: Նոյն է պարագան «Վարդերի Հետ»ին, «Ծիծեռնակ»ին, «Հայրենի Կարօտ»ին, եւ այլն:

դ.- Կանաչեանի ներքին մղումը, որ երազային է, իր մէջ ունի գեղագիտութեան արուեստ: Անկախ անկէ, որ դաշնաւորման սքանչելի զգացողութիւն մը ունի, ունի նաեւ ճաշակ, որ գեղուն է յորդառատ, ո՛չ իրարու նման, տարբեր, բայց միաժամանակ Կանաչեան բուրոզ:

ե.- Կանաչեանի գեղագիտութիւնը ինքնուրոյն է եւ յղացական շարունակականութիւն մը ունի իր մէջ: Ոեւէ ձայն կը սկսիս երգել եւ եթէ քիչիկ մը ձայնանիչերու ծանօթութիւն ունիս՝ կը շարունակես երգել. բայց, դուն չէ որ անպայման կ'երգես ձայնանիչերը ընթերցելով, այլ՝ զգացումդ եւ ականջդ քեզ կը մղեն, որ երգես առանց երաժշտութեան ծանօթ ըլլալու անգամ: Փորձելու համար, երկու տարուան ոեւէ նուագարանի հետեւող աշակերտին, սկսէք երգել օրինակ՝ «Օրօր»ը՝ «Քուն եղիր բալաս». առջին հինգ ձայնանիչերը երգելէ ետք, ինք անպայման յաջորդ ձայնանիչը պիտի երգէ առանց ծանօթ ըլլալու իսկ: Սկսէք «Ծիծեռնակը բոյն կը շինէր», առջին ութը ձայնանիչերէն ետք, ինք պիտի շարունակէ եւ այսպէս Կանաչեանը, որպէս երաժիշտ, մեծ է իր յղացական շարունակականութեան համար:

զ.- Ինչո՞ւ այսքան դիւրին է Կանաչեանը, հակառակ մեծ ըլլալուն, որովհետեւ առարկայականի եւ ենթակայականի փոխանակ բախումի, ներցումման եւ միութեան դաշնաւորման արհեստն է որ կ'օգտագործէ: Երբեմն, կը մտածեմ, արդեօ՞ք (քաղաքավարութեան համար կ'ըսեմ «երբեմն» եւ «արդեօ՞ք», բայց կասկած չունիմ) Կանաչեան դաշնաւորած ատեն երաժշտութիւնը, որ նախապէս պէտք էր գրած ըլլար, փոխած է: Առարկայականը երաժշտութիւնն է, ենթակայականը դաշնաւորումն է: Կանաչեան մէկը միւսին զոհ չէ դարձուցած. պէտք եղած ատեն մշակած է ի'ր իսկ հեղինակած երաժշտութիւնը, որպէսզի դաշնաւորումին հետ ըլլայ ներդաշնակ: Կ'արժէ նայիլ «Շուշօ»ին, «Նանօր»ին, «Դալիլօ»ին, եւ այլն:

Այս հանգրուանին պիտի թուարկեմ երաժշտական քննարկումի միայն քանի մը ոլորտներ

Ա.- ԿԱՆԱԶԵԱՆԻ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՅՍ ՎԻՃԱԿԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ ԿԱՊՈՒԱԾ Է ԱՆՁԻՆ:

Երաժշտական հմտութիւնը միայն գիտութեան հետ կապուած չէ, այլ՝ հոգիին եւ հոգեբանական վիճակին, այլապէս՝ կեղծ է: Կանաչեանի հոգեբանական վիճակին կապուած է իր երաժշտութեան մշակման կերպին հմտութիւնը:

Կանաչեանի երաժշտութեան վերլուծման մէջ կան ինը կարեւոր հոգեբանական վիճակներ.–

01. Գիտակցութեան արթնացման հոգեբանական վիճակ.
02. Խոր քունի հոգեբանական վիճակ.
03. Երազային հոգեվիճակ.
04. Երազագուրկ հոգեվիճակ (արհեստագիտական).
05. Վերացական գիտակից հոգեվիճակ.
06. Տիեզերական գիտակցութեան վիճակ.
07. Փառաւորեալ տիեզերական գիտակցութեան վիճակ.
08. Տիեզերական գիտակցութեան միասնական վիճակ.
09. Աստուծոյ գիտակցութեան հոգեվիճակ:

Զգո՛յ՛: Երաժշտութեան մշակումը, ամէն բանէ առաջ, արուեստի հմտութիւն (technique) եւ մեթոտ (method) է՝ հնար, ոճ, կերպ կամ դրութիւն: Զայնանիշերը քով-քովի դնելով կրնաս եղանակ մը դաշնաւորել, բայց չես կրնար երաժիշտ ըլլալ, այնպէս ինչպէս ոեւէ գրող չի կրնար գրագէտ ըլլալ, գիրին, շարահիւտութեան կամ քերականութեան մասնագիտութեամբ: Ո՛չ մէկ երաժշտութիւն դերագնահատելի է, բոլորն ալ կրնան եւ արժէք ունին, բայց կրնայ մէկուն կամ միւսին ճաշակին չյարմարիլ, իսկ երաժշտագէտին հոգեբանական վիճակը եւ վիճակին ներքեւ կատարուած ստեղծագործութիւնը, վեր է այս բոլորէն, անոր համար ալ հազարաւոր երաժիշտներու մէջէն նշանաւոր են.–

- Mozart – Eine kleine Nachtmusik
- Beethoven – Für Elise
- Puccini – 'O mio babbino caro'
- J.S. Bach – Toccata and Fugue in D minor
- Beethoven – Symphony No.5 in C minor
- Vivaldi – The Four Seasons
- Bizet – „Carmen“
- Johann Strauss II – The Blue Danube
- Ravel – Boléro
- Mozart – Overture from The Marriage of Figaro
- Puccini – 'Nessun Dorma'
- Rossini – Overture from 'William Tell'

Իսկ Կանաչեանի պարագային, որովհետեւ ապրած ժամանակաշրջանը եղաւ քաղաքականօրէն դժուար, տնտեսականօրէն նեղ եւ անձուկ, այս բոլորին վրայ Կոմիտաս Վարդապետի հետ հանդիպումն ու գործակցութիւնը ե՛լ որպէս աշակերտ, ե՛լ որպէս գործակից, ապա՝ տեղէ տեղ փոխադրութիւնը եւ ի վերջոյ «Գոսսան»ի իր իսկ «սեփականութիւն»ը նկատելը, իր մէջ հոգեկան յոյզերու եւ զգացումներու, բայց մանաւանդ ներշնչման աղբիւր եղան:

Կանաչեանի ապրումները, յոյզերն ու զգացումները, պատճառ եղած են, որ անոր ստեղծագործութիւններուն մեծ մասը դասական երաժշտութեան օրէնքներէն անդին, մշակման արուեստի հմտութենէն անդին, գեղարուեստական արուեստէն անդին ըլլան, որովհետեւ ընդհանրապէս հոն դասական երաժշտութեան օրէնքներ չկան, այլ կան զգացումի եւ լսողութեան հետ առնչուած արհեստագիտական հնարամտութիւններ, որոնք դասական երաժշտութեան հեղինակներուն համար կրնան տարօրինակ թուիլ, բայց երբ լսեն կամ նուագեն, դասական երաժշտութեան ձգած ազդեցութենէն տարբեր ազդեցութիւն մը կ'ունենան, որ զգացումի տարօրինակ վիճակ մը կ'առթէ, ջիղերը կը գրգռէ եւ հոգեկան ցնցում կը յառաջացնէ երաժշտութեան մասնագէտին վրայ: Ու չի կրնար մասնագէտ երաժշտագէտը բաղդատել Կանաչեանը այս կամ այն երաժիշտին հետ, որովհետեւ մեծութիւնները չեն բաղդատուիր:

Եթէ Mozart-ը՝ Mozart է, Beethoven-ը՝ Beethoven է, Puccini-ն՝ Puccini է, Bach-ը՝ Bach է, Vivaldi-ն՝ Vivaldi է, Bizet-ը, Strauss-ը, Ravel-ը, երաժշտութեան աշխարհին մէջ գերազանց մեծութիւններ են, եթէ Կոմիտաս Վարդապետը, Արամ Խաչատուրեանը, Թաթուլ Ալթունեանը, Ետուարդ Միրզոյեանը, Առնօ Պապաճանեանը, Ռոմանոս Մելիքեանը, Ալեքսանդր Յարութիւնեանն ու նոյնանուն Սպենդիարեանը, Տիգրան Չուխաճեանը, Էտգար Յովհաննէսեանը, Եւայլն, միջազգային երաժշտութեան երկնակամարին վրայ աստղեր են, բոլոր օտար երաժիշտներուն հետ միասին եւ համահաւասար արժէքով, Կանաչեանը անոնց խումբին կը պատկանի, երբեմն ալ քիչ մը աւելի արժէքով:

Ինչո՞ւ, որովհետեւ Կանաչեանի գործերուն մէջ ակնյայտ է .-

1) Գերումի (enthralment) դիւթականութեան, հմայութեան կամ հրապուրանքի հոգեբանական վիճակը: Երգերու դաշնաւորման ընթացքը կ'ընդլայնուի մըն է, անդադար կը դառնայ, ներքին աչքերը կը շրջանցեն, կը կախարդէ եւ կը գերէ: Կանաչեանի հոգեբանական այս վիճակը ակնյայտ է մանկական երգերէն «Խնոցի»ին, «Ճախարակ»ին, «Խաղաղ Գիշեր»ին, «Ծիծեռնակին Բոյնը», խմբերգներէն «Հայրենի Կարօտ»ին, «Սօսին», «Խաղաղ Գիշեր»ին, մեներգներէն՝ «Ուռին», «Ծով Աչեր»ին եւ այլ երգերուն մէջ:

2) Կանաչեանի գործերուն մէջ ակնյայտ է վերացումի, վեհացումի, վերաբերեղացումի եւ վսեմացումի (sublimation) հոգեբանական վիճակը: «Քայլերգ Կամաւորներու», «Նէննիր Նայ»ը, «Ծնկըլը Մնկըլը», «Ռազմերգ»ը, «Բամ Փորոտան»ը, Եւայլն, գեղեցկագոյն նմուշներ են:

3) Կանաչեանի գործերուն մէջ ակնյայտ է կրկնութեան պարտադրանքի (repetition compulsion) հոգեբանական վիճակը: Այս վիճակը բնական երեւոյթ է երաժշտութեան անդաստանէն ներս: Բայց ոմանք ձախողած են: Երաժշտութեան մէջ հոգեբանական այս վիճակը արեւելեան երաժշտութեան յա-

տուկ ոճ մըն է, որ կը կլորցնէ երաժշտութիւնը եւ կը հասնի հոն ուրկէ սկը- սած էր: Ինք իր վրայ դարձող անիւրի մը պարտադրանքն է: Մեծութիւններէն շատեր, մանաւանդ արեւմտեան մեծութիւններէն շատ շատերը ձախողած են: Կանաչեանի պարագային հետաքրքրական է, որ կրկնութեան պարտադ- րանքի հոգեբանական վիճակը շատ սահուն է: «Նանօր»ը, «Դալիլօ»ն, «Վարդերի Հետ»ը, «Շուշօ»ն, եւայլն, գեղեցկագոյն նմուշներ են:

4) Խմբային զգացումի հոգեբանական վիճակ (group feelings): Երաժիշտը ինքզինք առանձին չզգար: Իր հրահանգին սպասող մեծ թիւով մարդիկ կան, երբեմն ուրախ կամ տխուր պահերու հաւաքուած ընկերներ, երբեմն՝ ամբոխներ, երբեմն՝ բանակներ, որոնք բոլորն ալ սպասումի մէջ են: Այս բոլորը միայն խօսքի արտայայտութիւն չեն, այլ նաեւ երաժշտական ձայնանիշերու համատեղ հնչողութիւն, որոնք հրահանգ են, ներքին զգացումներու հզօր արձագանգ: Այսպէս են «Նէննիւր Նայ»ը, «Հօպ Կիւլիւզար»ը, «Մարալօ»ն, «Մեղու»ն, եւայլն:

5) Ջղային անհանդարտութեան (dysphoria) վիճակը, որ ստեղծագործու- թեան գերազանց եւ ամենադժուար հանգրուանն է: Ջգո՛յշ, երաժշտական ջղայնութիւն չի նշանակեր պոռթկում, շատ յաճախ հանդարտ եւ խաղաղ երաժշտութիւնն անգամ իր խորքին մէջ (օրինակ, բամբ կամ bass ձայնին մէջ) ջղային է, պիտի պայթի, բայց հոն է, խաղաղ է: Ջղային է, բայց ներքին տազնապ կ'անցնէ, որուն մակարդակին հասնելու կարողութիւն ամէն երա- ժիշտ չունի: Իսկ Կանաչեանին մէջ շատ է: «Նանօր»ին, «Օրօր»ին, «Ալվարդին Երազը», «Ծիծեռնակ»ին մէջ եւ տակաւին շատ գործեր, եթէ ներքին լաւան կամ երաժշտական լեզուով dysphoria-ն չըլլայ, չի կրնար թուչիլ՝ բարձ- րանալ: Ներքին, ուժեղ մղում մը պէտք է, որ վեր բարձրացնէ երաժշտութիւ- նը, կատարելութեան հասցնէ՝ երանութեան եւ խաղաղութեան:

Բ.– ԿԱՆԱԶԵԱՆԻ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ .–

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՅՍ ՎԻՃԱԿԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ ԿԱՊՈՒԱԾ Է ՈՒՆ- ԿԸՆԴԻՐԻՆ:

1) Կանաչեանի երաժշտութիւնը անեզրական, այսինքն անսահման, անծայրածիր համարողութիւն՝ թուաբանական գիտութիւն է (integral cal- culus): Երբ լսես, չես կարծեր որ պիտի վերջանայ, բայց կը վերջանայ: Ջգո- ղութիւն մը ունի, քաշողականութիւն մը, ունկնդիրը՝ չուզեր որ վերջանայ, բայց՝ կը վերջանայ:

2) Տարբերական, այսինքն չնմանող, իւրայատուկ, ինքնուրոյն համարո- ղութիւն է (differential calculus): Իւրաքանչիւր երգ ըսելիք մը ունի, անկախ

իր բառերու թելադրականութենէն, որպէս երաժշտութիւն ազդեցութիւն ունի, որովհետեւ, երբ լսես, բառերը հասկնալու կարիք չես զգար, երաժշտութիւնը կը գերէ քեզ, իսկ դաշնաւորումը կրակի պէս կը ջերմացնէ հոլութիւնդ, կը հրդեհուիս, բայց չես այրիր, չես փճանար, այլ՝ կ'ոգեւորուիս:

3) Տրամաբանական, այսինքն խելքով դատուած վերլուծում է (logical analysis): Կանաչեան իր գրածը նուազելով եւ սրբագրելով, բիւրեղացուցած է դաշնաւորումը տուեալ երգին, անոր համար ալ ունկնդիրը հանգիստ կը զգայ ինքզինք, երբ Կանաչեան լսէ: Ունկնդիրը չի տագնապիր Կանաչեանով, այլ կը խաղաղի, կը յուզուի, բայց չի տխրիր Կանաչեանի երգերով:

Եւ ինչո՞ւ այսպէս է, որովհետեւ Կանաչեանի երաժշտութեան մէջ .--

ա) շարադրութիւնը կամ երգագրութիւնը (composition) առաջնահերթութիւն է.

բ) երկրորդ հանգրուանը՝ երաժշտութեան մշակումն է (composition).

գ) երրորդը՝ ձայնային ձեւաւորումն է (sound design and production), այսինքն՝ ուրկէ սկսիլ եւ ուր հասնիլ.

դ) չորրորդը՝ դաշնաւորումը (arrangement).

ե) ապա կու գայ պահը լծորդումին, միախառնումին, բաղադրումին (mix).

զ) եւ հեղինակել (mastering).

Անոր համար ալ Կանաչեանի երաժշտութիւնը ունկնդիրին համար՝ արհեստական եւ կեղծ չէ, միջավայրն ու շրջապատը հայկական է, ձայնանիշերը դաշնաւորման մէջ գիտակից կերպով զետեղուած են եւ ո՛չ թէ համաձայն երաժշտութեան ընթացքին, շարժումին, թաւալումին եւ հանգումին:

Գ.- ԿԱՆԱԶԵԱՆԻ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

Կանաչեանի երաժշտութիւնն ու այդ երաժշտութեան դաշնաւորումը, եթէ ուզենք սահմանել, կը տեսնենք որ անոնք անհրաժեշտ պայմանները կ'ամբողջացնեն Կանաչեանը վաւերական դարձնելու (տակաւին չեմ ուզեր իր խումբավարի դիրքին անդրադառնալ, որովհետեւ այսօրուան նիւթս չէ, բայց կապ ունի, որպէս երրեակ յատկութիւն՝ Կանաչեանին համար):

Եւ ի՞նչ են այդ պայմանները .--

1) Երաժշտութեան եւ միտքին միջեւ կապ.

2) Երաժշտութեան եւ լեզուին միջեւ կապ.

3) Երաժշտութեան նիւթը (թէ ինչի՞ մասին կը խօսի).

4) Երաժշտութեան եւ յոյզի կապ.

5) Երաժշտութեան եւ իմաստի կապ:

Եթէ քննենք Կանաչեանի երաժշտութեան մէջ միտքը, լեզուն, նիւթը, յոյզն ու իմաստը, համահասար զուգորդում մըն են: Հինգ ձիեր, որոնք

ետեւ ետեւի չեն առաջնորդուիր, այլ միաժամանակ, բոլորն ալ ճերմակ են, մէկը կամ միւսը շարքէն դուրս չելլեր: Եւ այս պատճառով ալ ոգեւորութիւն, կենդանութիւն եւ աշխուժութիւն կը ստեղծեն: Կանաչեան լսելով՝ Ֆիզիքական եւ մարմնական միջավայրի ազդեցութիւն կը կրես: Հաշուուած արձագանգ մը կը լսես, որ իր մէջ կը խտացնէ գանազան ազդակներ, շարժառիթներ եւ դրդապատճառներ:

Հետեւաբար՝

ա) Պէտք է շեշտել, որ Կանաչեանի մօտ բացարձակ երաժշտութիւնը, ծրագրուած երաժշտութեան դէմ է: Կանաչեան չի ծրագրեր, այլ կը ստեղծագործէ: Ստեղծագործութեան ատեն գործը կը բիւրեղանայ, որովհետեւ պէտք է լսէ, ապա լսածը հաստատէ: Երաժշտութիւնը միտքին մէջ դաշնաւորուած չէ: Դաշնամուրէն կը ստանայ իր ներշնչումը:

բ) Կանաչեանի համար երաժշտութեան իմաստն ու նպատակը կը կերտուին դաշնաւորման պահուն: 1997-ին երաժշտութեան իմաստասէր Steven Pinker-ը իր «How the Mind Works» գրքին մէջ, երաժշտութիւնը կը նմանցնէ "auditory cheesecake" ի (լսողական պանրաբլիթի): Ձայն պատրաստելու համար recipe-ին պէտք է հետեւիլ: Երաժշտութեան համար ալ, եթէ պատրաստութեան եղանակին ծանօթ չես, կրնաս երգ մը դաշնաւորել, բայց պիտի ակնկալես նաեւ, որ այդ երգը կրնայ բնաւ ալ երաժշտականութիւն եւ մանաւանդ երաժշտական տրամաբանութիւն չունենալ: Մարդիկ կրնան քեզ ծափահարել, բայց քու ողջութեանդ միայն: Կանաչեան, տակաւին եւ միշտ, ծափահարելի է, որովհետեւ "auditory cheesecake" ի պատրաստութեան հմտութիւնը ունի:

գ) Երաժշտութեան գեղագիտութիւնը Կանաչեանի մասնագիտութիւնն է: Կարպիս Ափրիկեանը, երբ Կանաչեանի «Նանօր»-ը գործիքաւորեց, գիտէր որ անոր հնչողութիւնը պիտի ըլլայ գերազանց: Եւ եղա՛ւ, աւելի՛ քան առանց նուագակցութեան (a capella) կատարուած երգեցողութիւնը, որ ինքնին անգամ հրապուրիչ էր: Կանաչեանը գեղագիտութեան վարպետ է, եթէ միայն «Օրօր»-ը գրած ըլլար, կը բաւէր որ այս մարդը դառնար գեղագիր երաժիշտ:

Դ.– ԿԱՆԱԶԵԱՆԻ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԱՐԺԷՔԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Կանաչեանի երաժշտութիւնն ունի .–

- 1) Անուանական արժէք face value.
- 2) Իրական արժէք real value.
- 3) Բացարձակ արժէք absolute value.
- 4) Արտաքին արժէք extrinsic value.

Արժէք է, որովհետեւ ունի.-

ա) Տարբեր եղանակներով մասնայատուկ ոճ.

բ) Կազմուածք.

գ) Համակարգ.

դ) Ներքին եւ արտաքին մղում.

ե) Զգացողական եւ ենթագիտակցական.

Երբեմն բացայայտ է զգացումը, բայց երբեմն քողարկուած եւ մոլթ. անոր երաժշտական ձայնանիշերը անտառի մը կը նմանին, իսկ հնչողութիւնը անտառի թաւուտին մէջէն եկող ձայնի:

Կանաչեանի երաժշտութիւնն ու դաշնաւորման հմտութիւնը.-

1) Կը զարգացնեն բանականութիւնը, որովհետեւ անոնց շարահիւսուածութիւնը տեղեկատուական է (խօսքս բառերուն մասին չէ, այլ՝ երաժշտութեան):

2) Բարձրամակարդակ համադրութիւն է եւ մանուկ-պատանիներուն ու բոլոր հասակի երգողներուն համար: Կանաչեանի երգերը կրնան երգել բոլոր տարիքներն ալ:

3) Երգողները կ' ունենան զգացումի զարգացում, կարեկցութեան յոյզ եւ անհանգստութիւնը դիմակայելու ոյժ:

4) Օրինաչափութիւնը աւելի քան յստակ է:

5) Երգած ատեն կրնաս յայտնաբերել բովանդակալից, նշանակալի, տեղեկատուութիւն պարունակող տարրեր:

6) Կանաչեան մէջը կը կերտէ երեւակայութիւն եւ մտաւոր հետաքրքրասիրութիւն:

7) Կանաչեանի երաժշտութիւնը եւ դաշնաւորումը հանգստացնող են, յատկապէս օգտակար՝ երեխաներու հանգստութեան համար:

8) Կանաչեանի երաժշտութիւնը կը զարգացնէ ստեղծագործական մտածողութիւնը:

9) Կանաչեանի երաժշտական արհեստագիտութիւնը ինքնավստահութիւն կ' արթնէ եւ լսողին, եւ մանաւա՛նդ՝ երգողին վրայ:

*

* *

Բարսեղ Կանաչեանի Երկերու երկու հատորներուն զեղարուեստական շարուածքին մասին ըսելիքներս փոխանցած եմ, բայց քանի մը կարեւոր նշումներ կ' ուզեմ կատարել.-

Ա.- Այս հատորներէն կը պակսին Կանաչեանի բոլոր արաբերէն դաշնաւորեալ երգերը: Հատորներու ներածականին մէջ կ' ըսուի թէ այսինչ անձը (անունը կարեւոր չէ), որ կապ ունէր այս երգերու կատարման մէջ եւ ըստ

երեւոյթին նաեւ իր քով կը գտնուէին նօթաները, չէ վերադարձուցած զանոնք: Իսկ «ըստ իր բարի սովորութեան, Կանաչեան մնացեալներն ալ պատուած ու նետած՝ զամբիւղ, իր իսկ ձեռքով, որպէս ... անօգուտ ապրանք»: Ինծի համար այս երկու արդարացումներն ալ անհասկնալի եւ անընդունելի են, որովհետեւ եթէ այս երգերը «Գոլսանի» տարեկան համերգներուն Պէյրութի, Չահլէի, Պաալպաքի փառատօններուն, Դամասկոսի եւ Հալէպի մէջ «Անօրինակ խանդավառութիւն կը ստեղծէին», Կանաչեան ինչն՞ պիտի պատռէր եւ զամբիւղ նետէր: Պէտք է փնտռել: Այս առիթով ըսեմ, որ եթէ նախկին» «Գոլսանական»ներ ունին այս նօթաները, թող տրամադրեն մեզի, Վեհափառ Հայրապետի հովանաւորութեամբ եւ Շահան Սրբազանին գլխաւորութեամբ կրնանք շատ կարճ ժամանակի մէջ զանոնք խմբագրել, ամբողջացնել եւ հրատարակել, որպէս լրացուցիչ Գ. հատոր:

Դժբախտաբար արաբերէն երգերու շարքին կը պակսին նաեւ երեք կարեւոր դաշնաւորումներ.–

- ա) Իրաքի Հանրապետութեան քայլերգի դաշնաւորումը.
- բ) Սուրիոյ Հանրապետութեան քայլերգի դաշնաւորումը.
- գ) Լիբանանի Հանրապետութեան քայլերգի դաշնաւորումը.

Առաջին երկուքին մասին դժբախտաբար միայն լսած եմ: Իսկ Լիբանանեան քայլերգը երգած եւ ղեկավարած եմ: Քայլերգին երաժշտութիւնը արդէն խրոխտ է, ոգեւորիչ, իսկ դաշնաւորումը ո՛չ մէկ ձեւով կը զիջի այլ քայլերգներու: 1941-ին, նախապէս Լիբանանի Ֆրանսական commissaire-ին կողմէ հիմնուած «արեւելեան բանակներու փողերախումբը» "The Band of the Armies of the Levant", կը ճանչցուի որպէս Լիբանանեան փողերախումբ, կոչուելով "The Band of the post", որուն կեդրոնատեղին صنایع (Sanayeh) էր: Լիբանանի Քայլերգի (բանաստեղծութեան հեղինակ՝ Ռաշիտ Նախլան (Rashid Nakhla), երաժշտութեան հեղինակ՝ Ուատիհ Սապրան (Wadih Sabra) 12 Յուլիս 1927-ին, երբ քայլերգին երաժշտութիւնը կը հեղինակէ եւ առաջին անգամ կը նուագուի Լիբանանի Բանակի օրուան առիթով՝ 1 Օգոստոս 1927-ին, միաձայն կը նուագուի: Կը շարունակուի նուագուիլ միաձայն երաժշտութեամբ մինչեւ 1935, երբ ձեւարանի մէջ, Լեւոն Շանթի մէկ պարզ առաջարկով Քայլերգը կը դաշնաւորուի եւ 1944 Նոյեմբեր 22-ին կ'երգուի առաջին անգամ ըլլալով «Գոլսան» երգչախումբին կողմէ: Եւ այսօր, Լիբանանեան Քայլերգի փողերախումբային տարբերակը, գրեթէ ամբողջութեամբ, առնուած է Կանաչեանի դաշնաւորումէն, բացի նախամուտէն, որուն դաշնաւորումը յայտնի է որ կցուած է Կանաչեանի քայլերգին:

Բ.– Դաշնամուրային ստեղծագործութիւններուն մէջէն դժբախտաբար կը պակսի նաեւ «Դալիլ»-ի չորս ձեռքերով (quatre mains) ստեղծագործութիւնը, որ այստեղ երբեմնի «Կիւլպէնկեան» սրահին մէջ նուագած եմ, հանգուցեալ եւ գերազանցօրէն երաժշտագէտ Սեդրակ Սեդրակեանին հետ: Այդ օրերուն հանգուցեալ Չարեհ Սրբազանը (Չարեհ Արք. Ազնաւորեանը) կ'ու-

զէր առանձին հրատարակել: Իսկ այսօր, դժբախտաբար, Սրբազան Հօր երաժրչտական արխիվներուն մէջ անգամ չկայ:

Գ.– Այս գեղեցիկ հատորներուն մէջ կը պակսի նաեւ Կանաչեանի «ՊԱՏԱՐԱԳ»ը (Յիսուսի Ծնունդէն մինչեւ Յարութիւն): Առաջին անգամ երգուած է Պէյրութի Ամերիկեան համալսարանի Assembly Hall-ի «Chapel»ին մէջ, «Գուսան»ին կողմէ, 1943-ին, նոյնինքն Կանաչեանի ղեկավարութեամբ, երգեհոնի ընկերակցութեամբ, Ֆրանսացի երգեհոնահար՝ Ռուպիայի:

Դ.– Այս հատորներու կողքին կը բացակայի նաեւ Կանաչեանի «Աբեղա»ն. Օպերա երեք գործողութեամբ: Գործիքաւորումը կատարուած է արդէն Վահէ Հայրապետեանի կողմէ: Երաժշտութեան բառերը առնուած են Լեւոն Շանթի «Հին Աստուածներ» թատերական գործէն: Կը յուսանք, որ մօտիկ ապագային լոյս կը տեսնեն երկու այս գործերը՝ ամբողջականօրէն:

*

* *

Ի վերջոյ կեցցեն այս հատորները պատրաստողները՝ Պետրոս Յովսէփ Ալահայտոյեանն ու Դոկա. Ծովիկ Մկրեան-Մարգարեանը, որոնց աշխատանքին արդիւնքն է այս հատորը:

Շնորհակալութիւն այս աշխատանքի մղիչ ուժը հանդիսացող Սիրելի Շահան Սրբազանին:

Եւ Կանաչեանի սիրահար բոլոր երաժշտասէրներուն կողմէ երախտագիտութիւն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, որ մի՛շտ քաջալերողն է հայ մշակոյթի բոլոր երախտաւորեալները, ի Տէր ննջած կամ կենդանի: Շնորհակալութիւն Վեհափառ այս հատորներու լոյս ընծայման համար:

ՄԵՂՐԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐԻՔԵԱՆ †

«Թռչնոց Բոյն»

Ճիպէյլ

19 Դեկտեմբեր 2019

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻՐ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆԵՑ
ՂՊՏԻ ԵԿԵՂԵՑՈՅ ՊԵՏ ԹԱՌԱՏՐՈՍ Բ. ՊԱՏՐԻԱՐԷԻՆ**

Երեքշաբթի, 16 Օգոստոսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ցաւակցագիր մը յղեց ղպտի ուղղափառ եկեղեցւոյ պետ Ն.Ս. Թառուատրոս Բ. Պատրիարքին, 14 Օգոստոսին, Եգիպտոսի Կիզա նահանգին Ապու Սէյֆէյն եկեղեցւոյ մէջ, բռնկած հրդեհին պատճառով զոհ գացած հաւատացեալներուն մահուան տխուր առիթով:

Իր ցաւակցագիրին մէջ, Վեհափառ Հայրապետը Կ'ըսեր. «Յուզմունքով կը հետեւինք աղետի զարգացումներուն եւ այս տխուր պայմաններուն մէջ կը զօրակցինք Ձերոյ Սրբութեան: Անձնապէս եւ յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կը յայտնենք մեր եղբայրական խորին ցաւակցութիւնն ու զօրակցութիւնը»:

Իր նամակի աւարտին, Սրբազնագոյն Հայրապետը իր աղօթքը կը բարձրացնէր առ Աստուած, որ «Բարձրեալն Աստուած ողորմի զոհերու հոգիներուն եւ իր Արքայութեան մէջ ընդունի զանոնք, իսկ անոնց ընտանեկան պարագաներուն պարգեւէ համբերութիւն ու Ս. Հոգւոյ մխիթարութիւն: Աստուած օրհնէ Եգիպտոսի Արաբական Հանրապետութիւնը, անոր պետութիւնն ու ժողովուրդը եւ պահէ ու պահպանէ ղպտի ուղղափառ քոյր եկեղեցին ամէն տեսակ չարէ ու չարիքէ»:



25-ԱՄԵԱԿ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ

Շաբաթ, 2 Յուլիսի երեկոյեան ժամը 07:30-ին, Կազմակերպութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանին եւ ներկայութեան Լիբանանի եւ Սփիւռքի տարածքին գտնուող թեմակալ առաջնորդներու, նախկին եւ ներկայ նախարարներու, պետական երեսփոխաններու, Ազգային Կեդրոնական Վարչութեան եւ Լիբանանի Թեմի Ազգային Վարչութեան, միութիւններու եւ պատկան մարմիններու ներկայացուցիչներու, քահանայ հայրերու եւ հրաւիրեալներու, Քասլիքի Ս. Հոգի համալսարանի հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնազոյն Վեհափառ Կաթողիկոսին գահակալութեան 25-ամեակին (2020-ին համավարակին պատճառով կարելի չէր եղած նշել Վեհափառ Հայրապետի գահակալութեան 25-ամեակը) նուիրուած ձեռնարկը:



Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեան իր խօսքին մէջ նկատել տուաւ, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ. Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, անցնող քառորդ դարուն, մեր ժողովուրդին կեանքը լեցուց մեծ իրագործումներու տենդով եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետական Ս. Աթոռին շնորհեց փառքի տարիներ՝ վերյիշեցնելով ներկաներուն այն օրերը, երբ մեր ժողովուրդը կրցաւ յայտնաբերել այն հոգեւոր առաջնորդը, որ մեր միջավայրի դժուարին պայմաններուն մէջ ո՛չ միայն կրցաւ երաշխաւորել Ս. Աթոռին երթը, այլ նաեւ կրցաւ զայն նոր փորձառութեամբ ճոխացնել եւ աւելի հաստատ, աւելի փառաւոր ու աւելի հեղինակաւոր պայմաններու մէջ փոխանցել յաջորդող սերունդներուն:

Առաջնորդ սրբազանը յայտնեց, որ ժողովուրդը գիտցաւ, թէ Արամ Ա. Կաթողիկոսով Անթիլիասի ամպամած երկնակամարին վրայ նոր արշալոյս մը պիտի բացուի, որովհետեւ Հայրապետական Ս. Աթոռը եւ եկեղեցւոյ շինութեան գործը ապահովաբար կարելի է վստահիլ այն հոգեւոր առաջնորդին: «Հայ Եկեղեցւոյ կանչով առաջնորդուած, Արամ Ա. Կաթողիկոս, չվարանեցաւ ստանձնելու Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետական Ս. Աթոռը ոտքի պահելու ու մեր ժողովուրդը հովուելու սրբազան պարտականութիւնը: Ան գիտէր, որ անոնք, որոնք զինք այդ ծանրագոյն պարտականութեան կը կանչէին, այդ կը կատարէին յանուն Աստուծոյ եւ յանուն մեր ժողովուրդին: Անկասկած, Վեհափառ Հայրապետը նաեւ լաւ գիտէր, որ ծառայութեամբ միայն կարելի է քալել Հայ Եկեղեցւոյ ճամբաներէն: Ուստի, Հայրապետական սուրբ օծում ստանալով, ան իր տաղանդին լաւագոյնը ընծայեց մեր եկեղեցւոյ սպասաւորութեան գործին՝ իր ճակտին վրայ ամէն տեղ շքեղօրէն փայլեցնելով Հայ Եկեղեցւոյ Ս. Միւռնոնին ճառագայթը», հաստատեց Առաջնորդ Սրբազանը:

Շարունակելով իր խօսքը, սրբազանը դիտել տուաւ, որ Վեհափառ Հայրապետը ո՛չ միայն պահեց եւ պաշտպանեց իրեն յանձնուած եկեղեցւոյ քանքարը, այլեւ ճոխացուց ու երիտասարդացուց մեր միաբանութեան շարքերը, նոր ժամանակներու լոյսով հարստացուց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գործունէութիւնը, նոր որակ ու նոր մղում տուաւ անոր ծառայական առաքելութեան, որպէսզի Անթիլիասը մնայ մեր ազգի բարձրագոյն ձգտումներուն կեդրոնը: «Իբրեւ լայն տեսողութեան տէր եւ մեր ազգի իտէալներուն ու երազներուն տեսարանը կենդանի պահող առաջնորդ, Վեհափառ Հայրապետը Անթիլիասը մեր արդար դատին ու մեր ազգային ուխտին յառաջապահը հռչակեց, որպէսզի մեր ժողովուրդը գիտակցօրէն տեսնէ ապագայի ձգտումներուն տանող իր ճամբան», հաստատեց սրբազանը:

Առաջնորդ սրբազանը նաեւ լուսարձակի տակ առաւ անցնող տասնամեակներու դժուարութիւններն ու տազնապաները, որոնք յայտնուեցան մեր կեանքին մէջ: «Վեհափառ Հայրապետը ո՛չ միայն չտարակուսեցաւ, այլ նաեւ իբրեւ քաջ հովուապետ, մեր ժողովուրդին կողքին մնալու յանձնառու կեցողուածքով, իր հայրական սէրն ու հոգածութիւնը տարածեց բոլորին վրայ եւ

իր գաւազները սփռելով յուսադրեց, որպէսզի մեր կեանքին մէջ վհատութեան եւ երկչոտութեան տեսարաններ չպարզուին. իբրեւ վարչական աշխատանքի ղեկավար, տարիներ շարունակ ան իր միտքի շնորհներով ու տեսութիւններով մեր միջավայրն ու միջ-եկեղեցական ու միջազգային հորիզոնները լեցուց եւ գործեց մեծ վաստակաւորներու եռանդով՝ անձանձրոյթ եւ անխորտակ ճիգով դառնալով ժամանակակից հեղինակաւոր դէմքերէն», ըսաւ ան:

Եզրափակելով իր խօսքը, սրբազան հայրը ողջունեց Վեհափառ Հայրապետին 27 տարիներու բեղուն վաստակը՝ հաստատելով, որ այս տարիներուն, իբրեւ առողջ եւ կորովի Հայրապետ, նորին Ս. Օծութիւնը մնաց պատնէշի վրայ անխախտ ու անխորտակ ճիգով, որպէսզի անխարդախ ճանապարհ ցոյց տայ մեր ազգին, որուն կէսէն աւելին Սփիւռք է այսօր: Ան հաստատեց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, որ իր գոյութեան իրաւունքն ու հեղինակութիւնը կը ստանայ մեր ուխտապահ ժողովուրդի հաւատքէն ու անսահման սէրէն, ամբողջ իր տեղն ու կշիռը կը պահէ հայութեան սրտին մէջ, որովհետեւ Հայրապետական մեր Ս. Աթոռին հաւատքի ամուր եւ կենդանի պահապանները հանդիսացած են Վեհափառ Հայրապետին օրինակով այնպիսի նուիրեալներ, որոնք մեր ժողովուրդին կեանքը լեցուցած են Աստուծոյ պաշտամունքին լոյսովն ու մեր ազգի մշտնջենաւորութեան հաւատքովը:

Ապա, բեմ բարձրացան Կաթողիկոսարանի «Շնորհալի», «Նարեկացի» եւ «Արմաշ» երգչախումբերը, որոնք, ղեկավարութեամբ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի եւ դաշնամուրի ընկերակցութեամբ Յասմիկ Գասպարեանի («Արմաշ»), Համբիկ Մարտիրոսեանի («Շնորհալի») եւ Գէորգ Սոլաքեանի («Նարեկացի»), անջատաբար ու միասնաբար մեկնաբանեցին «Խաղաղ գիշեր», «Հայրենի կարօտ», «Օրօր», «Նարօ ջան», «Սեւ ամպերը», «Քայլերդ քաջն իմանի», «Հօյ նար», «Մեղու», «Կորանի» եւ «Շուշօ» երգերը՝ հայ ջինջ երգին ու երաժշտութեան հաղորդակից դարձնելով ներկաները:

Խօսք առաւ նաեւ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ՝ երեսփոխան Յակոբ Բագրատունի: Յիշեցնելով, որ 1 Յուլիս 1995-ին Արամ Ա. Վեհափառ Հայրապետը իր անդրանիկ քարոզին մէջ հաստատեց, որ «Կիլիկեան Ս. Աթոռը պիտի ծառայէ մէկ եկեղեցի, մէկ ժողովուրդ եւ մէկ հայրենիքի տեսիլով», ան նշեց, թէ անցնող 27 տարիներն ու անոնց ընթացքին տարուած գործունէութիւնը արդէն վկայութիւն է, որ ինչ որ կատարուեցաւ, կատարուեցաւ ի խնդիր Հայ Եկեղեցոյ, հայու հայրենիքին եւ հայ ժողովուրդին:

Յակոբ Բագրատունի դիտել տուաւ, որ տազնապալի ժամանակներու մէջ կ'ապրի համայն հայութիւնը, յանձնուած է Արցախը, վտանգուած է Հայաստանը, հոգիի տկարութիւնը բոյն դրած է աշխարհասփիւռ հայ մարդուն մօտ, նաեւ վիրաւոր են Կիլիկեան Ս. Աթոռի պատմական թեմերը՝ Լիբանանն ու Սուրիան եւ խուճապի, յուսալքումի, հիասթափութեան, տնտեսա-



կան տաղնապի, արժէքային համակարգի քանդումի, հայուլթենէ օտարութեան հոսքի, օտարացումի, օտարը կապկելու, եկեղեցւոյ եւ ազգային աւանդներուն հանդէպ հաւատքի նահանջի, երիտասարդութեան կղզիացումի կամ ինքնամոռութեան, հաւաքականութենէ դուրս անհատակեղրոնութեան ընդհանուր վտանգաւոր երեւոյթներ կը սաւառնին համայն հայուլթեան երկնակամարին վրայ: Այս մթազնած երկինքին տակ, երբ կը վերադառնանք Ն.Ս.Օ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին 27 տարիներու գործունէութեան եւ առաքելութեան հիմքերուն ու մանրամասնութիւններուն, կը գտնենք յոյսը, ճամբու քարտէսը, վերականգնումի եւ դարձեալ վերընձիւղուելու հորիզոնները: «27 տարիներ Մեծի Տանն Կիլիկիոյ Ամենայն Հայոց Հայրապետը Կաթողիկոսական գահին վրայ, հաւատարիմ իր ուխտին, եղաւ ծառան իր ժողովուրդին, հայրենիքին եւ եկեղեցիին: Պահեց Հայ Եկեղեցւոյ միասնականութիւնը: Քարէն անդին, եկեղեցին տարաւ դէպի ժողովուրդ եւ Հայ Եկեղեցւոյ հաւատքը սփռեց համայն հայուլթեան: Եղաւ հո՛ն, ուր կարիքը կար: Եղաւ հո՛ն, ուր եկեղեցին ամրացման, զարգացման, հիմերու ամրապնդման կարիքը ունէր: Պահեց հաւատքը, պահեց եկեղեցին, զայն ծանօթացուց միջ-եկեղեցական եւ թէ ոչ-քրիստոնեայ այլ կրօններուն», հաստատեց Յակոբ Բագրատունի: Ան շեշտեց, որ Արամ Ա. Կաթողիկոս դարձաւ ժողովուրդի՛ն կաթողիկոսը ու հասաւ ամէնուրեք, խօսքէն անդին գործով, անխտիր բոլոր հայերուն, առանց դաւանական թէ գաղափարական տարբերութեան: «Կիլիկեան Ս. Աթոռի գահակալին կատարած խոստումը՝ ծառայելու մէկ հայրենիքի, եղաւ 27 տարիներու գործունէութեան երրորդ յենակէտ-կիրակէտը: Մէկ հայրենիք՝ համայն հայուլթեան համար: Հայաստան,



Արցախ եւ Սփիւռք, եռեակ միասնութեամբ, իւրաքանչիւրը առանձին միւսին համար եւ երեքը միասին՝ հայ ազգին համար: Հայրենիքի եւ հայրենիքի գաղափարի զօրացման համար ոչ մէկ ճիգ խնայեց, անոնց գոյատեւման, կայունացման, հզօրացման ի խնդիր ո՛չ մէկ ընկրկում ընդունեց: Ամէնէն դժնդակ պայմաններուն մէջ բախեց աշխարհի որոշումի մայրաքաղաքներուն դռները, հետապնդեց, պահանջեց, պատասխանատուութեան հրաւիրեց, միշտ բարձր պահեց հայու հայրենիքին պայծառութիւնը եւ պահանջեց յարգանք ու պատասխանատուութեան ստանձնում», ըսաւ Բագրատունի եւ նշեց, որ ո՛չ միայն կրօնական, պետական, քաղաքական կամ դիւանագիտական շրջանակներու մէջ հայ ժողովուրդին պահանջատիրութիւնը եւ անոր իրաւունքներու վերատիրացումը արժարժեց Արամ Ա. Կաթողիկոսը, այլ նաեւ իրաւական մակարդակի բարձրացուց հայոց պահանջատիրութիւնը՝ դատական հարցի վերածելով Միսի պատմական Կաթողիկոսարանի կալուածները իր իրաւատիրոջ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վերադարձնելու վճռական պահանջը:

Յակոբ Բագրատունի լուսարձակի տակ առաւ այն, որ Լիբանանի մէջ ըլլալով, բախտը ունեցած է աւելի մօտէն ճանչնալու Լիբանանի նախկին առաջնորդ մեր Վեհափառը: «Իր առաջնորդութեան ժամանակահատուածը զուգադիպեցաւ լիբանանեան քաղաքացիական պատերազմի ամէնէն դաժան օրերուն: Մեզի հետ էիք, Վեհափառ՝ Հայրապետ, հայկական թաղամասերու ինքնապաշտպանութեան գործին, ումբակոծումներուն տակ միասնաբար ապրելով, վերականգնումի աշխատանքը ղեկավարելով: Մեզի հետ էք նաեւ այսօ՛ր, Լիբանանի հայութեան հետ մէկ ըլլալով, անոր ցաւը բաժնելով ու լիբանանահայուն վէրքերուն բալասանը ըլլալով: Մեր կողքին գտանք Ձեզ, երբ Պէյրութի ասաւոր պայթումին գործած հարուածի ուժգնութենէն կը

փորձելինք սխափիլ եւ հասնիլ մեր հայորդիներուն, պայթումէն անմիջապէս ետք Դուք Պուրճ Համուտ էիք՝ ձեր վիրաւոր զաւակներուն կողքին, անոնց ոյժ ու կրող ներշնչելով, յոյս տալով եւ զանոնք գօտեպնդելով», ընդգծեց ան:

Անդրադառնալով Արամ Ա. Կաթողիկոսի յատկանիշներուն, Բագրատունի ըսաւ. «Անխոնջ աշխատող, բծախնդիր ու պահանջկոտ, յարգալիր եւ յարգուած, անյազ ու մնայուն ընթերցող, անցուդարձերուն մօտէն հետեւող, բացառիկ ժողովական, արտադրող միտք, սահուն ու արգասաբեր գրիչ, խիստ, բայց ընդհանրական գործին համար ձկուն, երեւոյթներէ եւ պղպղակներէ անդին խորքայինը արժեւորող եւ խորաթափանց, երիտասարդութեան եւ վերանորոգութեան հաւատացող, արդիականութեան հետ քայլ պահող, բայց զայն հայկական արժէքներու պատշաճեցնող մեծ հոգեւորականն է Արամ Ա. Վեհափառ Հայրապետը. բայց մանաւանդ մեծ է անոր սիրտը, հայուն ցաւով կոտտացո՛ղ սիրտը»:



Աւարտին երեսփոխան Յակոբ Բագրատունի մաղթեց, որ Վեհափառ Կաթողիկոսը մնայ առողջ, ուժեղ ու խիզախ, նաեւ անոր մաղթեց արեւշատութիւն, երկար կեանք, բեղուն գործունէութիւն, անկոտրում կամքի պահպանում եւ Հայրապետէն խնդրեց, որ աղօթէ «Մեզի՝ տկարներուս համար, որպէսզի զօրանանք մեր հաւատքին, վճռականութեան եւ հոգիներուն մէջ, որպէսզի կարենանք աւելիով զօրակցիլ Զեզի»:

Գեղարուեստական բաժինով կրկին բեմ բարձրացան «Շնորհալի», «Նարեկացի» եւ «Արմաշ» երգչախումբերը այս անգամ մեկնաբանելով «Ամպեր», «Դալիս», «Բամբ որոտան», «Գիւղի առտուն», «Ծնկըլը մնկըլը», «Երգա-

նուազ», «Ռազմերգ» եւ «Նանոր» երգերը:

Հանդիսութեան աւարտին, Վեհափառ Հայրապետը գոհութիւն եւ փառք տալով Աստուծոյ, հետեւեալ Հայրապետական պատգամը փոխանցեց.-

«Գոհութիւն եւ փառք կու տամ Աստուծոյ, որ զիս արժանի նկատեց որպէս Կաթողիկոս ծառայելու Հայ Եկեղեցւոյ ու ժողովուրդին:

Իմ ջերմ շնորհակալութիւնս մեր ժողովուրդին, որ զիս հրաւիրեց Մեծի Տանն Կիլիկիոյ դարաւոր Կաթողիկոսութեան առաքելութիւնը կենսագործելու, մեր ազգի ու հայրենիքի պատմութեան վնասդրոշմ ժամանակաշրջանին:

Իմ յատուկ շնորհակալութիւնս Առաջնորդ Սրբազանին եւ Պրն. Յ. Բագրատունիին, իրենց արտայայտած ազնիւ մտածումներուն համար, ինչպէս նաեւ իմ բարձր գնահատանքս հայր սուրբին ղեկավարութեամբ Կաթողիկոսարանի «Շնորհալի», «Արմաշ» եւ «Նարեկացի» երգչախումբերու գեղեցիկ ելոյթներուն համար:

Արդարեւ, 27 տարիներ առաջ, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տանարի խորանին վրայ ծնկաչոք, Սաղմոսին բառերով աղօթեցի.- Ո՛վ Աստուած, ցոյց տուր ինծի այն նամբան, ուրկէ պէտք է քալեմ: Այդ նամբան Աստուծոյ, մեր Եկեղեցւոյ ու ազգին ծառայութեան նամբան էր: Ու քալեցի այդ նամբէն, աղօթքով ու հաւատքով զօրացած: Քալեցի այդ նամբէն մեր Ս. Աթոռին, մեր Եկեղեցւոյ, մեր ազգին ու հայրենիքին ընդհանրական ու գերագոյն արժեքները ու սկզբունքները ամէն բանէ վեր նկատելով: Եկեղեցւոյ, ազգին ու հայրենիքին ծառայելը նուիրական կոչում է ու սրբազան պարտաւորութիւն, զոր փորձեցի իրագործել՝ պատասխանատուութեան ոգիով, անմնացորդ նուիրումով ու ամբողջական սիրով: Եթէ սխալներ գործեցի, կամայ թէ ակամայ, թող Աստուած ներէ: Եթէ թերութիւններ ունեցայ, կամայ թէ ակամայ, թող մեր ժողովուրդը ներէ:

Լեւոն Շանթ, որքան կը յիշեմ, իր «Հին Աստուածներ» գործին մէջ մօտաւորապէս հետեւեալը կ'ըսէ.- ամէն օր գագաթ մը նուանել, եւ նոր ու աւելի բարձր գագաթներ նուանելու հաւատքը ու կամքը ունենալ: Այս նպատակասլաց յանձնառութեամբ մեր Ս. Աթոռին առաքելութիւնը փորձեցի հարստացնել նորանոր իրագործումներով զայն բանալով նոր մարգերու ու հորիզոններու: Բոլոր պարագաներուն, բոլոր պայմաններուն մէջ ու բոլոր տագնապներուն դիմաց կեանքիս նպատակը ու արժեքափը նկատեցի ծառայութիւնը միայն: 27 տարիներու ծառայութեանս արժեւորումը կը թողում մեր ժողովուրդին ու պատմութեան:

Այս առիթով, կ'ուզեմ հակիրճ կերպով երկու ընդգծումներ կատարել.-

Առաջին, խօսիլ Կաթողիկոսին մասին, կը նշանակէ խօսիլ Կաթողիկոսութեան մասին: Արդարեւ, Վեհափառը սոսկ Կաթողիկոսութեան առաքելութիւնը հովանաւորող անձը չէ. ան նոյնացած է Կաթողիկոսութեան հետ, իր կեանքն ու գործը շաղախելով անոր կեանքին ու առաքելութեան բոլոր

տարածքներուն հետ: Այսպէ՛ս ըմբռնեցի եւ ա՛յս համոզումով ջանացի արժեւորել հայրապետական գահակալութեան տարիները՝ հաւատալով հաւաքական աշխատանքի կարելորութեան ու արդիւնաւէտութեան: Մեր Ս. Աթոռի իրագործումներուն մէջ իրենց գործօն ներդրումը ունեցան անկասկած մեր միաբանները, առաջնորդները, Ազգ. Կեդրոնական Վարչութիւնները, մեր թեմերը, մեր գործակից կառոյցներն ու մեր բարերարները: Ջերմ շնորհակալութիւն բոլորին:

Երկրորդ, օր մը ազգային մը ըսաւ. – «Վեհափառ, ծառայութիւն բառը մնայուն ներկայութիւն է ձեր պատգամներուն մէջ»: Պատասխանեցի՝ ոչ թէ լոկ պատգամներուս մէջ, այլ մեր Ս. Աթոռի կեանքին մէջ: Արդարեւ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կեանքը կարելի է խտացնել մէկ բառի մէջ՝ ծառայութիւն: Այսպէ՛ս եղաւ երկրաւոր կեանքն ու առաքելութիւնը Քրիստոսին: Այսպէ՛ս պէտք է ըլլայ կեանքն ու առաքելութիւնը եկեղեցւոյ: Սովորական ու պարագայական չ՛եղաւ մեր Ս. Աթոռին ծառայութիւնը: Ան եղաւ ու մնաց խորք ու որակ ունեցող, հետեւողական ու ծրագրուած ծառայութիւն, ժողովրդանուէր ծառայութիւն՝ բառին գերազանց ըմբռնումով:

Ամեակները, բնականաբար, առիթներ են ինքնարժեւորումի: Անոնք նաեւ հրաւեր են յառաջատեսիլ մօտեցումով բացուելու նոր հորիզոններու՝ համահունչ նոր պայմաններու ու իրականութիւններու:

Կ՛ապրինք տագնապալից ժամանակներու մէջ: Հայաստան, Արցախ եւ Սփիւռք կը դիմագրաւեն լուրջ տագնապներ: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը չի կրնար անտարբեր մնալ մեր ազգին տագնապներուն նկատմամբ: Մենք, ինչպէս միշտ, ըսելիք ու ընելիք ունինք: Մենք պիտի շարունակենք մեր ըսելիքը ազգն ու հայրենիքը տառապեցնող խնդիրներուն մասին յստակօրէն ըսել եւ մեր ընելիքները կատարել ամբողջական նուիրումով: Յառաջիկայ Ազգ. Ընդհանուր Ժողովին պիտի պարզենք մեր Ս. Աթոռին առաջնահերթութիւնները: Հակառակ մեր դիմաց կանգնող ահաւոր դժուարութիւններուն եւ մեզ շրջապատող մարտահրաւերներուն, մենք պիտի շարունակենք մեր ծառայական առաքելութիւնը վերանորոգ հաւատքով, ամբողջական նուիրումով, հաւաքական նիգով ու ամուր վնասակամութեամբ: Միասնական ոգին, համապարփակ մտածողութիւնը, իրապաշտ մօտեցումն ու համահայկական տեսլականը միշտ պիտի մնան մեր Ս. Աթոռին առաքելութեան մղիչ ոյժերը:

Թող Աստուած հօր պահէ Հայաստանը, ամուր՝ Արցախը, պայծառ՝ Հայ Եկեղեցին, եւ անասան՝ մեր ազգը»:

Հանդիսութիւնը իր աւարտին հասաւ ներկաներուն միաբերան «Կիլիկիա» քայլերգի եւ Հայրապետական մաղթերգերու երգեցողութեամբ:

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔՈՎ ԵՒ ՄԵԾԱՇՈՒՔ
ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ ՆՇՈՒԵՅԱԲ ՎԵՀԱՓԱՌ
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ 27-ԱՄԵԱԿԸ**

Կիրակի, 3 Յուլիսին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուած Ս. Եւ Անմահ Պատարագի ընթացքին կատարուեցաւ Հայրապետական Մաղթանք: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ուխտեալ միաբան հայրեր Ս. Խորանէն ընթերցեցին Աւետարանական հատուածներ եւ աղօթքներ՝ գոհութիւն ու փառք տալով Աստուծոյ եւ աղերսելով, որ Տէրը Վեհափառ Հայրապետին առողջ ու ծառայութեամբ բեղուն երկար կեանք պարգեւէ, իսկ Հայ Եկեղեցւոյ եւ ի մասնաւորի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան՝ անասանութիւն:



Նորին Սրբութեան նախագահած Ս. Պատարագը մատուցեց՝ Կաթողիկոսարանի Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչ Գերշ. Տ. Մակար Եպս. Աչգարեանը, իսկ յաւուր պատշաճի քարոզեց՝ «Կիլիկիա» մատենադարանի տեսուչ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանը: Ս. Պատարագին երգեցողութիւնը կատարեց Կաթողիկոսարանիս «Շնորհալի» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի:

Ս. Պատարագին ներկայ էին Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամներ, լիբանանահայ երեք կուսակցութիւններու եւ պատկան մարմիններ:

րու ներկայացուցիչներ, ազգային երեսփոխաններ, բարերարներ, ինչպես նաև՝ Սրբալոյս Միւռոնի օրհնութեան արարողութեան համար Լիբանան ժամանած ուխտաւորներ:

Հայրապետական Մաղթանքին յաջորդեց Շահան Սրբազանին քարոզը: Ան իր քարոզի (Եբր 6.18-19) ընթացքին անդրադարձաւ Հայ Եկեղեցւոյ կեանքին մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կեդրոնական դերակատարութեան, յատկապէս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի գահակալութեամբ սկիզբ առած այն նոր ընթացքին, որ նոր հորիզոններու դիմաց բանալով յաղթական երթի առաջատուները, հայութեան նաւը առաջնորդեց եւ կը շարունակէ նոյն ոգիով ու յանձնառութեամբ՝ դէպի փոփոխութեան նորոգութեան նաւահանգիստին, մէկ ու միասնական հայութեան եւ հայրենիքին:

Ապա, օրուան խորհուրդին եւ տօնին ընդառաջ, սրբազան հայրը Հայրապետին անսակարկ նուիրումի 27 տարիներու «հաւատքի առաքելութիւն»ը յատկանշեց՝ ա. – հոգեւոր կեանքի վերաշխուժացումով (եկեղեցաշինութիւն, Դպրեվանքի նոր սերունդներու պատրաստութիւն, Միաբանութեան թիւի եռապատկում, քրիստոնէական դաստիարակութեան ծաւալում), բ. – մտաւորական իր փորձառութեամբ մշակութային վերելքով (միաբաններու համալսարանական ուսման ծրագրի յաջողութիւն, մտաւորականներու համախմբում, արեւմտահայերէնի պաշտպանութեան ծրագիրներ, հայագիտական կեդրոնի հաստատում, գիտաժողովներու կազմակերպում, հրատարակչական գործունէութեան ընդարձակում), գ. – համահայկական կարեւորագոյն խնդիրներուն իր զօրեղ ներկայութեամբ ու գործնական մասնակցութեամբ (Հայաստանի ու Արցախի Հանրապետութեանց թէ Սփիւռքի, Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ իրաւունքներու վերատիրացման պահանջատիրութիւն) եւ դ. – բազմաբնոյթ ու բազմամակարդակ յարաբերութիւններու մշակումով (ներհայկական, միջ-եկեղեցական ու միջ-կրօնական, միջազգային):

Եզրափակելով իր խօսքը, սրբազանը ըսաւ. «Կիլիկեան Ս. Աթոռը նոր փայլք ու հմայք ստացաւ Վեհափառ Հայրապետով, որ իր ծառայութեան 27 տարիները լեցուց եւ կը շարունակէ լեցնել մեզ հարստացնող այնպիսի իրագործումներով, զորս Հայրապետական Մաղթանքի առիթով արտասանուած որեւէ խօսքի մէջ կարելի չէ ամփոփել: Վեհափառը ո՛չ միայն մեր պատմութեան եզակի նկատուող անձերէն մէկն է, այլ գլխադիր եզակի Վեհափառն է: Թող, որ Աստուած արեւշատ, առողջ ու արգասաբեր երկար տարիներ պարգեւէ Նորին Սրբութեան»:

Ս. Պատարագի աւարտին, Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ, Հայրապետական թափօրով հաւատացեալները ուղղուեցան Վեհարանի դահլիճ, ուր Շնորհալի երգչախումբը հրամցուց փունջ մը ազգային երգեր: Հոսկ, Հայրապետը սրտի խօսք առնելով, յատուկ ուրախութեամբ ողջունեց թեմակալ առաջնորդները, միաբան հայրերը, թեմերուն ներկայացուցիչ-



ները եւ ի մասնաւորի հայկական պատմական երեք կուսակցութիւններուն վերին մարմիններուն ներկայացուցիչներուն ներկայութիւնը Անթիլիասի Մայրավանքին մէջ՝ յայտնելով, որ յատկապէս յետ-ցեղասպանութեան ժամանակաշրջանին, անոնք Սփիւռքի կազմակերպման, վերակազմակերպման ու ծաղկման, ինչպէս նաեւ Հայ Դատի պահանջատիրական աշխատանքներուն մէջ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողքին, առանցքային դերակատարութիւն ունեցան եւ կը շարունակեն իրենց կարեւոր գործունէութիւնը՝ բնականաբար նաեւ Հայաստանի եւ Արցախի մէջ: «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը մեր բոլորին տունն է, մեր ազգի տունն է: Այս տան հիմերը բարձրացած են մեր հաւաքական հաւատքին, արժէքներուն, սկզբունքներու եւ իտելաներու վրայ: Անսասան է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, որովհետեւ կը հաւատայ գերագոյն արժէքներու, սկզբունքներու՝ մեր ազգին, եկեղեցւոյ, հայրենիքին կապուած: Ա՛յս եղած է մեր Ս. Աթոռին սկզբունքները եւ՝ կեանքի ցամաքն ու առաքելութեան նպատակը: Հետեւաբար, այս առիթով, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կը վերանորոգէ իր ծառայութիւնն ու առաքելութիւնը», նշեց Վեհափառ Հայրապետը:

Հանդիսութիւնը իր աւարտին հասաւ ներկաներուն միաբերան «Կիլիկիա» քայլերգի եւ Հայրապետական մաղթերգերու երգեցողութեամբ:

Յայտնենք, որ ներկաները աջահամբոյրով Նորին Ս. Օծութեան փոխանցեցին իրենց շնորհաւորութիւններն ու բարեմաղթութիւնները:

ՏՕՆԱԿԱՆ

**ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

Հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Հայրապետին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին եւ Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Մատրան մէջ, Կիրակի, 24 Յուլիսին, նշուեցաւ Հայ Եկեղեցւոյ հինգ տաղաւար տօներէն երրորդը՝ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Պայծառակերպութեան (Այլակերպութեան) յիշատակը: Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ Ս. եւ Անմահ Պատարագը մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեանը:



Սրբազան Հայրը իր քարոզը սկսաւ պատմելով Քրիստոսի պայծառակերպութեամբ դրուագը եւ ընդգծեց անոր մէջ պարփակուող կարեւոր պատգամները, որոնցմէ ներշնչուելով եւ հզօրանալով պէտք է ապրի քրիստոնեայ ան-

հատը: Ան դիտել տուլալ, որ Քրիստոս, իր երկնաւոր առաքելութեան ընթացքին չուզեց, որ մարդիկ խօսին իր հրաշագործութիւններուն մասին ու տարածեն զանոնք, որպէսզի իրենց մտքին մէջ չնոյնացնեն երկաւոր թագաւորը Երկնայինին հետ. այլ խօսքով, որպէսզի մարդիկ իրենց մտային կարողութիւններուն սահմանափակութեամբ չթարգմանեն Քրիստոսի առաքելութիւնը, որ շատ աւելի մեծ ու խոր է, քան ինչ որ կը հասկնանք:

Իր քարոզին մէջ, սրբազանը նաեւ բացատրեց Քրիստոսի երեք առաքեալներուն՝ Պետրոսի, Յակոբոսի եւ Յովհաննէսի ներկայութիւնը պայծառակերպութեան դէպքի ժամանակ, Թափօր լերան վրայ: Քրիստոսի առաքեալները Անոր պայծառակերպութեան ականատես ու վկայ դարձնելով՝ իր առաքեալներուն յայտնաբերեց գալիք օրերուն տեղի ունենալիք չարչարանքներուն, խաչելութեան, յարութեան եւ համբարձման եղելութիւնները, որպէսզի անոնք հասկնային, թէ Յիսուս Քրիստոս այս բոլորին պիտի տոկար, յանուն մարդկութեան փրկութեան եւ իր Հօր կամքին, ապա թէ ոչ՝ առաքեալները, դարձեալ մարդկային մտային կարողութեան սահմանափակութեան հետեւանքով, կրնային այդ վերագրել տկարութեան: Յիսուս իր առաքեալներուն ցոյց տուաւ իր ինքնութիւնը, որպէսզի անոնք երթալով վկայէին քրիստոնէական հաւատքն ու հաստատ կամքը: Ուստի, իւրաքանչիւր քրիստոնեայ ունի իր կրելիք խաչը, որուն համար պէտք է ուրանայ իր անձը եւ յանձնուի փրկագործութեան:

Քարոզի աւարտին, սրբազան հայրը անդրադարձաւ Պայծառակերպութեան տօնին ազգային դիմագիծին՝ Վարդավառին: Ան ցաւ յայտնեց, որ իբրեւ ազգ սկսած ենք անտարբեր ըլլալ մեր ազգային սովորութիւններուն ու աւանդութիւններուն նկատմամբ: Ուստի, ան յորդորեց, որ ամուր կառչած մնանք մեր եկեղեցական ու ազգային արժէքներուն ու աւանդութիւններուն: Սրբազանը նաեւ դիտել տուաւ, որ եկեղեցական ու ազգային արժէքներէն հեռանալով՝ կը կարծենք որ կը մօտենանք արդի աշխարհին, սակայն այս ընթացքով բոլորովին կը կորսնցնենք մեր հայկական ինքնութիւնը եւ ձուլումի ճամբան կը բռնենք:

Յայտնենք, որ Հայ Եկեղեցւոյ աւանդութեան համաձայն, իւրաքանչիւր տաղաւար տօնին յաջորդ օրը մեռելոց յիշատակութեան օր է եւ կը կատարուի հոգեհանգստեան պաշտօն ննջեցեալներու հոգիներուն համար:

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԸ ՊԻՔՖԱՅԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԷՆ ՆԵՐՍ

Հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Հայրապետին եւ կազմակերպութեամբ Կաթողիկոսարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին, Ս. Աստուածածնայ Վերափոխման Տօնին եւ Ս. Աստուածածին Վանքի ուխտի օրուան առիթով, 8-12 Օգոստոս 2022-ի առաւօտները, Պիքֆայայի մէջ տեղի ունեցան հոգեւոր խորհրդածութեան պահեր եւ քարոզախօսութիւններ:

Առ այդ, Ուրբաթ, 12 Օգոստոսին, Վեհափառ Հայրապետը հանդիպեցաւ մեր ուխտաւոր ժողովուրդի զաւակներուն հետ եւ իր հայրական պատգամն ու օրհնութիւնը փոխանցեց անոնց: Այս առիթով, Նորին Ս. Օծութիւնը ընդգծեց Աստուածամօր առաքելութիւնը՝ լուսարձակի տակ առնելով անոր կեանքէն ժայթքող առաքիւնութիւնները:

Ապա, Հայ Համայնքի Ընկերային Ծառայողներու Միութեան վարչութիւնը յուշանուէր մը յանձնեց Հայրապետին՝ առ ի երախտագիտութիւն անցնող տարիներու ընթացքին յիշեալ ոլորտին մէջ Վեհափառ Հայրապետին ցուցաբերած նիւթաբարոյական նեցուկին եւ աջակցութեան:





Նշենք, որ արարողութեանց աւարտին, գլխաւորութեամբ Ս. Աստուածածին Վանքի վանհայր՝ Գերպ. Տ. Շնորհք Ծ. Վրդ. Աչըգեանի, կատարուեցաւ աղի ու խոունկի օրհնութեան կարգ:

ՈՒԽՏԻ ՕՐՈՒԱՆ Ս. ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ

Շաբաթ, 13 Օգոստոսի երեկոյեան, Նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Հայրապետին, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի համալիրէն ներս նշուեցաւ Ս. Աստուածածին Վանքի Ուխտի Օրը: Բացօթեայ Սրբոց Նահատակաց Ս. Խորանին վրայ Ս. եւ Անմահ Պատարագը մատուցեց՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան, իսկ Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբը՝ խմբավարութեամբ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի:

Ս. Պատարագի աւարտին, Վեհափառ Հայրապետը Հայրապետական Թափօրով Ս. Խորան բարձրացաւ եւ կատարեց մատաղի ու խաղողի օրհնութեան կարգը՝ աղօթք բարձրացնելով առ բարձրեալն Աստուած, որ Ս. Հոգիին շնորհները զրկէ մատաղին ու խաղողին վրայ, Իր ողորմութեամբ օրհնէ զանոնք, ընդունի հաւատացեալներուն ուխտը եւ օրհնուած խաղողէն ու մատաղէն ճաշակողներուն իղձերը:

Հուսկ, Վեհափառ Հայրապետը փոխանցեց իր Հայրապետական հետեւեալ պատգամը.-

Ս. Աստուածածնի վերափոխման տօնին, ընդհանրապէս կ'անդրադառնանք մեր ժողովուրդը յուզող այժմեական խնդիրներու ու երեւոյթներու:



Այսօրուան Մեր հայրական խօսքին վերնագիրն է.- ազգային պատկանելիութեան վերաշեշտում: Ինչո՞ւ այս մտահոգութիւնը ու մանաւանդ՝ կոչը: Եկէ՛ք միասնաբար տեսնենք այս մարտահրաւէրին տուն տունդ հիմնական դրդապատճառները եւ ապա զանոնք դարմանելու ազդու միջոցները:

Կ'ապրինք համաշխարհայնացած աշխարհի մէջ: Համաշխարհայնացումը իր տնտեսական, քաղաքական, ընկերային, քաղաքագիտական եւ այլ երեւոյթներէն ու արտայայտութիւններէն անդին, էապէս մշակոյթ է, որ իր արժեհամակարգով ու արժեչափերով, մտածելակերպով, գործելակերպով ու կենցաղակերպով կը քանդէ ամէն տեսակ ինքնութիւն ու պատկանելիութիւն, սահման ու կառոյց, մարդը վերածելով անդիմագիծ ու աննպատակ համաշխարհային իրականութեան մը: Մեծ ազգերը կըրցած են որոշ գոյակցութիւն մը ստեղծել համաշխարհայնացումին հետ: Փոքր ազգերը, եթէ չկարենան իրենց արմատները զօրացնելու ազդու միջոցներու դիմել, ուշ կամ կանուխ, դատապարտուած են մնալու պատմութեան արխիւներուն եւ թանգարաններուն մէջ:

Համաշխարհայնացումի ալիքները հասած են նաեւ մեր ժողովուրդի կեանքին փերը, Հայաստանի թէ՛ Սփիւռքի մէջ: Ականատես ու ականջալուր կը դառնանք մեր կեանքի բոլոր մարզերէն ներս այնպիսի ապազգային երեւոյթներու, որոնք կը խախտեն մեր հոգեւոր, բարոյական, մշակութային ու ազգային արժէքներու համակարգը, կը հիւծեն մեր արմատները ու կը գունաթափեն մեր ինքնութիւնը: Արդարեւ, դարաւոր պատմութիւն կերտած, կեանքի փոթորկալից պայմանները ամուր վնասկամութեամբ դիմա-

գրաւած ու ահաւոր տագնապներու մէջ իր գոյութիւնը պահած հայ ժողովուրդը կը մերժէ համաշխարհայնացումի ընկլուզող հոսանքներուն ենթակայ դառնալ, վտանգելով իր պատկանելիութիւնը, նոյնիսկ իր գոյութիւնը:

Համաշխարհայնացումի ահաւոր ալիքներուն դէմ կարելի է պայքարիլ մեր ազգային պատկանելիութեան վերաշեշտումով. այլ խօսքով՝ մեր ինքնութեան քիւրեղացումով, մեր արժէքներու ամրացումով, մեր հաւատքին խորացումով՝ համահունչ ներկայ աշխարհի մարտահրաւերներուն:

Մեր ողջ պատմութեան ընթացքին, հետեւեալ չորս նուիրական կառոյցները դարձած են մեր ազգը պահող հիմնական սիւները. - ընտանիք, եկեղեցի, դպրոց, հայրենիք: Զիրար ամբողջացնող, պայմանաւորող ու հզօրացնող այս կառոյցները առաւել քան երբեք այսօր եւս կը կազմեն առանցքը մեր պատկանելիութեան, աղբիւրը մեր ինքնութեան, ողնասիւնը մեր ազգային գոյութեան ու երաշխիքը մեր յաւերժութեան: Սակայն, ներկայ ժամանակներուն անոնք մտահոգիչ կացութիւն կը պարզեն:

- Փոքր եկեղեցի ու փոքր Հայաստան դարձած հայ ընտանիքը սկսած է իր հայաբոյր մթնոլորտը կորսնցնել, ազգային նկարագիրը փոխել՝ օտարին օտարացնող ներկայութեամբ: Խառն ամուսնութիւններու ու ամուսնալուծումներու թիւը սկսած է զգալի ան արձանագրել, նոյնիսկ Լիբանանի հայահոծ գաղութէն ներս: Համայնֆային կեանքէն հեռացումները լայն չափով առնչուած են այս տխուր երեւոյթին: Փոխանակ օտարը հայացնելու, մենք սկսած ենք օտարանալ: Այս մտահոգիչ երեւոյթին հիմնական պատճառը նօսրացումն է ազգային գիտակցութեան, զոր կը ստանանք մեր ծնողքէն, եկեղեցիէն ու դպրոցէն:

- Եկեղեցին, որ սնուցիչն է մեր հաւատքին ու դաստիարակը մեր հոգեւոր ու բարոյական արժէքներուն, սկսած է դառնալ խորհրդակատարութիւններու ու հոգեհանգիստներու վայր: Ճիշդ չէ դասական հայերէնը նկատել հիմնական պատճառը մեր երիտասարդները եկեղեցիէն հեռու պահող: Այս տխուր կացութիւնը հետեւանք է մէկ կողմէն՝ եկեղեցւոյ վերանորոգման բացակայութեան, եւ միւս կողմէն՝ հայ կեանքէն ներս համաշխարհային արժեհամակարգի հետզհետէ ապահայացնող ներկայութեան:

- Արդարօրէն հայ դպրոցը նկատուած է հայակերտումի հնոց: Այսօր հայ դպրոցը տագնապի մէջ է: Հայ դպրոցի աշակերտութեան թիւը նուազումի մէջ է: Դարձեալ, խորապէս մտահոգիչ երեւոյթ մը, որուն գլխաւոր պատճառը ո՛չ թէ հայ դպրոցին մակարդակն է, այլ՝ ազգային պատկանելիութեան նկատմամբ ծնողքին անպատասխանատու մօտեցումն է:

- Հայաստանը, որ կոչուած է իր շուրջ համախմբելու մեր ժողովուրդի աշխարհացրի զաւակները, յատկապէս մեր պատմութեան ներկայ ճշդորոշիչ ժամանակներուն, իր վարած ներքին թէ արտաքին քաղաքականութեամբ, մասնաւորաբար Արցախի վերջին պատերազմէն յետոյ, կը շարունակէ ճեղքեր ու բեւեռացումներ յառաջացնել հայ կեանքէն ներս Հայաստանի թէ Սփիւռքի մէջ:

Ընդհանուր գիծերով մեր պարզած մտահոգութիւնները գոյ են, առաւել կամ նուազ տարողութեամբ, հայ կեանքէն ներս ամէն տեղ: Այժմ մեր հայ-եացքը կեդրոնացնենք Սփիւռքին վրայ:

Ներկայ տարին հոչակած ենք «Սփիւռքի Տարի»: Սփիւռքը հրամայական ու անմիջական կարիքը ունի վերակազմակերպման, վերանորոգման ու վերակենսաւորման: Սա պարագայական հաստատումը չէ, այլ գոյութեան-կան ինդիք է: Այս յոյժ կարեւոր գործընթացը կը սկսի ազգային գիտակցութեան ամրապնդումով ու պատկանելիութեան վերաշեշտումով: Այո՛, թերութիւններ ունինք. աշխարհի յարափոփոխ պայմաններուն հետ չենք կրցած քայլ պահել, մեր կառոյցները չենք կրցած վերանորոգել, դարձած ենք ինքնամփոփ, ինքնաբաւ ու ինքնավստահ եւ քաւարարուած ենք եղածը պահելով: Պահ մը դիտեցէք ձեր շուրջը. տեղ մը անտարբերութեան, այլ տեղ՝ քաղցնելիութեան եւ մեզ մեր հարազատ պատկանելիութենէն հեռացը-նող երեւոյթներ սկսած են լայն տեղ գրաւել մեր անհատական, ընտանեկան թէ՛ հաւաքական կեանքին մէջ: Հարկ է ըլլալ իրապաշտ, հեռու զգացական ու տեսական մօտեցումներէ: Հարկ է ըլլալ նաեւ ինքնավստահ ու յանձնա-նու՛ հայ կեանքի բացասական երեւոյթները անկեղծօրէն ընդունելու եւ քա-ջարար սրբագրելու: Արդ, ախտաճանաչումը հարկ է նիշդ կատարել, որ-պէսզի կարենանք Սփիւռքի վերակազմակերպումը նիշդ ուղղութեան մէջ դնել:

Մեր ծնողները ցեղասպանութենէն յետոյ Սփիւռքը կազմակերպեցին՝ ընտանիք կազմելով, եկեղեցի շինելով, դպրոց հաստատելով ու մեծ գոհո-ղութեամբ անհայրենիք դարձած հայը հայ պահելով: Բիւր յարգանք անոնց:



Սփիւոքի մէջ հայ մնալը ամէնօրեայ պայքար էր եւ է՝ այսօր՝ Սփիւոքի մէջ հայ մնալը անլի ահեղ ու գոյութեանական պայքար: Սփիւոքի մէջ ապրող իւրաքանչիւր հայ կոչուած է հայապահպանման պայքարին քաջամարտիկ գինուորը դառնալու:

Սփիւոքի վերակազմակերպման նպատակը հայութեան ինքնութեան առողջ պահպանումն է ու անոր գոյութեան ամրացումը: Այս նպատակը կարելի է իրագործել՝ հայ ընտանիքի վերականգնումով, հայ դպրոցին վերակազմակերպումով, Հայ Եկեղեցւոյ վերանորոգումով, մեր կառոյցներու բարեկարգումով, հայ կեանքին մեր երիտասարդութեան գործօն մասնակցութեամբ, Սփիւոք-Հայաստան գործակցութեան առանկ կազմակերպումով ու ծաւալումով: Այս հաստատումներէն իւրաքանչիւրը կ'ենթադրէ խոր վերլուծում, լայն քննարկում ու մանաւանդ հաւատով կոանուած, վնասկամութեամբ պրկուած ու յստակ տեսլականով առաջնորդուած հաւաքական ու ծրագրուած աշխատանք:

Կ'ուզե՞նք Հայաստանը ծաղկեցնել ու Արցախը ամրապնդել եւ մեր ազգային արմատները ամրացնել, Սփիւոքը պէտք է վերակազմակերպենք ու հզօրացնենք այսօր, վաղը կրնայ ուշ ըլլալ: Կ'ուզե՞նք Սփիւոքը վերակազմակերպել, իւրաքանչիւր հայ, ընտանիք, կառոյց ու համայնք պէտք է մասնակից դառնայ այս հաւաքական նիւթին: Ահա մարտահրաւերը մեր դիմաց:

Ս. Պատարագի ավարտին, ներկայ հաւատացեալները հաղորդակից դարձան մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի Ս. Մարմինն եւ Ս. Արեանն եւ իբրեւ օրհնութիւնն եւ ուխտի կատարում՝ իրենց հետ տարին օրհնուած մատաղն ու խաղողը:

**ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔ ԱՆԹԻԼԻԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻ
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷԶ**

Կիրակի, 14 Օգոստոսին, հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ: Ս. Պատարագը մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Կաթողիկոսարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչ Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեան:

Յընթացք Ս. Պատարագին, մեր եկեղեցւոյ դարաւոր ավանդութեան համաձայն, օրհնուեցաւ խաղող, որմէ ետք պատարագիչ սրբազանը փոխանցեց օրուան պատգամը: Բնաբան ընտրելով «Իմ հարս քոյրս փակեալ պարտէզ մըն է, փակեալ աղբիւր եւ կնքուած աղբերակ մըն է» (Երզ 4.12) Աստուածաշնչական հատուածը, սրբազանը ըսաւ, որ յաճախ մեր հաւատքի պայքարը մղած ատեն, երբ ծանր նեղութիւններ կը կրենք եւ զանազան արեկոծումներու կը հանդիպինք, մենք մեզ խոպան, ամուլ եւ անպտուղ ըլլալ կը կարծենք, բայց Տէրը ճիշդ հակառակը կը տեսնէ եւ կը յիշեցնէ մեզի մեր ներ-



սիրին թաքնուած մեր կարողութիւնները, որոնք մեր մէջ բնակող Ս. Հոգիի շնորհքներն են: Անոնք կը յայտնուին միայն այն ատեն, երբ տառապանքները համբերութեամբ կ'ընդունինք եւ հաւատքի յօժարութեամբ խաչը կ'առնենք ու Տիրոջ կը հետեւինք:

Ապա, սրբազանը մանրամասնեց «փակուած պարտէզ եւ կնքուած աղբիւր» եզրը: Ան ըսաւ, որ այո՛, մենք փակուած պարտէզ ու կնքուած աղբիւր ենք, որովհետեւ Աստուծոյ համար պատրաստուած ենք եւ իրմէ բացի ուրիշ ո՛չ ոքի առջեւ իրաւունք ունինք բացուելու, որովհետեւ Ի՛նք է մեր հոգիի միակ ֆեսան, որուն իրաւունքն է մտնել մեր սրտի պարտէզը եւ ըմպել անոր սիրոյ աղբիւրէն:

Եզրափակելով իր խօսքը, քարոզիչ սրբազանը հաւատացեալները հրաւիրեց Աստուածամօր օրինակով փակուած պարտէզ եւ կնքուած աղբիւր ըլլալու, մեր մէջ կրելով Աւետարանական գետերը, սրբութեան ծառերը, բարեգործութեան պտուղները եւ կեանքի ծառը, որմէ ամէնօրեայ դրութեամբ կը սնուինք, կը յագենանք, կը նորոգուինք ու կերպարանափոխուած մտածելակերպով ու ապրելակերպով կ'ապրինք, կը գործենք ու կը վկայենք:

Յայտնենք, որ իւրաքանչիւր տաղաւար տօնի յաջորդող օրը Մեռելոցի յիշատակութեան օր է: Արդարեւ, Երկուշաբթի, 15 Օգոստոս 2022-ին, Ս. Աստուածածին Վանքի համանուն մատրան մէջ, նախագահութեամբ Նորին Ս. Օծութեան, մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ, որուն աւարտին կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ՝ ազգիս համօրէն ննջեցելոց հոգիներուն համար:

**Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ
ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ**

Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին ու Պիքֆայայի վանքի «Ուխտ Օր»-ուան առիթով եղած են հետեւեալ նուիրատուութիւնները, որոնց համար Մայր Տաճարի Լուսարարապետութիւնը իր շնորհակալութիւնը կը յայտնէ բոլոր նուիրատու ուխտաւորներուն:

Խաղող կը նուիրեն.-

5 սնտուկ.- Քաղաքապետարան Սաքէդ Ալ Միսք:

4 սնտուկ.- Տէր եւ տիկին Յակոբ եւ Արփի Գազանճեան:

3 սնտուկ.- Տէր եւ տիկին Ժիրայր Թանկուքեան:

2 սնտուկ.- Տիկին Սօսի Փօլատեան, Տիար Յակոբ Ճէզիրլեան:

1 սնտուկ.- Տէր եւ տիկին Վարդան եւ Հայկօ Փափագեան, Տէր եւ տիկին Յակոբ եւ Մարօ Չալըքեան, Տիար Մանսուր Մրէպ, Արամալեան ընտանիք, Քիւլիքեան եւ Մարտիկեան ընտանիքներ, Արլումանեան ընտանիք, Տէր եւ տիկին Ժան Յովհաննէսեան, Տիար Յարութ Պապիկեան, Տիար Չոհրապ Չէքեան, Փոքրիկներ Լիլի եւ Սիյէլ Եագուպեան, Տիկին Լիոնէ Ղազարեան, Մի ոմն, Տիկին Էլտա Պալաղամեան, Տիար Թորոս Պապիկեան, Տէր եւ տիկին Անդրանիկ եւ Լարա Թանկուքեան, Օրտողլեան ընտանիք, Տիար Անդօնի Մարք եւ Խըսըն ընտանիք, Տիար Ռաֆայէլ Խորճեան, Մի ոմն, Տիար Գաբրիէլ Խորէն Ղազարեան, Տիար Ժագ Պիլալեան, Տիկին Վազգանուշ Արթին Սահիճեան, Գոճայեան ընտանիք, Տիկին Մարիա Գեմանճեան:

55 քիլօ.- Տէր եւ տիկին Խաչիկ Թապուճեան:

16 քիլօ.- Ճօ եւ Սերժ Խաչատուրեան:

5 քիլօ.- Օհանեան ընտանիք, Տէր եւ տիկին Պետրոս Սէլլումեան:

3 քիլօ.- Լիգա Մարգարեան:

Նիւթական նուիրատուութիւններ.-

200 Ամ. տոլար.- Կանանց լսարանի տիկիններ:

6 միլիոն.- Տիկին Մարի Հէլէն Գասարճեան:

5.093.000.- Կանանց լսարանի տիկիններ:

500 հազար.- Տիար Սեւակ Գպրանեան, Տիկին Քրիստին Ղազարեան:

300 հազար.- Միթիլեան, Գալայճեան եւ Դանիէլեան ընտանիքներ, Մի ոմն:

200 հազար.- Տիկին Սօնիա Կրպոյեան, Տիկին Ժագլին Արնազեան:

100 հազար.- Մի ոմն, Մի ոմն:

Այլ նուիրատուութիւններ.-

Ոչխար կը նուիրեն.-

1 հատ.- Տիկին Անի Զիլինկիրեան, Տիկին Բէկի Խաչատուրեան, Մի ոմն, Մի ոմն, Տիար Սարգիս Զէյթունլեան եւ Տիկին Մարինա Տէմիրճեան, Տիկին Մարինէ Այվազեան, Տիկին Մանէ Սարգիսեան, Մի ոմն:

2 հատ.- Տէր եւ Տիկին Ճորճ Գարամանուկեան:

Հաւ կը նուիրեն.- Փօլատեան ընտանիք:

ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԵԱՆՔ

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

Երկուշաբթի, 4 եւ Երեքշաբթի, 5 Յուլիսին, նախագահութեամբ Ն.Ս.Օ. Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսին, Անթիլիասի Մայրավանքի Վեհարանի Դահլիճին եւ Կիլիկիա թանգարանի սրահին մէջ կայացաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանական Ընդհանուր ժողովը:

Վեհափառ Հայրապետին նախագահութեամբ ու միաբան հայրերու մասնակցութեամբ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ տեղի ունեցած ժամերգութեան աւարտին, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ անցնող տարիներուն Կիլիկեան Ուխտի Միաբանութենէն առ յաւէտ հեռացած վախճանեալ միաբաններու հոգիներուն համար:



Եկեղեցական արարողութենէն ետք, Վեհարանի Դահլիճին մէջ, Տէրունական աղօթքով սկիզբ առաւ Միաբանական Ընդհանուր ժողովի բացման նիստը: Ժողովի կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ՝ Գերշ. Տ. Շահան

Արք. Սարգիսեանի բացատրական խօսքէն ետք, տեղի ունեցաւ ժամանակաւոր եւ մնայուն դիւաններու ընտրութիւն՝ օրինականացնելու ժողովական ընթացքը: Ժամանակաւոր դիւանն էր Միաբանութեան Երիցագոյն եւ կրտսերագոյն անդամները՝ Գերշ. Տ. Սուրէն Արք. Գաթարոյեան եւ Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Յիլիքեան. իսկ մնայուն դիւանը՝ համա-ատենապետներ Գերշ. Տ. Օշական Արք. Զօլոյեան ու Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեան. ատենադպիրներ՝ Գերայ. Տ. Պօղոս Ծ. Վրդ. Թինքճեան եւ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան: Ժողովը նաեւ ընտրեց Բանաձեւի Յանձնախումբը՝ Գերշ. Տ. Գրիգոր Արք. Զիֆթճեան, Գերայ. Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան եւ Գերայ. Տ. Շնորհք Ծ. Վրդ. Աշրգեան: Հոսկ, Վեհափառ Հայրապետը փոխանցեց իր հայրական խօսքն ու պատգամը:



Նորին Ս. Օծութիւնը իր հայրական սէրն ու օրհնութիւնը փոխանցելէ ետք միաբան հայրերուն, շեշտեց, որ «Միաբանական Ընդհանուր Ժողովին նպատակն է, իբրեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ուխտեալ միաբաններ, միասնաբար քննել, անդրադառնալ եւ բարձրաձայն մտածել եւ լուծումներու մասին խորհիլ ներկայ ժամանակներուն եկեղեցիին, եկեղեցականին ու մեր ժողովուրդին կեանքը յուզող խնդիրներու եւ մարտահրաւերներու մասին»: Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ Միաբանութեան անդամներուն վարքագծերուն եւ նոր օրերու պայմաններու հարցերը լուսարձակի տակ բերաւ՝ յորդորելով յատկապէս նոր սերունդի միաբանները, պահպանելու Կիլիկեան միաբանի աւանդական կեցուածքներն ու ըմբռնումները՝ հոգեւորական ասպարէզին նկատմամբ:

Հայրապետին խօսքին ետք, երկրորդ նիստին, Շահան Արք. Սարգիսեան ընթերցեց Տնօրէն ժողովի զեկոյցը, որմէ ետք Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեէմէզեան ընթերցեց Միաբանական Կանոնադրութեան զեկոյցը: Ապա, կատարուեցաւ Տնօրէն ժողովի նոր անդամներու ընտրութիւն՝ բաղկացած հետեւեալ միաբաններէ.– Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեան, Գերպ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Վարդանեան, Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան, Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան եւ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան:

Ժողովը յաջորդական եօթը նիստերու ընթացքին գլխաւոր չորս դասախօսութիւններու, զեկոյցներու եւ քննարկումներու ընդմէջէն մտասեւեռումի նիւթ դարձուց հետեւեալ թեմաները.– ա) «Միաբանութիւն եւ Առաքելութիւն» (Գերշ. Տ. Վարուժան Արք. Հերկելեան եւ Գերշ. Տ. Անուշաւան Արք. Դանիէլեան). բ) «Դպրեվանքի Առաքելութեան Վերարժեւորում» (Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեան եւ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան). գ) «Միջեկեղեցական եւ միջ-Կրօնական» (Գերպ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան եւ Գերպ. Տ. Հրանդ Ծ. Վրդ. Թահանեան). դ) «Գործակցութիւն Նուիրապետական Աթոռներու Հետ» (Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեան եւ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեէմէզեան):

Իւրաքանչիւր դասախօսութենէ ետք միաբան հայրեր չորս խումբերու բաժնուելով տուեալ նիւթին շուրջ քննարկումներ եւ միաբանութեան առաքելութիւնը առաւել եւս կենսագործելու նպատակադրող առաջարկներ կատարեցին եւ ապա, նիստերու աւարտին Բանաձեւի Յանձնախումբը ժողովին ներկայացուց Միաբանութեան ծառայական առաքելութեան յառաջիկայ շրջանի ուղեցոյցը, ուր յստակօրէն պարզուած էին Վեհափառ Հայրապետին կատարած ցուցմունքներն ու թելադրանքները:

Երկօրեայ դասախօսութեանց եւ քննարկումներու աւարտին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Հայրապետը փոխանցեց իր հայրական եզրափակիչ խօսքը: Ան լուսարձակի տակ առնելով մեր Ս. Աթոռին առաքելութեան յատկանշական բնագաւառները, շեշտեց, որ «Այսօր Հայ Եկեղեցւոյ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Աթոռը կը գտնուի բարձրունքի վրայ, սակայն պէտք է մեր հասած բարձրունքով գոհանանք եւ բաւարարուինք, այլ պէտք է ամէն օր նոր նուանումներ արձանագրենք»: Վեհափառ Հայրապետը ընդգծեց, որ հոգեւորականի կեանքին առանցքը կը կազմէ հոգեմտաւոր կազմաւորումը, որպէսզի ան կարողանայ քայլ պահել այսօրուան աշխարհին հետ եւ մեր ժողովուրդի զաւակներուն կարիքները հոգայ՝ միշտ ըլլալով անոնց հետ ու անոնց կողքին:

Իր խօսքի աւարտին, Նորին Սրբութիւնը իր հայրական օրհնութիւնները փոխանցեց Միաբան Հայրերուն՝ անոնց մաղթելով յաջողութիւն եւ յարատեւ վերելք իրենց եկեղեցական ու ազգային ծառայական կեանքին ու առաքելութեան մէջ:



Երկօրեայ ժողովը փակուեցաւ «Աշակերտք Քրիստոս»ի շարականի, «Կիլիկիա» օրհներգի եւ «Ի վեհ Բարձանց» Հայրապետական մաղթերգի միաբան հայրերու միաբերան երգեցողութեամբ: Հուսկ, Վեհափառ Հայրապետը «Պահպանիչ» աղօթքով օրհնեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնն ու անոր Միաբանութիւնը:

Վեհափառ Հայրապետին բացման թէ եզրափակիչ հայրական խօսքերը ուղեցոյց հանդիսացան Միաբանութեան յառաջիկայ կեանքին ու գործունէութեան: Միաբանական Ընդհանուր ժողովը առիթ հանդիսացաւ Կիլիկեան Միաբանական Ուխտին վերանորոգման: Միաբան հայրերուն ժամերգութեանց եւ Ս. Պատարագի հաւաքական մասնակցութիւնը առաւել եւս զօրացուց Կիլիկեան Միաբանութեան պատկանելիութիւնը եւ մեր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Աթոռին նկատմամբ իւրաքանչիւր միաբանի հաւատարմութիւնը: Երէց եւ նոր սերունդներու միաբաններու միասնական քննարկումներն ու սրտբաց զրոյցները փոխադարձ սիրոյ ու անկեղծութեան մթնոլորտի մէջ տեղի ունենալով, առաւել եւս սերտացուցին անոնց միջեւ եղբայրական կապը:

Նշենք, որ Միաբանական Ընդհանուր ժողովէն բանաւոր կերպով կը բացակայէին վեց միաբան հայրեր:

ԴՊՐԵՎԱՆՔ

ՀՈԳԵՄՏԱԲՈՐ ԿԵԱՆՔԸ
ԴՊՐԵՎԱՆՔԷՆ ՆԵՐՍ

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը, տարագրութեանէն 91 տարիներ ետք, տակաւին կը շարունակէ իր եկեղեցանուէր եւ ազգանուէր ծառայութիւնը: Առ այդ, Դպրեվանքը 2021-2022 կրթական-ուսումնական տարեշրջանը բոլորեց ընծայաբերելով դպիրներ, կիսասարկաւաններ, սարկաւաններ եւ նուիրեալ երեք կուսակրօն քահանաներ:

Կիրակի, 3 Յուլիսի երեկոյեան, Պիքֆայայի Ս. Աստուածածնի վանքին մէջ բարձրացած Եղեռնի Նահատակաց յուշարձանին լանջերուն եւ Սարդարապատի հերոսամարտի յուշահամալիրին կրկնապատկերին կողքին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսին տեղի ունեցաւ Դպրեվանքի 91-րդ հունձքին աւարտական հանդէսը, որուն ներկայ էին



Կիրիլիոյ միաբանութեան հայրեր, ուսուցիչներ, Սրբալոյս Միւռոնի օրհնութեան արարողութեան համար Անթիլիասի Մայրավանք ժամանած ուխտաւորներ եւ Դպրեվանքի առաքելութեան հաւատացող բարերարներ ու բարեկամներ:

Հանդէսը սկիզբ առաւ Դպրեվանքի քայլերգով, որմէ ետք ներկաները դպրեվանեցիներուն կողմէ վայելեցին «Կտոր Մը Երկինք» եւ «Երկինքն Ամպել է» երաժշտական կտորները: Յաջորդիւ, նորաօծ Հոգշ. Տ. Արմէն Աբղ. Գալաճեան, յանուն իր օծակից եղբայրներուն, ընթերցեց աւարտական դասարանին ուղերձը, ուր երախտագիտութեամբ յետադարձ հայեացք մը նետեց ուսումնական-կրթական անխորտակելի ամրոցին՝ Դպրեվանքին մէջ իրենց անցուցած տարիներուն, որուն ընթացքին լծուած էին Աստուծոյ եւ ազգին ծառայութեան պատրաստութեան աշխատանքին: Ան նշեց, որ սոյն վկայականով ո՛չ թէ վերջ կը դնեն ճանապարհորդութեան մը, այլ սկիզբ՝ ծառայութեան կատարելագործման նոր հանգրուանի մը: Իր խօսքի աւարտին, հայր սուրբը շնորհակալութիւն յայտնեց Դպրեվանքի նախկին եւ ներկայ տեսչութեանց անդամներուն, ուսուցիչներուն, դպրեվանեցի եղբայրներուն, ծնողներուն, ինչպէս նաեւ Սրբազնագոյն Հայրապետին:



Դպրեվանեցիներուն կողմէ պատրաստուած գեղարուեստական յայտագիրը կը կրէր «Հաւատք եւ Հոգ» խորագիրը: Անոնք ասմունքներով ու երգերով հանդէս եկան՝ ներկայացնելով հայկական մշակութային պատառիկներ:

Գեղարուեստական յայտագիրէն անմիջապէս ետք, Դպրեվանքի տեսուչ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան արտասանեց 2021-2022 ուսումնական-

կրթական տարեշրջանի տեսչական իր խօսքը: «Անցնող Ուրբաթ օր, Անթիլիասի Մայրավանքէն ներս ներկայ գտնուեցանք Սրբալոյս Միւռոնի օրհնութեան՝ ձեռամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. Վեհափառ Հայրապետին. իսկ այսօր մեր դիմաց ներկայ է Դպրեվանքը՝ իր ուսանողութեամբ եւ հունձքով: Ահա երկու շարժառիթներ, որոնք մեր հաւաքական յիշողութեան մէջ կը վերակենդանացնեն Սիսը, իր Կաթողիկոսանիստ փառահեղ Մայրավանքով, եւ միաժամանակ՝ մեր ոգեղէն էութեան մէջ անոր կտակի կանչին արձագանգումով», յայտնեց ան:

Անդրադառնալով Սիսի պարպումին եւ յետագային՝ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Աթոռի աճման, Տեսուչ Հայր սուրբը ընդգծեց. «1915-ի Յեղասպանութեան օրերուն, Կիլիկիոյ Միաբանութիւնը կարաւան դարձած, Սրբալոյս Միւռոնի կաթսան եւ եկեղեցական ժառանգութիւնը գրկած, շքեղ Միս քաղաքը կը պարպէր ու բռնի կերպով կը հեռանար իր սիրելի հողէն: Օրուան դէպքերը վկայագրող Սրբագանը կը գրէր. «Կիլիկիան Աթոռին համար պատմական արժէք ունեցող այս կարգի բոլոր հնութիւնները Միս թողուցած, նոյն օրը ճամբայ կ'ելլենք եւ հագիւ թէ հասած քաղաքին ծայրը՝ արկածով մը Միւռոնին ամանը կը կտորի եւ Սոյ նուիրական հողը՝ վերջինը ըլլալով, անգամ մը եւս կ'օծուի Սրբալոյս Միւռոնով»: Բոլոր անոնք, որոնք ականատես եղած են այս ահաւոր դէպքին, ինչպէս նաեւ բոլոր յաջորդող սերունդները, որոնք լսեցին անոր մասին, թերեւս մեր Կաթողիկոսութեան եւ ազգին մահուան պատկերացումը ունեցան: Սակայն, այնպէս ինչպէս մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ, այն հատիկը, որ հողին մէջ կը մեռնի, ան է, որ կ'ապրի եւ նոր կեանք կ'ունենայ:



Նոյն օրինակով եւ սկզբունքով, հողին մէջ ծորած Սրբալոյս Միւռոնը, ահաւասիկ կը շարունակէ ծաղկիլ Անթիլիասի եւ Պիքֆայայի հողերուն վրայ: Ո՞վ կրնար պատկերացնել, որ Սրբալոյս Միւռոնը Կիլիկեան հողին մէջ արցունքով ու ողբով ծածկող Միաբանութիւնն ու ժողովուրդը պիտի տեսնէր Կիլիկեան հողէն ծիլարձակուած նոր սերունդներ, նուիրուած Հայ Ազգին եւ Եկեղեցւոյ ծառայութեան՝ թէկուզ Կիլիկեան հողերէն հեռու: Ահա Դպրեվանքի երիտասարդ սերունդները եւ հոնկէ խտացող Կիլիկեան Միաբանութեան շարքերու նոր ոյժերը ցոյց կու տան, թէ Սրբալոյս Միւռոնը պարզապէս օրհնուած իւր մը չէ, այլ՝ անիկա այն աստուածային շնորհքն է, որ կը մարմնաւորուի մարդուն մէջ, որպէսզի նոր աւիւն եւ սերմեր ցանէ մեր ազգին ու եկեղեցիին անդաստանին մէջ»:

Իր խօսքի աւարտին, հայր սուրբը իր որդիական երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Հայրապետին, որ, հակառակ Հայրապետի իր ծանր պատասխանատուութիւններուն ու մտահոգութիւններուն, ոչ մէկ ճիգ խնայեց Դպրեվանքը պահելու իր լաւագոյն կարգավիճակին մէջ: Հայր սուրբը իր եղբայրական շնորհակալութիւնը յայտնեց տեսչական անդամներուն՝ Հոգշ. Տ. Գէորգ Աբղ. Գարակէօզեանին, Հոգշ. Տ. Եղիա Աբղ. Մալխասեանին եւ Հոգշ. Տ. Երեմիա Աբղ. Տեկիրմենճեանին, որոնք անձնագործ նուիրուածութեամբ դպրեվանեցիներուն համար եղան մեծ եղբայրներ եւ արթուն հսկողներ: Ապա, շնորհակալական խօսք ուղղեց Ս. Աստուածածին Վանքի վանահօր՝ Գերպ. Տ. Շնորհք Ծ. Վրդ. Աշրգեանին, որ իր բոլոր պատասխանատուութիւններուն առընթեր միշտ օգտակար դարձաւ Դպրեվանքին՝ հասնելով անոր բոլոր կարիքներուն: Վերջապէս, ան շնորհակալութիւն ուղղեց նուիրեալ ուսուցչական կազմին, որոնք, հակառակ Լիբանանի ընկերատնտեսական ծանր պայմաններուն, ընդունեցին Դպրեվանքը որպէս իրենց հարազատ տունը եւ չզլացան դպրեվանեցիներուն ջամբել լաւագոյն կրթութիւնը:

Հուսկ, տեսուչ հայր սուրբը Դպրեվանքի ուսուցչապետ՝ Նորին Ս. Օծութիւն Արամ Ա. Հայրապետը բեմ հրաւիրեց, որպէսզի կատարէ վկայականաց բաշխումը եւ փոխանցէ իր Հայրապետական պատգամը: Վեհափառ Հայրապետը իր գոհունակութիւնը եւ արդար հպարտութիւնը յայտնեց ի տես Դպրեվանքի հունձքին: Նորին Սրբութիւնը շեշտեց Դպրեվանքին սոսկ կրթական հաստատութիւն մը ըլլալէն անդին մարդակերտ հնոց ըլլալը. «Դպրեվանքը մարդ պատրաստող հոգեւոր կեդրոն է: Դպրեվանքը գլխաւոր մարդու պատրաստութեան լծուած հոգեմտաւոր սրբավայր է: Այսպէ՛ս եղաւ Դպրեվանքը եւ կը շարունակէ այսպէ՛ս մնալ: Ա՛յս է Դպրեվանքին ինքնութիւնը, նկարագիրը, կոչումը»:

Անդրադառնալով Յեղասպանութենէն ետք մարդու պատրաստութեան հրամայականին, Նորին Ս. Օծութիւնը հաստատեց, որ Դպրեվանքը Վեհափառ Հայրապետներու աջակցութեամբ, միշտ լծուած եղած է հաւատք, նուիրում, սէր եւ յանձնառութիւն ունեցող գլխաւոր մարդ պատրաստելու աշխատանքին՝ աւելցնելով, որ անոնք, որոնք Դպրեվանքէն անցած են, կ'ապ-

ըին Դպրեվանքը, որովհետեւ Դպրեվանքը անցեալ չէ, այլ միշտ ներկայ է. «Ոգի է Դպրեվանքը, հաւատք ներշնչող, կամք կոանող, տեսիլք տուող սրբավայր է ան» *յայտնեց ու շարունակեց, որ վկայականը ո՛չ մէկ արժէք կը ներկայացնէ, եթէ ատիկա պատասխանատուութեան ու յանձնառութեան չվերածուի՝ կոչումի բարձրագոյն աստիճանի գիտակցութեամբ*. «Այս է, որ կու տայ Դպրեվանքը մեզի: Այսպէս մենք կազմաւորուեցանք Դպրեվանքէն ներս: Վայ այն անձին, որ վկայականով դպրոցին, Դպրեվանքին ուսման էջը կը փակէ: Յատկապէս հոգեմտաւոր կազմաւորումը վերջակէտ չի ցանկնար. ան մնայուն ընթացք է: Դպրեվանքը ա՛յս գիտակցութեամբ մեր մէջ պէտք է մնայ կենդանի ներկայութիւն», *ընդգծեց Նորին Ս. Օծութիւնը*:

Անդրադառնալով Դպրեվանքի առաքելութեան, Հայրապետը ըսաւ, որ Դպրեվանքը աշխարհ մըն է, ուր մենք կը բացուինք ներկայ ժամանակներու գիտութեան, կ'առնենք ինչ որ անհրաժեշտ է, ինչպէս նաեւ կը բացուինք մեր ազգի դարաւոր պատմութեան. «Դպրեվանքի դասարաններէն ներս, եկեղեցւոյ մէջ, Դպրեվանքի մթնոլորտին մէջ, մեր պատմութեան միտքի ու հոգիի տիտանները կեանք կ'առնեն եւ կեանք կու տան մեզի, կը շնչաւորեն մեզ, կը քրծեն մեզ մեր արժէքներով, տագնապներով, տեսլականով: Դպրեվանքին մէջ ներկայ է մեր եկեղեցին, իր արժէքներով: Դպրեվանքին մէջ նաեւ ներկայ է մեր հայրենիքը, մեր պահանջատիրութիւնը, մեր ազգը: Դպրեվանքէն ներս այս տղաքը, ինչպէս մենք բոլորս այս ոգիով կազմաւորուեցանք: Ծառայել Աստուծոյ, ծառայել եկեղեցւոյ կը նշանակէ ծառայել հայրենիքին, Արցախին, ազատ, անկախ ու ամբողջական Հայաստանին, ինչպէս նաեւ մեր պահանջատիրութեան: Աստուծոյ բառեր չեն, իսուքեր չեն, լոգումներ չեն, այլ կեանքի որակ եղան եւ մեր հոգեմտաւոր կազմաւորման առանցքը, մղիչ ոյժը կազմեցին», *չեչտեց Նորին Սրբութիւնը*:

Վերջապէս, իր խօսքը ուղղելով ընծայեալներուն, Հայրապետը յորդորեց. «Դուք պիտի երթաք մեր ժողովուրդին, ձեր փառքը, ձեր պատիւը, ձեր պարտքը պիտի ըլլայ միայն ու միայն մեր ժողովուրդին ծառայել: Ուր որ կարիք կայ, պահանջ կայ, հոն պիտի երթաք: Աղբատին, հիւանդին, գրկեալին մօտ պիտի երթաք եւ պիտի տաք ինչ որ կարելի է տալ անոնց: Դուք մեր ժողովուրդէն եկաք եւ Դպրեվանքին մէջ վերամարդացած ժողովուրդին կ'երթաք»:

Աւարտին, Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Ահաւասիկ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ծառայական առաքելութեան կու գան միանալու երեք երիտասարդ նորընծաներ: Ես վստահ եմ, որ մեր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ուխտեալ Միաբանութիւնը, իրենց ներկայութեամբ աւելի հզօրացած, աւելի կենսաւորուած պիտի շարունակէ Կաթողիկոսութեան ծառայական առաքելութիւնը՝ մեր հայրենիքին, Արցախին եւ մեր ազգի ընդհանրական եւ գերագոյն իտեալներու իրագործման: Թող Աստուած անասան պահէ մեր սիրելի դպրեվանքը իր կեանքով եւ առաքելութեամբ: Թող Աստուած հզօր պահէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը՝ իր Միաբանութեամբ, ժողովական կառոյցներով, թեմերով եւ իր ժողովուրդով»:

Դպրեվանքի 2021-2022 91-րդ ուսումնական-կրթական տարեշրջանի հանդէսը իր աւարտին հասաւ ներկաներուն միաբերան «Կիլիկիա» քայլերգի երգեցողութեամբ:

«ԿԻԼԻԿԻԱ» ԲԱՆԱԿՈՒՄ

7-9 Յուլիսին, օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Հայրապետին եւ կազմակերպութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին, «Թռչնոց Բոյն»-ի մէջ կայացաւ «Կիլիկիա» բանակումը: Սոյն բանակումը համախմբեց 10-14 տարեկան 80 պատանիներ, որոնք դաստիարակչական ծրագիրներու ճամբով հաճելի մթնոլորտի մը մէջ անմոռանալի օրեր անցուցին:

Չորս խումբերու բաժնուած պատանիները՝ Գլաձոր, Դրազարկ, Արմաշ եւ Աղթամար, աղօթքի, շարականի եւ հայրենասիրական երգերու ուսուցումներու, զրոյց-հանդիպումներու, ձեռային աշխատանքներու եւ խաղերու ճամբով համապարփակ կերպով ծանօթացան Քրիստոսի առաքելներուն եւ անոնց գործունէութեան, ինչպէս նաեւ՝ Կիլիկիոյ թագաւորութեան ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութեան եւ եկեղեցական ու ազգային առաքելութեան: Ապա, իրենց ամբարած գիտելիքները անհատական եւ խմբային աշխատանքներով կիրարկեցին՝ ներկայացնելով ծառայութեան եւ առաքելութեան օրինակներ, իրենց անհատական կեանքի ոլորտէն ներս, ինչպէս նաեւ՝ Կիլիկիոյ տարբեր շրջանները, անոնց բնակչութիւնը, վանքերը, եկեղեցիներն ու աւանդութիւնները:

Բանակումի վերջին օրը պատանիները իրենց աւօրեան անցուցին Դըպ-



րեվանքին մէջ: Անոնք, առաջին հերթին, հանդիպում ունեցան Վեհափառ Հայրապետին հետ: Նորին Ս. Օծութիւնը պատանիներուն հետ զրուցեց եւ մասնաւորապէս յորդորեց, որ միշտ համախմբուին մեր եկեղեցական, ազգային ու բարոյական արժէքներու շուրջ: Աւարտին, ան իր հայրական օրհնութիւնը փոխանցելով՝ խաչեր նուիրեց պատանիներուն:

Նոյն օրը, պատանիները շրջեցան Ս. Աստուածածին Վանքի համալիրին մէջ, պտըտեցան Վանքի պարտէզներուն մէջ, ծանօթացան Դպրեվանքի առաքելութեան եւ դպրեվանեցիներուն հետ մասնակցեցան երեկոյեան ժամերգութեան:

ՈՒԽՏԱԻՈՐՆԵՐՈՒ ԽՈՒՄԲ ՄԸ ԱՅՑԵԼ ԵՅ ԴՊՐԵՎԱՆՔ

Շաբաթ, 23 Յուլիսի երեկոյեան, խումբ մը ուխտաւորներ Հայ Առաքելական Եկեղեցւոյ ծանօթանալու նպատակով այցելեցին Դպրեվանք:

Դպրեվանքի «Բրաբիոն Տումանեան» հանդիսասրահին մէջ, Դպրեվանքի հսկիչ՝ Հոգշ. Տ. Գէորգ Աբղ. Գարակէօզեան դիմաւորեց ուխտաւորները եւ ողջոյնի խօսք փոխանցեց ներկաներուն: Ապա, Դպրեվանքի աւարտական դասարանի սաներէն՝ Հրակ Սրկ. Գրտանեան արաբերէն լեզուով ամփոփ գիծերու մէջ ներկայացուց Հայ Եկեղեցւոյ պատմութիւնն ու առաքելութիւնը:

Ուխտաւորները շրջեցան Ս. Աստուածածին Վանքի համալիրին մէջ եւ ծանօթացան Դպրեվանքի առաքելութեան ու գործունէութեան. հանդիպումը իր աւարտին հասաւ յիշատակի խմբանկարով մը:



ՍՓԻԻՌԻՔԻ ՏԱՐԻ

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԶՐՈՅՑ՝ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ
ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ԵՒ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻԲՆՆԵՐՈՒ**

Շաբաթ, 30 Յուլիսին, Հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնազոյն Հայրապետին, կազմակերպութեամբ Հայ Եկեղեցւոյ Համալսարանականներու Ուսանողներու Միութեան (Հ.Ե.Հ.Ո.Մ.) եւ մասնակցութեամբ լիբանանահայ երիտասարդական եւ ուսանողական միութիւններէ աւելի քան 80 երիտասարդներու, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի սրահին մէջ տեղի ունեցաւ զրոյցի հաւաք մը: Զրոյցին խորագիրն էր «Սփիւռփահայ Երիտասարդը՝ Այսօր եւ Վաղը»: Մասնակիցները յիշեալ նիւթին շուրջ իրարու հետ բարձրաձայն մտածելու առիթը ունեցան եւ արծարծեցին սփիւռքահայ երիտասարդութիւնը յուզող հարցեր ու մարտահրաւէրներ:

Բացման խօսքով հանդէս եկաւ Հ.Ե.Հ.Ո.Մ.-ական Կարէն Սրկ. Եօսուլքանեանը: Ան բարի գալուստ մաղթելէ ետք մասնակիցներուն ու դասախօսներուն, ընդգծեց Հայ Եկեղեցւոյ Հովանիին տակ եւ 2022 թուականը Վեհափառ Հայրապետին հռչակած «Սփիւռփի Տարի»ին ներքեւ հաւաքուած ըլլալուն միտք բանին: Ան ըսաւ, որ ազգանուէր աշխատանք տանելու համոզումն է այն շարժառիթը, որ կը մղէ իր ինքնութեամբ հետաքրքրուող հայ երիտասարդին աշխոյժ գործունէութիւն տանելու իր համայնքին մէջ՝ յանուն ազգային արժէքներու ու իտէալներու: Այս ծիրին մէջ ան դիտել տուաւ, որ Հ.Ե.Հ.Ո.Մ.-ին կազմակերպած սոյն հաւաքը կը միտի լսելու իրար, խօսելու իրար հետ եւ ծրագրելու միասնաբար՝ ի նպաստ առողջ Սփիւռքի:

Զրոյցին միացաւ նաեւ Վեհափառ Հայրապետը եւ աւելի քան մէկ ժամ հանդիպում ունեցաւ մասնակից երիտասարդներուն հետ, որոնք առիթը ունեցան նաեւ Հայրապետին ուղղելու իրենց հարցումները եւ կիսելու իրենց մտահոգութիւնները:

Ողջունելով երիտասարդները, Հայրապետը իր ուրախութիւնը յայտնեց ի տես անոնց ներկայութեան ու գործօն մասնակցութեան, որոնք մեր ազգը դիմագրաւող մարտահրաւէրներուն նկատմամբ պատասխանատուութեամբ

իրենց ներդրումը բերելու յանձնառութիւնն ու գիտակցութիւնը ունին եւ որոնք կը հաւատան, թէ մեր ազգի ներկային ու ապագային երաշխաւորներն են իրենք: Վեհափառ Հայրապետը կարեւորութեամբ ընդգծեց, որ ընկերութիւն մը ապագայ չի կրնար ունենալ առանց երիտասարդ խաւին եւ անոր հիմք եւ այժմէականութիւն տուողը ու ապագային բացող ոյժը երիտասարդութիւնն է: «Սա տեսութիւն չէ եւ ոչ ալ պէտք է ըլլայ, այլ՝ կեանքի պէտք է վերածուի: Իմ սպասումս է, որ մեր կեանքի գանազան բնագաւառներու դեկավարները եւս այսպէս մտածեն, ծրագրեն ու գործեն, իսկ երիտասարդութիւնը, իր կարգին, այսպէ՛ս ընելու պատրաստակամութիւնը ունենայ», ըսաւ Նորին Ս. Օծութիւնը:

Նորին Սրբութիւնը դիտել տուաւ, որ երիտասարդներուն մասին չէ որ պէտք է խօսինք, այլ՝ անոնց հետ պէտք է խօսինք, որովհետեւ երկխօսութեան ճամբով աւագ սերունդն ու նոր սերունդը կրնան գիրար լսել ու ճանչնալ: Երիտասարդութիւնը ըսելիք եւ ընելիք ունի: Աւագ սերունդը առաւելաբար դէպի անցեալ կը նայի, որովհետեւ աւելի զգուշաւոր մօտեցում կ'ունենայ ապագայի նկատմամբ, իսկ նոր սերունդը՝ աւելի յանդուգն կերպով դէպի ապագայ: Այս ծիրին մէջ Հայրապետը անդրադարձաւ որեւէ համայնքային ծրագրի մը մէջ արհեստագիտութեան եւ ճարտարագիտութեան նորարարութիւններուն ճամբով երիտասարդութեան կարեւոր ներդրումին եւ յորդորեց չվախնալ քննելէ հայկական կառույցներուն իրավիճակները, որ-



պէսզի կաղապարուած մտածողութիւններու մէջ մնալով չհիննան անոնք: Ան նաեւ յայտնեց, որ բնական երեւոյթ է տեսակէտներու զանազանութիւնը համայնքային կեանքէն ներս եւ այս պարագային երիտասարդութեան դերակատարութիւնը ճշդորոշիչ է, որովհետեւ ինք է ներկայ աշխարհին հետ ամենէն շատ քայլ պահողը: Թէեւ իբրեւ հայ մէկ ազգի կը պատկանինք, սակայն իւրաքանչիւր գաղութ իր միջավայրին ազդեցութիւնը կը կրէ իր հաւաքական ինքնութեան մէջ: Շարունակելով իր խօսքը՝ Հայրապետը ակեցուց. «Մեմֆ սերտօրէն իրարու ագուցուած ենք: Հասարակաց արժէքներ ու աւանդութիւններ ունինք, որոնք ոչ միայն մեզ կը միացնեն, այլ նաեւ մեր ինքնութիւնը կ'երաշխաւորեն: Հետեւաբար, հարկ է ծայրայեղօրէն ըլլալ զգոյշ, որպէսզի մեզ միացնող հասարակաց արժէքները տեղի չտան միջավայրի արժէքներուն եւ աւանդութիւններուն դիմաց»: Ապա, Վեհափառ Հայրապետը սահմանելով գլխազիր Աւանդութիւններու եւ փոքրագիր աւանդութիւններու տարբերութիւնը՝ նշեց, որ գլխազիր Աւանդութիւններէն պէտք չէ հեռանանք, սակայն փոքրագիր աւանդութիւնները կարելի է բարեփոխել եւ պատշաճեցնել ներկայ աշխարհի պայմաններուն ու ակեցուց, որ երբ չենք կրնար փոխել աւանդութիւնները, կը նշանակէ թէ մենք պէտք է փոխուինք:

Իր խօսքին մէջ, Նորին Սրբութիւնը անդրադարձաւ նաեւ Սփիւռքի մէջ գաղութաշինութեան եւ համայնքի պահպանութեան համար եկեղեցի-դպրոց-ակումբ եռանկիւնին հիմնական դերակատարութեան: Ան ըսաւ, որ ներկայիս նոյնիսկ Լիբանանի հայահոծ շրջանները չեն պահեր իրենց անցեալի դիմագիծը եւ այս հարցին հարկ է զգուշութեամբ մօտենալ, որպէսզի չքանդուին հիմնուած համայնքները: Այս իմաստով ան արժեւորեց նորարարութեան պայմաններու լոյսին տակ մեր ինքնութիւնը պահելու համար ազ-



դու միջոցներ որոնելը, որովհետեւ եղածը պահել համահասար է մեր ունեցածը կորսնցնելու: Այս ծիրին մէջ ան ընդգծեց ինքնահասկացողութեան եւ ինքնաքննարկումի անյետաձգելի անհրաժեշտութիւնը:

Լուսարձակի տակ առնելով երիտասարդին հաւաքական կեանքի մասնակցութիւնը, Հայրապետը յայտնեց, որ հոն նահանջ կայ եւ այս մէկը իր անդրադարձը կ'ունենայ հաւաքական պատկանելիութեան: Ան քաջալերեց երիտասարդները ունենալու եղափոխելու եւ ինչու չէ նաե՛ւ, ի պահանջեալ հարկին, յեղափոխելու հաւաքական կամքը, որպէսզի լոկ լոգունքներու սամաններուն մէջ չմնայ հաւաքական կեանքի բարեփոխութիւնը, որ առաջին հերթին կը սկսի անհատական մակարդակի վրայ:

Իր խօսքի աւարտին, Վեհափառ Հայրապետը նաեւ լսեց երիտասարդներուն մտահոգութիւնները եւ պատասխանեց անոնց հարցումներուն, որոնք առաւելաբար առնչուած էին երկրին ընկերատնտեսական տազնապին հետեւանքով գաղութի երիտասարդ տարրերուն արտագաղթին, գաղութին նօսրացման, լիբանանահայ համայնքի կշիռին երկրին մէջ, երիտասարդներու գործի եւ ուսանողութեան առիթներ ստեղծելու եւ մեր ազգային կեանքին մէջ եկեղեցւոյ դերակատարութեան:

Օրը բաղկացած էր երեք նիստերէ: Առաջին նիստը յատկացուած էր Հայ Դատին: Նիստի ընթացքին դոկտ. Նորա Պայրազտարեանն ու Եղիա Թաշճեանը գեկուցեցին Հայ Դատին առնչուած հարցերու ու խնդիրներու մասին: Դոկտ. Պայրազտարեան ներկայացուց Սիսի պատմական Կաթողիկոսարանի վերադարձի գծով Թուրքիոյ պետութեան դէմ բացուած դատին պատմականը եւ ներկայ հանգրուանը, ինչպէս նաեւ՝ քաղաքական պատճառներով դատին առջեւ դրուած խոչընդոտները եւ Կաթողիկոսութեան առնելիք յառաջիկայ քայլերը: Իսկ Թաշճեան անդրադարձաւ Հայ Դատի պահանջատի-





րուլթեան մէջ քաղաքական գործունէութիւն ծաւալելու զանազան երեսները եւ ներկայ դարուն տրամադրած միջոցներն ու հմտութիւնները օգտագործելու անհրաժեշտութիւնը:

Երկրորդ նիստին նիւթն էր ազգային մշակոյթն ու անկէ բղխած արժէքները: Նիստի ընթացքին Գայիանէ Մածունեան ու Շաղիկ Խիւտապերտեան խօսեցան մշակոյթ եւ արժէք սահմանումներուն եւ բաղադրիչներուն մասին: Քրիստ Խրոյեանի գրուցաւարութեամբ անդրադարձ կատարուեցաւ արժէքներու ու մշակոյթներու իմաստաւորման մէջ հաստատութիւններու ու կառույցներու դերակատարութեան եւ արժէքներ իւրացնելու կարեւորութեան մասին, բարձր մշակոյթ եւ ցած մշակոյթ հասկացողութեանց, ազգային եւ համամարդկային արժէքներ, ինչպէս նաեւ՝ հայկական մշակոյթին միատարր ըլլալու հասկացողութեանց եւ հաւաքական ու անհատական արժէքներու մասին:

Երրորդ նիստին Հրակ Աւետանեան եւ Փաթիլ Եսայեան խօսեցան հայ երիտասարդը ղէմ յանդիման նորարարութեան մարտահրաւէրներու նիւթին շուրջ եւ առաւելաբար լուսարձակի տակ առին կրթութեան մարզը, ազգային ընկերային կեանքը, Հայ Դատի պահանջատիրութեան կերպերը, հայկական դիմագիծ հասկացողութիւնը, հինի եւ նորի յարաբերութիւնները, ձեւի եւ արդիւնքի մասին, ի շարս այլոց:

Օրուան աւարտին մասնակիցները երեք խումբերու բաժնուելով՝ վերոնշեալ նիստերէն բղխած հարցադրումներու ճամբով ծրագիր մշակեցին ու ներկայացուցին, իբրեւ խմբային աշխատանք:

ՊԱՅՔԱՐԻ ԵՒ ԿԱՍՔԻ ՍՓԻՌՔ

Եթէ կամենաս, եթէ հաւատաս՝
 Գալիքը լոյս է.
 Եւ մինչեւ անգամ մահը վաղահաս
 Յարութեան յոյս է...
 Ես գուցէ ինչամ երազի ճամբան,
 Ինձ համար ուշ է.
 Բայց դուն կը տեսնես պայծառ ապագան,
 Որ այսօր յուշ է...
 Եթէ ականջ տաս հայոց լեռներուն՝
 Սիրտը ժիր գանգ է.
 Եւ մինչեւ անգամ օտար տեղ ու տուն
 Հայրենի վանք է...
 Մուշեղ Իշխան

Եթէ կամենաս, եթէ հաւատաս՝ Գալիքը լոյս է...

Հայ ժողովուրդը իր պատմութեան բոլոր հանգրուաններուն ապրած է յաճախ մոլթ եւ անորոշ օրեր, սակայն կամքի եւ հաւատքի ներդաշնակութեամբ քալած է դէպի գալիք լոյս հորիզոններ: Եւ այդ երթին մէջ առաջնորդներու քայլերուն յառած իր հայեացքը, հայ ժողովուրդը մարտահրաւէրներուն դիմաց կազմաւորած է ինքզինք:

Քրիստոնէութեան գարթօնքով Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետ հայ ժողովուրդը առաջնորդեց հաւատքի լոյսին, Ս. Մահակ Պարթեւ եւ Ս. Մեսրոպ Մաշտոց եղան հայ լեզուի լոյս առաջնորդներ, Վարդան Մամիկոնեան եւ գինակիցներ՝ հաւատքի պաշտպան լոյս ասպետներ, Նարեկացի, Տաթեւացի հայրապետներ աղօթքի ճամբով դէպի Աստուած լուսաւոր ճամբայ մեզ կտակեցին, Խրիմեան Հայրիկ եւ ապա՝ Արամ Մանուկեաներ Հայրենիքի պայքարող, պահանջատէր եւ լուսաւոր կանթեղը վառեցին անկախ Հայաստանի երկնակամարին վրայ: Նոյն յանձնառութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս այսօր մեզ կ'առաջնորդէ Սփիւռքի վերանորոգ եւ վերակազմակերպ լոյս գարթօնքին:

Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի եկեղեցիներուն մէջ ընթերցուեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հռչակագիրը, 2022 տարին կոչելով «Սփիւռքի տարի»:

Շատերու ծանօթ է, տարիներուն գլորումի հոլովոյթին մէջ, Վեհափառ Հայրապետը իմաստութեամբ եւ Հայրապետական հեռատեսութեամբ բոլորիս ուշադրութիւնը հրաւիրեց հայուն յուզող կարեւորագոյն արժէքներուն եւ մարտահրաւէրներուն վրայ: Այս տարի, Հայկական իրականութեան ամէնէն ընդարձակ մասը՝ Սփիւռքը արժանաւորապէս առաւելագոյն կարեւորութեամբ կ'արժանանայ Վեհափառ Հայրապետի ուշադրութեան:

Եւ մինչեւ անգամ մահը վաղահաս Յարութեան յոյս է...

Քրիստոնէութեան մեծագոյն անկիւնաքարը՝ յարութեան հաւատքն է: Առանց հաւատքի եւ հզօր կամքի, յարութիւնը լոկ պատգամ կը դառնայ: Եթէ կը հաւատանք մարմնի յարութեան եւ եթէ հայ մարդն է Սփիւռքի կեանքը, ուրեմն Սփիւռքն ալ հաւատքի, կամքի եւ իմաստուն առաջնորդութեամբ յարութիւն կ'առնէ, կը վերականգնի նոր կենսաւորումով:

Անկասկած, Սփիւռքը գերծ չէ վտանգներէ եւ մարտահրաւէրներէ: Ազգիս Հայրապետը իրաւացիօրէն կը հաստատէ, թէ՛ «Սփիւռքի վերակազմակերպումը ու վերակենսաւորումը հրամայական անհրաժեշտութիւն է»: Արդարեւ Վեհափառ Հայրապետին կոչը դիպուկ է եւ այժմէական: Հայկական Սփիւռքի ապագային մօտեցող վտանգը օրէ օր աւելի կը շեշտուի:

Այս ծիրէն ներս Վեհափառ Հայրապետին վերլուծումները եւ պատգամները առանցքային տեղ եւ դեր ունին:

Յստակ է, Սփիւռքը նոյնը չէ: Սփիւռքը նոյնիսկ տարբեր էր համաձարակէն առաջ եւ վստահաբար տարբեր պիտի ըլլայ անկէ վերջ: «Սփիւռքը կայուն իրականութիւն մը չէ, ան մնայուն փոփոխութեան մէջ է»: Այս յարափոփոխ իրականութեան դիմաց Սփիւռքը պարտաւոր է պահել իր դիմագիծը եւ նկարագիրը: Վեհափառ Հայրապետին հռչակագիրը ամփոփ, սակայն համապարփակ ուղեցոյց մըն է դէպի Սփիւռքի վերակազմակերպում:

Սփիւռքը աշխարհագրականօրէն տեղաշարժի մէջ է միշտ. ուստի անհրաժեշտ է համապատասխան գործելակերպ եւ մտածելակերպ որդեգրել: Այս ծիրէն ներս Վեհափառը կարեւորութեամբ կը շեշտէ՝ պահպանել հաւատքը, լեզուն, հայկական դիմագիծը, պայքարող նկարագիրը եւ հայուն հոգիէն ծնունդ առած հարուստ մշակոյթը:

Եթէ ականջ տաս հայոց լեռներուն՝ Սիրտը ժիր զանգ է...

Սիւնեաց լեռներու զանգերու կանչը հայոց աշխարհի պաշտպանութիւնն է: Գաղտնիք չէ, թէ Սփիւռքի համար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, իր ծառայութեամբ եւ հայ ժողովուրդին հանդէպ ունեցած նախանձախնդրութեամբ եղած է ղօղանջող զանգերու ամրոց լեռը: Այս առումով Վեհափառ Հայրապետին հռչակագիրը Սփիւռքը վերակազմակերպումի անհրաժեշտութիւնը ազդարարող զանգի ղօղանջն է:

Հայրապետական ղօղանջի ազդանշանով Սփիւռքը կը հրաւիրուի կազմաւորել եւ զինուիլ իր ներուժով:

Արդարացիօրէն Վեհափառ Հայրապետը կը հրաւիրէ մեզ «հայուն ինքնա-
ֆանաչումը սահմանել՝ հաւաքական արժեզափերու նշդումով, առանց ան-
տեսելու համաշխարհայնացումին ստեղծած նոր իրականութիւնները ու
տեղական պայմանները»:

Այս ամէնը դժուար եւ նոյնիսկ անկարելի պիտի դառնան, առանց հայ
երիտասարդութեան գործօն մասնակցութեան, որոնք պահապան զինուոր-
ներն են հայոց Սփիւռքին:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, Վեհափառ Հայրապետին
առաջնորդութեամբ, առանցքային կարեւորութեամբ հետապնդած է հայ
երիտասարդութեան անմիջական եւ հրամայական մասնակցութիւնը Սփիւռ-
քի բոլոր կառոյցներէն ներս:

Այս տեսլականով Վեհափառը Հայրապետը, 2009 տարին հռչակած էր
«Երիտասարդութեան տարի»: Սակայն անցնող տարիներու ընթացքին երի-
տասարդութեան ներգրաւումը մասնաւոր տեղաշարժ մը չէ արձանագրած:
Սփիւռքի ապագան իրապէս մեր գիտակից երիտասարդութեան ձեռքերուն
մէջն է:

Եւ մինչեւ անգամ օտար տեղ ու տուն Հայրենի վանք է...

Օտարութեան մէջ օտարանալը դժբախտաբար բնական դարձած երե-
ւոյթ է այսօր: Վեհափառը կը հաստատէ թէ՛ «Սփիւռքի մէջ հայ մնալը նա-
խընտրութեան հարց է եւ, հետեւաբար՝ ամէնօրեայ տագնապ ու պայքար»:

Տագնապի եւ պայքարի դիմաց միակ զէնքը՝ հայուն կամքն է, կամենալն
է, օտար տեղ ու տուն ընտանեկան սուրբ յարկի ներքոյ Հայրենի վանքն է:
Ընտանիքին մէջ ծնողքին կամքն է, միութիւններուն մէջ՝ պատասխանա-
տուններուն կամքը, կառոյցներուն մէջ՝ ղեկավարներուն եւ առաջնորդներուն
կամքը, եւ վերջապէս հայ իրականութեան մէջ՝ մեր երիտասարդներուն
կամքն է յաջողութեան թթիւմորը:

Հետեւաբար, Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ, հայութիւնը՝ Հա-
յաստան, Արցախ եւ Սփիւռք որպէս մէկ ամբողջութիւն, կը հրաւիրուի
Սփիւռքի վերակազմակերպման եւ վերակենսաւորման նուիրական գործին:
Որովհետեւ, «Սփիւռքի վերակազմակերպումը՝ անոր հզօրացումն է, իսկ
Սփիւռքի հզօրացումը Հայաստանին ու Արցախին հզօրացումն է»:

ՍԱՀԱԿ Ծ. ՎՐԴ. ԵՄԻՇԵԱՆ

ՄԵՆՔ ՄԵՉԻ

Այսպէս է վերջին տարիներու Սփիւռքի զանազան գաղութներու հոգեւոր, կրթական, կուսակցական, ազգային, բարեսիրական, միութենական կամ ընկերային պատկերը:

Աւելի ճիշդը՝ Սփիւռքի գաղութներու կերպարանափոխումը. արեւելահայ նոր գաղութներու կազմաւորումը պէտք է մեզի համար աշխատանքի նոր դաշտի մը ձեւաւորումը ստեղծէ:

Իւրաքանչիւր գաղութի ներուժը առաւելագոյն չափով ներգրաւելու ճիշդ անպակաս եւ հետեւողական դարձնելու համար անհրաժեշտ է ստեղծել մնայուն գրասենեակ մը: Սփիւռքի օրակարգը լոկ մէկ տարուան միջոցառում ստեղծելու եւ թափ տալու օրակարգ չէ:

Ամէն բան մենք մեզի ընելով, ինքնագոհ մնալով, ամէն բան վարդազոյն տեսնելով, վաղուան հրաշքներուն հաւատալով՝ Սփիւռքը չի կազմակերպուիր:

Սփիւռքի զօրութիւնը իր կազմակերպման եւ մարդուժի ներգրաւման մէջ է, որ կ'ենթադրէ յարատեւ, մնայուն, շարունակական եւ կազմակերպ աշխատանք:

Փաստօրէն Հայաստանի պետութիւնը այս օրակարգը ստանձնելու ո'չ տրամադրութիւն ունի, ո'չ ժամանակ, ո'չ ալ տեսլական: Զեւական, քաղաքական ներթափանցումներու եւ հիմնական օրակարգեր հակակշռելու սկզբբունքէն անկախ՝ ուրիշ հետաքրքրութիւն չկայ անոր մօտ:

«Մենք մեզի»էն դուրս ելլելու ձեւն ալ հանդուրժողականութիւն եւ ընդհանուր օրակարգերու հասարակաց կէտեր ունենալն է:

Աւանդական գաղութներու մէջ աւելի դիւրին է այս մէկը կազմակերպելը, քան՝ արեւելահայ մեծամասնութեամբ գաղութներու: Հիմնական մէկ տարբերութեամբ, որ աւանդական գաղութները ստեղծուած են գաղթի, բռնի տեղահանումի, ջարդի իբրեւ հետեւանք, մինչ արեւելահայ գաղութներ՝ աւելի բարեկեցիկ կեանք մը ունենալու սկզբունքով:

Սակայն ճիշդ չէ, որ Հայաստանի բնակչութեան թիւէն աւելի թիւ հաշուող Ռուսիոյ հայ գաղութը այսպէս մնայ:

Հաւանաբար իրենք գոհ են, կազմակերպուելու, ինքնուրոյնութիւն եւ ինքնութիւն պահելու օրակարգ չունին, սակայն մենք՝ իբրեւ ազգ, պէտք է մեր ներդրումը ունենանք կազմակերպուելու մշակութային, կրթական, բարեսիրական, ընկերային, քաղաքակրթական եւ այլ մարզերու մէջ:

Այս պատճառով եւ գործի բազմաճիւղ ու բազմաձաւալ ըլլալուն համար սփիւռքի համակարգման գլխաւոր գրասենեակ մը ունենալու անհրաժեշտութիւն կայ:

Ասիկա՝ ոչ թէ Հայաստանի ներքին քաղաքական հարցերուն ըսելիք ունենալու համար, այլ որպէսզի Հայաստանի եւ հայութեան պատմական, գոյութենական, մարդկային եւ համամարդկային հարցերուն սփիւռքը իր ըսելիքը ունենայ:

Գաղութներու մէջ հայկական կեանքին մասնակցութեան ներգրաւման տոկոսը բարձրացնելու, Սփիւռքի օրակարգով, հասարակաց օրակարգով գրասենեակ մը ունենալու եւ փոխադարձ փորձառութիւններ, մարդուժ, ներուժ, մամուլ, մշակոյթ, արուեստ համակարգելու եւ ինքնութիւն պահելու համար կարեւոր են վերոնշեալ երկու կէտերը:

Այլապէս կը մնանք մենք մեզի:

ՅԱ.ԿՈՒԲ ԼԱՏՈՅԵԱՆ



ՀԱՅ ՍՓԻՒՌՔԻ ԱՊԱՒԵՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԹԵՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ Է

Հայ գիր ու գրականութեան քիչ թէ շատ մօտիկ անձ(եր) մը կրնայ(ն) առարկել՝ ըսելով, թէ արդեօք խորագիրը ընդգրկող նիւթը՝ Սփիւռքի ճակատագիրը, ինքզինք չէ՞ սպառած, մաշած: Աւելի՛ն. հայ իրականութեան մէջ նման մտահոգութիւն կամ հարց որքանո՞վ պարտադրանք է այլեւս, կամ՝ իմաստ ունի՞ այսօր, ունեցա՞ծ է անցեալին, որ անիկա կրկին սեղանին կը դրուի, լոյսին կը բերուի, կարծես առաջին անգամ է, որ կ'արծարծուի մեր հաւաքական կեանքին մէջ:

Հապա՞ եթէ հարց տանք վաստակաւոր հրապարակագիրի, գրողի, խմբագիրի թէ մշակոյթի գործիչի, թէ արդեօք կրնա՞յ հաշուարկ մը մեզի պատրաստել, թէ իր ողջուց քանի՛ անգամ գրած է, հրապարակաւ խօսած, անդրադարձած, բանավիճած, բազմակողմանի ու լիարժէք, յստակ ու նպատակայարմար տեսակէտներ յայտնած է վերոնշեալ նիւթին շուրջ՝ պարզապէս իմաստաւորելու իր կոչումը, արդարացնելու իր ծառայութիւնը եւ շնչաւորելու իր ազգային ըմբռնումները:

Ըստ իս, վերջին հարիւր տարուան ընթացքին հայ մամուլի էջերէն կամ անհատ գրողներու գիրքերէն կարելի է լոյսին բերել անթիւ յօդուածներ, մտածումներ ու տեսակէտներ, որոնք սպիտակ թուղթին յանձնուած են, ժամանակ առ ժամանակ հրատարակուած, եւ որոնցմով կարելի է հարիւրաւոր հատորներ լեցնել:

Այդուհանդերձ, հայ իրականութիւն կոչուած երեւոյթը, որ դարերու խորք ունի եւ իր շալակին են հանգչած պատմութեան ամէնէն դաժան դասաւորումները, ահա վերստին ինքզինք կը պարտադրէ, իր գլուխը կը ցցէ այլապէս հրամայական պահանջ դառնալով եւ ամբողջ ազգը հրաւիրելով՝ ինքնաճանաչութեան, ինքնարժեւորման եւ ինքնասրբագրման:

Սա չի նշանակեր երբեք, որ ազգային նկատառումներէ թելադրուած եւ ամբողջ ազգի շահը նկատի ունենալով՝ հրապարակ իջած բազմագոյն եւ պայծառ մտքի տէր անհատներ, միութիւններ, կազմակերպութիւններ եւ կուսակցութիւններ, որոնք անսակարկ ծառայութիւն եւ անձնդիր աշխատանք մատուցած են դարերու լայնքին, չէին գիտակցած պատմաքաղաքական թէ ընկերատնտեսական ազդեցութիւններու տարողութիւնը, եւ, պարզապէս, շուայլ խօսքերու տարափին յանձնուած՝ ճառային պատրանքներ սերմանած են հաւաքական յիշողութեան անդաստանին մէջ:

Այլ խօսքով, հայ միտքն ու պահուածքը միշտ ալ նեցուկ եղած են ազգի յարատեւութեան, կազմակերպման եւ առաւել աշխուժացման:

Այո՛, ընդունիլ է պէտք, որ կայ հայ իրականութիւն կոչուած երեւոյթին միւս երեսը՝ հայոց պետականութիւնը, որ հազարամեակներու փորձառութիւնը ունի իր ուսին, թէեւ՝ մե՛րթ յաջողած, մե՛րթ ընկրկած, մե՛րթ այլասերած ու շատ անգամ յանձնուած պատմութեան դաժան վճիռին, ահա մենք անոր մէկ արձագանգին ու դատողութեան արժանացանք 1918-ին, ապա 1991-ին, իսկ աւելի ուշ՝ 2020-ին, Արցախի մեծ մասի կորուստին, Հայաստանի սահմաններու անճիտումին եւ մասամբ նորին:

Ուրեմն ինչո՞ւ կը սրտնեղինք, երբ իրերայաջորդ սերունդներ կու գան եւ իրենց դատողութեան պրիսմակէն կ'անցընեն ազգային ողբերգութիւններու տեսականին, նաեւ՝ յաջողութիւններու փայլքը: Ինչպիսի՞ հակազդեցութիւն կը ցուցաբերենք մենք՝ ազգովին, երբ նորահաս սերունդի ներկայացուցիչներ, ապաւինելով իրենց մտքի պայծառութեան, հայրենասիրական ոգիին, դաստիարակութեան եւ ակադեմականի հասունութեան, լոյսին բերած են (անցեալին), սեղանին կը բերեն այսօր գոյութիւն ունեցող հայ քաղաքական մտքի տհասութիւնը, խեղճացած առօրեայի պատկերը, ինքնագոհի եւ ցուցամոլի երեւոյթները, երբ հայոց պետութեան թէ՛ ազգային կեանքի մակարդակին՝ ահաւոր դժուարութիւններու թէ՛ մարտահրաւէրներու դէմ յանդիման կը գտնուինք ազգովին:

Ու յաճախ կը կրկնենք. Հայոց Յեղասպանութիւն, սփիւռքեան դաժան պատկեր, սերունդներու դաստիարակութիւն, գաղութներու կազմակերպում, մամուլ, մշակոյթ, հաւաքական յիշողութիւն, անհատական յաջողութիւն, ձուլումի վտանգ, հայոց լեզուի ճակատագիր, տեսլական ու նպատակային կողմնորոշում:

Արդիւնքը՝ հայ Սփիւռքի արտասովոր պատկեր (դասական ու նոր), խառնածին կացութիւն եւ անորոշութիւն, դժբախտ իրադարձութիւններ, միասնական կեանք վարելու յորդորներ, խոհանոցային հայրենասիրութիւն, սին բաժակաճառեր, հեղեղ կարգախօսեր, այլամերժութիւն, կեղծ բաղձանքներ, շռայլ պատրանքներ եւ այլն, եւ այլն:

Կը հաւատայինք, որ Հայաստանի պետականութեան վերականգնումով եւ դէպի հայրենիք մեր կողմնացոյցը ճշդելով՝ մենք կրցած ենք շրջանցել մեր ստրուկի թէ միամիտի պահուածքը, օտարամուլի բարդոյթը, ուրիշի հաշուոյն ապրելու տկլոր մտայնութիւնը, արագ խանդավառուելու եւ շուտով յուսահատելու հոգեմտային կառուցուածքը, եւ արդէն, կը գտնուինք սրբազան լեռ՝ Արարատին հասնելու ճիշդ ուղիին վրայ:

Ու այս ճանապարհին վրայ հայ ազգը իր բաղկացուցիչ մասերով պահ մը կրցած էր ստեղծել իր ազգային գաղափարախօսութիւնը, ցոյց տալ, թէ եւ՛ նախնական, քաղաքական միտք ու պետական համակարգ հաստատագրելու կարողութիւնը, դէպի հայութիւն երթալու շնորհը, Սփիւռքը վերաիմաստաւորելու մօտեցումը, Արցախն ու հայրենի հողը բնակեցնելու որոշումը, համագործակցութեան եւ համերաշխութեան խայծեր բաշխելու գիտակցութիւնը. սակայն աշխարհաքաղաքական հաշիւներու թէ տնտեսական համաշխարհային արշաւներու յորձանուտը եկաւ ու թաւալելու վիճակ մը պարտադրեց հայ ազգի գլխուն, այնքան մը սարսափազդու, որ հայ մարդու կամքն ու պետութեան ողնաշարը կը ստանային ահռելի ու կայծակնային հարուած՝ պատճառելով ազգային աղէտ եւ խոր յուսալքումի իրավիճակ:

Ընդունիլ է պէտք, որ հայոց տրուած հարուածը, թշնամի ոյժերու ձեռամբ, արդէն ունէր մէկ ու հիմնական նպատակ՝ ջլատել ազգային պահանջատիրութիւնը եւ ոգին, զգեստնել հայրենապաշտի ամէն զգացողութիւն եւ արժեգրկել ազգային ամէն արժանիք ու հպարտութիւն: Բնաջնջել ազգային արժանապատուութիւնը, կամքը:

Թշնամի այլազան ոյժեր կրցան նպատակաուղղուած հարուած հասցնել հայոց պետականութեան՝ պարզապէս յազուրդ տալու իրենց գազանային ախորժակներուն եւ աշխարհաքաղաքական հաշիւներուն: Ու յաջողեցան:

Անոնք՝ սեւ ոյժեր թէ բացայայտ թշնամիներ, յաջողեցան սփիւռքահայրութեան դարաւոր երազին ուժգին հարուած հասցնել եւ առաւել խորացնել վիհը: Հայը պէտք էր մնար Սփիւռքի յորձանուտին յանձնուած եւ իր դժխեմ ճակատագրին ենթակայ:

Ուրեմն, ի՞նչ ընել Սփիւռքի «վերակազմակերպման» եւ «վերակենսաւորման» համար: Եթէ մէկ կողմէ ա՛լ կ'ընդունինք, որ կեանքի յարափոփոխ թաւալքին եւ արդի ըմբռնումներու լոյսին տակ պէտք է անյապաղ ձերբազատիլ դասական ու հնաբոյր աշխատելաոճերէ, եսակեդրոն վարքագծերէ, իրերամերժ մօտեցումներէ, յետադէմ եւ խեղճացած գործելադաշտերէ, սեփական սխալներէ, ապա ազգի ղեկավարութիւնը պարտաւոր է լծուելու բարեկարգչական աշխատանքի եւ նորահաս սերունդին թեւ ու թիկունք կանգնելով՝ ճշդելու ռազմավարական նորովի ուղիներ:

Լուծումը՝ պարզ ու մեկին. Սփիւռքը օժտել հաստատութենական համակարգի մտածողութեամբ եւ սկսիլ գաղութներու աշխուժացման հրամայականին:

Առանց հզօր Սփիւռքի՝ չկայ հայրենիք, եւ՝ փոխադարձաբար: Եթէ Սփիւռքը ճակատագրուած չէ ուժացումի եւ փոշիացման, ապա հարկադրանք է փոփոխութիւն բերել մեր մտքի ու գործի պահուածքին ու միանգամընդմիջտ ձերբազատիլ նեխած միտքերէ եւ աշխատելաձեւերէ: Հաւատա՛լ քննական մտքի հզօրութեան եւ արժէքին:

Հաստատութենական մտածողութիւնը կ'ենթադրէ՝ նիւթական հզօրանք, երիտասարդ մարդուժ, գիտական հարթակներ, ուսումնասիրական կեդրոններ, հայավայել կառոյցներ, թռիչք եւ սլացք ջամբող հաստատութիւններ, գիտահետազօտական հիմնարկներ, հայ լեզու եւ պատմութիւն, մշակոյթ եւ ազգային արժէքներ ուսուցող վարժարաններ:

Սա չի նշանակեր քանդել «հին»ը, ուրանալ անմիջականը, անտեսել անցեալի նուիրումը, այլ, ըստ էութեան, բարեկարգել հայ կեանքի բոլոր բնագաւառները, որպէսզի հոգեւոր հայրենիքի ուժը դառնայ իրական, խոր եւ նպատակասլաց:

ՀԱՄԲԻԿ ՊԻԼԱԼԵԱՆ



ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻՆ
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՎԱՏԻԿԱՆԻ ՄԵՋ**

Երեքշաբթի, 12 Յուլիսին, Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեկմէզեան Վատիկան այցելեց եւ յանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսին հանդիպումներ ունեցաւ բարձրաստիճան պատասխանատուներու հետ:

Սրբազանը նախ տեսակցեցաւ Միջ-եկեղեցական Յարաբերութիւններու Բաժանմունքի ընդհանուր քարտուղար՝ Պրայըն Ֆերրըլ եպիսկոպոսին հետ եւ քննարկեց Կաթողիկ եկեղեցին եւ Հայ եկեղեցին ու Արեւելեան Ուղղափառ եկեղեցիները շահագրգռող միջ-եկեղեցական հարցեր: Յայտնենք, թէ Միջ-եկեղեցական Յարաբերութիւններու Բաժանմունքի նախագահ՝ Քուրթ Քոխ Քարտինալ միջ-եկեղեցական առաքելութեամբ կը բացակայէր Վատիկանէն:

Ապա, սրբազանը տեսակցեցաւ Վատիկանի պետական քարտուղար՝ Փիեթրօ Փարոլին Քարտինալին հետ եւ քննարկեց Միջին Արեւելքի եւ Լիբանանի այժմու քաղաքական եւ ընկերային վիճակը՝ յատուկ անդրադարձ կատարելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան զանազան մարզերու մէջ կատարած աշխատանքներուն:

Երկու բարձրաստիճան հոգեւորականները մեծ հիացումով ընդգծեցին Վեհափառ Հայրապետին միջ-եկեղեցական ու միջ-կրօնական երկարամեայ դեկավարութիւնը եւ իրենց զօրակցութիւնը յայտնեցին Նորին Ս. Օծութեան՝ ի խնդիր ներկայ դժուարին տագնապներու յաղթահարման:



ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՆԿԼԻՔԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒ 15-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

26 Յուլիսին 7 Օգոստոսին, հրաւերով Քենթրպրիի Արքեպիսկոպոս Ճասթըն Ուէլչիի, տեղի ունեցաւ Անկլիքան եկեղեցւոյ եպիսկոպոսներու 15-րդ միջազգային համաժողովը, Անգլիոյ Քենթրպրի քաղաքի Քէնթ համալսարանին մէջ: Սոյն ժողովին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ներկայացուց՝ Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեան, իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը՝ Գերշ. Տ. Յովակիմ Եպս. Մանուկեան:



Տասը տարին անգամ մը գումարուող համաժողովին այս տարուան բնաբանն էր «Աստուծոյ Եկեղեցին Աստուծոյ Աշխարհին Մէջ»: Աւելի քան 1450 Անկլիքան եպիսկոպոսներ եւ արքեպիսկոպոսներ, ինչպէս նաեւ այլ եկեղեցիներու ներկայացուցիչներ, հանդիպեցան միասնաբար աղօթելու, հոգեւոր խորհրդածութիւն կատարելու եւ արծարծելու հանրութիւնն ու ներկայ եկեղեցին յուզող հարցեր, ի մտի ունենալով «Ի՞նչ կը նշանակէ անկլիքան համայնքին համար ընդառաջել 21-րդ դարու աշխարհի կարիքներուն» խնդրը:

Նշենք, որ Մակար եւ Յովակիմ սրբազանները առիթ ունեցան տեսնուելու Ճասթըն Արքեպիսկոպոսին հետ եւ փոխանցեցին զոյգ Կաթողիկոսներուն եղբայրական ողջոյններն ու բարեմաղթութիւնները:

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ

**ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ «ՀԱՅԱՍՏԱՆ»
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ
31-ՐԴ ՆԻՍՏԻՆ**

Շաբաթ, 25 Յունիս 2022-ին, Յանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր մասնակցութիւնը բերաւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի հոգաբարձուներու խորհուրդի 31-րդ նիստին, Երեւանի մէջ: Կաթողիկոսութիւնը կը ներկայացնէր Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան (Մատենադարանապետ): Ժողովը քննարկեց օրակարգային երեք նիւթեր՝ գործադիր տնօրէնի 2021-ի գործունեութեան հաշուետուութիւնը, տարեկան՝ 2021-ի նիւթական հաշուետուութիւնը եւ կանոնադրութեան փոփոխութեան հարցը: Ժողովը համապատասխան տնօրինումներ կատարեց:

Այս ժողովին առընթեր, Շահան սրբազան հանդիպում ունեցաւ Ամենայն Հայոց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետին հետ՝ փոխանցելով Վեհափառ Հայրապետի եղբայրական ողջոյնները. իսկ այլ առիթով, ան այցելեց Սուրիական Արաբական Հանրապետութեան նորանշանակ դեսպանուհի՝ դոկտ. Նորա Արիսեանին, որուն փոխանցեց Արամ Ա. Վեհափառի շնորհաւորութիւնները դեսպանական նոր պաշտօնին եւ բարի ծառայութեամբ յաջողութիւն մաղթեց:

**ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՆՈՒՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՂՆԵՐՈՒ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԸ**

Չորեքշաբթի, 29 Յունիսին, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի վեհարանէն ներս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Միւռնօրինեքի հոգեպարար արարողութեան իրենց մասնակցութիւնը բերելու նպատակով ժամանած Ամենայն Հայոց Կաթողիկոսութենէն Գերշ. Տ. Մուշեղ Եպս. Պապայեանն ու Գերշ. Տ. Վրթալես Եպս. Աբրահամեանը, իսկ Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքութենէն Գերշ. Տ. Արամ Արք. Աթէշեանը:

Սրբազան հայրերը Վեհափառ Հայրապետին փոխանցեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին եւ Ն.Ա.Տ. Սահակ Արք. Մաշալեանի եղբայրական ողջոյններն ու բարեմաղթութիւնները: Նորին Ս. Օծութիւնը Հայրապետական օրհնութեամբ ողջունեց եպիսկոպոսներուն ներկայութիւնը Անթիլիասի Մայրավանքին մէջ եւ կարեւորութեամբ շեշտեց Նուիրապետական Աթոռներուն միջեւ գործակցութիւնը առաւել ամրապնդելու հրամայականը:

Աւարտին, սրբազանները ընթրիքի հիւրը եղան Հայրապետին:

**Ռ.Ա.Կ.-Ի ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ
ՈՒ ԿԵՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ
ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՋ**

Չորեքշաբթի, 6 Յունիսին, Անթիլ-

իասի Մայրավանքին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց Ռամկավար Ազատական Կուսակցութեան (Ռ.Ա.Կ.) Գերագոյն Խորհուրդի ատենապետ՝ դոկտ. Զրաչ Գուլյումճեանը:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ գրուցելու մեր ժողովուրդը յուզող այժմեական հարցերու շուրջ: Վեհափառ Հայրապետը շեշտեց մեր ժողովուրդին միասնականութիւնը ամրապնդելու հրամայականը՝ Հայաստանը, Արցախն ու Սփիւռքը դիմագրաւող տագնապներու լոյսին տակ: Այս ծիրէն ներս, Նորին Ս. Օծութիւնը գնահատելով Ռ.Ա.Կ.-ին ունեցած կարեւոր դերը, յատկապէս Հայոց Յեղասպանութենէն ետք Սփիւռքին մէջ, շեշտեց ներկուսակցական դժուարութիւնները յաղթահարելու եւ կուսակցութեան միասնականութիւնը վերահաստատելու հրամայականը:

Իսկ Զինգշաբթի, 7 Յուլիսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Ռամկավար Ազատական Կուսակցութեան (Ռ.Ա.Կ.) Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Մայք Խարապեանը, ընկերակցութեամբ յիշեալ Վարչութեան անդամ եւ Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ՝ տոքթ. Աւետիս Տազետեանի:

Հանդիպման առանցքը հանդիսացան մասնաւորաբար Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնը եւ Սփիւռքի վերակազմակերպումը՝ Վեհափառ Հայրապետին հռչակած «Սփիւռքի Տարի»-ին լոյսին տակ: Հայրապետը դարձեալ կարեւորութեամբ յիշեցուց Ռ.Ա.Կ.-ի պատասխանատուներուն կուսակցութեան ներքին միասնականութիւնը ամրապնդելու հրամայականը, նկատի ունենալով կուսակցութեան վիճակուած կարեւոր դերը մեր ազգի կեանքէն ներս:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐՏՈՒՂԱՐԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Զինգշաբթի, 7 Յուլիսի առաւօտուն, Անթիլիասի Մայրավանքին մէջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Եկեղեցիներուն Համաշխարհային Խորհուրդը (Ե.Հ.Խ.) եւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդը (Մ.Ա.Ե.Խ.) ներկայացնող պատուիրակութիւնը՝ գլխաւորութեամբ յիշեալ խորհուրդներու ընդհանուր քարտուղարներուն: Պատուիրակութեան մաս կը կազմէին նշեալ խորհուրդներուն մէջ գործող բարձրաստիճան պատասխանատուներ:

Այցելութեան նպատակն էր Վեհափառ Հայրապետին հետ խորհրդակցիլ միջ-եկեղեցական բնոյթ ունեցող կարգ մը հարցերու շուրջ: Նորին Սրբութիւնը իր ունեցած երկար տարիներու միջ-եկեղեցական փորձառութեան լոյսին տակ պարզեց իր տեսակետը:

Յայտնենք, որ պատուիրակութեան հանդիպումէն ետք, Վեհափառ Հայրապետը առանձին հանդիպում ունեցաւ Ե.Հ.Խ.-ի ընդհանուր քարտուղար՝ դոկտ. Եոան Սաուքայի հետ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԱՄԱՌՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ 2»Ի ԱՇԽԱԿԵՐՏՆԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՎԵՐԱՓՈՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Ուրբաթ, 22 Յուլիսի առաւօտուն, Համազգայինի Լիբանանի Շրջանային Վարչութեան հովանաւորութիւնը վայելող «Ամառնային ծրագիր 2» աշակերտները այցելեցին Ս. Աստուածածին Վանք (Պիքֆայա) եւ ստացան Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հայրական օրհնութիւնը:

Աշակերտներուն կ'ընկերանային Շրջանային Վարչութեան անդամներ

եւ Համազգայինի Գեղարուեստի դրպրոցներու ատենապետը:

Վեհափառ Հայրապետը ծանօթացաւ «Ամառնային Ծրագիր 2»-ի աշխատանքներուն, որմէ ետք աշակերտները մտերմիկ գրոյց մը ունեցան Նորին Սրբութեան ամօրեային եւ նախասիրութիւններուն առնչուած:

Դպրոցի աշակերտութիւնը, բաժնուած «Բ. Կանաչեան», «Արցախ» եւ «Զամանչա» խմբակներու, Հայրապետին ներկայացուցին «Կիլիկիա» քայլերգը, ինչպէս նաեւ՝ տուտուկով եւ կիթառով երաժշտական կտորներ: Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց աշակերտներուն աշխատանքը: Այս առիթով, անոնք Նորին Ս. Օծութեան նուիրեցին Հայոց Ցեղասպանութեան 50-ամեակին առիթով Ս. Աստուածածին Վանքի համալիրին մէջ բարձրացած հայ ժողովուրդին վերածննդեան ու յարութեան խորհրդանիշ յուշարձանին մոմակերտ օրինակ մը եւ խմբակներու անունները ներկայացնող արուեստի գործ:

Վեհափառ Հայրապետին հետ օրինաբեր հանդիպումէն ետք, աշակերտները շրջագայեցան Ս. Աստուածածին Վանքի համալիրէն ներս, ինչպէս նաեւ այցելեցին Նահատակաց յուշարձան:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԸՆԴՈՒՆԵՑ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ
ՓԱՔԻՍԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ**

Հինգշաբթի, 28 Յուլիսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Փաքիստանի դեսպան՝ Սըլման Աթհարին, ընկերակցութեամբ դեսպանատան քաղաքական պատասխանատուներուն:

Նորին Ս. Օծութիւնը անհրաժեշտ տեղեկութիւններ փոխանցեց նորանշանակ դեսպանին նախ Լիբանանի

ներքին կացութեան առնչուած խնդիրներուն ու մտահոգութիւններուն ու ապա, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համազգային առաքելութեան, ինչպէս նաեւ՝ Հայաստանի եւ Արցախի մեր ժողովուրդի իրաւունքներուն մասին: Ընդառաջելով դեսպանին փափաքին, Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ միջ-կրօնական, յատկապէս քրիստոնեայ-իսլամ երկխօսութեան ու գործակցութեան նիւթին՝ երկար տարիներու իր ունեցած փորձառութեան լոյսին տակ, մատնանշելով կարելոր դեպքեր ու յատկանշական երեւոյթներ:

Դեսպանը, իր կարգին, շեշտեց քրիստոնեայ-իսլամ երկխօսութեան նոր թափ տալու կարեւորութիւնը՝ փոխադարձ յարգանքի ու վստահութեան սկզբունքներէն մեկնելով: Ան յիշեց, որ այս ուղղութեամբ իր պետութիւնը յատուկ աշխատանք կը տանի եւ փափաք յայտնեց յարմար առիթով Նորին Ս. Օծութիւնը այցելել Փաքիստան՝ հանդիպումներ ունենալու ու դասախօսութիւններ տալու համար:

**ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՔ
ՊԻՔՖԱՅԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ
ՎԱՆՔԵՆ ՆԵՐՍ**

Երկուշաբթի, 15 Օգոստոսին, գըլխաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքէն ներս տեղի ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վանաբնակ միաբան հայրերը հաւաք:

Նորին Ս. Օծութիւնը իր գոհունակութիւնը յայտնեց Ս. Աստուածածին Վանքի Ուխտի Օրուան եւ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին նշման մեծ թիւով հաւատացեալներու մասնակցութեան համար: Ապա, ան միաբան հայրերուն կարգ մը յիշեցում-

ներ կատարեց եւ անոնց առաքելութեան ու յառաջիկայ գործունեութեան առնչուած իր հայրական ցուցմունքներն ու թելադրանքները փոխանցեց:

Հաւաքի ընթացքին յատուկ կերպով անդրադարձ կատարուեցաւ Երեւանի «Սուրմայու» առեւտրական կեդրոնին մէջ վերջերս պատահած պայթումին, որուն հետեւանքով զոհուեցան հայորդիներ, եղան անհետ կորածներ եւ բազմաթիւ վիրաւորներ: Միաբան հայրերը իրենց ցան ու զօրակցութիւնը յայտնեցին Հայրենի մեր ժողովուրդի սիրելի զաւակներուն եւ իրենց աղօթքը վերառաքեցին առ Աստուած, որ լոյս խորաններու մէջ հանգչեցնէ զոհուածներուն հոգիները, շուտափոյոթ ապաքինում պարգեւէ վիրաւորներուն եւ ոյժ ու համբերութիւն տայ մեր հայրենակիցներուն:

Հաւաքի ավարտին, Նորին Ս. Օծութիւնը կատարեց հետեւեալ նոր նշանակումները.-

- Գերպ. Ս. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան, Թեսաղոնիկէի (Յունաստան) հոգեւոր հովիւ, կը վերադառնայ Մայրավանք եւ կը միանայ Տեղեկատուական Բաժանմունքին: Չինք կը փոխարինէ Հոգ. Տ. Եղիա Աբղ. Մալխասեան:

- Հոգ. Տ. Աւետիք Աբղ. Տէր Կարապետեան եւ Հոգ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիկեան մաս կը կազմեն Դպրեվանքի Տեսչութեան:

- Հոգ. Տ. Սարգիս Աբղ. Աբրահամեան մաս կը կազմէ Միջ-Եկեղեցական ու Միջ-Կրօնական Յարաբերութեանց Բաժանմունքին՝ ստանձնելով Միջին Արեւելքի միջ-եկեղեցական յարաբերութեան եւ քրիստոնեայ-իսլամ երկխօսութեան պատասխանատուութիւնը:

- Հոգ. Տ. Եզեկիէլ Աբղ. Սելլումեան կը նշանակուի Չահլէի շրջանի (Լիբանան) հոգեւոր հովիւ:

- Հոգ. Տ. Առաքել Աբղ. Գատեհեան կը նշանակուի «Կիլիկիա» մատենադարանի տեսուչի օգնական:

- Հոգ. Տ. Արմէն Աբղ. Գալաճեան կը նշանակուի Զրիստոնեական Դատարարական Բաժանմունքի վարիչի եւ Մայր Տաճարի լուսարարապետի օգնական:

Վերոյիշեալ նոր նշանակումներուն առընթեր, Վեհափառ Հայրապետը յայտնեց, որ Կաթողիկոսարանի այլ բաժանմունքներու պատասխանատուները, բնականաբար, կը շարունակեն իրենց աշխատանքը: Ան նաեւ յիշեցուց, որ քանի մը ամիսներ առաջ Գերպ. Տ. Արտակ Ծ. Վրդ. Արապեան (Արեւելեան Թեմ), Գերպ. Տ. Պօղոս Ծ. Վրդ. Թինքճեան (Արեւելեան Թեմ) եւ Հոգ. Տ. Չարեհ Վրդ. Սարգիսեան (Արեւմտեան Թեմ) մեկնած էին Միացեալ Նահանգներ թեմական ծառայութեան:

ԱՐԺԱՆԹԻՆԻ ԴԵՍՊԱՆԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Չորեքշաբթի, 17 Օգոստոսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Լիբանանի մօտ Արժանթիսի դեսպան՝ Մորիսիօ Ալիսին: Այցելութեան հիմնական նպատակն էր Վեհափառ Հայրապետին պաշտօնապէս յանձնել *Diálogos Fraternos* հատորը:

Յայտնենք, որ ամիսներ առաջ Արժանթիսի կառավարութեան նախաձեռնութեամբ յիշեալ հատորը պատրաստուած էր, ուր ներառուած էին զանազան կրօններու պատկանող կարեւոր դէմքերու յօդուածները: Նորին Ս. Օծութիւնը ընդառաջելով պատասխանատուներու խնդրանքին, իր նըպաստը բերած էր յիշեալ հատորին: Հատորին հրատարակութեան տուն տուող պատճառը Ֆրանսիս Պապին

Fratelli Tutti կոնդակն էր, ուր Սրբազան Քահանայապետը կոչ կ'ուղղեր կրօններու միջեւ փոխադարձ հանդուրժողութեան ու գործակցութեան:

Դեսպանին այցելութիւնը նաեւ առիթ հանդիսացաւ, որ անդրադարձ կատարուի Լիբանանը դիմագրաւող խնդիրներուն, ինչպէս նաեւ՝ Արժանօրինի հայութեան:

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԹԵՍԵՐԷՆ ՆԵՐՍ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ՝ «ՍՈՒՐՄԱՂՈՒ»Ի
ՉՈՅԵՐՈՒ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ**

Կիրակի, 21 Օգոստոսին, հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին եւ Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի մատրան մէջ կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ՝ Երեւանի «Սուրմալու» առեւտրական կեդրոնին մէջ տեղի ունեցած պայթումին հետեւանքով ինկած զոհերու հոգիներուն համար:

Յայտնենք, որ Նորին Ս. Օծութեան Հայրապետական տնօրինումով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսու-

թեան բոլոր թեմերու եկեղեցիներուն մէջ եւս կատարուեցաւ հոգեհանգիստ՝ ի խաղաղութիւն պայթումին հետեւանքով իրենց մահկանացուն կնքած հայորդիներու հոգիներուն:

Յիշենք, որ Վեհափառ Հայրապետը պայթումէն անմիջապէս ետք, իր դիմատետրի էջին մէջ, հետեւեալ ցաւակցական եւ զօրակցական գրառումը կատարած էր. «*Խոր մտահոգութեամբ եւ ցաւով ականատես եղայ Երեւանի «Սուրմալու» առեւտրի կեդրոնին մէջ տեղի ունեցած պայթումին: Կը ցաւակցիմ Հայաստանի մեր ժողովուրդի զաւակներուն: Թող Աստուած զոհերուն հոգիները լուսաւորէ, մխթարութիւն պարգեւէ անոնց ընտանիքներուն եւ շուտափոյթ ապաքինում վիրաւորներուն: Աստուած ամուր ու հաստատ պահէ մեր Հայրենիքը եւ հեռու՝ ամէն տեսակ չարէ ու չարիքէ»:*

Այս առիթով, Վեհափառ Հայրապետը, Կիլիկեան Սիաբանութիւնը եւ մեր Ս. Աթոռին բոլոր թեմերը անգամ մը եւս իրենց բարոյական զօրակցութիւնը եւ խոր ցաւակցութիւնը յայտնեցին զոհերու ընտանիքներուն, ինչպէս նաեւ վիրաւորներուն մաղթեցին շուտափոյթ ապաքինում:



ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈԶ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ

ԿԻՐԱԿԻ, 3 ՅՈՒՆԻՍ 2022: Դ. ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեան եւ քարոզեց՝ Գերշ. Տ. Շահան Արք. Մարգիսեան:

ԿԻՐԱԿԻ, 10 ՅՈՒՆԻՍ 2022: Ե. ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ: ՏՕՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՏՓՈՅ ԳՏՄԱՆՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան:

ԿԻՐԱԿԻ, 17 ՅՈՒՆԻՍ 2022: Զ. ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Օշին Վրդ. Զուայերթանեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Արտաւազդ Վրդ. Շարոյեան:

ԿԻՐԱԿԻ, 24 ՅՈՒՆԻՍ 2022: ՏՕՆ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏԵԱՌԻՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Սարգիս Աբղ. Աբրահամեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Գէորգ Աբղ. Գարակէօզեան:

ԿԻՐԱԿԻ, 31 ՅՈՒՆԻՍ 2022: Բ. ԶԿՆԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Եզեկիէլ Աբղ. Սելլումեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Եսայի Աբղ. Էօրտէքեան:

ԿԻՐԱԿԻ, 7 ՕԳՈՍՏՈՍ 2022: Գ. ԶԿՆԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Եզրաս Աբղ. Թէնէքէճեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Եղիա Աբղ. Մալխասեան:

ՇԱԲԱԹ, 13 ՕԳՈՍՏՈՍ 2022: ՈՒԽՏԻ ՕՐ ՊԻՔՖԱՅԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԻ:

Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի շրջափակին մէջ հաստատուած Նահատակաց Խորանին վրայ պատարագեց՝ Գերչ. Տ. Կոմիտաս Աբք. Օհանեան եւ Հայրապետական իր պատգամը փոխանցեց՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս:

ԿԻՐԱԿԻ, 14 ՕԳՈՍՏՈՍ 2022: ՏՕՆ ՎԵՐԱՓՈՒՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերչ. Տ. Գեղամ Աբք. Խաչերեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Եսայի Աբղ. Էօրտէքեան:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 15 ՕԳՈՍՏՈՍ 2022: Բ. ՕՐ ՎԵՐԱՓՈՒՈՒՄՆ: ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ:

Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Մատրան մէջ պատարագեց՝ Հոգչ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիկեան:

ԿԻՐԱԿԻ, 21 ՕԳՈՍՏՈՍ 2022: Ը. ՕՐ ՎԵՐԱՓՈՒՈՒՄՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Արմէն Աբղ. Գալայճեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Առաքել Աբղ. Գատէճեան:

ԿԻՐԱԿԻ, 28 ՕԳՈՍՏՈՍ 2022: Գ. ԶԿՆԻ ՎԵՐԱՓՈՒՈՒՄՆ: ՏՕՆ ԳԻԻՏ ԳՕՏԻՈՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիկեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Վարդանեան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓՈՒՍԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

* * * — Թող Սրբալոյս Միւռնը համախմբէ մեր զաւակները՝ մէկ ազգի ու մէկ հայրենիքի շուրջ	403
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ	407

ՄԻՌՈՆՕՐՅԱՆԷՔ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Հայրապետին ձեռամբ Սրբալոյս Միւռնի օրհնութիւն Անթիլիասի Մայրավանքին մէջ	411
ԳԵՂԱՄ ԱՐՔ. ԽԱԶԵՐԵԱՆ — Սրբալոյս Միւռնը Հայ Եկեղեցւոյ միութեան խորհրդանիշ է	425
ՇԱՅԱՆ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ — Սփիւռքի առաջին Միւռնօրհներէին հետքերով	427
ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԵՐՆԷՉԵԱՆ — Ս. Միւռնի «Յարութեան Գերեզմանին» առջեւ	440
ՍՄԲԱՏ ՎՐԴ. ՍԱՊՈՒՆՃԵԱՆ — Ինքնութեանդ Միւռնը	442
ԱԻՏՏԻՔ ԱԲՂ. ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ — Սրբալոյս Միւռնով կը քրիստոնէանանք, Սրբալոյս Միւռնով կը զօրանանք... ..	444
ՍԱՐԳԻՍ ԱԲՂ. ԱՐԱՂՅԱՄԵԱՆ — Սրբալոյս Միւռն՝ անցեալի հաւատք, ներկայի պատգամ եւ ապագայի տեսիլք	445
ԱՌԱՔԵԼ ԱԲՂ. ԳԱՏԵՅՃԵԱՆ — Հիմա՛ հայացանք	449
DN. DARON HALAJIAN — Blessing of Holy Muron in Antelias	451
ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ԶԵՅԵԱՆ — Միւռնի խորհուրդը	453

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Մեկնութիւն Յովհաննու Աւետարանի (3.16-26).....	463
---	-----

ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՒՐԵՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ — 90-ամեայ հունձքը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին	474
--	-----

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ԶԵՅԵԱՆ — Կանտի բարոյագիտութեան Նորարարութիւնը	486
--	-----

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՄԵՂՐԻԿ ԵՊՍ. ԲԱՐԻՔԵԱՆ † — Բարսեղ Կանաչեանի երաժշտական արուեստը	505
ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ	517
25-ԱՄԵԱԿ	518
ՏՕՆԱԿԱՆ	529
ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԵԱՆՔ	539
ԴՊՐԵՎԱՆՔ	543
ՍՓԻՐՔԻ ՏԱՐԻ	550
ՍԱՅԱԿ Ծ. ՎՐԴ. ԵՄԻՇԵԱՆ — Պայքարի եւ կամքի սփիւռք	555
ՅԱԿՈԲ ԼԱՏՈՅԵԱՆ — Մենք մեզի	558
ՀԱՄԲԻԿ ՊԻԼԱԼԵԱՆ — Հայ Սփիւռքի ապաւենը հաստատութենական մտածողութիւն է	559
ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ	563
ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ	565
ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ	570

